Արմեն Սարգսյան

ՀԱՅԱՏՅԱՑՈՒԹՅՈՒՆԸ ԱԴՐԲԵՋԱՆՈՒՄ.

ՌԵՍԵՆՏԻՄԵՆՏԻ ԵՎ ԱՎՏՈՐԻՏԱՐԻԶՄԻ ԽԱՉՄԵՐՈՒԿՈՒՄ

ԵՐԵՎԱՆ
Հանրային կապերի և տեղեկատվության կենտրոն
2013

ՀՏԴ 323
ԳՄԴ 66.3
Ս 259

Մենագրությունը հրատարկվում է Երևանի պետական համալսարանի
Փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետի խորհրդի երաշխավորությամբ

Փ.գ.թ., դոցենտ Արմեն Սարգսյան

Հայատյացությունը Ադրբեջանում. ռեսենտիմենտի և ավտորիտարիզմի խաչմերուկում

Խմբագիր Ա. Ճաղարյան
Ձևավորող Մ. Յալանուզյան
Աշխատանքների համակարգող ք.գ.թ., դոցենտ Ա. Ղևոնդյան

Ս 259 Սարգսյան Ա. Հայատյացությունը Ադրբեջանում. ռեսենտիմենտի և ավտորիտարիզմի խաչմերուկում/ Ա. Սարգսյան. – Եր.: Հանրային կապերի և տեղեկատվության կենտրոն, 2013. – 152 էջ:

Մենագրության մեջ նախորդ ուսումնասիրությունների արդյունքների ամփոփմամբ և նոր հարցադրումների առաջադրմամբ վերլուծվում և ցույց են տրվում Ադրբեջանում իրականացվող հայատյաց քաղաքականության ձևավորման նախադրյալներն ու բնութագրական գծերը: Հիմնավորվում է, որ Ադրբեջանում պետական մակարդակով իրագործվող հայատյաց քաղաքականությունը պայմանավորված է սոցիալ-հոգեբանական, քաղաքական և էթնոմշակութային նախադրյալներով, իսկ այդ հայատյացությունը դրսևորվում է հասարակական կյանքի բոլոր բնագավառներում: Բացի այդ, սույն հետազոտության մեջ նորովի դասակարգվում են ադրբեջանական քարոզչամեքենայի հակահայկական թեզերը, ցույց է տրվում դրանց գործառնման տրամաբանությունը:

Գիրքը նախատեսված է փորձագետների, պետծառայողների, տեղեկատվական անվտանգության հարցերով զբաղվող մասնագետների և Ադրբեջանի տեղեկատվական քաղաքականությամբ հետաքրքրվողների համար:

ՀՏԴ 323
ISBN 978-99941-2-867-9 ԳՄԴ 66.3

© Հանրային կապերի և տեղեկատվության կենտրոն, 2013
© Արմեն Սարգսյան, 2013

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

ՀՀ անկախացումից և արցախյան հակամարտության հետ կապված զինադադարի եռակողմ պայմանագրի ստորագրումից ի վեր հայ ժողովուրդը, հայկական պետությունները կանգնեցին նորանոր մարտահրավերների առջև: Վերջիններս հետևանք են տեղեկատվական տեխնոլոգիաների սրընթաց զարգացման, Ադրբեջանի նավթային ռեսուրսների և «ձկնկիթային» դիվանագիտության ընձեռած հնարավորությունների զուգակցման: Չնայած, ինչպես Ադրբեջանի ԽՍՀ օրոք, այնպես էլ դրա իրավահաջորդությունից հրաժարված ներկայիս Ադրբեջանում հակահայկական բնույթի քարոզչական և ոչ քարոզչական գործողությունները օրինաչափ են եղել, սակայն 2000-ական թվականներից սկսած Ադրբեջանն աչքի ընկավ լայնածավալ տեղեկատվական պատերազմ սկսելու նախաձեռնությամբ: Հասկանալի է, որ Ադրբեջանի սանձազերծած տեղեկատվական պատերազմի հիմնական թիրախը պետք է լինեին հայկական պետությունները, հայ ժողովուրդը: Դա պայմանավորված էր նրանով, որ Արցախում կրած պարտությունից և զինադադարի եռակողմ պայմանագրի ստորագրումից ի վեր Ադրբեջանի իշխանությունները չէին կարող հրաժարվել արցախյան խաղաքարտի քաղաքական նշանակությունից և «արդարության» համար պայքարից: Եվ քանի որ «անարդարությունը», ըստ նրանց, ուներ հայկական ծագում կամ կապված էր Հայաստանի Հանրապետության հետ, ուստի պետք էր հետևողականորեն պայքար մղել ամենայն հայկականի դեմ՝ ինստիտուցիոնալ-պետական, էթնոմշակութային և այլ մակարդակներում: Պատահական չէ, որ միջազգային մակարդակում ադրբեջանական քարոզչամեքենան հետևողականորեն փորձում է արմատավորել այն համոզմունքը, թե «անջատողական» հայերը «ցեղասպանություն» են իրագործել, Հայաստանի Հանրապետությունը ագրեսոր պետություն է, իսկ Արցախի իշխանություններն ունեն «խամաճիկային» բնույթ: Նենգափոխելով արցախահայության ինքնորոշման իրավունքի իրացման փաստը՝ Ադրբեջանի իշխանությունները ամեն գնով փորձում են խնդիրը ներկայացնել ՀՀ

«ծավալապաշտական» քաղաքականության համատեքստում, որի արդյունքում իբր խախտվել է Ադրբեջանի «տարածքային ամբողջականությունն» իր բոլոր հետևանքներով:

Օգտվելով նավթադոլարների ընձեռած հնարավորություններից՝ Ադրբեջանի իշխանությունները միջազգային հարթակում հանդես եկան նորարարությամբ կամ, ինչպես արդեն ակնարկել ենք, «ձկնկիթային» դիվանագիտությամբ: Դրա շնորհիվ Ալիևների իշխանությունը շարունակում է որոշակիորեն անկաշկանդ ճնշել խոսքի ազատությունը, խախտել մարդու և տեղաբնիկ ժողովուրդների իրավունքները, ուժեղացնել ռազմական հռետորությունը, ինչպես նաև պետական մակարդակով խրախուսել և իրագործել հայատյաց քաղաքականություն: Պատահական չէ, որ գրեթե ամեն օր Ադրբեջանի իշխանությունները, մերձիշխանական կառույցները և «նավթադոլարային» փորձագետները ներպետական և միջազգային մակարդակներում հանդես են գալիս համայն հայությունը և հայկական պետությունները պիտակավորող, պատմամշակութային փաստերն ու սոցիալ-քաղաքական իրողությունները խեղաթյուրող նախաձեռնություններով: Նախաձեռնություններ, որոնք ունեն ոչ թե տարերային ծագում, այլ հետևանք են լավ մշակված և հետևողականորեն կյանքի կոչվող պետական քաղաքականության:

Կասկածից վեր է, որ Ադրբեջանի կողմից իրագործվող բազմավեկտոր տեղեկատվական պատերազմը լուրջ մարտահրավեր է հայկական պետությունների ու հայ ժողովրդի համար: Իրողություն, որի հանդեպ տեսական և գործնական կրավորականությունը ոչ միայն վտանգավոր է, այլև որոշակի տուրք է Հարավային Կովկասում անհանդուրժողականության, այլատյացության և ապաժողովրդավարական «օջախի» զարգացմանը:

Հասկանալի է, որ անմիջական կամ միջնորդավորված տարբերակով ադրբեջանական ծագման ինֆոգեն սպառնալիքներին հավուր պատշաճի արձագանքելու համար հայկական կողմը պետք է հանդես գա ոչ թե իրավիճակային հակադարձումներով, այլ լավ մշակված և հետևողականորեն իրագործվող տեղեկատվական քաղաքականության դիրքերից: Այլապես երբեմն ստիպված կլինենք արձանագրել մարտավարական հաջողություններ՝ ունենալով ոչ ցանկալի ռազմավարական պարտություններ: Իսկ սա նշանակում է, որ խնդիր ունենք հասկանալու ադրբեջանական քարոզչա-

մեքենայի գործառնման տրամաբանությունը, Ադրբեջանի տեղեկատվական քաղաքականության ռազմավարությունն ու մարտավարությունը: Դա հնարավորություն կտա հակազդման և հակահարձակման արդյունավետ մոդելներ մշակել, ինչպես նաև նվազագույնի հասցնել տեղեկատվական պատերազմի բացասական հետևանքները:

Թերևս վերոգրյալ գործոնների գիտակցումով է պայմանավորված Ադրբեջանի հակահայկական տեղեկատվական քաղաքականության հանդեպ մեր հետազոտական հետաքրքրությունը, ինչն ունի ինչպես տեսական, այնպես էլ գործնական կարևորություն: Տեսական այն առումով, որ հնարավորություն կտա լրացնել խնդրո առարկա հարցում առկա հետազոտական բացը, իսկ գործնական այն առումով, որ հնարավորություն կունենանք համապատասխան տեսական նյութի կամ մշակումների հիման վրա ուրվագծել կամ մշակել արդյունավետ հակազդման և հակահարձակման մոդելներ:

Ադրբեջանի հակահայկական տեղեկատվական քաղաքականությամբ զբաղվող փորձագետներին, մասնագետներին վաղուց հայտնի է, որ պատմամշակութային կեղծիքների, մանիպուլյատիվ տեխնոլոգիաների կիրառմամբ ադրբեջանական քարոզչամեքենան հաճախ ոչ միայն նենգափոխում է իրականությունը, շրջանառության մեջ է դնում նորանոր քաղաքական դիցեր, այլև հետևողականորեն փորձում է համապատասխան «դիցերով» ապրող, իռացիոնալությանը տուրք տվող սերունդ ձևավորել: Արդի քաղաքական գործընթացներում դիցարարությունը, անշուշտ, օրինաչափ է, սակայն վտանգավորն այն է, որ մարդիկ սկսում են ապրել քաղաքական դիցերով, դրանք դառնում են նրանց առօրյայի անբաժան ուղեկիցը: «**Պոստմոդեռնիզմի կարևոր բնութագրերից է այն,-** արդարացիորեն գրում է տեղեկատվական պատերազմների մասնագետ Գ. Պոչեպցովը,- **որ դրա շրջանակներում տեքստը չի որոշվում իրականությամբ և հենց տեքստն է ստեղծում իրականությունը: ... Այստեղից ի հայտ է գալիս հետևյալ կանոնը. ՎԵՐԱՀՍԿԵԼ ՊԵՏՔ Է ՈՉ ԹԵ ԱՇԽԱՐՀԸ, ԱՅԼ ԴՐԱ ՄԱՍԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, որոնք էլ, իրենց հերթին, կհանգեցնեն աշխարհի նկատմամբ վերահսկողության»** (ընդգծ. հեղինակինն է - Ա.Ս.)[1]: Վստահաբար պետք է նշել, որ ադրբեջանական քարոզչա-

[1] **Почепцов Г.,** Информационно-политические технологии, М., 2003, с. 218-219.

մեքենան գործառնում է հենց այս մտքի տրամաբանությամբ, քանի որ այն խնդիր ունի ոչ թե արտացոլել իրականությունը, այլ կերտել այն: Այսինքն՝ այդ քարոզչամեքենան նախապես ստեղծում է «տեքստը» և, ըստ այդմ էլ, ձևավորում «տեքստով» սահմանված իրականության մասին պատկերացում ունեցող սերունդ, հասարակություն: Պատահական չէ, որ, օրինակ, ադրբեջանցի դպրոցականներին «բախտ է վիճակված» սերտել սեփական պատմության, մշակույթի մասին այնպիսի «տեքստեր» *(այն մասին, որ ադրբեջանցիները հնագույն քաղաքակրթություն ունեցող, դեռևս շումերների կողմից հիշատակված ժողովուրդ են և այլն)*, որոնք աղերսներ չունեն օբյեկտիվ իրականության հետ, սակայն միտված են նոր իրականության կերտմանը:

Վերոգրյալի համատեքստում հատկանշական է քրեագետ, սոցիալական հոգեբան Գաբրիել Տարդի «Քրեական փիլիսոփայություն» աշխատության մեջ հիշատակված Կոյրեի այն միտքը, որ եթե **ինֆեկցիոն համաճարակները տարածվում են օդով կամ քամու հոսքով, ապա հանցագործության համաճարակը՝ հեռագրական լարերով**[2]: Հասկանալի է, որ տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման ժամանակաշրջանում հանցագործության համաճարակի տարածումն իրականացվում է ոչ այնքան հեռագրական լարերով, որքան համացանցի, տպագիր և էլեկտրոնային մամուլի, հեռուստատեսության, ռադիոյի և այլ միջոցներով: Ադրբեջանում հայատյացության աճող տեմպերի համատեքստում սա նշանակում է, որ վերն առանձնացված միջոցներն այնտեղ ծառայում են ոչ թե իրազեկ քաղաքացիների ձևավորմանը, հանդուրժողականության և ժողովրդավարական արժեքների արմատավորմանը, այլ առավելապես հայերի, հայկական պետությունների հանդեպ լեգիտիմ հանցագործության «համաճարակի» տարածմանը: Այս առումով պատահական չէր, որ հայ սպային քնած ժամանակ կացնահարած Ռամիլ Սաֆարովի՝ հունգարական իշխանությունների կողմից Ադրբեջանին արտահանձնումից ի վեր ադրբեջանական ԶԼՄ-ները հեղեղվել էին նրա հերոսացման ու զազրելի մարդասպանության փաստի ոգեկոչման, նրա կերպարով ներկա և ապագա սերունդներին դաստիարակելու կոչ-հորդորներով, Իլհամ Ալիևի որոշումը «սակրալացնող» ադրբեջանցի պաշտոնյաների հայտա-

[2] Տես **Брайант Дж., Томпсон С.,** Основы воздействия СМИ, М., 2004, с. 64.

ռարություններով:

Ադրբեջանի հակահայկական տեղեկատվական քաղաքականության վերաբերյալ գոյություն ունեն մի շարք արժեքավոր ուսումնասիրություններ կամ հրապարակումներ[3], սակայն դրանք այսօր էլ գտնվում են համալրվելու հրամայականի ներքո: Բանն այն է, որ այդ ուսումնասիրություններից շատերը այս կամ այն կոնկրետ խնդրին վերաբերող փորձագիտական հոդվածներ են, իսկ հրապարակում եղած մենագրություններն էլ, բնականաբար, չեն պատասխանում բոլոր հարցերին: Իհարկե, ասվածը բնավ չի ստվերում առկա ուսումնասիրությունների տեսական և գործնական կարևորությունը, սակայն նոր հետազոտությունները օրապահանջ են, քանի որ բազմաթիվ հարցեր մնացել են անպատասխան, իսկ շատերն էլ մնում են վիճահարույց:

Հարկ է փաստել, որ շրջանառվող ուսումնասիրությունների հեղինակները ոչ միայն հայ կամ հայաստանցի փորձագետներն են, այլև՝ օտարերկրյա: Ավելին, Ադրբեջանի քարոզչամեքենայի ձևավորած և մշակած հակահայկական կոնցեպտների մասին են վկայում նաև ադրբեջանցի

[3] Ադրբեջանի հակահայկական տեղեկատվական համակարգը, Եր., Նորավանք, 2009, **Աթանեսյան Ա.,** Հեյդար Ալիևի հիմնադրամի գործունեությունը տեղեկատվական ոլորտում (2012), http://www.noravank.am/arm/articles/security/detail.php?ELEMENT_ID=406, **Մանուսյան Ս.,** Ադրբեջանի հակահայ քարոզչության յուրահատուկ դրությունը (2012), http://noravank.am/arm/articles/security/detail.php?ELEMENT_ID=5055, **Մարտիրոսյան Ս.,** Ադրբեջանի քարոզչամեքենան. նոր միտումներ (2012), http://www.noravank.am/arm/articles/security/detail.php?ELEMENT_ID=4290, **Մովսիսյան Ս.,** Ադրբեջանական ՁԼՄ-ների կողմից կիրառվող տեղեկատվական գործողությունների տեխնոլոգիաները (2012), http://noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT_ID=2241, **Մովսիսյան Ս.,** ՀՀ տեղեկատվական հակազդեցության հիմնական ուղղությունները (2012), http://noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT_ID=2237&sphrase_id=25069, **Նահապետյան Հ.,** Թուրք-ադրբեջանական կառույցների հակահայ գործունեությունը, Եր., «Նորավանք» ԳԿՀ, 2010, **Վրթանեսյան Կ.,** Հայ-ադրբեջանական հակամարտության քարոզչական թեզերը (2012), http://www.noravank.am/arm/articles/security/detail.php?ELEMENT_ID=2219, Азербайджанские учебники продолжают парадное шествие (2012), http://azerichild.info/books.html, **Александров М.,** Новая историческая доктрина Азербайджана – угроза существованию армянской нации (2012), http://www.antituran.com/index.php/2009-03-03-20-53-15/19-2009-03-30-16-20-12/874-2011-09-11-16-07-59, **Котанджян Г.,** Историографическая фальсификация становится острым «нелетальным оружием» нового поколения (2012), http://pda.regnum.ru/news/1365938.html, **Котанджян Г.,** «Сумгаит в истории»: о научной необоснованности претензий Ильхама Алиева (2012), http://pda.regnum.ru/news/1433518.html, Освещение общей истории России и народов постсоветских стран в школьных учебниках истории новых независимых государств, М., 2009,

փորձագետները կամ հեղինակները: Նրանցից է, օրինակ, Ա. Յունուսովը[4], ում հետազոտության մեջ տեղ գտած գաղափարներից շատերը խոսուն վկայությունն են այն մոտեցումների, որոնք տարիներ շարունակ բարձրաձայնում է հայկական կողմը:

Վերը շարադրվածից պարզ է դառնում, որ Ադրբեջանի տեղեկատվական քաղաքականությունը այսօր էլ կարիք ունի բազմակողմ և նոր դիտանկյուններից հետազոտման: Ուստի, սույն հետազոտությունը նպատակ ունի նախորդ արժեքավոր ուսումնասիրությունների արդյունքների ամփոփմամբ վերհանել Ադրբեջանի հակահայկական տեղեկատվական համակարգի բնութագրական գծերի, ձևավորման նախադրյալների և գործառնման առանձնահատկությունների առավել ամբողջական պատկերը: Նշված նպատակին հասնելու համար տողերիս հեղինակն իր առջև դրել է հետևյալ խնդիրները, որոնց պատասխանները ներկայացված են աշխատանքի կառուցվածքով նախատեսված գլուխներում և ենթագլուխներում.

1. Պատճառագիտորեն վերլուծել և վերհանել Ադրբեջանի հակահայկական տեղեկատվական քաղաքականության ձևավորման, զարգացման նախադրյալները: Սույն հարցը աշխատանքում քննարկվում է մի քանի մակարդակներում՝ **սոցիալ-հոգեբանական, քաղաքական և էթնոմշակութային:** Նշված մակարդակների առանձնացումը բավական կարևոր է, քանի որ հնարավորություն է տալիս պատասխանել նաև այնպիսի հարցերի, որոնք որոշակիորեն «անտեսվել» են փորձագիտական մտքի կողմից: Բանն այն է, որ Ադրբեջանում ալիևյան կլանի կամ գործող վարչախմբի ինքնավերարտադրման համար հայատյացության խաղաքարտի կարևորությունը փաստելով՝ հաճախ մոռանում ենք այն մասին, թե ինչու է այդ հայատյացությունը հաջողություններ ունենում: Հասկանալի է, որ պաշտոնական Բաքվի համար հայատյաց քաղաքականությունը օրապահանջ է, իսկ արտաքին թշնամու կերպարը ժողովրդի ուշադրությունը ներքին խնդիրներից շեղելու «դեղահաբն» է: Սակայն սա հարցի միայն մի կողմն է: Եթե հայատյացության պետական հովանավորումն Ադրբեջա-

[4] **Юнусов А.**, Мифы и образы «врага» в исторической науке и учебниках по истории независимого Азербайджана (2012), http://www.amudarya.net/fileadmin/_amudarya/bs/ay.pdf և այլն: Հավելենք միայն, որ սույն հետազոտության մեջ նշվելու է համացանցային հղված նյութերի ոչ թե հրապարակման, այլ համապատասխան կայքէջում զետեղված և մեր կողմից օգտագործված լինելու տարեթիվը:

նում ունի քաղաքական նախադրյալներ (ներքին և արտաքին), ապա դրա տարածման և արմատավորման հաջող ընթացքը՝ սոցիալ-հոգեբանական և էթնոմշակութային: Վերջին նախադրյալներն առաձին և ամբողջական վերլուծությունների նյութ չեն դարձել, մինչդեռ չափազանց կարևոր են հիմնահարցի բազմակողմ ուսումնասիրման առումով: Թերևս այս պատճառով է, որ սույն աշխատանքում ռեսենտիմենտ կոչվող երևույթի համատեքստում վերլուծվում են հայատյացության սոցիալ-հոգեբանական, իսկ Ռամիլ Սաֆարովի հերոսացման օրինակի համատեքստում՝ էթնոմշակութային նախադրյալները:

2. Վերլուծել Սաֆարովի արտահանձնման և հերոսացման փաստի քաղաքական նշանակությունը: Պարզել, թե շարքային մարդասպանի հերոսացումն ինչ դրական և բացասական նշանակություն կարող է ունենալ հայկական և ադրբեջանական կողմերի համար: Ցույց տալ ադրբեջանական իրականության մեջ տեղ գտած այն արձագանքները *(նաև դրանց ախտանիշները)*, որոնք հաջորդեցին Սաֆարովի արտահանձնմանն ու հերոսացմանը:

3. Վերհանել և ցույց տալ Ադրբեջանում հակահայկական քարոզչության պետական հիմքերի ցուցիչները, այն գործոնները, որոնց համատեքստում հիմնավոր ու պարզ կդառնա Ադրբեջանի իշխանությունների և Ադրբեջան պետության հայատյաց քաղաքականությունը: Սա չափազանց կարևոր է, քանզի այդ ցուցիչների առանձնացումը հնարավորություն կտա հստակ դարձնել Ադրբեջանում հայատյաց քարոզչության պատասխանատուներին կամ սուբյեկտներին, ինչպես նաև ցույց տալ տարբեր հարցերում Հայաստանի Հանրապետության և Ադրբեջանի Հանրապետության պետական մոտեցումների տարբերությունները:

4. Հստակեցնել կամ բացորոշել հայատյացություն և հակահայկականություն եզրերը: Սա կարևոր է ադրբեջանական քարոզչամեքենայի թեզիսային «մանևրումները» հասկանալու համար, քանզի կախված ներքին և արտաքին լսարանների գործոնից՝ այդ քարոզչամեքենան աչքի է ընկնում շեշտադրումների տարբերությամբ: Բացի այդ, այս հասկացությունների տարբերակմամբ հնարավորություն կունենանք առավել հստակ դարձնել հակահայկականության ադրբեջանական տարբերակը, ցույց տալ վերջինիս և հակահայկականության այլ դրսևորումների տարբերությունները:

5. Վերլուծել և դասակարգել ադրբեջանական քարոզչամեքենայի հակահայկական քարոզչական թեզերը՝ նպատակ ունենալով **դրանց ձևավորման, գործառնման և հասցեագրման տրամաբանության վերհանումը:** Չնայած նրան, որ հակահայկական քարոզչական թեզերի դասակարգման փորձեր մեզանում եղել են, այնուամենայնիվ դրանք լրամշակման և հարստացման կարիք ունեն: Այսինքն՝ սույն հետազոտության մեջ խնդիր ունենք այդ թեզերի դասակարգման նոր հիմքեր առաջադրել, ինչպես նաև վերհանել տարբեր հիմքերով բաժանված թեզերի ներքին կապերը:

6. Վերլուծել Ադրբեջանում հայատյացության դրսևորումների պատմամշակութային տեսանկյունները, դրանց առաջացման նախադրյալները, ինչպես նաև ցույց տալ հայատյաց պատմամշակութային հիմնական կոնցեպտներն ու դրանց «հիմնավորման» եղանակները:

7. Վերլուծել Արցախում և տարածաշրջանում պատմական և մշակութային կյանքի ապահայկականացման ադրբեջանական «հիմնավորումները», դրանց փաստարկողական ապարատը: Վերհանել մանիպուլյատիվ և զեղծարարարական այն տեխնոլոգիաները, որոնք կիրառվում են պատմության ադրբեջանական «վերակառուցման» ժամանակ:

8. Ուսումնասիրել և ցույց տալ Ադրբեջանի կրթական համակարգում հայկական թեմատիկայի ներկայացվածության յուրակերպությունները: Պարզել, թե ինչ որակներով են բնութագրվում հայերը, ընդհանուր առմամբ ինչպես են ներկայացվում հայկական պետությունները, հայերի և ադրբեջանցիների միջև հարաբերությունները և այլն:

9. Առավելապես ադրբեջանական աղբյուրների հիման վրա պարզել Ադրբեջանի ընդհանուր կրթության հայեցակարգի դրույթների և իրականացվող կրթական քաղաքականության համապատասխանությունը կամ մարդասիրության, այլասիրության և հայրենասիրական դաստիարակության ադրբեջանական ըմբռնումների բնութագրական գծերը *(նկատի ունենք պետական մոտեցումը)*:

Հարկ է փաստել, որ առանձնացված խնդիրներից զատ սույն հետազոտության մեջ քննարկվում են նաև այլ հարցեր, որոնք չեն առանձնացվել սոսկ այն պատճառով, որ «տեղավորվում» են թվարկված խնդիրների տրամաբանության մեջ կամ դրանց մասնավոր դրսևորումներն են:

Անշուշտ, այս աշխատանքը չի հավակնում համակողմանի և բոլոր հար-

ցերի պատասխանն իր մեջ բովանդակող ուսումնասիրության կարգավիճակին, սակայն դրանում տեղ գտած հայեցակարգային մոտեցումները, բարձրացված հարցադրումներին տրված պատասխաններն ու հետազոտական նոր դիտանկյունները կարող են հիմք դառնալ հետագա ուսումնասիրությունների համար: Բացի այդ, աշխատանքի մի շարք դրույթներ կամ թեզեր կարող են օգտագործվել տեղեկատվական պատերազմում հայկական կոնցեպտների տարածման և ադրբեջանական քարոզչամեքենային հակազդելու մոդելների մշակման գործում:

ԳԼՈՒԽ 1

Ադրբեջանի հակահայկական տեղեկատվական քաղաքականության նախադրյալները

1. Ռեսենտիմենտը[5], ես-կոնցեպցիան և արտաքին թշնամու կերպարը

Մենք չենք ատում մարդուն,
քանի դեռ նրան համարում ենք մեզանից ցածր,
մենք ատում ենք միայն այն ժամանակ,
երբ նրան համարում ենք մեզ հավասար կամ մեզանից բարձր:
Ֆրիդրիխ Նիցշե

20-րդ դարավերջին արցախահայության ինքնորոշման իրավունքի իրացման հանդեպ ագրեսիվ մերժողական կեցվածք ընդունած Ադրբեջանը սանձազերծեց արյունալի և երկարատև պատերազմ, որի նպատակը արցախահայության բռնի տեղահանությունը կամ ոչնչացումն էր: Սակայն ունենալով թվական, ռազմական, դիրքային, պարենային և ռեսուրսային այլ առավելություններ՝ Ադրբեջանը, այդուամենայնիվ, չկարողացավ իր համար ցանկալի ելք ապահովել և 1994թ. հարկադրված ստորագրեց հրադադարի եռակողմ պայմանագիր: Այս ամենի հետևանքով թերարժեքության բարդույթով համակված ադրբեջանական մտավորականությունը կրկին բռնեց քարոզչության իրեն հոգեհարազատ ուղին՝ շարունակելով թուրքական «պատմագիտության» հակահայկական ավանդույթները: Բանն այն է, որ ադրբեջանական կեղծ պատմագիտական դպրոցը պատմական զեղծարարությունների միջոցով փորձում է ջնջել հայկական հետքերն Արցախից և ողջ Արևելյան Անդրկովկասից կամ դրանք առավելագույնս «արդիականացնել» *(օրինակ՝ Արցախում հայությանը պատմա-*

[5] Առաջացել է ֆրանսերեն **ressentiment՝** ինքնաթունավորում բառից: Սույն աշխատանքի հետագա շարադրանքում առավել մանրամասն և պարզորոշ կներկայացվի ռեսենտիմենտի երևույթը և դրա կապը ադրբեջանական իրողությունների հետ:

կան խոր արմատներից զրկելը, հայերի եկվորությունը կամ հյուր լինելը «հիմնավորելը»), իսկ հայկական պատմամշակութային ժառանգությունը ներկայացնել որպես Կովկասյան Ալբանիայի սեփականություն[6]: Ադրբեջանում նկատվող բազմաբովանդակ կեղծարարությունները նպատակ ունեն խարխլել արցախահայության ինքնորոշման պատմաիրավական ու քաղաքական հիմքերը, ձևավորել Արցախի հանդեպ պահանջատիրոջ ինքնություն ունեցող ադրբեջանցի, ինչպես նաև շիկացնել հակահայկականության մթնոլորտը: Ադրբեջանի գործող իշխանությունների համար վերջինս ունի կենսական նշանակություն և աչքի է ընկնում ադրբեջանական հասարակության մեջ արմատավորվելու համար անհրաժեշտ հոգեբանական հիմքերի առկայությամբ: Ասվածն առավել պարզ կդառնա, եթե հայատյացության հոգեբանական նախադրյալների հարցը քննարկենք ռեսենտիմենտ կոչվող երևույթի դիրքերից:

Ռեսենտիմենտ հասկացությունը փիլիսոփայության մեջ շրջանառության է դրվել Ֆ. Նիցշեի[7] կողմից, սակայն հետագայում զարգացել և նոր բովանդակությամբ է հարստացվել: Այս տեսանկյունից բավականին խոսուն է Մ. Շելերի[8] դերը, ով խուսափելով Նիցշեի գաղափարների անքննադատ յուրացումից՝ կարողացել է իր ստեղծագործ ես-ի կնիքը թողնել այդ հասկացության ըմբռնման վրա՝ ընդլայնելով դրա մեթոդաբանական կիրառելիության շրջանակները: Պատահական չէ, որ բարձր գնահատելով Նիցշեի կողմից ռեսենտիմենտ երևույթի բացահայտումը՝ Շելերը, այնուամենայնիվ, չի համաձայնում քրիստոնեության ռեսենտիմենտալ ծագման նիցշեական ըմբռնման հետ, իսկ ռեսենտիմենտի խնդիրը, ինչպես Նիցշեն, չի քննարկում առավելապես ստրուկի և տիրոջ (արիստոկրատի) բարոյականությունների հարացույցում: Այսինքն՝ Շելերը ռեսենտիմենտը դիտարկում է առավել լայն համատեքստում՝ բերելով բազմաթիվ օրինակներ մարդկային հասարակության զարգացման տարբեր փուլերից, տարաբնույթ սուբյեկտների կյանքից և գործունեությունից:

Չունենալով ռեսենտիմենտի նիցշեական և շելերյան ըմբռնումները

---

[6] Տես **В. Шнирельман,** Албанский миф (2012), http://www.vehi.net/istoriya/armenia/albanskymif.html:

[7] Տես **Ф. Ницше,** Сочинения в 2-х томах, том 2, М., 1990.

[8] Տես **М. Шелер,** Ресентимент в структуре моралей (2012), http://www.max-scheler.spb.ru/content/view/86/37/

հանգամանալից քննարկելու նպատակ՝ հետագա շարադրանքում կիստակեցնենք այդ հասկացությունը, կներկայացնենք ռեսենտիմենտի ձևավորման և խորացման նախադրյալները, ինչպես նաև այն հատկանիշները, որոնք բնութագրական են ռեսենտիմենտալ անհատներին, սոցիալական խմբերին, էթնիկական հանրույթներին և այլն: Սա մեզ հնարավորություն կտա ոչ միայն սոսկ փաստել ադրբեջանական իրականության մեջ հայատյացության իրողությունը, այլև բացատրել դրա ձևավորումը, խորացման պատճառները և այլն: Այսինքն՝ Նիցշեի և Շելերի հայացքների հանդեպ հետահայացությունն ունի ոչ միայն և գուցե թե ոչ այնքան փիլիսոփայական հիմնահարցերի քննարկման, որքան փիլիսոփայական գաղափարների դիրքերից Ադրբեջանի հասարակական-քաղաքական գործընթացների որպիսությունն ու հիմքերը բացահայտելու նպատակ: Հանգամանք, որն ունի ոչ միայն տեսական, այլև գործնական կարևորություն, քանզի մի կողմից հնարավորություն կտա լրացնել խնդրո առարկա հարցի շուրջ առկա հետազոտական բացը, իսկ մյուս կողմից՝ ուրվագծել այն մեխանիզմների շրջանակը, որոնց կիրառման պարագայում հնարավոր կլինի որոշակիորեն թուլացնել ադրբեջանական իրականության մեջ այլատյացության և անհանդուրժողականության արմատավորման շնորհիվ խորացող արժեքային ճգնաժամը: **Ռեսենտիմենտը** փիլիսոփայական եզր է, որը նշանակում է անզոր նախանձ, թշնամության զգացում այն ամենի հանդեպ, ինչը սուբյեկտը դիտում է որպես իր անհաջողությունների պատճառ: Անզորության, թերարժեքության զգացումն ու նախանձն առ թշնամին հանգեցնում են արժեքների այնպիսի համակարգի ձևավորման, ինչը որոշակիորեն ժխտում է թշնամու արժեքային համակարգը, ինչպես նաև փորձում է սուբյեկտին ազատել սեփական անկարողության զգացումից: Այսինքն՝ սուբյեկտը ստեղծում է թշնամու կերպար՝ սեփական անհաջողությունների համար մեղքի զգացումից ազատվելու համար և սեփական անզորության «մխիթարությունն» է փնտրում՝ արտաքին աշխարհի կամ թշնամու վրա բարդելով իր անհաջողությունների, պարտությունների և անզորության պատասխանատվությունը: Օրինակ, անդրադառնալով տերերի և ստրուկների բարոյականությանը՝ Ֆ. Նիցշեն նշում է, որ ի տարբերություն առաջինի՝ ստրուկի բարոյականությունը միշտ կողմնորոշված է դեպի ուրիշը, ստրուկը կամ թույլը ինքնիրացվում կամ ինքնահաստատվում է ժխտման

կամ ժխտողականության միջոցով: Այսինքն՝ տերերի բարոյականությունը նախաձեռնողական է, իսկ ստրուկներինը՝ արձագանքողական կամ «հակադարձողական»: Համաձայն Նիցշեի՝ **ռեսենտիմենտը ամենից առաջ բացահայտվում է «գնահատող հայացքի փոփոխման» մեջ. դեպի ներս ուղղվելու փոխարեն հայացքը կողմնորոշված կամ ուղղված է դեպի դուրս:** Այս տեսանկյունից ստրուկի բարոյականությունն իր ձևավորման համար միշտ կարիք ունի ընդդիմադիր արտաքին աշխարհի կամ, ինչպես կասեին ֆիզիոլոգները՝ արտաքին գրգիռների *(համայն հայությանը թշնամի համարելով՝ ալիևյան կլանը որոշակիորեն ապահովում է այդ «արտաքին գրգիռը»)*: Իհարկե, Նիցշեի հայացքներին անդրադարձով բնավ ցանկություն չունենք ադրբեջանական հասարակության ռեսենտիմենտալությունը բացատրել ստրուկի և տերերի բարոյականության նիցշեական մոդելով, քանզի մեզ հետաքրքրող խնդրի տեսանկյունից կարևոր է պարզել, թե որոնք են ռեսենտիմենտի գոյությունը փաստող ախտանիշերը: Ռեսենտիմենտի ձևավորումը սերտորեն կապված է ոչ միայն նախանձի, այլև վրեժի, իսկ ավելի ստույգ՝ վրեժի լուծումը հետաձգելու կամ ուշացնելու հետ: Սակայն երկու դեպքում էլ գործ ունենք ներքին անզորության երևույթի հետ: Վերջինս մի կողմից նպաստում է դիմացինի հաջողությունների հանդեպ հուսահատ նախանձի ձևավորմանը, իսկ մյուս կողմից՝ վրեժ լուծելու անկարողությունը կամ վրեժի ուշացումը տարաբնույթ գործոններով արդարացնելու անհրաժեշտությանը: Ավելին, ռեսենտիմենտի ձևավորումը կապված է նաև այսպես կոչված ես-կոնցեպցիայի հետ[9]:

[9] Էթնիկական հոգեբանության մեջ էթնիկական ես-կոնցեպցիան (հաճախ օգտագործում են նաև էթնիկական մենք-կոնցեպցիա եզրը) սովորաբար դիտարկվում է մի քանի մակարդակներում՝ անձի, էթնոսի և էթնոսի կազմում գտնվող տարբեր խմբերի: Անձի մակարդակում էթնիկական ես-կոնցեպցիան համարվում է անձի ինքնագիտակցության ուրույն տեսակ, որը մտնում է ընդհանուր ինքնագիտակցության (ես-կոնցեպցիայի) կազմի մեջ: Ինչ վերաբերում է էթնոսի ես-կոնցեպցիային, ապա այն **«...իրենից ներկայացնում է էթնոսի անդամների զգալի թվի կամ մեծամասնության պատկերացումն իր ծագման, մշակույթի, հոգեկան կերտվածքի և վարքի յուրահատկությունների մասին: ...Էթնոսի ես (մենք) կոնցեպցիայի մեջ մտնում են որոշ պատկերացումներ նաև այլ էթնոսների մասին, բայց ոչ թե որպես ինքնուրույն միավորներ, այլ սեփական համեմատվող հատկությունների հետ կապված, որպես դրանց պրոյեկցիաներ կամ հակադրություններ: Որոշ առումով էթնոսի մենք-կոնցեպցիան կարելի է դիտարկել որպես նրա գաղափարախոսություն կամ վերջինիս բաղկացուցիչ մաս»** (**Ա. Նալչաջյան,** Էթնիկական հոգեբանություն, Եր, 2001, էջ 55): Էթնիկական ես-կոնցեպցիայի և դրան առնչվող այլ հարցերի հետ կապված տես նաև՝ **Абишева Ж.,** Этническая “Я-концепция”, Вестник практической психологии образования №1(18), январь-март 2009, с.

Բանն այն է, որ յուրաքանչյուր անհատ, խումբ կամ էթնիկական հանրություն աշխարհում ունի իր տեղի և դերի մասին որոշակի պատկերացում, սակայն ոչ միշտ է, որ կարողանում է ապահովել իր պատկերացմանը համապատասխանող կարգավիճակ: Այսինքն՝ ես-կոնցեպցիայի և փաստացի կարգավիճակի միջև ի հայտ եկած անջրպետը սուբյեկտին մի կողմից կարող է դրդել ակտիվ գործողությունների, իսկ մյուս կողմից՝ այդ կարգավիճակի ապահովման գործում անզոր լինելու զգացման ձևավորմանը կամ խորացմանը: Սակայն այդ զգացումը պետք է որոշակիորեն հաղթահարվի, ինչը սուբյեկտը հակված է կյանքի կոչել «թշնամու որպիսության» կամ «անարդար աշխարհի» փաստարկի համատեքստում: Իսկ սա նշանակում է, որ ես-կոնցեպցիայի ու իրականության միջև հակասությունները կարող են ատելության կամ հոգևոր ինքնաթունավորման հիմք հանդիսանալ՝ դառնալով անհանդուրժողականության և այլոց հանդեպ թշնամանքի պատճառ: Պատահական չէ, որ Մ. Շելերը ժողովրդավարական զարգացումների համատեքստում, ի տարբերություն մարդկության պատմության ստրկատիրական շրջանի, արձանագրում է ռեսենտիմենտի որոշակի աճ: Բանն այն է, որ ստրկատիրական հասարակարգում ստրուկի ես-կոնցեպցիան և փաստացի կարգավիճակը գտնվում են ներդաշնակության մեջ: Մինչդեռ այլ է պատկերը մարդու իրավունքների պաշտպանության, ազատական գաղափարների արմատավորման խնդիր ունեցող ժամանակակից աշխարհում, որում ձևավորված ես-կոնցեպցիան չի ուղեկցվում դրան համապատասխան սոցիալական, քաղաքական և այլատիպ կարգավիճակով: Իրողություն, որը հանգեցնում է դժբախտության զգացման խորացման, իսկ սեփական կյանքում ցանկալի փոփոխություններն ապահովելու անկարողությունը տանում է դեպի արժեքային նիհիլիզմ և ապակառուցողական վարքագիծ: Այս իմաստով 21-րդ դարի մարդու համար դժվար է հասկանալ, որ, օրինակ, հին Հնդկաստանում գործող վառնայական բաժանումը և շուդրաների *(ստրուկների)* վառնայի առանձնացումը ինքնին չեն կարող վկայել ռեսենտիմենտի ձևավորման կամ շուդրայի դժբախտության մասին, քանի որ շուդրան ապրում էր իր ես-կոնցեպցիայի հետ ներդաշնակության մեջ գտնվող կարգավիճակային

74-77, **Налчаджян А.,** Национальная идеология и этнопсихология. Ер., 1999, **Налчаджян К.,** Самопознание, самосознание и этническая мы концепция (2012), http://www.ebiblioteka.lt/resursai/Uzsienio%20leidiniai/SGU/Vestnik_HumN/2006-10-2/hum0610_2_38.pdf և այլն:

իրականությունում: Ասվածը չի նշանակում, թե հին հնդկական վառնայական բաժանումը հասարակական կյանքի կազմակերպման ընդունելի կամ բաղձալի ձև է, այն նշանակում է, որ մեր դժբախտությունները, ինչպես կասեր հայտնի մտածող Էպիկտետոսը, գալիս են *ոչ թե ինքնին կյանքից, այլ կյանքի հանդեպ մեր վերաբերմունքից:* Ուստի, ռեսենտիմենտի ձևավորումը մի կողմից հետևանք է ես-կոնցեպցիայի և իրականության անհամապատասխանության, իսկ մյուս կողմից՝ այդ իրականությունը կերտելու անկարողության ներքին զգացման, որը կարիք ունի հաղթահարման կամ «արգելափակման»: Իսկ **այդ անզորությունը հիմնականում հաղթահարվում է արտաքին թշնամու կերպարը կամ էլ իրերի ոչ արդար, իռացիոնալ կարգի մասին գաղափարը մտածողության մեջ «ներմուծելու» ճանապարհով:**

Եթե վերոգրյալի համատեքստում քննարկենք Ադրբեջանում պետական մակարդակով իրականացվող հակահայկական քարոզչության փաստը, ապա հասկանալի կդառնան ինչպես հայատյացության արժեքային-հոգեբանական «հարթակը», այնպես էլ վերջինիս շահարկմամբ Ադրբեջանի իշխանությունների գործողությունների պրագմատիկ արդարացվածությունը և արդյունավետությունը:

Ադրբեջանական իրականության մեջ ռեսենտիմենտի ձևավորմանն ու խորացմանը նպաստած գործոնները չեն սահմանափակվում հետխորհրդային տարիների իրողություններով: Սխալված չենք լինի, եթե ասենք, որ դեռևս խորհրդային տարիներին Ադրբեջանի ԽՍՀ-ում «ադրբեջանցի» կոչվող նախագծի մշակման ուղղությամբ աշխատանքների իրականացումը աստիճանաբար հող էր «նախապատրաստում» հետխորհրդային Ադրբեջանում ռեսենտիմենտի «ձայնը» լսելի դարձնելու համար: Բանն այն է, որ 20-րդ դարում արտաքին ուժերի ներգործության շնորհիվ աշխարհի քաղաքական քարտեզի վրա հայտնված բազմաէթնիկ Ադրբեջանի ԽՍՀ-ում *(չնայած բարձրագոչ հավաստիացումներին՝ բազմաէթնիկությունն իրականում Ադրբեջանի իշխանությունների ոչ թե հպարտությունն է, այլ «գլխացավանքը»)* իշխանությունների աջակցությամբ տասնամյակներ շարունակ իրականացվում էր էթնիկ բազմազանության կրճատման կամ էթնիկ ձուլման, տեղաբնիկ ժողովուրդների մշակութային ժառանգության յուրացման կամ սեփականման, երբեմն՝ վերացման, ինչպես նաև «ադր-

բեջանականի» կաղապարով թուրքականացման քաղաքականություն (*օրինակ՝ Գանձակի սուրբ Սարգիս հայկական եկեղեցին վերանորոգվել և հարմարեցվել է թուրքական ճարտարապետական ոճը հիշեցնող աղոթատեղիի և այլն*): Ավելին, ադրբեջանական «պատմագիտական» ստեղծագործ միտքը միտված էր ադրբեջանական հասարակության ես-կոնցեպցիայի փոփոխմանը կամ արդիականացմանը, նոր ինքնության կամ ադրբեջանական «ազգի» կերտմանը: Այս առումով հիշատակման արժանի է Թոմաս դը Վաալի այն միտքը, թե՝ **20-րդ դարում Ադրբեջանի համար ամենակենսական խնդիրը «ազգի» ստեղծումն էր[10]:** Այս կենսական խնդրի լուծման հրամայականի և «նավթաբույրի» ազդեցության շնորհիվ ադրբեջանցի պատմաբանների ու մշակույթի պատմության հարցերով զբաղվողների ուղեղներում ակտիվացան մինչ այժմ էլ գիտությանն անհայտ «կրեատիվ կենտրոններ»: Դրանց աշխատանքի շնորհիվ ադրբեջանական մշակույթը ներկայացվեց որպես քաղաքակրթական զարգացման հիմք, իսկ շումերական մշակույթի ներկայացուցիչները՝ թյուրքալեզու ժողովուրդներ: Դրա վկայությունն են Ադրբեջանի կրթության նախարարության կողմից հաստատված պատմության դպրոցական դասագրքերը, որոնց բովանդակությունը հավակնում է «հեղափոխական նշանակություն» ունենալ պատմագիտության» մեջ: Ուշագրավ է, որ կրտսեր և միջին դասարանների համար նախատեսված պատմության դասագրքերում «կարմիր թելի» պես անցնում է շումերական մշակույթի թյուրքական ծագման կամ հիմքերի գաղափարը, ինչը և շատ պարզ երևում է դասագրքերում նյութը հիշելուն միտված հարցերի և դրանց պատասխանների տարբերակներից: Բացի այդ, դասագրքերից կարելի է տեղեկանալ, որ տարբեր ժողովուրդներ (*աքքադացիները, բաբելոնացիները և այլն*) սեփականել են թյուրքալեզու շումերների հայտնագործությունները, ինչը կարծես վկայությունն է այն բանի, որ մարդկությունն իր հոգևոր հասունացման համար պարտական է թյուրքալեզու շումերներին կամ, ինչու ոչ, հենց թյուրքական ժողովուրդներին: Այսպես, օրինակ՝ 6-րդ դասարանի պատմության դասագրքի **«Նախնադարյան համայնակարգի ձևավորումը Ադրբեջանում»** բաժնի նյութերի առնչությամբ ձևակերպված այն հարցին, թե ինչ

[10] Տես **Т. де Ваал,** Черный сад (2012), http://news.bbc.co.uk/hi/russian/in_depth/newsid_4664000/4664621.stm

աղբյուրներում են առաջին անգամ հիշատակվում հին ադրբեջանական ցեղերը, տրված է հետևյալ պատասխանը՝ շումերական առասպելներում և սեպագրերում: Նույն դասագրքի **«Հին շումերները»** պարագրաֆին վերաբերող հարցերն ու դրանց պատասխանները ևս անցնում են զավեշտի սահմանները: Այդտեղից պարզ է դառնում, որ սեպագրերի համակարգը մ.թ.ա. 3-րդ հազարամյակում Առաջավոր Ասիայում ստեղծել են թյուրքալեզու շումերները: Այդ նույն թյուրքալեզու շումերները մ.թ.ա. 7-6-րդ հազարամյակում Միջագետք են եկել Կենտրոնական Ասիայից և Ալթայի նախալեռներից, իսկ սկյութների նախորդները և իրանալեզու այլ ժողովուրդներ (օրինակ՝ սաքերը) ունեն թյուրքական ծագում և այլն[11]:

Վերը նշված օրինակների վկայակոչումը ամենից առաջ միտված էր ոչ թե պատմության կեղծումը փաստելուն, այլ «նոր ինքնության» կերտման համատեքստում Ադրբեջանի համար կեղծման քաղաքականության հրամայական լինելը շեշտելուն: Բանն այն է, որ Խորհրդային Միությունից «ժառանգելով» տեղաբնիկ ժողովուրդներին և խանդով վերաբերվելով նրանց ինքնության պահպանման ցանկություններին՝ Ադրբեջանի իշխանությունները շարունակեցին կանգնած մնալ «նոր ինքնություն» *(կվյալ դեպքում՝ ադրբեջանցու)* կամ ես-կոնցեպցիա ձևավորելու հրամայականի առջև, ինչը Ադրբեջանում խիստ յուրակերպորեն է հասկացվում: Ադրբեջանցու ինքնության տակ ամենից առաջ արհեստականորեն հասկանալով թյուրքական ինքնությունը, իսկ Ադրբեջանի պատմությունը առավելապես դիտարկելով թյուրքալեզու «ադրբեջանցիների» սոցիալ-մշակութային, տնտեսական և քաղաքական ակտիվության պատմություն՝ Ադրբեջանի իշխանություններն իրականում «ադրբեջանական ժողովուրդ» կամ «ադրբեջանական ազգ» եզրերի շրջանառմամբ փորձում են քողարկել էթնիկ ձուլման և թյուրքականացման քաղաքականությունը: Բացի այդ, իրականացնելով տարբեր ժողովուրդների մշակութային ժառանգության տոտալ սեփականման կամ ադրբեջանականացման քաղաքականություն՝ Ադրբեջանը փորձում է լեգիտիմացնել թյուրքական տարրի պատմամշակութային պահանջատիրությունը, ինչն էլ, իր հերթին, միտված լինելով «ազգային» բացառիկության մոլուցքով տարված *(առայժմ առավելապես տարածաշր-*

[11] Տես «Азербайджанские учебники продолжают парадное шествие» (2012), http://azerichild.info/books.html

ջանային մակարդակում) և համապատասխան ես-կոնցեպցիա ունեցող սերնդի ձևավորմանը՝ պարարտ հող է ստեղծում ռեսենտիմենտի ձևավորման կամ խորացման համար: Ասվածն առավել պարզ կդառնա, եթե հատուկ ուշադրություն դարձնենք Ադրբեջանի անկախությունից ի վեր տեղի ունեցած իրադարձություններին և դրանք քննարկենք ռեսենտիմենտի շելերյան ըմբռնման դիրքերից:

Ինչպես գիտենք, Ադրբեջանի սանձազերծած ռազմական ագրեսիան չպսակվեց բաղձալի հաղթանակով և նա ստիպված եղավ «հանդուրժել» Արցախի փաստացի անկախությունը, արցախահայության ինքնորոշման իրավունքի իրացումը: Գիտենք նաև, որ տասնամյակներ շարունակ ադրբեջանական հասարակությունն իր մտավորականների ու գիտնականների շնորհիվ «ձեռք բերեց» դարերի խորքը գնացող և հարուստ մշակութային անցյալ ունեցող ազգի ներկայացուցչի ես-կոնցեպցիա: Վերջինիս համաձայն՝ ադրբեջանցիները դարեր շարունակ մաքառել են օտար զավթիչների դեմ, ստեղծել են անզուգական մշակութային արժեքներ: Ավելին, երբեմն դրսևորել են նաև չարդարացված «առատաձեռնություն»՝ «երախտամոռ» հայ ժողովրդին նվիրելով իրենց պատմական տարածքների վրա ներկայիս Հայաստանի Հանրապետությունը կերտելու հնարավորությունը *(ադրբեջանական աղբյուրներից պարզվում է, որ 1918թ. մեկ օրական Ադրբեջանի Դեմոկրատական Հանրապետությունը հայերին է նվիրել Էրիվանի նահանգը[12])*: Բայց այդ «մեծահոգությունը», համաձայն այդ ես-կոնցեպցիայի, ոչ միայն չգնահատվեց, այլև շնորհիվ հայերին բնորոշ «ստորության և խարդախության»՝ ուղեկցվեց «ՀՀ ռազմական ագրեսիայով», «Ադրբեջանի տարածքային ամբողջականության խախտմամբ», ադրբեջանցիների հանդեպ «ցեղասպանության» իրագործմամբ: Առաջին հայացքից վերը ասվածը ադրբեջանական քարոզչամեքենայի թեզերից շատերի սոսկ ընդհանրացված տարբերակն է, մինչդեռ առավել խոր վերլուծության պարագայում պատկերը կարող է փոքր-ինչ փոխվել: Բանն այն է, որ արցախյան պատերազմում կրելով անփառունակ պարտություն՝ Ադրբեջանն ու ադրբեջանական հասարակությունը ընդհանուր առմամբ բախվեցին սեփական հզորության պատրանքին և անզորության փաս-

[12] Տես **Р. Севанский,** Ложь как средство информационной борьбы, или как Азербайджан «подарил» Эриванскую губернию Армении (2012), http://novostink.ru/analytics/38271-lozh-kak-sredstvo-informacionnoy-borby-ili-kak-azerbaydzhan-podaril-erivanskuyu-guberniyu-armenii.html

տին: Արցախյան պատերազմում կրած պարտությունը չէր կարող անհետևանք մնալ և կամա թե ակամա կանգնեցնելու էր վրեժ լուծելու անհրաժեշտության առջև: Իսկ վրեժ լուծելու ցանկությունը ամենից առաջ պետք է հասկանալ ադրբեջանցիների ես-կոնցեպցիայի համատեքստում, քանի որ պատմության ադրբեջանական կեղծարարությունների շնորհիվ տվյալ պատերազմը և դրանում կրած պարտությունը կարող էին մեկնաբանվել որպես պատմական անարդարության արտահայտություն: Ունենալով վրեժ լուծելու կամ ազգային ես-կոնցեպցիայի դիրքերից «արդարություն» հաստատելու ցանկություն՝ Ադրբեջանը, այնուամենայնիվ, 1994 թվականից **ի վեր շարունակում է հետաձգել վրեժը և միայն բարձրաձայնում է այն կյանքի կոչելու պատրաստակամությունը:** Իսկ այս հանգամանքը լուրջ նախադրյալ է ադրբեջանական իրականության մեջ ռեսենտիմենտի ձևավորման կամ խորացման համար, քանի որ ռեսենտիմենտը **վրեժի անկարողությունն է**: Այսինքն՝ ունենալով վրեժի ցանկություն և բախվելով այն կյանքի կոչելու անկարողությանը՝ ադրբեջանցին հոգեբանական մակարդակում աստիճանաբար դառնում է ռեսենտիմենտալ, նախանձում կամ մերժում է այլոց հաջողությունները, աչքի է ընկնում չարությամբ, իսկ սեփական անհաջողությունները բացատրելու կամ «խմբագրելու» համար դրսևորում է **պատճառագիտական էքստերնալիզմի**[13] հակվածություն: Այսինքն՝ միտում ունի սեփական անհաջողությունների պատճառը փնտրել ոչ թե իր ներսում, այլ արտաքին աշխարհում: Այս հանգամանքն է, որ Ադրբեջանի իշխանությունները շատ լավ են հասկանում և պատեհ առիթն օգտագործելով՝ **փորձում են հասարակության մեջ առկա բացասական էներգիան ուղղել դեպի «կառուցողական» հուն,** ասել է թե՝ Ալիևների իշխանության վերարտադրման համար անհրաժեշտ նախադրյալների ապահովման հուն: Սակայն վրեժի ուշացումը չի կարող անհետևանք մնալ, և սեփական անկարողության կամ անզորության զգացումը «վանելու» համար անհրաժեշտություն է առաջանալու այնպիսի թշնամու կեր-

[13] **Էքստերնալիզմը** փիլիսոփայական-մեթոդաբանական դիրքորոշում է, համաձայն որի՝ գիտական ճանաչողությունը էականորեն պայմանավորված է արտաքին՝ սոցիալական, քաղաքական, պատմական և այլ գործոններով: Տվյալ պարագայում պատճառագիտական էքստերնալիզմ ասելով նկատի ունենք այն, որ ադրբեջանական կողմը արցախյան հակամարտության ժամանակ կրած պարտության պատճառները փորձում է փնտրել ոչ թե ներքին, այլ արտաքին գործոնների համատեքստում:

պարի կերտման, որի համատեքստում ռեսենտիմենտալ սուբյեկտը կկարողանա ստանալ պատրանքային մխիթարության «դեղահաբը»: Վերջին 10-15 տարիների ընթացքում Ադրբեջանի իշխանությունների գործողությունները կոչված են հաստատելու ասվածը: Պատահական չէ, որ զինադադարի եռակողմ պայմանագրի ստորագրումից հետո ադրբեջանական քարոզչամեքենան հետևողականորեն սկսեց շրջանառության մեջ դնել **պարտության էքստերնալիստական պատճառագիտությունը և երբեմն էլ տուրք տվեց կոնդիցիոնալիստական[14] մեկնաբանություններին:** Այսինքն, եթե հետևենք տարբեր տարիների ադրբեջանական իշխանամետ մամուլի հրապարակումներին, պատկան ատյանների ներկայացուցիչների խոսքերին, ապա կնկատենք, որ արցախյան պատերազմում կրած պարտությունը Ադրբեջանում բացատրվում է նաև հայերին օգնություն ցուցաբերած Ռուսաստանի կամ վարձկանների ու ահաբեկիչների գործոնով[15]:

[14] **Կոնդիցիոնալիզմը** (առաջացել է լատ. conditio՝ պայման բառից) փիլիսոփայական ուսմունք է, որը պատճառ հասկացությունը փոխարինում է պայմանների համալիր (կոմպլեքս) հասկացությամբ: Այսինքն՝ երևույթների միջև պատճառական կապը դիտարկում է ոչ թե պատճառ-հետևանք, այլ պայմանների համախումբ-հետևանք մոդելի դիրքերից: Տվյալ պարագայում պարտության կոնդիցիոնալիստական մեկնաբանություն ասելով նկատի ունենք այն, որ Արցախում Ադրբեջանի կրած պարտությունն ադրբեջանական քարոզչամեքենան հիմնականում բացատրում է ոչ բարենպաստ պայմանների գործոնով՝ փորձելով արդարացնել քաղաքական առաջնորդների թերությունները, հայկական կողմին ռեսուրսային առումով քանիցս գերազանցող իրենց զորքերի անփառունակությունը:

[15] Զավեշտալի է, սակայն ադրբեջանական քարոզչամեքենան անգամ չեչեն ահաբեկիչներին է ներկայացնում որպես հայկական կողմից պատերազմին մասնակցածներ: Սա բացատրում են իբրև թե ՀՀ ու Չեչնիայի միջև առկա դաշնակցային հարաբերություններով և հակառուսական քաղաքականությամբ (տես **Ж. Мамедова, Н. Абасов.** Чеченские наемники воевали в Нагорном Карабахе (2012), http://www.echo.az/article.php?aid=40653): Խոջալուում ադրբեջանցիների «ցեղասպանության» դիցը շրջանառության մեջ դնելով՝ ադրբեջանական քարոզչամեքենան հաճախ նշում է, որ հայերը Ստեփանակերտում տեղակայված 366-րդ մոտոհրաձգային գնդի անձնակազմի և ծանր զրահատեխնիկայի աջակցությամբ գրավեցին Խոջալուն (տես Геноцид в Ходжалы - одно из самых чудовищных преступлений XX века, (2012), http://www.azeri.ru/az/karabakh/genocid_v_khojaly/): Արցախյան պատերազմում կրած պարտության պատճառների ադրբեջանական «վարկածների» հետ կապված տես նաև **А. Наапетян,** Азербайджанские мифы об Армении (2013), http://regnum.ru/news/1644657.html, **Р. Севдималиев,** Международный терроризм и политико-правовые проблемы борьбы с ним, Баку, 2011, **П. Адамчевски,** История армянского терроризма в свете азербайджанских источников, //Международное сообщество и глобализация угроз безопасности: сборник научных докладов. В 2 ч., Ч. 2. Международное сообщество и национальные государства в поиске ответов на новые угрозы безопасности/отв. ред. **В. В. Грохотова, Б. Н. Ковалев, Е. А. Макарова;** НовГУ имени Ярослава Мудрого. – Великий Новгород, 2008, с. 245-250.

Բացի այդ, որպես լրացուցիչ արդարացում, շեշտվում էր ներքաղաքական լարվածության և երկպառակությունների գործոնը: Այս առումով որոշակի բացառություն պետք է համարել 1993 թվականին Հ. Ալիևի՝ հեռուստատեսությամբ և ռադիոյով ժողովրդին ուղղված հատուկ ուղերձը[16], որտեղ Ադրբեջանի նախագահը խստագույնս դատապարտում էր *(օրինակ՝ Զանգելանում)* խաղաղ բնակիչների հեռանալուց առաջ ադրբեջանցի զինվորների զանգվածային փախուստի դեպքերը, հայերին դիմադրելու նրանց անկարողությունը կամ ցանկության բացակայությունը: Ճիշտ է, այդ ուղերձում Հ. Ալիևը ներկայացնում է նաև շատ զգուշավոր տողեր՝ շեշտելով ադրբեջանական ժողովրդի խիզախ և հերոսական լինելը, ինչը, համոզված ենք, նախապատրաստական հող և քարոզչական հիմք էր հետագայում արտաքին թշնամու խաղաքարտը ակտիվորեն շրջանառության մեջ դնելու և ժողովրդի ուշադրությունը ներքին խնդիրներից շեղելու համար: Պարզ է, որ Հ. Ալիևին այլ տարբերակ չէր մնում, քան ռազմաճակատում ադրբեջանական ժողովրդի հերոսական և խիզախ կերպարը անարգող ազգի դավաճանների և երկյուղած զինվորների գործոնը վկայակոչելը, սակայն խնդիրն այն է, որ այդ բացատրությունը հասկանալի է առավելապես քարոզչական առաքելության, այլ ոչ թե պարտության պատճառների գիտական վերհանման համատեքստում: Այս տեսանկյունից ուշագրավ է իսրայելցի հրապարակախոս Մ. Բելենկու՝ ռուսական «Взгляд» էլեկտրոնային պարբերականի համարներից մեկում *(նոյեմբեր 22, 2012)* հրապարակված հոդվածը, որտեղ հեղինակը, թեպետ հպանցիկորեն, այդուամենայնիվ Լ. Գումիլյովի պասիոնարության տեսության դիրքերից է փորձում բացատրել Արցախում ադրբեջանցիների նկատմամբ հայկական կողմի հաղթանակը: **«Հայերի մեջ,-** գրում է Մ. Բելենկիյը,- **ավելի շատ էին մարդիկ, որոնք պատրաստ էին զոհվել այն բանի համար, որ Լեռնային Ղարաբաղը դառնա հայկական, քան ադրբեջանցիների մեջ, որոնք պատրաստ էին իրենց կյանքը տալ հանուն այն բանի, որ այդ տարածքը պատկաներ Ադրբեջանին»**[17]: Համաձայնելով հոդվածագրի դիտարկման

[16] **«Обращение Президента Азербайджанской Республики Гейдара Алиева к народу по телевидению и радио в связи с новыми наступлениями и агрессией армянских вооруженных сил на территорию Азербайджана - 2 ноября 1993 года»** (2012), http://library.aliyev-heritage.org/ru/5416266.html

[17] **М. Беленький,** Оккупация Газы (2012), http://www.vz.ru/columns/2012/11/22/608242.html

հետ՝ այնուամենայնիվ հարկ ենք համարում ներկայացնել մի շատ կարևոր նկատառում: Արցախահայության պայքարը նպատակ ուներ ոչ թե հայկական դարձնել Լեռնային Ղարաբաղը, այլ պատմական հայկական տարածքում իրացնել ինքնորոշման իր իրավունքը: Հուսանք, որ այս կոպիտ սխալը ոչ թե դիտավորության, այլ հեղինակի ոչ լուրջ վերաբերմունքի կամ չիմացության հետևանք է:

Հասկանալի է, որ հետպատերազմական շրջանի ադրբեջանական հասարակության մեջ կարող ենք փաստել ռեսենտիմենտի ձևավորումը, ինչը երկրի իշխանությունների կողմից որոշակիորեն մանիպուլյացիաների ենթարկվեց: Օգտվելով նավթադոլարների ընձեռած հնարավորություններից՝ Ի. Ալիևը կարողացավ որոշակիորեն «լեգիտիմացնել» երկրում տիրող անարդարությունները, խոսքի ազատության սահմանափակումները, քաղաքական ընդդիմախոսների դեմ կիրառվող ռեպրեսիվ մեթոդները և այլն: Ասել կուզենք, որ չնայած ադրբեջանական իշխանությունները շարունակ բարձրաձայնում են տնտեսական առաջընթացի, քաղաքական ազատությունների և մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում «ունեցած ձեռքբերումների» մասին, ինքնակոչության դիրքերից Ադրբեջանը ներկայացնում են որպես տարածաշրջանի ամենաառաջադեմ պետություն, իսկ միջազգային մակարդակում՝ լուրջ դերակատար, այնուամենայնիվ շատ լավ են հասկանում, որ երկրում առկա դժգոհությունները չեն կարող բացարձակապես անտեսվել: Այս առումով հատկանշական է Զ. Գուլիևի[18] ««Հեղափոխության ուրվականը» շրջում է Ադրբեջանում» հոդվածը, որտեղ հեղինակը ցույց է տալիս, որ Ադրբեջանում շատ առումներով ավելի սուր են արտահայտված այն խնդիրները, որոնք հիմք են հանդիսացել արաբական երկրներում տեղի ունեցած հեղափոխությունների համար: Ադրբեջանում հեղափոխական զարգացումները համարելով հավանական՝ ադրբեջանցի փորձագետը նշում է, որ դրանից խուսափելու համար իշխանությունները պետք է իրական բարեփոխումներ անեն: Այլապես **«ավտորիտար երկրներով շրջող և բոլորին վախեցնող «հեղափոխության ուրվակա-**

[18] Ադրբեջանցի Զաֆար Գուլիևը փիլիսոփայական գիտությունների թեկնածու է, քաղաքական փորձագետ: 1995-2010թթ. գլխավորել է «Թուրան» լրատվական գործակալության վերլուծական ծառայությունը: 2011 թվականին դարձել է ադրբեջանական «Ազադլիգ» թերթի գլխավոր խորհրդատու, ռուսաստանյան «Regnum» լրատվական գործակալության թղթակից է:

նը» իսկապես կարող է նյութականանալ Ադրբեջանում: Այդ ժամանակ պարզ կդառնա, թե որքան արժե երկրում իշխանության համակարգի կենսունակության և ամենակարողության դիցը»[19]: Պատահական չէ, որ ադրբեջանական քարոզչամեքենան մի կողմից հետևողականորեն փորձում է արմատավորել ալիևյան կլանի իշխանավարման արդյունավետության գաղափարը, իսկ մյուս կողմից գիտակցելով Ադրբեջանում «արաբական գարնան»[20] տեսական հնարավորությունը՝ փորձում է արտաքին

[19] **З. Гулиев,** Азербайджан после Гейдара Алиева, Regnum, М., 2011, с. 117.

[20] «Արաբական գարունը» ցույցերի և հանրահավաքների հեղափոխական ալիք է, որը սկսվել է արաբական աշխարհում 2010 թվականի դեկտեմբերի 18-ին: Այս երևույթի համատեքստում տեղի ունեցան հեղափոխություններ Թունիսում և Եգիպտոսում, քաղաքացիական պատերազմ Լիբիայում, որն ավարտվեց իշխանափոխությամբ: Բացի այդ, տեղի ունեցան ապստամբություններ Բահրեյնում, Սիրիայում (այստեղ ավելի քան երկու տարի զինված բախում է տեղի ունենում գործող նախագահ Ասադի կողմնակիցների կամ կանոնավոր զորքերի և ապստամբների միջև), Եմենում և այլն: Չնայած բողոքի և ընդվզման այս ալիքը սկսվեց և տարածվեց արաբական երկրներում, այն էլ՝ գարնանը, որի պատճառով էլ երևույթը անվանվեց «արաբական գարուն», այնուամենայնիվ դա չի նշանակում, թե այդօրինակ հեղափոխությունների հնարավորությունը պետք է դիտարկել սոսկ արաբական երկրների համատեքստում: Բանն այն է, որ եզրի անվանումը պայմանական է, կապված է հեղափոխական ալիքի «ծննդավայրի (արաբական երկրներ)» հետ: Մինչդեռ արաբական երկրներում գործող իշխանությունների հանդեպ բողոքի, դժգոհությունների մթնոլորտին համահունչ վիճակ գոյություն ունի նաև այլ պետություններում, ինչը սկզբունքորեն թույլ է տալիս խոսել «արաբական գարուն» երևույթի աշխարհագրության ընդլայնման, ոչ արաբական երկրներում դրա դրսևորումների հնարավորության մասին: Այս տեսանկյունից բացառություն չէ նաև Ադրբեջանը, որտեղ որոշ փորձագետների համոզմամբ (օրինակ՝ Բրունո դե Կորդյե) հեղափոխությունների հնարավորությունը երկարաժամկետ կտրվածքով միանգամայն հնարավոր է (այս մասին տես նաև **Арабская весна идет в Азербайджан?** (2012), http://www.yerkramas.org/2012/03/15/arabskaya-vesna-idet-v-azerbajdzhan/): Հարկ է նկատել, որ «արաբական գարուն» երևույթը միանշանակ չի կարելի դիտարկել որպես երկրներում բարեփոխումների ներքին պահանջարկի դրսևորում: Բանն այն է, որ որոշ հեղինակների կարծիքով, արաբական երկրներում սկիզբ առած հեղափոխական ալիքի հետևում կանգնած են ծայրահեղական, ահաբեկչական կազմակերպություններ, որոնք օգտագործելով տարբեր երկրներում առկա դժգոհությունների ռեսուրսը՝ կարողացան զարկ տալ հեղափոխական գործընթացների սկզբնավորմանը: Ասել կուզենք, որ Ադրբեջանի պարագայում արաբական գարուն երևույթի հնարավորության մասին խոսելիս նկատի ունենք այն, որ Ադրբեջանում առկա է դժգոհությունների անհրաժեշտ ռեսուրսը, որն արտաքին գործոնների ազդեցության շնորհիվ սկզբունքորեն կարող է հեղափոխական զարգացումներով ուղեկցվել: Այսինքն՝ դա ինքնին չի վկայում այն մասին, որ ադրբեջանական հասարակության մեջ առկա է ժողովրդավարական զարգացումների ներքին պահանջարկ: Այն առաջին հերթին վկայում է այն մասին, որ Ադրբեջանի իշխանությունների հանդեպ դժգոհությունները կարող են օգտագործվել իշխանափոխության համար: Հանգամանք, որն ադրբեջանական իշխանություններին «ստիպում» է շրջանառության մեջ պահել արտաքին թշնամու կերպարը և կոնսպիրոլոգիական դավադրությունների «խաղաքարտը»:

թշնամիների, Ադրբեջանի դեմ կոնսպիրոլոգիական դավադրությունների գաղափարն առավել սրությամբ մատուցել: Օրինակ, ադրբեջանական և մերձիշխանական www.1news.az լրատվական գործակալության կայքէջում 2012 թվականի նոյեմբերի 28-ին տեղ գտած խմբագրական հոդվածում[21] թեպետ ոչ բացահայտ, սակայն ակնարկվում է այն միտքը, որ «British Petrolium»-ը կարծես նպատակ ունի հեղաշրջում իրականացնել Ադրբեջանում *(հատկանշական է, որ «Ռեգնում» լրատվական գործակալությունն այդ հոդվածի առնչությամբ հրապարակել է **«BP-ն մտադրված է հեղաշրջում իրականացնել Ադրբեջանում»** խորագրով նյութ)*: Նշված խմբագրականի հեղինակը, քննադատելով բրիտանական մամուլում տեղ գտած այն հոդվածները, որոնք Ադրբեջանը ներկայացնում են բացասական լույսի ներքո *(մենք կասեինք՝ իրականությանը համապատասխան)*, դրանցում տեսնում է BP-ի «ձեռագիրը», ինչը բացատրում է նրանով, որ վերջերս Ի. Ալիևը խստորեն քննադատել էր BP ընկերությանը: Հոդվածում հանգամանալից ներկայացնելով BP-ի գործունեության «մութ» կողմերը *(պետությունների ներքին գործերին միջամտել, հեղաշրջումներ ծրագրել ու իրականացնել և այլն)*՝ հեղինակը փորձում է ընթերցողին նրբորեն հասկացնել, որ բրիտանական մամուլի քննադատական հոդվածներն էլ պետք է բացատրել Ադրբեջանի իշխանությունների վրա ճնշում գործադրելու, նրանց անկախ քաղաքականությունը չհանդուրժելու փաստով:

Ճիշտ է, Ադրբեջանի նախագահի և BP-ի միջև նախկինում ի հայտ եկած բացահայտ լարվածությունը որոշակիորեն մնացել է անցյալում, սակայն նկատենք, որ նշված հոդվածի փաստը բավականին խոսուն է. այն հուշում է Ադրբեջանի իշխանությունների գործելաոճի մասին: Բանն այն է, որ առաջիկա ընտրություններում Ալիևը կարիք է ունենալու ընդդիմադիրների բողոքի ակցիաները ռեպրեսիվ մեթոդներով ճնշելու, իսկ այդ ճնշումը հիմնավոր դարձնելու համար հարկավոր է գործող իշխանությունների դեմ պայքար մղողների օտարածին ֆինանսավորման կամ ուղղորդման միտքը արմատավորել: Այսինքն՝ եթե անցյալում BP-ն էր վտանգ ներկայացնում, ապա այսօր այն կփոխարինվի մեկ այլ սուբյեկտով: Այսինքն՝ «ազգի փրկիչ» Հ. Ալիևի գործի շարունակող Ի.Ալիևը նվիրական պայքար

[21] Տես **Грязный политический пиар по заказу, или Лишится ли BP операторства в нефтяном консорциуме в Азербайджане?** (2012), http://www.1news.az/analytics/20121128120226251.html#page999

է մղում ինչպես ներպետական խնդիրների վերացման և ժողովրդի հոգսը թեթևացնելու, այնպես էլ արտաքին թշնամիների դավադրություններին և «Արևմուտքի երկակի ստանդարտների» քաղաքականությանը դիմագրավելու ուղղությամբ: Իսկ այս համատեքստում ներքին խնդիրների գոյությունը պետք է բացատրել ոչ թե կառավարման անարդյունավետությամբ, այլ արտաքին թշնամիների ակտիվ գործունեությամբ: Այս տեսանկյունից Ալիևին չի կարելի թերագնահատել, քանի որ իր քարոզչամեքենայի միջոցով հետևողականորեն նպաստում է արցախյան հակամարտության մասին թյուր պատկերացում ունեցող սերնդի ձևավորմանը, որը սրբազան գործ պետք է համարի հայատյացությունը և իր կյանքի դժվարությունները բացատրի հայկական լոբբինգի, ՀՀ-ի և համայն հայության գոյությամբ: Այստեղ գուցե արտառոց ոչինչ չկա, սակայն միայն առաջին հայացքից: Ասվածն առավել պարզ կդառնա, եթե անդրադարձ կատարենք մարդկային պահանջմունքների մասին տեսություններում տեղ գտած գաղափարներին, այդ թվում՝ հոգեբան Մասլոուի պահանջմունքների բուրգին[22]: Ըստ այդ տեսության կամ պահանջմունքների բուրգի՝ մարդիկ ունեն մի շարք հիմնարար, առանցքային նշանակություն ունեցող պահանջմունքներ, որոնք **պետք է** բավարարվեն: Հակառակ դեպքում՝ կարող են անխուսափելի դառնալ ապակառուցողական վարքագծի դրսևորումները, ագրեսիվությունը, խռովությունները և այլն: Այդ պահանջմունքների շարքին Մասլոուն դասում է նաև ինքնարտահայտման, ճանաչված լինելու և այլ հիմնարար պահանջմունքներ: Չնայած այն բանին, որ պահանջմունքների բրգաձև աստիճանակարգում ավելի բարձր դիրք գրավող պահանջմունքները Մասլոուն համարում է պակաս «կարևոր կամ ազդեցիկ», քան առավել ցածր դիրք գրավողները, այնուամենայնիվ դա չի նշանակում, թե բուրգի վերին մակարդակները ներկայացնող պահանջմունքները չունեն հիմնարար նշանակություն: Անշուշտ, որոշ վերապահումներով կարելի է համաձայնել Մասլոուի գնահատականներին, քանի որ, ինչպես արդարացիորեն նշում է Ռ. Ռուբինշտեյնը *(հիմնվելով Ժ. Բարթոնի մտքերի վրա)*, ինքնության և ճանաչված լինելու պահանջմունքների չբավարարումն ավելի շուտ կարող է ուղեկցվել բռնություններով, քան նյութական պահանջմունքների կամ ցանկությունների չբավարարումը: Աշխատանքը կամ տու-

[22] Տես **А. Маслоу,** Мотивация и личность, // Перевод А.М.Татлыбаевой, СПб.: Евразия, 1999.

նը կորցնելիս մարդիկ ոչ միշտ են խռովություն բարձրացնում, բայց բավ է նրանց փորձենք զրկել անհատական կամ խմբային ինքնությունից *(կամ վկրանգենք այն)*, ապա ամեն րոպե կարող ենք սպասել ապստամբություն[23]: Այսինքն՝ մարդը կարող է որոշակի կրավորականություն դրսևորել իր սոցիալ-տնտեսական վիճակի բարելավման համար պայքարելու հարցում, սակայն կան պահանջմունքներ, որոնց չբավարարումը կարող է հանգեցնել ագրեսիվության, պայքարի և ակտիվ գործողությունների: Դրանք են՝ ինքնահիրացման, ինքնարտահայտման կամ ինքնության ճանաչման պահանջմունքները: Միով բանիվ՝ մարդ կարող է հանդուրժել ֆիզիոլոգիական պահանջմունքների թերբավարարումը, սակայն չի կարող անտարբեր լինել իր ես-կոնցեպցիայի առանցքը կազմող պահանջմունքների չբավարարման հանդեպ:

Ասվածի վկայություններից է վերջերս մեծ աղմուկ հանած և իսլամական աշխարհը ցնցած **«Մուսուլմանների անմեղությունը»** ֆիլմը, որը, ընկալվելով որպես հարված իսլամական ինքնությանը, բերեց բողոքի աննախադեպ ակցիաների և սպանությունների[24]: Իսլամական աշխարհը կարող է հանդուրժել Արևմուտքի թշնամական վերաբերմունքը իսլամական երկրի նկատմամբ, բայց չի կարող հանդուրժել ոտնձգությունն իր ինքնության առանցքը հանդիսացող իսլամի կամ իսլամական արժեքների նկատմամբ: Ասվածի համատեքստում միանգամայն հասկանալի է դառնում, թե ինչու ալիևյան ռեժիմի համար կենսական նշանակություն ուներ և ունի կեղծիքների վրա խարսխված կրթական բարեփոխումներ իրականացնելը, Ադրբեջանի պատմությունը հեռավոր անցյալի հետ կամրջելը, որոշակիորեն նոր ես-կոնցեպցիա ունեցող սերունդ ձևավորելը[25]: Ադր-

[23] Տե՛ս **«Կոնֆլիկտ: Վերլուծությունից մինչև միջամտություն»,** //Խմբագիրներ՝ Սանդրա Չենդելին, Դանիել Դրաքման, Լարիսա Ֆաստ, Եր., Զանգակ-97, 2007, էջ 91:

[24] Օրինակ՝ 2012 թվականի սեպտեմբերին Բենգազիում և Կահիրեում ամերիկյան դիվանագիտական առաքելությունները հարձակման ենթարկվեցին, որին զոհ դարձան Լիբիայում ԱՄՆ դեսպանը և հյուպատոսարանի ևս երեք աշխատակից: Հարձակման պատճառն էր համացանցում «Մուսուլմանների անմեղությունը» ֆիլմի դրվագների հայտնվելը: Բացի այդ, ֆիլմի դեմ բողոքի հսկայական ալիք էր բարձրացել մահմեդական բազմաթիվ երկրներում: Բողոքավորները պահանջում էին խստագույնս պատժել ֆիլմի հեղինակներին: Հատկանշական է, որ, օրինակ, Կահիրեի քրեական դատարանը 2013 թ. հունվարին հաստատել է ֆիլմը ստեղծողների մահվան դատավճիռը (այն կայացվել է առանց մեղադրյալների ներկայության և մահապատժի միջոց է ընտրվել կախաղանը):

[25] Այս հարցերը հանգամանալից քննարկվում են աշխատանքի 2-րդ գլխում:

բեջանցու ինքնության համակարգում փորձելով հաստատել Ադրբեջանի տարածքային ամբողջականության, Արցախի ադրբեջանապատկանության և ադրբեջանցիների «փառահեղ մշակութային անցյալի ու ներկայի» արժեք-գաղափարները՝ Ադրբեջանի իշխանությունները մի կողմից ձևավորում են ներքին միասնականության ապահովման հարթակ, իսկ մյուս կողմից *(հիշենք Մասլոուի պահանջմունքների բուրգը և Ռուբինշտեյնի մոտեցումը)* **հնարավորինս զսպում են այլ պահանջմունքների բավարարման համար պայքար մղելու ցանկությունը:**

Թեպետ Ադրբեջանի իշխանություններն իրենց պետության ներսում կարողացել են հաջողություն արձանագրել հակահայկական տրամադրությունների խորացման առումով, այնուամենայնիվ դրանից շարքային ադրբեջանցին և Ադրբեջանը բնավ չեն շահել: Հայատյաց քաղաքականությամբ նրանք կամա թե ակամա վտանգում են իրենց պետության և տարածաշրջանի անվտանգությունը, իսկ իրավիճակային «հաղթանակներ» տոնելով՝ քայլ կատարում դեպի հնարավոր ռազմավարական պարտություն, քանի որ ժամանակակից աշխարհը համագործակցության տրամաբանությամբ է առաջնորդվում:

2. Քաղաքական ժառանգականությունը և միջազգային հանդուրժողականությունը

Ադրբեջանի կողմից պետական մակարդակով իրականացվող հայատյաց քարոզչական քաղաքականության վերլուծությունը թույլ է տալիս պնդել, որ այդ հայատյացությունը պայմանավորող գործոնների շարքում առանձնահատուկ տեղ է զբաղեցնում ալիևյան կլանի ինքնավերարտադրման ցանկությունը: Բացի այդ, Ադրբեջանի ռասիզմ ու այլատյացություն քարոզող քաղաքականությանը նպաստում է նաև միջազգային հանրության «անատամ» քննադատությունը կամ էներգետիկ «հանդուրժողականությունը»:

Նավթային ռեսուրսների և Եվրոպայի էներգետիկ անվտանգության խաղաքարտի շահարկմամբ Ադրբեջանի իշխանությունները երկարամյա կտրվածքով առավել անկաշկանդ ապահովում են հայատյացության և ոչ ժողովրդավարական համակարգի կերտման վերընթաց շարժը: Պատահական չէ, որ ի տարբերություն 1990-ականների՝ 2000-ականներին *(մասնավորապես Հեյդար Ալիևից նախագահի պաշտոնը «ժառագություն» ստացած Իլհամ Ալիևի օրոք)* Ադրբեջանի հակահայկական քաղաքականությունը ձեռք բերեց նորանոր շեշտադրումներ և աչքի ընկավ հասցեականության ապահովման արդյունավետ տեխնոլոգիաներով: Պետք է փաստել, որ դեռևս Հեյդար Ալիևի իշխանավարության շրջանում Ադրբեջանը ի զորու գտնվեց մշակել հակահայկական քաղաքականության նոր կողմեր, որոնցից է, թերևս, «Խոջալուի ցեղասպանություն» կոչված քաղաքական դիցը, ինչի տրամաբանական շարունակությունն էր 1998թ. մարտին Հ. Ալիևի կողմից **«ադրբեջանցիների ցեղասպանության հրամանագրի»** ստորագրումը: Քաղաքական այս դիցի հանդեպ հայկական կողմի ոչ համապատասխան և կանխարգելող պատասխանը հանգեցրեց նրան, որ արդեն Ի. Ալիևի օրոք այն ակտիվ շրջանառություն գտավ ոչ միայն ներքին, այլև արտաքին լսարանի շրջանակներում: Ֆինանսական լուրջ ռեսուրսների գործադրմամբ Խոջալուի դիցը քննարկվեց տարբեր պետությունների օրենսդիր մարմիններում, ինչը, անշուշտ, խիստ վտանգավոր է, քանզի **կարևորն այն չէ՝ դիցը համապատասխանում է իրականությանը, թե ոչ, այլ այն, որ հավատն առ դից կարող է համապատաս-**

խան վարքագծային մոդելի հիմք դառնալ: Մարդկության պատմության մեջ քաղաքական դիցերի ու դրանցով պայմանավորված հասարակական-քաղաքական գործընթացների օրինակները բազմաթիվ են[26]:

Ոչ հեռավոր անցյալում նացիստների ստեղծած քաղաքական դիցերը ոչ միայն արմատավորվեցին, այլև գերմանական իրականության մեջ հիմք հանդիսացան ծավալապաշտական և այլատյացության վրա խարսխված պետական քաղաքականություն ծավալելու համար: Իսկ սա վկայում է այն մասին, որ տեղեկատվական անվտանգության խնդիր ունեցող պետությունները կանգնած են ոչ միայն ռացիոնալ, այլև իռացիոնալ հիմքեր ունեցող տեղեկատվական հոսքերի դեմ պայքարելու հրամայականի ներքո:

Ասվածը, ինչպես արդեն ակնարկվել է, բացառություն չէ նաև ՀՀ պարագայում, քանի որ ադրբեջանական քարոզչամեքենան նավթադոլարների ընձեռած հնարավորությունների շնորհիվ հետևողականորեն շրջանա-

[26] Ինչպես գիտենք՝ 20-րդ դարում ռասայաբանության, եվգենիկայի զարգացմանը զուգահեռ մեծ հետաքրքրություն էր ձևավորվել արյան հիմնախնդրի նկատմամբ և գաղտնաբանական տարբեր ուղղություններում արյանը ազգային ոգու և ազգային ինքնության պահպանման տեսանկյունից վերագրվում էին համակարգաստեղծ հատկություններ: Իրողություն, որն իր դրսևորումներն է ունեցել տեսական մտքում, ինչպես նաև աչքի է ընկել գործնական կիրառմամբ: Այս տեսանկյունից բավականին ուշագրավ է այն հանգամանքը, որ թեոսոֆիայի հիմնադիրներից մեկի՝ Ռ. Շթայների գաղտնի դասախոսություններին (որտեղ հեղինակը ներկայացրել է էնդոգամիայի և էկզոգամիայի տեղն ու դերը ես-ի, ինքնության պահպանման գործում) ներկա են գտնվել նաև կոմունիստական կուսակցության երևելիներից շատերը, որոնք էլ հետագայում, ըստ որոշ հեղինակների, փորձել են այդ գաղափարները կենսագործել: Նշելով, որ արյան վերաբերյալ շթայներյան դասախոսությունների ակտիվ ունկնդիրներից էին կոմունիստական կուսակցության առաջնորդներ Լենինը, Բոգդանովը և այլոք՝ Դ. Բակսանը հակված էր կարծելու, որ անգամ ինտերնացիոնալիզմի իրականացումը իր իսկ հիմքում ուներ արյունախառնության սկզբունքը: Վկայակոչելով այն հանգամանքը, որ Խորհրդային Միության մեջ խրախուսվում էին միջէթնիկական, ազգամիջյան կամ խառնացեղ ամուսնությունները, ինչպես նաև դոնորական արյան կամավոր-ստիպողական տարբերակը՝ հեղինակը բացառված չէր համարում, որ յուրահատուկ հեղուկի՝ արյան վիթխարի ծավալները օգտագործվում էին ինտերնացիոնալիզմի կայացման համար, ինչը ենթադրում էր նաև կենսաբանական մերձեցում, այսինքն՝ տվյալ ազգից ստացված դոնորական արյունը տրվում էր այլազգի ռեցիպիենտին, վերջիններինս՝ ուրիշներին (տես **Д. Баксан,** Следы сатаны на тайных тропах истории, гл. 6, 2002, http://balkaria.narod.ru/istoria/dbaksan/glava6.htm): Ասել կուզենք, որ տվյալ պարագայում արյան դիցարարությունը և միստիֆիկացիան համապատասխան դրական վերաբերմունքի պարագայում կարող են սոցիալ-քաղաքական ինչեղություն ստանալ և միտված լինել իրականության փոփոխմանը (այս մասին տես **Ա. Սարգսյան,** Փիլիսոփայականը և գաղափարախոսականը Գարեգին Նժդեհի տեսական ժառանգության մեջ, Եր., 2011):

ռության մեջ է դնում ինչպես սեփական բնակչությանը, այնպես էլ միջազգային հանրությանը մոլորեցնող տարաբնույթ դիցեր: Վերջիններս համատեքստում հայերը և հայկական պետությունները ներկայացվում են խիստ բացասական լույսի ներքո, ինչը, բնականաբար, առավել քան հրատապ է դարձնում ադրբեջանական դիցարարությանից պաշտպանվելը և, ինչու ոչ, դրան պատշաճ հակահարված տալը: Կոնկրետ Խոջալուի դիցի *(ադրբեջանցիների «ցեղասպանության»)* հետ կապված մարտահրավերներին հայկական կողմը թեպետ որոշակի ուշացումով, սակայն ծանրակշիռ կերպով արձագանքեց *(նաև շարունակում է արձագանքել)*[27]՝ հիմնավորապես «մերկացնելով» Խոջալուի դեպքերի առնչությամբ ադրբեջանական զեղծարարություններն ու այդ գործողություններին Ադրբեջանի անմիջական մասնակցությունը: Բարձր գնահատելով կատարված աշխատանքները՝ այնուամենայնիվ փաստենք, որ Խոջալուի դիցի օրինակը կարող է նաև «ուսուցողական» լինել մեզ համար: Բանն այն է, որ Ադրբեջանի տեղեկատվական նախահարձակ գործողությունների հանդեպ երբեմն դրսևորվող հայկական կրավորականությունը բերում է նրան, որ **«օձին բնից հանելու և խեղդելու փոխարեն»** ստիպված ենք լինում ավելի շատ ռեսուրսներ և ջանքեր գործադրել դրա հետևանքները չեզոքացնելու կամ մեղմելու ուղղությամբ: Այս տեսանկյունից մասնակիորեն կարելի է համաձայնել հայ-

[27] Օրինակ՝ 2012 թ. փետրվարից հանդիսատեսի դատին ներկայացվեց «Սովի և կրակի միջև. իշխանություն՝ կյանքերի գնով» ֆիլմը, որի ստեղծման աշխատանքներն իրականացվել էին ՀՀ նախագահի աշխատակազմի «Հանրային կապերի և տեղեկատվության կենտրոնի» կողմից: Ֆիլմում ներկայացված են 1991 թվականի նոյեմբերից մինչև 1992 թվականի փետրվարն ընկած ժամանակահատվածում Ստեփանակերտի շրջափակման ճեղքման և Բաքվի քաղաքական էլիտայի հանցավոր գործունեության հետևանքով տեղի ունեցած դեպքերի, Խոջալուի խաղաղ բնակչության մահվան պատճառների մասին հիմնավոր փաստեր: Երկու մասից բաղկացած և նաև անգլերեն տարբերակով հանրությանը ներկայացված փաստավավերագրական այս ֆիլմում ցույց է տրվում Խոջալուի օպերացիայի իրագործման անայլընտրանքայնությունը խաղաղ բնակչությանը մահվան ճիրաններից դուրս բերելու առումով, ինչպես նաև այն կեղծիքները, որոնց շնորհիվ ադրբեջանական քարոզչամեքենան շրջանառության մեջ դրեց Խոջալուում ադրբեջանցիների «ցեղասպանության» դիցը: 2010թ. փետրվարի 24-ին տեղի է ունեցել **«Այլատյացության կանխարգելման նախաձեռնության»** կողմից ստեղծված http://www.xocali.net/ կայքի շնորհանդեսը: Կայքում զետեղված փաստաթղթերը, վկայությունները, լուսանկարներն ու տեսանյութերը ներկայացնում են Խոջալուի կրակակետերի լռեցման մարտական գործողությունների, դրանց հաջորդած իրադարձությունների իրական պատկերը: Փաստական նյութերով հարուստ այս կայքում համոզիչ և հիմնավոր կերպով վերհանվում են Խոջալուի դեպքերի մասին ադրբեջանական քարոզչամեքենայի ստեղծած դիցերը, անցյալի իրողությունների խեղաթյուրման, փաստերի աղճատման տեխնոլոգիաները և այլն:

կական փորձագիտական շրջանակներում տեղ գտած այն դիտարկման հետ, որ եթե նախկինում կար մտահոգություն Ադրբեջանի ահագնացող քարոզչությանը արձագանքելու առումով, ապա **«այսօր արդեն կարելի է փաստել, որ վերջինս իր հիմնական և կրկնվող գծերով ճանաչելի և կանխատեսելի է ինչպես ոլորտի մասնագետների, այնպես էլ ավելի լայն շրջանակների համար: Հանգամանալի կառուցվածքային վերլուծության են ենթարկվել Ադրբեջանի հակահայկական ինֆոհամակարգի հիմնական բաղադրիչները, թեզերը, ուղղությունները, միջոցները, հակազդեցության ուղիները, ադրբեջանական քարոզչության արտադրանքի տիրույթը՝ հատուկ ուղղվածության կայքերից մինչև օտարալեզու կեղծ գիտական հրապարակումներ»**[28]: Բանն այն է, որ եթե Ադրբեջանի հակահայկական տեղեկատվական քաղաքականության հիմնական թեզերի և ուղղությունների առնչությամբ իսկապես գործ ունենք որոշակի կանխատեսելիության հետ, ապա նույն վստահությամբ չի կարելի խոսել բոլոր այն մեխանիզմների մասին, որոնք միտված են այդ թեզերի հանրայնացմանը և միջազգային հնչեղության բարձրաձայնմանը: Հանգամանք, որի հանդեպ հետազոտական կրավորականությունն ու ինստիտուցիոնալ ոչ նախահարձակությունը կարող են ուղեկցվել քաղաքական և քարոզչական «շոգեքարշից» ուշանալու երևույթով:

Վերադառնալով Հեյդար և Իլհամ Ալիևների հակահայկական քարոզչության բնութագրական գծերի պատճառագիտության խնդրին՝ փաստենք, որ Ալիև ավագի ոչ-կոշտ ավտորիտարիզմը *(ի համեմատ կրտսեր Ալիևի)*, ոչ-ծայրահեղացված հակահայկականությունն ու քարոզչական հարաբերական «զսպվածությունը» ամենից առաջ իրողություններին առավել սթափ արձագանքելու քաղաքական փորձառության, այլ ոչ ժողովրդավարական և մարդասիրական արժեքներին հընթացս մոտենալու ներքին նպատակադրման հետևանք էին: Ի հավաստումն ասվածի՝ կարող են հանդես գալ հետևյալ գործոնները.

1. Հեյդար Ալիևի էթնոկենտրոն և հակահայկական քաղաքականությունն իր դրսևորումներն է ունեցել նաև HOMO SOVIETICUS-ի կերտման ժամանակաշրջանում, երբ օգտագործելով ադմինիստրատիվ ռեսուրս-

[28] **Ս. Մանուսյան,** Ադրբեջանի հակահայ քարոզչության յուրահատուկ դրությունը (2012), http://noravank.am/arm/articles/security/detail.php?ELEMENT_ID=5055

ներն ու իր պաշտոնական դիրքը՝ Ադրբեջանի հանգուցյալ նախագահը շարունակում էր նպաստել Ադրբեջանի ԽՍՀ-ում ավանդույթ դարձած ԼՂԻՄ-ի հայաթափման և հիմնականում թյուրքական տարրերով վերաբնակեցման հետևողական քաղաքականությանը:

2. Հասկանալի է, որ արցախյան պատերազմում կրած պարտությունից հետո զինադադարի «աղերսով» ներկայացած Հ. Ալիևի ու իր կլանի իշխանավարման համար փրկության խարիսխ կարող էր հանդիսանալ արտաքին թշնամու և նրա դաշնակիցների գոյությունը, որոնց գործակցության և ներադրբեջանական երկպառակությունների թեզերը կարող էին «ազատել» Ալիևին պարտության պատասխանատվության բեռից: Բացի այդ, թվաբանական մանիպուլյացիաների արդյունք հանդիսացող իբր մեկ միլիոն փախստականների և ներքին տեղահանվածների գոյությունը, իր հերթին, կարող էր արդարացնել շարքային ադրբեջանցիների կյանքի ոչ բարեկեցիկ լինելը և միջազգային հարթակում հակահայկական տրամադրությունների արտահայտումը:

3. Կառավարման բռնապետական կամ կոշտ ավտորիտար մեթոդների խիստ հետևողական կիրառումն առավել խոցելի կդարձներ Հ. Ալիևի դիրքերը: Էթնիկական ինքնագիտակցության հնարավոր զարթոնքի վտանգի պայմաններում և սոցիալ-տնտեսական ծանր վիճակում ազգաբնակչությանը անհրաժեշտ էր ներկայանալ իմաստուն, հանդուրժող և պատմական «արդարությունը» վերականգնելու վճռականություն ունեցող քաղաքական գործչի կամ ազգային առաջնորդի կերպարով: Ավելին, կրտսեր Ալիևի համեմատությամբ՝ հանգամանքների բերումով առավել «հանդուրժողական» ավագ Ալիևը խնդիր ուներ նաև միջազգային հանրության կողմից ընկալելիության, քանզի իր իշխանավարման միայն վերջին երկու-երեք տարիների ընթացքում է, որ նավթի և գազի պաշարների խաղաքարտով ավագ Ալիևը կարող էր հող նախապատրաստել քաղաքական անկաշկանդ առևտրի կամ շահարկումների համար:

Չնայած Ադրբեջանի անկախացումից ի վեր հակահայկական քարոզչությունը տիպական է եղել Ադրբեջանի իշխանությունների և հասարակական տարբեր շրջանակների գործունեությանը, այնուամենայնիվ 2003 թվականին Ի. Ալիևի իշխանության գալը նշանավորվեց հակահայկական քարոզչության նոր և առավել

վտանգավոր որակներով: Հանգամանք, որի հանդեպ տեսական ու գործնական հետաքրքրությունների և քայլերի բացակայությունը կարող է լուրջ մարտահրավեր լինել ՀՀ և Արցախի ազգային անվտանգությանը: Սա պայմանավորված չէ սոսկ նրանով, որ Ադրբեջանի՝ պետական մակարդակով իրականացվող հակահայկական քաղաքականությունը ձևավորում է անհանդուրժողական սերունդ, այլ նրանով, որ նավթադոլարների կովկասյան «արքան» հակահայկականությունը կարողացել է տեղափոխել միջազգային հարթակ՝ որոշակիորեն ապահովելով իր «չեզոքության» իմիտացիան: Շրջանառության մեջ դնելով ֆինանսական վիթխարի ռեսուրսներ՝ Ադրբեջանի իշխանությունները, օրինակ, կարողացել են Բունիաթովի և այլոց պատմագիտական «օբյեկտիվության» սկզբունքներով առաջնորդվող օտարերկրյա հետազոտողների կամ փորձագետների ծառայություններից օգտվել[29]:

[29] Հակահայկական քարոզչության նպատակով օտարերկրյա մասնագետների կամ փորձագետների ծառայություններից օգտվելը ադրբեջանական քարոզչամեքենայի համար ունի մեթոդաբանական և մարտավարական նշանակություն: Դրանով ադրբեջանական կողմը փորձում է լրացուցիչ համոզչականություն հաղորդել սեփական մոտեցումներին, ձևավորել այն կարծրատիպը, թե անգամ «չեզոք» կողմն է փաստում ադրբեջանական մոտեցումների «ճշմարտությունը»: Անդրադառնալով Ադրբեջանի հակահայկական ինֆոքաղաքականության մեթոդաբանությանը՝ փորձագետներից մեկն արդարացիորեն գրում է, որ դրա մարտավարությունը «աղբյուրների դիվերսիֆիկացման պատրանք ձևավորելն է՝ հակահայկական գործողություններում ոչ միայն տեղական, այլև օտարերկրյա հետազոտող գիտնականների ու լրագրողների ներգրավման միջոցով: Ընդ որում՝ կեղծ չեզոք օտարերկրացիների (ինչպիսիք են, օրինակ, Էրիխ Ֆայգլը և ՅուրիՊոմպեևը) ընդգրկումն օգտագործվում է նաև իբրև հակահայկական տեղեկատվական գործողությունների լեգիտիմացման միջոց: Խիստ կարևորվում են նաև օտարերկրյա դիվանագետների և քաղաքական գործիչների ադրբեջանամետ հայտարարությունները՝ դրանք ներկայացնելով իբրև միջազգային հանրության օբյեկտիվ կարծիք» (**Ադրբեջանի հակահայկական տեղեկատվական համակարգը,** Եր., Նորավանք, 2009, էջ 47): Օտարերկրյա գիտնականների կամ փորձագետների ծառայություններից ադրբեջանական քարոզչամեքենայի օգտվելու մասին է հուշում, օրինակ, www.aze.az կայքում տեղ գտած այն հրապարակումը, որտեղ լուսաբանվում է Մոնտանա նահանգի համալսարանի պրոֆեսոր Թոմաս Հոլցի՝ Billings Gazette-ում տպագրված հոդվածը: Վերջինում հոդվածագիրը «մաթեմատիկական ճշգրտությամբ» ներկայացնում է Շուշիի պատմության, Շուշիի գրավման (իրականում՝ ազատագրման – Ա.Ս.) վերաբերյալ ադրբեջանական քարոզչամեքենայի դրույթները՝ չմոռանալով ՀՀ-ին մեղադրել էթնիկ զտումներ իրականացնելու մեջ (տես **Томас Гольц: Оккупация Шуши – символ этнической чистки, проводимой Арменией** (2013), http://aze.az/news_tomas_golc_okkupaciya_91795.html): Չբացառելով հիշատակված հոդվածի գոյության հնարավորությունը և հոդվածագրի իրական կերպար լինելը՝ այնուամենայնիվ փաստենք, որ ադրբեջանական քարոզչամեքենայի դրույթների և հոդվածի դրույթների նույնականությունը «վկայում» են նավթադոլարների խաղացած դերի մասին:

Վերջիններս իրենց «ակադեմիական» հրապարակումներով կամ զեկույցներով նաև արտասահմանյան լսարանին են հասցնում «հայկական ագրեսիայից» տուժած և արդարության վերահաստատման կարոտ ադրբեջանցիների վերաբերյալ պատմական «ճշմարտությունը»: Բացի այդ, Ադրբեջանի ֆինանսական ռեսուրսներն ուղղվում են ոչ միայն հետազոտական շրջանակների, այլև քաղաքական ու դիվանագիտական ոլորտների ներկայացուցիչներին՝ խթանելու նրանց ադրբեջանամետ և հակահայկական գործունեությունը: Վերջին գործոնը առավել վտանգավոր է, քանի որ ավտորիտար գործչի կամ բռնապետի համբավ ունեցող Ադրբեջանի նախագահը այսօրինակ ճանապարհով կարողանում է մասնակիորեն լեգիտիմացնել հակահայկական քարոզչության բովանդակությունը:

Ադրբեջանի հայատյաց քարոզչության նախադրյալների շարքում քաղաքական իշխանության պահպանման նախադրյալը ևս առանձնահատուկ տեղ ունի: Սա ամենից առաջ պայմանավորված է նրանով, որ Ի. Ալիևի կլանը հայկական գործոնի շահարկմամբ փորձում է շեղել ազգաբնակչության ուշադրությունը երկրում առկա խնդիրներից: Բացի այդ, սեփական իշխանության թերությունները փորձում է լեգիտիմացնել կամ բացատրել արցախյան հակամարտության չկարգավորվածության, համայն հայության և նրանց հովանավորների հակաադրբեջանական դավադրության գործոններով: Այս առումով արտաքին թշնամու կերպարի արդիականացումն ու հետևողականորեն շրջանառումը օրապահանջ է Ադրբեջանի իշխանությունների համար և նպատակ ունի հասարակության մեջ առկա բացասական տրամադրությունները կամ էներգիան տեղափոխել իրենց իշխանության պահպանման տեսանկյունից կառուցողական հուն, ինչը և որոշակիորեն ստացվում է: Եվ սա միանգամայն բնական է, քանի որ 2000-ական թվականներից սկսված նավթային բումը և Ադրբեջանի պետական բյուջեի կտրուկ ավելացումը չուղեկցվեցին ազգաբնակչության կենսամակարդակի բարձրացման, քաղաքական իրավունքների և քաղաքացիական ազատությունների պաշտպանվածության այնպիսի ցուցանիշներով[30], որոնք թույլ կտային խոսել արդյունավետ տնտեսական ու

[30] Օրինակ, 1941թ. ԱՄՆ-ում հիմնադրված “Freedom House” կազմակերպության «Ազատության վարկանիշն աշխարհում» 2011-2012թթ. տարեկան զեկույցներն այս առումով բավականին խոսուն են: Ըստ այդ զեկույցի՝ Ադրբեջանը դասվում է ոչ ազատ պետությունների

սոցիալական քաղաքականության կամ պետության ժողովրդավարացման մասին: Պատահական չէ, որ այս հանգամանքը արդարացնելու նպատակով իր իշխանավարման տարիներին Ի. Ալիևը շարունակեց ավագ Ալիևի կերպարի ոչ կրոնական իմաստով «սրբացումը» ու ֆետիշացումը *(1993թ. հունիսի 15-ը՝ Հեյդար Ալիևի իշխանության վերադարձի օրը, դեռևս 1997թ. հայտարարվել էր ազգային փրկության օր)*՝ հետամուտ լինելով հեյդարապաշտ սերնդի և հասարակության ձևավորմանը: Հայաստանյան ընթերցողին հավանաբար ծանոթ է այն փաստը, որ Ադրբեջանը հեղեղված է Հ. Ալիևի անվան կենտրոնական պողոտաներով և փողոցներով, ավելի քան 60 թանգարաններով և կենտրոններով, իսկ գրեթե բոլոր հաստատություններում և որոշ մզկիթներում ստեղծված են «Հ. Ալիևի հիշատակի սենյակներ»:

Առաջին հայացքից սեփական հորը հարգանքի տուրք հիշեցնող այս նախաձեռնության հիմքում, անշուշտ, առավել հեռահար նպատակներ են ընկած: Հ. Ալիևի «մեսսիական» որակների շեշտմամբ և հասարակական կարծիքը հեյդարապաշտությամբ կաղապարելով՝ կրտսեր Ալիևը նպատակ ունի որոշակիորեն լեգիտիմացնել իր իշխանությունը՝ որպես ազգի փրկչի գործը շարունակողի: Իսկ կրթական հաստատություններում «Հ. Ալիևի հիշատակի սենյակների» ստեղծումը, նրան նվիրված տարաբնույթ միջոցառումների կազմակերպումն ու քարոզչական ծրագրերի իրագործումը նպատակ ունեն նորահաս սերնդի մոտ ձևավորել Հ. Ալիևի և նրա գործը շարունակողների ազգապահպան առաքելության

շարքին՝ քաղաքական իրավունքների և քաղաքացիական ազատությունների ցուցիչներին համապատասխան (տես **Կ. Վերանյան,** FREEDOM HOUSE. «Ազատության վարկանիշն աշխարհում» 2011-2012թթ. զեկույցները (2013), http://www.noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT_ID=6447): Ամերիկյան The Heritage Foundation և The Wall Street Journal օրաթերթի կողմից իրականացված «Տնտեսական ազատության ինդեքսը» հետազոտության արդյունքները ևս չեն խոսում Ադրբեջանի օգտին: Չնայած 2012 թվականի համեմատ 2013 թվականին Ադրբեջանը 3 կետով բարելավել է սեփական դիրքերը՝ 91-ից տեղափոխվելով 88-րդ հորիզոնական, այնուամենայնիվ, համաձայն այդ հետազոտության արդյունքների, տնտեսական ազատության ցուցանիշներով որակապես զիջում է 39-րդ հորիզոնականում գտնվող Հայաստանին և դասվել է ոչ ազատ երկրների շարքին (տես **Կ. Վերանյան,** «Տնտեսական ազատության ինդեքսը» 2012-2013թթ.. Վարկանիշային համեմատական վերլուծություն (2013), http://www.noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT_ID=6944: Այս հարցերի հետ կապված տես նաև՝ **Կ. Վերանյան,** Ադրբեջանը թվերով. վարկանիշային հետազոտությունների արդյունքները (2010), http://www.noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT_ID=5063:

անայլընտրանքայնության կարծրատիպը: Չնայած այն բանին, որ Ադրբեջանում առաջնորդապաշտության այսօրինակ դրսևորումը ընդհանրության աղերսներ ունի Հյուսիսային Կորեայում Կիմ Իր Սենի և ապա նրա որդի Կիմ Իր Չենի պաշտամունքի հետ[31], այնուամենայնիվ անձի պաշտամունքի հյուսիս-կորեական և ադրբեջանական տարբերակների միջև կա մի էական տարբերություն: Բանն այն է, որ իր անձի պաշտամունքը Կիմ Իր Սենը ամենից առաջ բացատրում է մշակութային գործոնով[32], այլ ոչ սոսկ սեփական անձով, մինդեռ Հ. Ալիևի պաշտամունքն Ադրբեջանում բացատրվում է նրա՝ ազգի փրկիչ լինելու անզուգական որակով:

Նկատի ունենալով **«Միջազգային ճգնաժամային խմբի»** զեկույցը՝ Զ. Գուլիևը նշում է, որ դրա համաձայն՝ Հ. Ալիևի անձի պաշտամունքը Ադրբեջանի գաղափարախոսության հիմքն է *(այս մտքի հետ կարելի է մասնակիորեն համաձայնել, քանի որ Ադրբեջանի գաղափարախոսության հիմքերից սոսկ մեկն է՝ հայատյացության հետ մեկտեղ – Ա.Ս.)*, ըստ որի Հ. Ալիևը փրկել է Ադրբեջանը, իսկ այդ պաշտամունքը աստիճանաբար տեղափոխվում է նաև նրա որդի Իլհամի վրա: Փաստելով անհատի պաշտամունքի ձևավորման և տարածման ուղղությամբ կրտսեր Ալիևի վիթխարի «ձեռքբերումները»՝ Գուլիևը միաժամանակ հռետորական հարցերով ակնարկում է, որ Հ. Ալիևի պաշտամունքը և դրա «արտահանումը» որևէ էական ու դրական նշանակություն չունեն Ադրբեջանի համար՝ չհաշված ահռելի ֆինանսական ծախսերն ու կորուստները[33]: Արդյունքում ստացվում է, որ Հ. Ալիևի պաշտամունքը ամենից առաջ կոչված է հագուրդ տալու Ի. Ալիևի քաղաքական հավակնություններին և լեգիտիմացնելու նրա իշխանությունը: Ընդ որում, Հ. Ալիևի պաշտամունքի մակարդակում դժվար է չնկատել ադրբեջանցիների համար եղբայրական թուրք ժողովրդի և բարեկամական Թուրքիայի համար

---

[31] Հյուսիսային Կորեայում անձի պաշտամունքի հետ կապված տես **К. Асмолов,** Вождь и его культ или Песня о полководце Ким Ир Сене (2013), http://www.vesti.ru/doc.html?id=116236&tid=14650

[32] Պատահական չէ, որ Կիմ Իր Սենն իր երկրում անձի պաշտամունքի գոյության առնչությամբ ասել է. **«Մեր երկրում ընդունված է հարգել ավագներին: Չինաստանի և Ճապոնիայի պես մենք պատկանում են կոնֆուցիոսական մշակույթին»** (մեջբ. ըստ **К. Асмолов,** նշվ. աշխ., (2013), http://www.vesti.ru/doc.html?id=116236&tid=14650):

[33] Տես **Зафар Гулиев рассказал о попытке Алиева переписать историю, используя нефтедоллары** (2012), http://analitika.at.ua/news/zafar_guliev_rasskazal_o_popytke_alieva_perepisat_istoriju_ispolzuja_neftedollary/2012-11-27-69959

առանցքային նշանակություն ունեցող Աթաթուրքի պաշտամունքային մոդելի հետ ընդհանրությունը: Սակայն այն տարբերությամբ, որ եթե Աթաթուրքի հիմնադրած պետությունը *(միլիոնավոր հայերի ոսկորների վրա կառուցված)* իրավամբ մեծ հաջողություններ է արձանագրել տնտեսական, դիվանագիտական և այլ հարթություններում, համարվում է տարածաշրջանային տերություն, ապա Հ. Ալիևի փրկարարական առաքելությունը աչքի է ընկնում արցախյան պատերազմում անփառունակ պարտությամբ և Ադրբեջանի քաղաքացիներին բռնապետական կամ ավտորիտար ձիրքերով աչքի ընկնող որդի «նվիրաբերելու» փաստով:

Թեպետ սեփական իշխանության լեգիտիմացման տեսանկյունից Ի. Ալիևը որոշակի «հաջողություններ» կարողացել է արձանագրել *(նկատի ունենք Ալիև ավագի պաշտամունքի գործոնը)*, այնուամենայնիվ պետք է նկատել, որ անհատի պաշտամունքի համատեքստում արձանագրված «հաջողակ» լեգիտիմացիան նույն Ալիևի համար փակուղային դառնալու ներուժ ունի: Բանն այն է, որ ներքին լսարանին ուղղված ադրբեջանական քարոզչամեքենան մի կողմից չի կարող հրաժարվել արտաքին թշնամու կերպարից կամ հայատյացությունից, իսկ մյուս կողմից չի կարող երկարաժամկետ տարբերակով օրակարգում պահել Ադրբեջանի անօրինակ ռազմական, տնտեսական, սոցիալական ձեռքբերումների և արդյունավետ կառավարման դիցերը: Հասկանալի է, որ Ադրբեջանի հզորության և անշրջելի հաղթանակների, իսկ Հայաստանի Հանրապետությանը սպասվող «ապոկալիպսիսի» մասին ադրբեջանական քարոզչական թեզերն Ադրբեջանի հասարակության համար վերբալ տիրույթից փաստերի հարթություն տեղափոխվելու անհրաժեշտության առջև են կանգնելու, մինչդեռ նույն Ալիևի ռեժիմն այսօր չի կարող իր հաղթանակի մասին թեզը ապացուցել՝ դիմելով ռազմական արկածախնդրության: Այսինքն՝ **արցախյան հիմնահարցի հետ կապված ստատուս քվոյի պահպանումն այսօր բխում է Ադրբեջանի շահերից** *(չնայած այն իրողությանը, որ պատեհ առիթն օգտագործելով՝ Ադրբեջանը Հայաստանի իշխանություններին է մեղադրում ստատուս քվոյի պահպանման համար):* Չունենալով ռազմական ագրեսիա իրականացնելու և ցանկալի արդյունքները երաշխավորված տեսնելու ռազմական, քաղաքական և այլ հուսալի նախադրյալներ՝ այսօրինակ

ճանապարհով Ալիևը ժամանակ է շահում և ամրապնդում սեփական իշխանության պահպանման հիմքերը: Այս ամենի մասին են վկայում մի շարք գործոններ, որոնցից կառանձնացնեինք հետևյալները.

1. Չնայած Ադրբեջանի միայն ռազմական բյուջեն գերազանցում է ՀՀ պետական բյուջեն, այնուամենայնիվ տարբեր փորձագետների գնահատմամբ իր մարտունակությամբ և որակական հատկանիշներով ադրբեջանական բանակը Արցախի պաշտպանության բանակի և ՀՀ զինված ուժերի համեմատ չունի այնպիսի առավելություն, որը երաշխավորված կդարձներ պատերազմի՝ իր համար ցանկալի ելքը: Օրինակ, Ռազմավարական հետազոտությունների միջազգային ինստիտուտի *(**The International Institute for Strategic Studies, IISS,** կենտրոնակայանը՝ Լոնդոն, Մեծ Բրիտանիա)* հրապարակած **«Ռազմական հավասարակշռություն 2013»** խորագրով ամենամյա զեկույցում անդրադարձ է կատարվում Հայաստանի և Ադրբեջանի զինված ուժերի ներուժին ու հնարավորություններին: Զեկույցում նշվում է, որ ինչպես Հայաստանը, այնպես էլ Ադրբեջանը յուրաքանչյուր տարի զգալի ֆինանսական միջոցներ են հատկացնում ռազմական ոլորտին: Սակայն, եթե Հայաստանում այդ նպատակներով տարեկան մոտ 400 մլն դոլար է ծախսվում *(2012թ-ին՝ 394 միլիոն)*, ապա Ադրբեջանում անհամեմատ ավելի շատ. միայն 2012թ. Բաքվի ռազմական ծախսերը գնահատվել են 1 միլիարդ 770 միլիոն դոլար: Բրիտանացի փորձագետների համաձայն՝ չնայած Ադրբեջանի ռազմական բյուջեն մի քանի անգամ գերազանցում է ՀՀ ռազմական բյուջեն, այնուամենայնիվ Հայաստանի բանակն իր մարտունակությամբ գերազանցում է ադրբեջանականին[34]:

2. Համոզված ենք, որ սա շատ լավ են գիտակցում նաև Ադրբեջանի պատկան մարմինները, որոնք էլ իրականում հակված չեն պատերազմական գործողությունների վերսկսմանը՝ հաշվի առնելով չերաշխավորված հաղթանակի ռիսկայնությունը և, ըստ այդմ, Ալիևյան կլանի քաղաքական ասպարեզից դուրս մնալու հավանականությունը: Ավելին, եթե հաշվի առնենք նաև ադրբեջանական բանակում տիրող բարոյահոգեբանական մթնոլորտը, ապա ամեն բան պարզ կդառնա: Ի

[34] Տես Британские эксперты сравнили армии Армении и Азербайджана (2013), http://regnum.ru/news/1636726.html

դեպ, նշենք, որ ադրբեջանական բանակում անառողջ մթնոլորտի մասին դատողությունը հայկական քարոզչական մեքենայի մտահղացումը չէ. այդ մասին վկայում են հենց Ադրբեջանի պատկան մարմինների ներկայացուցիչները: Այս տեսանկյունից, օրինակ, բավականին խոսուն է Ադրբեջանի պաշտպանության նախարարի մամլո ծառայության ղեկավար Սաբիրօղլուի պատասխանը լրագրողներից մեկի այն դիտարկմանը, որ Ադրբեջանի բանակում զանգվածային բնույթ են կրում բռնաբարությունները: **«Դրանք,-** նշել է Սաբիրօղլուն,- **բռնություններ չեն: Պարզապես լավ սնվելու հետևանքով երիտասարդ տղաների մոտ ավելանում է տեստաստերոնի քանակը: Այսինքն՝ սեռական բռնության դեպքերը խոսուն վկայությունն են զինվորների լավ սննդի: Ուշադրություն դարձրեք՝ հայ զինվորների շրջանակներում երիտասարդներին** *(իմա՝ հավանաբար նկատի ունի նորեկներին – Ա.Ս.)* **բռնության չեն ենթարկում: Դա առաջին նշանն է այն բանի, որ հայ զինվորները սոված են մնում»**[35]:

3. Պատերազմական գործողությունների վերսկսման հավանականությունը բավականին ցածր է նաև այն պատճառով, որ լինելով նավթ և գազ արտահանող պետություն, որը որոշակի դերակատարություն ունի Եվրոպայի էներգետիկ անվտանգության ապահովման գործում՝ Ադրբեջանը Արևմուտքին պետք է որպես տարածաշրջանային խաղաղության համատեքստում գործառնող պետություն: Այսինքն՝ պատերազմական գործողությունների վերսկսումը կարող է վտանգել Բաքու-Թբիլիսի-Ջեյհան նավթամուղի և Բաքու-Թբիլիսի-Էրզրում գազամուղի բնականոն աշխատանքը, ինչը լուրջ հարված կլինի Եվրոպայի և այլ շահագրգիռ կողմերի էներգետիկ անվտանգությանը: Իսկ նման բան Արևմուտքն իրեն թույլ տալ չի կարող:

4. Մյուս կողմից՝ պատերազմական գործողությունների վերսկսման դեպքում Ադրբեջանը կարող է բախվել «ներքին թշնամու» երևույթին: Լինելով բազմաէթնիկ պետություն և հետևողականորեն իրականացնելով տեղաբնիկ ժողովուրդների ձուլման կամ էթնիկ ուծացման քաղաքականություն՝ Ադրբեջանի իշխանություններն այդուամենայնիվ չեն կարողացել

[35] Մեջբ. ըստ **Шедевры деазгопов** (2012), http://www.yerkramas.org/2010/03/16/shedevry-deazgopov/

վերջնականապես չեզոքացնել այն վտանգները, որոնք բխում են ինքնության պահպանման խնդիր ունեցող տեղաբնիկ ժողովուրդներից: Չնայած անկախության տարիների ընթացքում Ադրբեջանի իշխանություններին որոշակիորեն հաջողվել է իրագործել վերջիններիս *(թալիշներ, լեզգիներ, ուդիներ և այլն)* «գլխատում»՝ ի դեմս նրանց մտավորական առաջնորդների սպանությունների, ձերբակալությունների և այլն[36], սակայն այդ հանգամանքը և արցախահայության ինքնորոշման փայլուն օրինակը որոշակի ազդակ են հանդիսացել էթնիկ ինքնագիտակցության բարձրացման համար: Այդ պատճառով է, որ իշխանությունները հաճախ դիմում են ռեպրեսիվ մեթոդների՝ էթնիկական հիմքով ցանկացած շարժում դեռևս սաղմնային վիճակում վիժեցնելու համար: Էթնիկական գործոնի հնարավոր ակտիվացումը կարող է պայմանավորված լինել նաև «ադրբեջանցի» կոչվող կեղծ նախագծի պատճառով: Բանն այն է, որ «ադրբեջանցի» էթնոս գոյություն չունի, իսկ ադրբեջանցի հասկացությունը կոչված է փաստելու այս կամ այն էթնոսի ներկայացուցչի Ադրբեջանի քաղաքացի լինելու հանգամանքը: Իսկ ադրբեջանցի կամ ադրբեջանական ժողովուրդ հասկացությունները Ադրբեջանում հիմնականում հասկանում են թյուրքական ինքնության կրողը լինելու կամ դառնալու համատեքստում: Օրինակ, ադրբեջանցի պատմաբան Ֆարիդ Ալեկպերլին Ադրբեջանի ազգային գաղափարախոսության հետ կապված խնդիրներ քննարկելիս նշում է, որ ազգային գաղափար ձևավորելուց առաջ հստակ պետք է կողմնորոշվել ինքնանվանման և էթնիկական պատկանելության առումով: Ըստ նրա, գոյություն ունի դրա ընդամենը երկու տարբերակ: **«Եթե մենք,**- գրում է Ալեկպերլին,- **ազգային գաղափարախոսություն ձևավորենք ելնելով «ադրբեջանցի»**

[36] Օրինակ, 2007թ. փետրվարի 2-ին պետության դավաճանության մեղադրանքով ձերբակալվեց և տասը տարվա ազատազրկման դատապարտվեց թալիշ հայտնի մտավորական, Թալիշական մշակութային կենտրոնի տնօրեն, «Թոլիշի սյադո» («Թալիշների ձայն») թերթի խմբագիր, թալիշագետ Նովրուզալի Մամեդովը, ով 2 տարի անց մահացավ բանտում: Մամեդովի կնոջ համոզմամբ, ամուսնուն սպանել են (պատահական չէ, որ տարբեր միջազգային կազմակերպություններ Ադրբեջանի իշխանություններին հորդորում են հետաքննություն անցկացնել Մամեդովի մահվան հետ կապված), իսկ իշխանությունների բարոյական և ֆիզիկական ճնշումների արդյունքում մահացել է թալիշ մտավորականի որդիներից մեկը, մյուսն էլ՝ հայտնվել բանտում (տես **Ա. Փաշայան,** Թալիշական գործոնն Ադրբեջանում (2013), http://www.noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT_ID=410, **Я. Амелина,** Талышский вопрос в современном Азербайджане (2013), http://www.centrasia.ru/newsA.php?st=1217577960):

էթնոնիմից, որն ի հայտ է եկել 1930-ականներին Ստալինի նախաձեռնությամբ, ապա կստանանք այն, ինչ ստացել ենք: Այսինքն՝ կմտնենք փակուղի կամ կձևավորենք հորինված ժողովրդի ոչ կենսունակ, արհեստական ազգային գաղափար: ...Իսկ եթե մենք՝ Ադրբեջանի թյուրքերս, վերադարձնենք մեր բնական ինքնանվանումը՝ թյուրք, որով անվանում էինք մեզ հարյուրավոր տարիներ՝ մինչև 1930-ականների վերջը, ապա կջարդենք Ստալինի պարտադրած «Գորդյան հանգույցը» և կվերադառնանք ազգային գոյության նորմալ, բնականոն հուն: Արդյունքում՝ բազմաթիվ բարդ հարցերի պարզ պատասխաններ կտրվեն և անլուծելի թվացող բազմաթիվ հարցեր ինքնըստինքյան կլուծվեն *(ընդգծ. իմն է - Ա.Ս.)*[37]»:

5. Պատերազմի վերսկսման հավանականությունը նվազ է նաև կրոնական կամ, տվյալ դեպքում, իսլամական գործոնից բխող վտանգների պատճառով: Հայտնի է, որ Ադրբեջանի գործող իշխանությունների մի շարք «նորամուծություններ» դժգոհության ալիք էին բարձրացրել երկրի մահմեդական բնակչության շրջանակներում, որոնց համաձայն՝ Ալիևյան կլանն իր գործելաոճով կամ «գռեհիկ» աշխարհիկությամբ շեղվել է իսլամական արժեքներից: Բացի այդ, հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ադրբեջանի բնակչության մեծ մասը իսլամի շիա ուղղության ներկայացուցիչներ են, իսկ այս համատեքստում Ադրբեջանի ներքաղաքական կյանքի վրա իրանական ազդեցությունը բավականին մեծանում է, իսկ վերջին տարիներին ուժեղացել է լարվածությունը Ադրբեջանի և Իրանի միջև, ապա հասկանալի է, որ իսլամի սունի ուղղությունը ներկայացնող Թուրքիայի հանդեպ Ադրբեջանի եղբայրասիրությունը կարող է նպաստել կրոնական հիմքով հակասությունների խորացմանն ու լարվածության ավելացմանը:

Արդեն նշել ենք, որ Ադրբեջանի ռազմական հռետորաբանության «անատամ» լինելու մասին վկայում են օտարերկրյա բազմաթիվ փորձագետներ, որոնք ևս այն կարծիքին են, որ Ադրբեջանի միլիտարիստական հայտարարություններն ունեն առավելապես ներքաղաքական ենթատեքստ, իսկ պատերազմի հնարավոր վերսկսումը կարող է կործանարար

[37] **Ф., Алекперли,** Национальная идеология Азербайджана (2013), http://www.kavkazweb.net/forum/index.php?showtopic=51036

լինել Ադրբեջանի համար: Օրինակ, իրանական «Նոր հեռանկարներ» վերլուծական կենտրոնի ղեկավար Միր Հասեմ Մոումենին Ռեգնում ինֆորմացիոն գործակալությանը տված հարցազրույցում մասնավորապես ասում է. **«Կան մի շարք պատճառներ, որոնք թույլ են տալիս պնդել, որ Բաքուն առայժմ չի պատրաստվում նոր պատերազմ հրահրել: Այստեղ այլ խնդիր է. ընդդիմությունը ուղիներ է փնտրում իր նպատակներին հասնելու համար, իսկ պաշտոնական Բաքվի ռազմատենչ հայտարարությունները ուղղված են ընդդիմադիր տրամադրություններ ունեցող քաղաքական ուժերին»**[38]: Իսկ ռուսաստանցի ռազմական փորձագետ, «Ազգային պաշտպանություն» ամսագրի խմբագիր Ի. Կորոտչենկոն 2012 թ. իր հարցազրույցներից մեկում նշում է, որ ադրբեջանական բանակն իսկապես մարդկային ռեսուրսի և զինտեխնիկայի առումով գերազանցում է հայկական կողմին, սակայն հնարավոր պատերազմի դեպքում հանդես կգա պարտվողի կարգավիճակում: **«...Չնայած Ադրբեջանը մեծացնում է ռազմական մկանները, ավելացնում է պաշտպանական ծախսերը,**- ասում է Ի.Կորոտչենկոն,- **այնուամենայնիվ, ռուսաստանյան ռազմական փորձագետների գնահատականներով, իր ռազմական պատրաստվածությամբ հայկական բանակը հետխորհրդային տարածքում զիջում է միայն բելոռուսական զինված ուժերին՝ զբաղեցնելով երկրորդ տեղը: ...Մենք կարծում ենք, որ եթե Ադրբեջանը սկսի ռազմական գործողությունները, ապա Հայաստանը կործանիչ ռազմական պարտության կմատնի նրան՝ անկախ վերջինիս թվական և տեխնիկական առավելություններից»**[39]:

Ադրբեջանի հընթացս բազմապատկվող ռազմատենչ հայտարարությունները կամ ռազմական հռետորությունը սոսկ հերթական տեխնոլոգիական գործիքներն են քարոզչական զինանոցում, որոնք իրականում հասցեագրված են ներքին և արտաքին հասցեատերերի՝ հետապնդելով տարբեր նպատակներ: Ներքին հասցեատերը ադրբեջանական հասարակությունն է, որն այդ ռազմական հռետորաբանության համատեքստում կարող է «արձանագրել» իշխանությունների վճռականությունը և

[38] **Азербайджан не готов к войне в Нагорном Карабахе: иранский эксперт** (2012), http://www.regnum.ru/news/1582231.html

[39] **Армения нанесет военное поражение Азербайджану, если Баку развернет боевые действия** (2013), http://www.newsarmenia.ru/exclusive/20120607/42676109.html

միջազգային մակարդակում բարձրաձայնվող համարձակությունը իրենց պատկերացրած տարածքային ամբողջականությունը վերականգնելու հարցում, իսկ արտաքին հասցեատերը հայկական կողմն է կամ միջազգային հանրությունը: Սակայն, ի տարբերություն ներքին լսարանի, արտաքին լսարանին հասցեագրված ռազմաշունչ հայտարարությունները նպատակ ունեն քաղաքական առավել շահեկան առևտուր իրականացնել ու հայկական կողմին առավելագույն զիջումների դրդել: Այսինքն՝ **առկա իրողությունների համատեքստում Ադրբեջանի ռազմական հռետորաբանությունն ունի իմիտացիոն բնույթ, որը միտված է ներքին լսարանի առջև տվյալ քաղաքական կուրսը լեգիտիմացնելուն, իսկ արտաքին լսարանի առջև որոշակի զիջումներն առավել թանկ «վաճառելուն»:** Եվ սա միանգամայն հասկանալի է, քանի որ քաջ գիտակցելով պատերազմի վերսկսման հարցում միջազգային հանրության ներկայացրած «վետոյի» բովանդակությունը՝ Ադրբեջանը պարզապես չի կարող պատեհ առիթը բաց թողնել և ռազմաշունչ հայտարարություններով երկու թիրախ չխոցել: Այս համատեքստում հատկանշական է ՀՀ նախագահի՝ 2010թ. Euronews հեռուստաալիքին տված հարցազրույցի *(ՀՀ նախագահը պաշտոնական Բաքվին առաջարկել էր ստորագրել ուժի չկիրառման համաձայնագիր)* և դրա հանդեպ Բաքվի հուզախառն արձագանքի առնչությամբ «Նեզավիսիմայա գազետա» թերթի հոդվածագրի անդրադարձը, ուր նշվում է. **«Այդքան էլ հասկանալի չէ, թե կոնկրետ ինչն է հունից հանել ադրբեջանական կողմին, քանի որ Հայաստանի ղեկավարի առաջարկը համապատասխանում է ղարաբաղյան հակամարտության կարգավորման վերաբերյալ թարմացված Մադրիդյան սկզբունքներին, որոնք ամբողջովին բացառում են ուժի կիրառումը և դրական են գնահատվել Բաքվի կողմից»**[40]: Չենք կարող չհամաձայնել հոդվածագրի հետ այն առումով, որ այստեղ իրոք «անհասկանալի» կամ, ավելի ստույգ, տարօրինակ պահ կա, սակայն ի լրումն հոդվածագրի կարող ենք նշել, որ այդ **«անհասկանալին» հասկանալի է դառնում, եթե առաջնորդվում ենք Ադրբեջանի ռազմական հռետորաբանության ներքին և արտաքին լսարանների տարանջատման մեթոդաբանության դիրքերից:**

[40] Տես «**ՀՀ նախագահի՝ ուժի չկիրառման համաձայնագիր ստորագրելու առաջարկը հունից հանել է ադրբեջանական կողմին»** (2012), http://ar.newsarmenia.ru/arm1/20100323/42220168.html

Համոզված ենք, որ այնպիսի հիպոթետիկ իրավիճակում, երբ, օրինակ, միջազգային հանրությունը կամ Արևմուտքը այլևս կախվածություն չունեն ադրբեջանական նավթից, Ի. Ալիևի ռազմական «երգ երգոցը» մետամորֆոզներ կապրի և նա կկանգնի *(եթե պահպանի իշխանությունը)* քարոզչական նորանոր տեխնոլոգիաների մշակման անհրաժեշտության առջև:

Նախորդ շարադրանքի հետ կապված գուցե կարող են հարցեր առաջանալ. եթե Ադրբեջանի ռազմական հռետորաբանությունն ունի սոսկ մանիպուլյատիվ բնույթ, ապա ինչու՞ հայկական կողմը Ադրբեջանի հասարակությանը թույլ չի տալիս համոզվել դրա մանիպուլյատիվության մեջ, ինչո՞ւ է միջազգային հարթակներում շարունակ բարձրաձայնում ուժի չկիրառման, հակամարտությունը բացառապես խաղաղ ճանապարհով լուծելու առաջնահերթությունները, արդյո՞ք այդ ամենը խոցելի չի դարձնում մեզ, քանի որ կարող է տպավորություն առաջացնել առ այն, որ դարձել ենք Ադրբեջանի ռազմաշունչ արտահայտությունների խայծի զոհը և միջազգային հանրությունից «աղերսում» ենք երաշխավորել Ադրբեջանի սանձահարումը: Չբացառելով նման հարցադրումների հնարավորությունը՝ նշենք, որ դրանք չի կարելի արդարացված համարել: Բանն այն է, որ բանակցությունների ժամանակ և այլ առիթների դեպքում հայկական կողմն առավելապես ներկայանում է միջազգային հանրության կողմից ընկալելի կերպարի դիրքերից, որը պատրաստ է նախաձեռնողականություն դրսևորել տարածաշրջանային խաղաղության ամրապնդման գործում, որը դատապարտելով ուժի կիրառումն ու ատելության սերմանումը՝ որոշակիորեն ընդգծում է արևմտյան արժեհամակարգի հետ իր ընդհանրությունը և այլն: Այսինքն՝ *քաջ գիտակցելով այն հանգամանքը, որ ադրբեջանական կողմը չի կարող կամ խիստ դժվարությամբ կարող է համաձայնել ուժի չկիրառման վերաբերյալ փաստաթղթեր ստորագրել, և հետևողականորեն բարձրաձայնելով ուժի չկիրառման անհրաժեշտության գաղափարը՝ հայկական կողմը, ըստ էության, կարողանում է օգտագործել Ադրբեջանի իշխանությունների խոցելի կողմերը, որի արդյունքում Ադրբեջանը միջազգային հանրությանը ներկայանում է ոչ ցանկալի կերպարի դիրքերից: Ավելին, Ադրբեջանի ռազմատենչ հայտարարությունները և հակահայկականությունն ի ցույց դնելով՝ հայկական կողմն այսօրինակ ճանապարհով ևս մեկ համոզիչ փաստարկ է ավելացնում Ադրբեջանի կազմում Արցախի*

և արցախահայության գտնվելու ոչ թե աննպատակահարմարության, այլ անհնարինության օգտին: Իհարկե, **ասվածը չի նշանակում, թե հայկական կողմը ուժի կիրառման անթույլատրելիության գաղափարի շրջանառմամբ սոսկ օգտագործում է ադրբեջանական կողմի թերիները, այլ նշանակում է, որ գիտակցելով սեփական և Արևմուտքի շահերի ընդհանրությունը՝ կարողացել է դիվանագիտական հարթակում կյանքի կոչել ցանկալիի և օգտակարի ներդաշնակ միասնությունը:**

Պատերազմի հավանականության նվազ լինելը, անշուշտ, չի կարող սկզբունքորեն բացառել դրա հնարավորությունը: Առաջիկայում Ադրբեջանի ռազմական արկածախնդրության համար կարող է լինել մեկ հիմնական նախադրյալ: 2013թ. նախագահական ընտրությունների համատեքստում սեփական իշխանության կորստի վտանգն ու սեփական կարողությունների պահպանման երաշխիքների բացակայությունը Ալիևին կարող են դրդել դիմելու ռազմական ագրեսիայի կամ արկածախնդրության: Հանգամանք, որը չի կարելի բացառել, բայց և չի կարելի առավել քան իրատեսական կամ անխուսափելի համարել: Որքան էլ պատերազմի հավանականությունն այսօր նվազ լինի, հայկական կողմը չպետք է զգոնությունը թուլացնի, քանի որ ստատուս-քվոյի պահպանմամբ Ադրբեջանը կարող է քայլ առ քայլ նախադրյալներ ստեղծել հաջողակ ռևանշիզմի համար: Այսինքն՝ հակառակորդին թերագնահատելը և նրա թերություններով սփոփվելը պետք է բացառվեն քաղաքական պրագմատիզմի տրամաբանությունից:

Հասկանալի է, որ Ալիևների ստեղծած տնտեսական «կայսրությունը», որն առավելապես Ադրբեջանի նավթային և գազային ռեսուրսների իշխանական յուրացման, կոռուպցիոն բուրգի գործառնման հետևանք է՝ կարիք ունի երաշխավորված պաշտպանության: Այս համատեքստում է, որ Ի. Ալիևի իշխանատենչությունը դառնում է միանգամայն օրինաչափ, ինչն էլ, իր հերթին, անհրաժեշտ է դարձնում իռացիոնալ գործոնների ակտիվացումն ու ռեպրեսիվ մեթոդների կիրառումը: Ուստի, պատահական չէ, որ Ալիևը հետևողական գտնվեց անհատի պաշտամունքը խորացնելու, հակահայկականությունը պետական մակարդակով քարոզելու, էթնիկ փոքրամասնությունների ձուլման քաղաքականությունը շարունակելու, այլախոհությունն ու քաղաքացիական ազատությունները ռեպրեսիվ ճանապարհով չեզոքացնելու հարցում: Մոտեցումներ, որոնք վերջին տարիներին առավել

բացահայտ և կոշտ քննադատության են արժանացել Արևմուտքի առաջատար պարբերականների, մարդու իրավունքների պաշտպանությամբ զբաղվող կազմակերպությունների, քաղաքական գործիչների և տարբեր ինստիտուցիոնալ կառույցների կողմից: Նաև այդ քննադատությունների գոյությամբ պետք է բացատրել այն, թե ինչու են Ադրբեջանի իշխանությունները ստիպված եղել վիթխարի ֆինանսական ռեսուրսներ ծախսել միջազգային մակարդակում Ադրբեջանի դրական իմիջն ապահովելու գործում՝ կազմակերպելով «անառողջ» պետականության «կոսմետիկ վիրահատություններ» ի դեմս Եվրատեսիլի, համաշխարհային աստղերի մենահամերգների, ՄԱԿ անվտանգության խորհրդի ոչ մշտական անդամ դառնալու և այլն:

Պարզ է, որ մարդու իրավունքների և ժողովրդավարական արժեքների պահպանման հարցում Արևմուտքի ոչ հետևողական գործելաոճը երբեմն նպաստում է տարբեր պետություններում իշխանությունների կամայականություններին: Այս տեսանկյունից Ադրբեջանը ոչ թե բացառություն է, այլ խոսուն օրինակ: Սակայն այսօր արդեն ալիևյան կլանը շատ լավ գիտակցում է, որ անցել է «թույլատրելիի» սահմանը և օտարերկրյա մամուլում ալիևյան ռեժիմը մերկացնող, «արաբական գարնան» ալիքից չերաշխավորված Ադրբեջանի մասին հրապարակումները կոչված են փաստելու, որ Ալիևի **նավթային ահաբեկչությունը** կարող է զրկվել նախկին ներուժից, որ արևմտյան արժեքների ու շահերի միջև հակասությունների խորացումը կամ այդ արժեքները շահերի «զոհասեղանին» դնելու քաղաքականությունը հեռանկարում կարող են աղետաբեր լինել նույն Արևմուտքի համար:

Ադրբեջանի իշխանությունների վոլյունտարիզմի և դրա դեմ հնարավոր բողոքի նախադրյալների մասին է վկայում նաև ամերիկյան AON ոչ կառավարական կազմակերպության ներկայացրած 2012թ. քաղաքական ռիսկերի ինդեքսը, որի համաձայն արաբական երկրների հեղափոխական ալիքը մեծացրել է քաղաքական ռիսկերը աշխարհի 21 պետություններում, այդ թվում՝ Ադրբեջանում[41]: Ուստի պարզ է դառնում, թե ինչու Ադրբեջանի 2013թ. պետական բյուջեի նախագծում նախատեսվում էր շուրջ 12 տոկոսով ավելացնել ներքին գործերի և դատական մարմինների ֆինանսավո-

[41] **А. Элибегова,** Азербайджан и Армения в международных рейтингах (2012), http://www.regnum.ru/news/1515882.html

րումը, մինչդեռ առողջապահության, սոցիալական պաշտպանության և կրթության ոլորտներում ավելացումները համապատասխանաբար՝ 0.5, 1.6 և 1.6 տոկոս[42]: Ակնհայտ է, որ թվերի այսօրինակ բաշխվածությունը պատահական չէ, քանի որ սպասվող ընտրություններում ևս, Ալիևը ստիպված է լինելու ապավինել ուժայինների հավատարմությանն ու դատական մարմինների կողմից քաղաքական «վիուկների» դատապարտմանը: Մինչդեռ Ադրբեջանի տնտեսական զարգացման արդյունքները կամ, ավելի ստույգ, նավթի և գազի արտահանման շնորհիվ պետական բյուջեի ավելացումը ամենից առաջ կարող էր միտված լինել սոցիալական պաշտպանվածության և ժողովրդի բարեկեցության ապահովմանը, ինչը, սակայն, Ալիևի կլանի առաջնահերթությունների մեջ չի մտնում: Իհարկե, դա ունի իր պատճառները, քանի որ Ալիևն ուժայինների միջոցով իշխանության պահպանման երաշխիքներն է ամրապնդում, իսկ փախստականների խնդիրների չլուծվածությամբ և ժողովրդի ոչ բարեկեցիկ կյանքի գործոնով մշտարդիական է պահում արտաքին թշնամու՝ հայության և Հայաստանի գործոնը:

Այսինքն՝ հզոր ուժայիններ և բանակ ունենալու գործոնը ներկայացնելով որպես ազգային անվտանգության առաջնահերթություն՝ Ադրբեջանի գործող իշխանությունները փորձում են լեգիտիմացնել և բացատրել առկա սոցիալական խնդիրներն «ագրեսոր» Հայաստանի Հանրապետության, հայկական լոբբիի դեմ խոհեմ և պլանավորված պայքար մղելու անհրաժեշտության համատեքստում:Ավելին, չնայած Ադրբեջանի պետական բյուջեն վերջին տասնամյակում արձանագրել է ահռելի մուտքեր կամ աճ[43], այնուամենայնիվ դա չի վկայում Ադրբեջանի տնտեսության համաչափ կամ արդյունավետ զարգացման մասին: Օրինակ, Ադրբեջանի 2013թ. պետա-

[42] Տես **А. Ибрагимли,** В 2013 году правительство Азербайджана по-прежнему будет щедро на содержание силовых структур (2012) http://vesti.az/news/133978/

[43] Ադրբեջանական «Ռազմավարական հետազոտությունների կենտրոն»-ի տնտեսական վերլուծությունների և համաշխարհայնացման հարցերի բաժնի գիտաշխատող Զաուր Վելիևն «2013թ. պետական բյուջեն» թեմայով ելույթի ժամանակ ներկայացրել է Ադրբեջանի պետական բյուջեի դինամիկան՝ 2003-2013թթ. կտրվածքով: Համաձայն նրա ներկայացրած տվյալների՝ 2013թ. Ադրբեջանի պետական բյուջեն կազմում է 24.4 միլիարդ դոլար եկամտային մասով և 25.2 միլիարդ դոլար ծախսային մասով: 2003թ. Ադրբեջանի պետական բյուջեի ցուցանիշները 2013թ. բյուջեն, համաձայն ադրբեջանցի գիտաշխատողի, գերազանցում է համապատասխանաբար 15.7 և 16 անգամ (այս մասին տես **А. Салаева,** Бюджет Азербайджана составляет 76% бюджета Южного Кавказа – ЦСИ (2013), http://www.1news.az/economy/20121218121718950.html):

կան բյուջեի նախագծում մուտքերի շուրջ 73 տոկոսը կազմավորվում էր նավթի և գազի հաշվին, իսկ ոչ նավթային սեկտորի «մասնակցությունը» պետական բյուջեում չնչին էր: Տնտեսական հետազոտությունների կենտրոնի ղեկավար Գ. Իբադոզլուի համաձայն, Ադրբեջանի պետական բյուջեի ոչ նավթային հատվածում մեկ շնչին բաժին է ընկնում $715, Վրաստանում՝ $1010, իսկ Հայաստանում՝ $1000 ԱՄՆ դոլար *(քանի որ ՀՀ բյուջեում նավթային հատված երբևիցե չի եղել, մնում է ենթադրել, որ Գ. Իբադոզլուն ՀՀ բյուջեի ոչ նավթային հատված ասելով նկատի է ունեցել ոչ հանքային արդյունաբերության հատվածը)*[44]: Սա մի կողմից վկայում է այն մասին, որ Ադրբեջանի տնտեսությունը զարգանում է առավելապես բնական պաշարների արդյունահանման հաշվին և ունի կախվածություն դրանից, իսկ մյուս կողմից՝ այն մասին, որ վերջին տարիներին նավթի արդյունահանման ծավալների կրճատման միտումը և նավթի համաշխարհային գների տատանումները կարող են առաջիկայում կաթվածահար անել կամ բացասաբար անդրադառնալ Ադրբեջանի տնտեսության վրա: Ողջ վերոշարադրյալի համատեքստում հասկանալի է դառնում, որ Ադրբեջանի հակահայկական քարոզչությունը որոշակիորեն հետևանք է իշխանության վերարտադրման և դրա քաղաքական անայլընտրանքայնության պատրանքը ստեղծելու ալիևյան նպատակադրման, ինչը, իր հերթին, միջազգային հանրության ոչ հետևողական դատապարտման արդյունքում հարևան երկրում մեծ հաջողություններ է արձանագրել: Հասկանալի է նաև, որ հարևան երկրում պետական մակարդակով իրականացվող հայատյացության քաղաքականությունը որոշակիորեն պայմանավորված է արցախյան պատերազմում կրած պարտության հոգեբանական հետևանքների և պատմության կեղծման արդյունքում ձևավորված ես-կոնցեպցիայի գործոնի շահարկմամբ:

---

[44] **73% доходов бюджета Азербайджана формируется за счет нефти и газа** (2012), http://www.regnum.ru/news/fd-abroad/polit/1593796.html#ixzz2DYDAmsfU: Այս խնդրի հետ կապված տես նաև՝ **«Ադրբեջանի պետական բյուջեի երեք քառորդը սնվում է նավթային ոլորտից»** (2013), http://times.am/?l=am&p=4456:

3. Ռամիլ Սաֆարովի հերոսացումը հակահայկական քարոզչության նախադրյալների համատեքստում

3.1 Արևմուտքը և ադրբեջանահունգարական «սիրախաղը»

Ռամիլ Սաֆարովի[45] արտահանձնման, Ադրբեջանի նախագահ Ի. Ալիևի կողմից նրան ներում շնորհելու և մի շարք նյութական պարգևների արժանացնելու փաստը բուռն արձագանք գտավ ինչպես Հայաստանում, այնպես էլ արտերկրում: Հայկական կողմի ակտիվ և դատապարտողական գործողություններին *(օրինակ, օտարերկրյա դիվանագիտական կորպուսի ներկայացուցիչների հանդիպման ժամանակ ՀՀ նախագահի ելույթը, Հունգարիայի հետ ՀՀ դիվանագիտական հարաբերությունների խզումը և այլն)* հաջորդեցին միջազգային կազմակերպությունների և տարբեր պետությունների արձագանքները, որոնցում կարելի էր նկատել Ադրբեջանի իշխանություններին ուղղված ինչպես կոշտ, այնպես էլ «սեթևեթող» գնահատականների կամ մեղադրանքների: Հանուն արդարության նշենք նաև, որ ի տարբերություն եղելության առաջին օրերի՝ հետագայում Արևմուտքի արձագանքները աստիճանաբար ավելի կոշտ ու դատապարտողական դարձան, ինչը, համոզված ենք, պայմանավորված էր նաև հայկական կողմի ակտիվ ու նախաձեռնողական գործողություններով:

Հայտնի է, որ Սաֆարովի արտահանձնման առնչությամբ Հայաստանում բողոքի ալիքը օրեր շարունակ բարձր մակարդակի վրա էր, որն ուղեկցվեց նաև Հունգարիայի դրոշի այրմամբ, ինչը բացասական գնահատվեց ՀՀ նախագահի կողմից: Դիմելով հասարակությանը և հատկապես երիտասարդներին՝ Նախագահը խնդրեց Հունգարիայի դրոշը չդիտարկել իշխող կուսակցության կամ վարչապետի խորհրդանիշ, չթշնամանալ հունգար ժողովրդի հետ, քանզի բողոք արտահայտելիս **«մենք չպետք է դավաճանենք ինքներս մեզ ու մեր արժեքները»**[46]: Համոզված ենք, որ

[45] 2004 թվականին ՆԱՏՕ-ի շրջանակներում Հունգարիայի Բուդապեշտ մայրաքաղաքում տեղի ունեցող դասընթացների ժամանակ ադրբեջանցի սպա Ռամիլ Սաֆարովը հայազգի սպա Գուրգեն Մարգարյանին քնած ժամանակ սառնասրտորեն կացնահարել էր: Ռ. Սաֆարովը հունգարական դատարանի կողմից դատապարտվեց ցմահ ազատազրկման, սակայն 2012թ. Հունգարիայի կառավարությունը Ռ. Սաֆարովին արտահանձնեց Ադրբեջանին, իսկ վերջինս նրան ներում շնորհեց ու բարձրացրեց զինվորական կոչումը:

[46] **Սերժ Սարգսյանը հորդորում է չայրել Հունգարիայի դրոշը** (2013), http://news.am/arm/news/119601.html

միջազգային ինչեղություն ստացած Սաֆարովի դեպքի համատեքստում այս «հաղորդագրությունը» արդարացիորեն պետք է օժանդակեր հայ և ադրբեջանական հասարակությունների միջև տարբերություններն ուրվագծելուն, ինչը չափազանց կարևոր է ՀՀ համար: Բանն այն է, որ այս հորդոր-խնդրանքը կոչ էր որոշ պաշտոնյաների տմարդի գործողության հիմքում տեսնել ոչ թե նրա ազգային պատկանելության փաստը *(առավել ևս այն դեպքում, երբ հունգարացիները ևս բողոքի էին դուրս եկել)*, այլ՝ կոնկրետ մարդուն: Իսկ սա նշանակում է, որ գործ ունենք ադրբեջանական մոտեցմանը տրամագծորեն հակառակ դիրքորոշման հետ, քանզի եթե Ադրբեջանում մարդու որպիսությունը պետք է գնահատվի իր ազգային պատկանելությամբ, ապա ՀՀ պետական մոտեցման համաձայն՝ մարդու անհատական առանձնահատկությամբ:

Կասկածից վեր է, որ նավթադոլարների կովկասյան «արքայի» այսպես կոչված «մարդասիրական» քայլը յուրաքանչյուր ողջախոհ մարդու, առավել ևս արևմտյան արժեհամակարգը կրող անհատների համար ոչ միայն անընդունելի էր, այլև սեփական արժեքային համակարգին հասցեագրված ապտակ էր: Պատահական չէ, որ տարբեր պետություններում *(այդ թվում՝ Հունգարիայում)* տեղի ունեցան բողոքի նաև «ոչ հայկական» ակցիաներ՝ ընդդեմ քնած մարդուն սպանելու խիզախություն ունեցող մարդասպանի հերոսացմանը այնպիսի պետության կողմից, որը թեկուզ սոսկ պաշտոնապես, բայց հայտարարել է «եվրոպական արժեհամակարգին» հավատարմության մասին:

Տարիներ շարունակ հայատյացությունը պետական քաղաքականության կարևոր բաղադրիչ հռչակած «հանդուրժող և հումանիստ» Ադրբեջանի իշխանություններից այլ բան սպասելն անիրատեսական կլիներ, սակայն խնդիրն այն է, որ մարդասպանի «հերոսացման» գործում իր լուման է ունեցել նաև արևմտյան արժեհամակարգի ներկայացուցիչ երկրներից Հունգարիան, որն իր գործողություններով «նավթաբույրով» գայթակղված արժեքային առևտրականի խոսուն վկայությունը դարձավ՝ ստվերելով արևմտյան արժեհամակարգի հանդեպ շատերի հավատը: Ավելին, եվրոպական երկրներից կամ կառույցներից շատերի «հերթապահ» խոսքեր հիշեցնող գնահատականները թույլ են տալիս պնդել, որ արևմտյան երկրները հանուն այսօրեական կամ հեռահար շահերի պատրաստ են կտրել

այն ճյուղը, որի վրա նստած են: Այսինքն՝ միասնական արժեքային համակարգ «դավանող» Եվրոպան հաճախ ներկայանում է այնպիսի որակներով, որոնց համատեքստում եվրոպական արժեքները **հանդես են գալիս սոսկ որպես միջոց, այլ ոչ որպես նպատակ:** Այս տեսանկյունից բավականին խոսուն են նաև 20-րդ դարի առաջին կեսում 1915 թվականի հայոց ցեղասպանության հանդեպ եվրոպական պետություններից շատերի վերաբերմունքի յուրակերպությունները: **«Անգլիան, Ֆրանսիան,-** գրում է Գ. Նժդեհի ընկեր Հ. Ասատրյանը,- **ցնցուեցին, անշո՛ւշտ, հայկական եղեռնից, բայց նրանք ցուցահանեցին ո՛չ թէ չարիքի դէմ մաքառելու, այլ՝ նրանից օգտուելու կամք: Լոնդոնի թէ Փարիզի կառավարութիւնների ձեռքում հայկական նահատակութիւնը դարձաւ քարոզչութեան անփոխարինելի զէնք՝ Գերմանիայի դեմ»**[47]: Ասվածը, թերևս, բացառություն չէ նաև Ռ. Սաֆարովի արտահանձնման պարագայում, քանի որ որոշակիորեն ցնցվելով սառնասիրտ մարդասպանի գործողություններից և պաշտոնական Բաքվի կողմից հերոսացումից՝ Արևմուտքն իր քննադատական մոտեցումներով առավելապես դրսևորում է եղելությունից օգտվելու, քան արմատացող չարիքը վերացնելու կամք: Ուշագրավ է, որ խնդրո առարկա հարցում Արևմուտքի մեղավորությունը փաստել է նաև Ադրբեջանում Թուրքիայի դեսպան Հուլուսի Կիլիչը, սակայն ի տարբերություն մեր ըմբռնման՝ հանդես է եկել հետևյալ խոսքերով. **«Տեղի ունեցածի մեղավորը Արևմուտքն է: Եթե նա չի ուզում Ռամիլ Սաֆարովի հետ կատարված իրադարձությունների հերթական կրկնությունը, ապա պետք է պաշտպանի Ադրբեջանի արդար դիրքորոշումը, արագ կերպով լուծի ղարաբաղյան հակամարտությունը»**[48]: Այսինքն՝ թուրք դիվանագետի համոզմամբ, ղարաբաղյան հակամարտությունը պետք է լուծվի ոչ թե հակամարտող կողմերի, այլ Արևմուտքի կողմից, որ Ադրբեջանի դիրքորոշումը միակ ճշմարիտն է և այն արդարացնում է Սաֆարովի գործողությունները: Հանգամանք, որը վկայում է այն մասին, որ թուրք դիվանագետի ըմբռնմամբ՝ արդարության հաստատման փափագը կարող է սրբագործել ամեն միջոց: Թերևս այս տրամաբանությամբ էլ առաջնորդվել են սույն դեսպանի նախորդները, որոնք իրենց պատկերացրած «արդարության»

[47] **Հ. Ասատրյան,** Հատընտիր, Եր., 2004, էջ 194:

[48] Տես **No Comments: Цитаты официальных лиц Азербайджана** (2012), http://misinformative.info/?p=4212

հաստատման մոլուցքով տարված՝ 1915 թվականին կազմակերպեցին և հեշտությամբ իրագործեցին հայոց ցեղասպանությունը:

Ավելին, տարիներ շարունակ Արևմուտքը կարծես հավասարը հավասարի սկզբունքով էր գնահատում ՀՀ և Ադրբեջանի ժողովրդավարական բարեփոխումների ընթացքը՝ չնայած այն հանգամանքին, որ բազմաթիվ առումներով ՀՀ ձեռքբերումները որակապես տարբերվում են Ադրբեջանի «ձեռքբերումներից» կամ, ավելի ստույգ, ժողովրդավարական հետընթացից: Արևմտյան այս հանցավոր էգալիտարիզմը կամ հավասարապաշտությունը, ինչպես արդեն նշել ենք, նպաստեց այն բանին, որ Ադրբեջանի իշխանությունները պետական մակարդակով շարունակեցին այնպիսի «արժեքների» քարոզումն ու արմատավորումը իրենց երկրում *(օրինակ՝ այլատյացություն և այլն)*, որոնք առնվազն հոգևոր «սրտխառնոց» պետք է առաջացնեին այդ նույն արժեքներից տուժած Արևմուտքում:

Սաֆարովի հերոսացման փաստն ու Ադրբեջանի ապաժողովրդավարական և եվրոպական ընտանիքի արժեհամակարգին ոչ պատշաճող քաղաքականությունը Արևմուտքին պետք է ստիպի վերանայել «հարավկովկասյան էգալիտարիզմը», հաշվի նստել հայկական հանդուրժողականության և ադրբեջանական անհանդուրժողականության փաստի հետ: Հակառակ պարագայում Արևմուտքը կամ Եվրոպան պետք է խոստովանեն, որ իրենց կողմից հռչակված արժեքներն առավելապես քաղաքական աճուրդի պարագաներ են, որոնք սպասում են իրենց առատաձեռն գնորդին: Ավելին, այս ամենը ևս մեկ անգամ կոչված է հաստատելու այն, որ արցախահայության անկախության միջազգային ճանաչումն այլընտրանք չունի:

Չնայած նշյալ դեպքերը ցույց տվեցին, որ եվրոպական արժեքները այդ արժեքների «ջահակիրներից» շատերի համար միգուցե սոսկ քաղաքական գործիքներ են, սակայն դա չի նշանակում, թե խնդիր ունենք սկզբունքորեն հրաժարվել այդ արժեքներից[49] և որպես ԵԽ անդամ պետություն պետք է վերանայենք մեր արժեքային կողմնորոշումները: Արժեքը չի դա-

[49] Ամենից առաջ նկատի ունենք քրիստոնեական արժեհամակարգը, քանի որ, ինչպես իրավացիորեն փաստում են արևմտյան և ոչ արևմտյան հեղինակներից շատերը *(օրինակ՝ Պատրիկ Բյուքենեն, Քրիստոֆեր Կոկեր, Գաբրիել Վահանյան և այլն)*, այսօրվա Արևմուտքը մեծապես հեռացել է իր քաղաքակրթական արմատներից կամ թաակոխել է հետքրիստոնեական ժամանակաշրջան:

դարում արժեք լինել նաև այն պարագայում, երբ որոշ ինստիտուցիոնալ կառույցներ կամ պետություններ փորձում են «արժեզրկել» դրանք:

Հանուն արդարության նշենք, որ Սաֆարովի հերոսացումից օրեր անց *(նաև հայկական կողմի ջանքերի շնորհիվ)* Արևմուտքն ի վերջո հընթացս հանդես եկավ ոչ միայն հերթապահ քննադատությամբ, այլև խիստ դատապարտողական բնույթի հայտարարություններով և առարկայական բանաձևով: Բանն այն է, որ 2012թ. սեպտեմբերի 13-ին Եվրոպայի խորհրդարանն ընդունեց Սաֆարովի դեպքի առնչությամբ համապատասխան **բանաձև**[50], որտեղ արձանագրված են հստակ մեղադրանքներ և խիստ քննադատություն Ադրբեջանի իշխանությունների հասցեին: Խնդիր չունենալով բանաձևի բոլոր դրույթներին անդրադառնալը՝ փաստենք միայն, որ դրանում հստակ ամրագրված է, որ Գ. Մարգարյանի սպանությունը տեղի է ունեցել առանց զղջման և նրա հայ լինելու պատճառով, ինչը, անշուշտ, հերթական հարվածն էր ադրբեջանական քարոզչամեքենայի կողմից շրջանառված այն դրույթին, թե Սաֆարովը կացնահարել է հայ սպային Ադրբեջանի դրոշն անարգելու, հայկական ագրեսիայից տուժած լինելու պատճառով: Ավելին, ընդհանրացնելով բանաձևի դրույթները՝ փորձագետներից մեկը դրանցում տեսնում է Եվրոպային անհանգստացնող հետևյալ հանգամանքները.

Ադրբեջանը, լինելով ԵԽ անդամ, ՄԱԿ անդամ և ՄԱԿ ԱԽ ժամանակավոր անդամ, ԵՄ «Արևելյան գործընկերություն» ծրագրի մասնակից և ստանձնած լինելով դրանց շրջանակներում ընդունված փաստաթղթերում առկա արժեքները պահպանելու պարտավորություններ *(սա ուղղակի արձանագրված է ԵԽ բանաձևում)*, թքած ունի այդ արժեքների անկյունաքար համարվող երկու կարևորագույն՝ մարդու իրավունքների պաշտպանության և օրենքի գերակայության սկզբունքների վրա:

Ադրբեջանի գործողությունները միտված են տարածաշրջանային լարվածության ուժգնացմանը և սպառնում են անվտանգությանն ու կայունությանը, վտանգում են խաղաղ գործընթացի հանգուցալուծումն ու երկու հասարակությունների միջև երկխոսությունը[51]:

---

[50] Բանաձևի տեքստը տես հետևյալ էլեկտրոնային հասցեում. http://www.panorama.am/am/politics/2012/09/14/report/

[51] **Ա. Մինասյան,** Եվրոպային խստության բացակայության մեջ չես մեղադրի (2012), http://panorama.am/am/politics/2012/09/14/european-rezolution/

Չնայած բանաձևը բխում է հայկական կողմի շահերից՝ այնուամենայնիվ դա չի նշանակում, որ պետք է մեր զգոնությունը կորցնենք և բավարարվենք արձանագրված հաջողությամբ, քանզի այդ փաստաթուղթը **«ընդամենը հենարան է տալիս՝ հիմք, բազիս: Իսկ թե ինչ տեսք կունենա վերնաշենքը, կախված է նաև մեզանից՝ որքան տարբեր կլինեն մեր պետությունն ու հասարակությունն իր հարևանից և որքանով կկարողանան այդ տարբերությունն ի ցույց դնել: Համենայնդեպս, առաջին քայլը հուսադրող է»**[52]:

Հասկանալի է, որ Ռամիլ Սաֆարովի արտահանձնման և հերոսացման հանդեպ Արևմուտքի վերաբերմունքի մասին դատողություններն առավելապես միտված էին տխրահռչակ իրողության հետ կապված միջազգային մակարդակի որոշ խնդիրների ուրվագծմանը: Սակայն Սաֆարովի դեպքը ոչ պակաս հետաքրքիր և հետազոտական տեսանկյունից կարևորություն ներկայացնող է, երբ այն քննարկվում է արցախյան հակամարտության լուծման հեռանկարների և ադրբեջանական իրականության տարբեր կողմերի համատեքստում: Ընդ որում, ադրբեջանական իրականության տարբեր կողմեր ասելով՝ ամենից առաջ նկատի ունենք Ադրբեջանի քաղաքական և էթնոմշակութային կյանքի որոշ առանձնահատկություններ, քանզի դրանց համատեքստում է, որ Սաֆարովի ազատ արձակումն ու հերոսացումը ոչ միայն հասկանալի է դառնում, այլև օրինաչափ:

[52] Նույն տեղում:

3.2. Սաֆարովի հերոսացումը և Ադրբեջանի «պյուռոսյան հաղթանակը»[53]

Սաֆարովի արտահանձնման պատճառով առաջացած դժգոհությունները միանգամայն հասկանալի են, քանի որ ազգային հողի վրա առանձնակի դաժանությամբ կատարված, միջազգային հնչեղություն ստացած և Ադրբեջանի կողմից «լեգիտիմացված» սպանությունը ի վերջո չուղեկցվեց համապատասխան պատժաչափի ամբողջական կիրառմամբ: Իրողություն, որը շատերի կողմից հապճեպորեն որակվեց որպես հայ ժողովրդի, ՀՀ իշխանությունների պարտություն և ադրբեջանական կողմի հաղթանակ: Հայաստանյան քաղաքական ուժերից շատերն արձագանքելով Սաֆարովի արտահանձնման փաստին՝ շտապեցին զգացմունքածին հայտարարություններ անել և պատեհ առիթը չկորցնել ՀՀ իշխանություններին քննադատելու համար: Իրողություն, որը **կարելի է հասկանալի համարել իշխանությունների հանդեպ վստահության դեֆիցիտ ձևավորելու կամ այն խորացնելու նպատակադրման համատեքստում, սակայն խիստ անհասկանալի, երբ արտահանձնումը դիտարկվում է որպես հայկական կողմի աներկբա պարտության դրսևորում:** Առաջին հայացքից, անշուշտ, Ադրբեջանը կարողացավ ապահովել հաղթանակի պատրանքը, կարողացավ միջազգային մակարդակում «հարցեր լուծողի» կերպարով ներկայանալ, սակայն սա հարցի միայն արտաքին և զգացմունքային կողմն է: Ուստի, Ռ. Սաֆարովի արտահանձնման և հերոսացման փաստին պետք է մոտենալ ոչ թե հուզական, արժեքային գնահատականների,

[53] Պյուռոսն Էպիրյան արքա էր (մ.թ.ա. 319-272), հին ժամանակների հայտնի զորահրամանատար, որը նպատակ ունենալով ստեղծել հզոր տերություն, խառնվում է հռոմեացիների և հույների միջև պատերազմին: 280թ. տանելով իր առաջին հաղթանակը հռոմեական լեգեոնների նկատմամբ Հերակլեայի մոտ՝ Պյուռոսը մտահղանում է նոր արշավանք իրականացնել և 279թ. Աուսկուլայի մոտ ջախջախում է հռոմեացիներին: Սակայն այս երկրորդ պատերազմի արդյունքում Պյուռոսն այնքան զոհեր և մարդկային, նյութական ռեսուրսների կորուստ է ունենում, որ բացականչում է. «Եվս մեկ նման հաղթանակ և ես կործանված եմ»: Իրականում, հաջորդ ճակատամարտի ժամանակ՝ 278թ., Պյուռոսը գլխովին ջախջախվում է հռոմեացիների կողմից և իր զորքերի մնացորդի հետ փախչում է Էպիր: Այստեղից է առաջացել «պյուռոսյան հաղթանակ» արտահայտությունը, որն օգտագործվում է փոխաբերական իմաստով՝ նշանակելով պարտության հավասարազոր հաղթանակ, այսինքն՝ հաղթանակ, որը տրվում է ահռելի չափերի հասնող զոհերի և անդառնալի կորուստների գնով (տե՛ս **Е. Язовицкий,** Говорите правильно, Л., 1969, с.217-218):

այլ քաղաքական զարգացումների սթափ, ռացիոնալ հաշվարկի դիրքերից: Իհարկե, Գ. Մարգարյանի որդեկորույս ծնողների և հարազատների համար խիստ դժվար կամ անհնար է համակերպվել հերոսացված մարդասպանի ազատության, իսկ հայ ժողովրդին՝ հայատյացության անպատժելիության փաստի հետ, սակայն փաստը մնում է փաստ և անհրաժեշտ է առանց ավելորդ հուզականության պարզել այդ փաստից բխող բոլոր դրական և բացասական հետևանքները:

Ակնհայտ է, որ Ադրբեջանի իշխանությունների «սաֆարովասիրությունը» լուրջ հարված հասցրեց հարավկովկասյան տարածաշրջանում խաղաղության հաստատման գործընթացին, արցախյան հակամարտության շուրջ ընթացող բանակցություններում առաջընթաց արձանագրելու հնարավորություններին: Ավելին, ազերիների դրոշն անարգած հայից *(սա ադրբեջանական քարոզչամեքենայի հերթական և անգրագետ թեզերից է, որը հերքվել է դատավարության ընթացքում)* սոսկ քնած ժամանակ «պատիվ» պահանջած և «ասպետական» ոգով դաստիարակված ադրբեջանցի մարդասպանի հերոսացումը խորապես նպաստեց հայ-ադրբեջանական հարաբերությունների կարգավորման ռեսուրսների կորստին: Ի. Ալիևը ձեռքի «գեղեցիկ» մի շարժումով համայն աշխարհին ի ցույց դրեց, որ բնավ շահագրգռված չէ բանակցային գործընթացում դրական զարգացում ապահովելու, հայերի հանդեպ ատելության մթնոլորտը կազմաքանդելու, ռազմաշունչ հռետորաբանության մանիպուլյատիվ ներուժից հրաժարվելու հարցում: Արցախյան պատերազմում հայկական կողմից կրած պարտությունը մեկնաբանելով որպես պատմական անարդարության և հայկական ագրեսիայի վառ արտահայտություն՝ Ադրբեջանի իշխանությունները պարզապես շահարկեցին տարածաշրջանային հակամարտության չկարգավորվածության գործոնը և փորձեցին այն օգտագործել ներքին կոնսոլիդացիայի ապահովման ու սեփական «ազգանվեր» առաքելության հիմնավորման համար: Պատահական չէ, որ Սաֆարովի արտահանձնմանն ու հերոսացմանը հաջորդեցին Ադրբեջանի հասարակական-քաղաքական կյանքի երևելիներից շատերի հոգեցունց քաղաքական «բաժակաճառերը», որոնցում Ադրբեջանի ու ադրբեջանցիների հաղթանակի ավետման հետ մեկտեղ «խոնարհ» շնորհակալություն էր հղվում նախագահ Ի. Ալիևին: Ստորև կներկայացնենք այդ ինքնախոստովանական

«բաժակաճառերից» մի քանիսը.

– **Միլի մեջլիսի պատգամավոր Գանիրա Փաշաևա.** «Ռամիլ Սաֆարովն ազատվա՛ծ է: Ադրբեջանցիներ, շնորհավորում եմ: Մենք երախտապարտ ենք երկրի նախագահին՝ Ռ. Սաֆարովին Ադրբեջան վերադարձնելու և ներում շնորհելու համար» (SalamNews. 31.08.2012):

– **«Ենի Ազերբայջան» կուսակցության փոխնախագահ Ալի Ահմեդով.** «Ռամիլ Սաֆարովին ներում շնորհելու Ադրբեջանի նախագահ Ի. Ալիևի հրամանագիրը ես գնահատում եմ որպես պետության ղեկավարի տղամարդկային և խիզախ քայլ, ինչպես նաև արդարության վերականգնում» (1news.az. 31.08.2012):

– **«Ենի Ազերբայջան» կուսակցության գործադիր քարտուղարի տեղակալ, պատգամավոր Մուբարիզ Ղուրբանլի.** «Սաֆարովի ազատումը մեր հայրենասեր և ազգային ոգով մարդկանց հանդեպ ուշադրության տրամաբանական շարունակությունն է» (Trend. 31.08.2012): Ընթերցողին տեղեկացնենք, որ ադրբեջանցի պատգամավորի խոսքերն առավել հասկանալի կդառնան հաջորդ պարագրաֆում քննարկվող հարցերի համատեքստում:

– **Ադրբեջանի նախագահի աշխատակազմի արտաքին կապերի բաժնի վարիչ Նովրուզ Մամեդով.** «Մեզանից յուրաքանչյուրի համար այս իրադարձությունը ուրախության և հպարտության առիթ է: Չափազանց տպավորիչ է այստեղ տեսնել մեր զինվորին, իր ժողովրդի նվիրյալ զավակին, ով բանտ նետվեց այն բանի համար, որ պայքարեց Հայրենիքի և ժողովրդի փառքի ու պատվի պաշտպանության համար» (Newtimes.az. 31.08.2012): Այսինքն՝ հաշվի առնելով դատավարության ընթացքը և վճիռը՝ Մամեդովի խոսքերից մնում է եզրակացնել, որ ադրբեջանական ժողովրդի փառքն ու պատիվը անարգվել էր այն պատճառով, որ ՆԱՏՕ-ի դասընթացին հայեր էին ներկա գտնվել:

– **Ադրբեջանի մշակույթի և տուրիզմի նախարար Աբուլֆաս Գարաև.** «Մենք դա համարում ենք արդարացի որոշում, որը, անկասկած, մեր թշնամիներին ստիպում է անհանգստանալ: Չնայած դա մեզ չի հետաքրքրում, քանի որ յուրաքանչյուր ադրբեջանցու նպատակն է պայքարել թշնամիների դեմ՝ անկախ նրանց գտնվելու վայրից» (1news.az. 06.09.2012):

– Ադրբեջանի Մարդու իրավունքների պաշտպան Է. Սուլեյմանովա. «Սա ևս մեկ ապացույցն է նախագահ Իլհամ Ալիևի մարդկայնության և մարդասիրության, Ադրբեջանի քաղաքացիների նկատմամբ նրա հոգածության» (1news.az. 03.09.2012)[54]:

Այս տեսակետների գոյությունը կարելի է օրինաչափ համարել, քանի որ ադրբեջանական էլիտայի համար «ժողովրդավարությունը» ամենից առաջ ենթադրում է ժողովրդի կողմից «ընտրված և սրբացված» Ի. Ալիևի հանդեպ հնազանդություն, իսկ հայրենասիրությունն ու մարդասիրությունը՝ «կացին և քնած հայ»: Այս առումով հիշատակված տեսակետների միջև չկան խորքային տարբերություններ և դրանց միավորում է կատարված հանցագործությունը ոչ կրոնական իմաստով սակրալիզացնելու մտայնությունը: Խնդիր չունենալով բոլոր այդ գնահատականները հանգամանալից վերլուծելը՝ փաստենք միայն, որ դրանց շարքում ամենազավեշտալին Ադրբեջանի Մարդու իրավունքների պաշտպանի «ալիևահպատակ» հաճոյախոսությունն է: Բանն այն է, որ եթե Ադրբեջանի օմբուդսմենն ունի այսօրինակ պատկերացում մարդկայնության և մարդասիրության մասին, ապա կարելի է ենթադրել, թե հումանիզմի և արդարության ինչպիսի ըմբռնում կունենան Ադրբեջանի ուժայիններն ու դատական մարմինների ներկայացուցիչները:

Սաֆարովի վերադարձի առնչությամբ Ադրբեջանի հասարակական-քաղաքական կյանքում ձևավորված ոգևորությունը պատահական չէ, քանզի համայն հայությանը թշնամի հռչակած Ի. Ալիևն ու իր քարոզչամեքենան կարողացել էին Գուրգեն Մարգարյանի սպանության համատեքստում ձևավորել փորձության մեջ հայտնված ժողովրդական «վրիժառուի» կերպարը: Իսկ այդ կերպարի ճակատագրի դրական ելքը պետք է լիներ սպասված կամ բաղձալի երևույթ, արդարության հաղթանակ: Ավելին, զգացմունքային և այլատյաց հայրենասիրությամբ աչքի ընկնող ադրբեջանցիների *(խոսքը չի վերաբերում սթափ մտածողություն և հումանիստական աշխարհայացք ունեցող սակավաթիվ ադրբեջանցիներին)* համար Ալիևի «բանտային» հաղթանակն իսկապես փառահեղ դիվանագիտական, բարոյական, քաղաքական հաղթանակ էր, սակայն միջազգային

[54] Բոլոր մեջբերումները ներկայացված են ըստ հետևյալ աղբյուրի. **No Comments: Цитаты официальных лиц Азербайджана** (2012), http://misinformative.info/?p=4212

ինչեղություն ստացած այս իրողությանն առավել սթափ մոտենալու դեպքում հասկանալի կդառնա, որ ադրբեջանցիների հանկարծահաս ոգևորությունը կարող է փոխարինվել հերթական հուսախաբությամբ: Ասվածն առավել պարզ կդառնա, եթե Սաֆարովի արտահանձնումն ու հերոսացումը քննվի **ներպետական, միջպետական** *(նկատի ունենք ՀՀ և Ադրբեջանի միջև հարաբերությունների մակարդակը)* և **միջազգային** մակարդակներում: Այս մակարդակների առանձնացման մեթոդաբանական դիրքերից հարցին մոտենալու պարագայում կարող ենք փաստել, որ Ալիևի ու ադրբեջանցիների կողմից տոնված «հաղթանակը» վաղաժամ էր և նման էր պյուռոսյան հաղթանակին կամ պարտության տանող հաղթանակ էր: Այդ հաղթանակն ուներ առավելապես հոգեբանական, այլ ոչ քաղաքական արդարացվածություն: Ճիշտ է, Սաֆարովի հերոսացմամբ Ալիևը կարողացավ **ներպետական մակարդակում** ցույց տալ իր իշխանության կենսունակությունը ազգի համար կարևոր նշանակություն ունեցող խնդիրները «բարձր» մակարդակով լուծելու հարցում և զուգահեռաբար **ադրբեջանական հասարակության մեջ արմատավորեց հայատյացության հիմքով սպանությունների պետական հովանավորման և խրախուսման գաղափարը,** սակայն խնդիրն այն է, թե արդյո՞ք այդ հոգեբանական և սպասված հաղթանակը բխում է նույն Ադրբեջանի՝ որպես պետության և դրա քաղաքացիների շահերից կամ կարո՞ղ է այն հավակնել նաև քաղաքական հաղթանակի կարգավիճակին: Համոզված ենք, որ հարցի պատասխանը պետք է լինի բացասական, քանի որ ինչպես Սաֆարովի հերոսացումը, այնպես էլ նրան «անարդարության ճիրաններից» փրկելն առավելապես Ալիևի իշխանության պահպանման և լեգիտիմացման անհրաժեշտ գործիքներից էին, որոնք որոշակիորեն փոշիացրեցին տարիներ շարունակ Ադրբեջանի դրական իմիջի ձևավորման ուղղությամբ ծախսված ահռելի ֆինանսական միջոցները: Ավելին, Սաֆարովի հերոսացմամբ Ադրբեջանի իշխանությունները և Ադրբեջանը խոցելի դարձան ինչպես **միջպետական,** այնպես էլ **միջազգային** մակարդակներում: Բանն այն է, որ սեփական իշխանության պահպանման հրամայականի ազդեցության ներքո Ալիևն իր կամքից անկախ մեծ ծառայություն մատուցեց հայկական կողմին *(սխալված չենք լինի, եթե ասենք, որ այդ քայլին Ալիևը գնաց նաև այն պատճառով, որ բանակցային գործընթացում չկարողացավ ապահովել իր համար*

ցանկալի և ներադրբեջանական համերաշխություն ու համախմբում ապահովող հաջողություն)՝ բանակցային գործընթացում ապահովելով վերջինիս դիրքերի ամրապնդման համար կարևոր հերթական փաստարկը: Այսինքն՝ շարունակաբար հանդես գալով **ուժի փաստարկի** և հայատյացության դիրքերից՝ Ադրբեջանն իր անգրագետ քաղաքական հաշվարկների ու քայլերի շնորհիվ նպաստեց նրան, որ հայկական կողմը այդուհետ ևս շարունակի հանդես գալ **փաստարկի ուժի** առավել «ամրապնդված» դիրքերից: Սա նշանակում է, որ ինչպես բանակցային գործընթացում, այնպես էլ միջազգային տարբեր հանդիպումներում հայկական կողմը ևս մեկ ապացույց ձեռք բերեց սեփական մոտեցումների կառուցողականությունը և Ադրբեջանի միջազգայնորեն անընդունելի վարքագիծն ի ցույց դնելու համար: Քաղաքական օրակարգում արդիական պահելով և խրախուսելով հայատյացությունը՝ Ադրբեջանը Սաֆարովի արտահանձնման և հերոսացման օրինակով ինքնակամ ազատվեց հանդուրժողականության հերթական «հագուստից» և «հաստատեց» այն թեզը, որ արցախահայության անկախության միջազգային ճանաչումն այլընտրանք չունի, քանի որ **այդ անկախության հռչակումը ոչ միայն ինքնորոշման միջազգայնորեն ընդունված իրավունքի իրացում էր, այլև տասնամյակներ առաջ Ադրբեջանի որդեգրած հայատյացության քաղաքականությանը դիմակայելու հաջողված փորձ:** Այս առումով ուշագրավ է առցանց ասուլիսի ժամանակ Ադրբեջանի խորհրդարանի նախկին խոսնակ Ռասուլ Գուլիևի արտահայտած տեսակետը: Քննադատելով Սաֆարովի առնչությամբ Ի. Ալիևի կայացրած որոշումը և նշելով, որ Ադրբեջանի իշխանությունների համար դրա բացասական հետևանքները կհիշվեն երկար տարիներ՝ Ռ. Գուլիևը մի կողմից «խոստովանում» է, որ այդ որոշմամբ Ալիևը նպատակ ուներ կարճաժամկետ բարելավել սեփական վարկանիշը, իսկ մյուս կողմից համոզմունք է հայտնում, որ իր քայլով Ադրբեջանի նախագահը փաստացիորեն ամրապնդել է Լեռնային Ղարաբաղի անկախությունը պահանջող հայերի դիրքերը[55]:

Հասկանալի է, որ Սաֆարովն Ալիևի համար քաղաքական կարևորության գործիք էր *(կամ, ինչպես կասեր արդեն հիշատակված Ռ. Գուլիևը*՝

[55] Տես **Дело Сафарова и Азербайджан: online-конференция Расула Гулиева** (2012), http://www.iarex.ru/onlines/29037.html

«խաղալիք դատարկագլուխ քաղաքական գործիչների ձեռքին»[56]) և այդ իսկ պատճառով ադրբեջանական քարոզչամեքենան պատշաճ ուշադրություն էր դարձնում մարդասպանի «հայրենասիրական» կերպարի կերտման ու հանրայնացման գործին: Այսինքն՝ Հունգարիայի բանտերից մեկում պատիժ կրող մարդասպանը Ալիևի համար արժեք էր ներկայացնում ոչ թե հունգարերենին տիրապետելու և թարգմանություններ կատարելու, ադրբեջանահունգարական մշակութային կապերը զարգացնելու, այլ ադրբեջանական հասարակության համար հայրենասիրության կենդանի խորհրդանիշ դառնալու տեսանկյունից: Վերջինս Ադրբեջանի համար քաղաքական օրակարգի խնդիր էր, քանի որ այդ խորհրդանիշն ու դրա հերոսացումը կարող էին նպաստել իշխանության հանդեպ վստահության դեֆիցիտի հաղթահարմանը, իշխանությունների արդյունավետ գործունեության և արդար հաղթանակի մասին հուզական պատկերացումների ձևավորմանն ու խորացմանը:

Հպարտանալով ներքին լսարանի առջև՝ Ադրբեջանն այդուամենայնիվ չկարողացավ անտեսել արտաքին գործոնը և միջազգային հանրության առջև փորձեց «արդարանալ» միջազգային իրավունքի նորմերով առաջնորդված լինելու հիշատակումներով, սակայն Սաֆարովին ներում շնորհելն իրականում իրավական առումով անթույլատրելի էր[57], իսկ հերոսացումը՝ բարոյական և քաղաքակրթական առումով դատապարտելի: Այս համատեքստում հատկանշական է նաև 2012թ. սեպտեմբերի 5-ին ԵԽԽՎ նախագահ Ժան-Կլոդ Մինյոնի հայտարարությունը, որտեղ մասնավորապես ասված է. **«Միանում եմ Սաֆարովի գործած սարսափելի հանցագործության «փառաբանման» միջազգային դատապարտմանը, հանցագործություն, որի համար նա դատապարտվել էր ԵԽ անդամ պետության դատարանի կողմից: Նրա ազատ արձակումն անընդունելի է և ես ծայրաստիճան հիասթափված եմ այս հարցում ԵԽ իրավական գործիքների անօրինական կիրառման փաստի առնչությամբ: Այս սկանդալային ներումը մեծ բացասական հետևանքներ է թողնում Հայաստանի և Ադրբեջանի միջև առկա առանց այն էլ լարված հարաբե-**

[56] Նույն տեղում:

[57] Հարցի իրավական կողմի մասին տես **Լ. Գևորգյան,** Ադրբեջանի կողմից Ռամիլ Սաֆարովի ազատ արձակման իրավական գնահատական (2012), http://armenianlegal.info/archives/1037#more-1037

ությունների վրա, միաժամանակ վտանգի է ենթարկում տարածաշրջանի կայունությունը: Կոչ եմ անում ադրբեջանական իշխանություններին՝ վերանայել իրենց դիրքորոշումը Եվրոպայի խորհրդի սահմանած սկզբունքների ու իդեալների համաձայն»[58]:

Այսպիսով, նախաձեռնելով Սաֆարովի ազատ արձակման և հերոսացման արշավը՝ Ադրբեջանի նախագահ Ի. Ալիևը փաստորեն շարժի մեջ դրեց **«զիջումներ իշխանության դիմաց»** մոդելը, քանզի որոշակի նախադրյալներ ապահովելով առաջիկա ընտրություններում իր կլանի վերարտադրության համար՝ միևնույն ժամանակ բավականին խոցելի դարձրեց Ադրբեջանի դիրքերը ինչպես արցախյան հակամարտության շուրջ բանակցային գործընթացի հեռանկարների, այնպես էլ միջազգային մակարդակում:

[58] **ԵԽԽՎ նախագահը անընդունելի և սկանդալային է համարում Ադրբեջանում Ռամիլ Սաֆարովի հերոսացումը** (2012), http://panorama.am/am/politics/2012/10/01/mignon/

3.3. Ռ. Սաֆարով կամ ադրբեջանական էպոսն արդիականության համատեքստում

Չնայած ադրբեջանական իրականության մեջ «սաֆարովապաշտությունը» որոշակիորեն թելադրված կամ ուղղորդված էր իշխանությունների կողմից, այնուամենայնիվ սխալ կլինի կարծել, որ Սաֆարովին որպես հերոս ընկալելը պետք է բացատրել սոսկ ալիևյան կլանի արդյունավետ գործունեությամբ: Ասվածն առավել պարզ կդառնա, եթե Սաֆարովի հերոսացումը դիտարկենք վերլուծական երկու հարթություններում՝ **քաղաքական** և **էթնոհոգեբանական** կամ **էթնոմշակութային**: Քաղաքական հարթությունում Սաֆարովի հերոսացումը հետևանք էր Ի. Ալիևի առջև ծառացած քաղաքական առաջնահերթությունների լուծման հրամայականի, մինչդեռ էթնոհոգեբանական տիրույթում պատկերը միանգամայն այլ է: Եթե քաղաքական տիրույթում առավելապես գործ ունենք **«ինչու՞ էր անհրաժեշտ Սաֆարովի հերոսացումը»,** ապա էթնոհոգեբանական մակարդակում՝ **«ինչու՞ հերոսացավ»** հարցի պատասխանը տալու անհրաժեշտության հետ: Այսինքն՝ հետազոտական տեսանկյունից կարևոր է պարզել այն, թե ինչպե՞ս ստացվեց, որ Ադրբեջանի նախագահի նախաձեռնությունը ի դեմս Սաֆարովի հերոսացման, մեծ հաջողություն արձանագրեց և խանդավառ վերաբերմունքի արժանացավ ադրբեջանական հասարակության լայն շրջանակների կողմից կամ գրեթե չքննադատվեց հասարակության խիղճը համարվող մտավորականության կողմից: Օրինակ, ադրբեջանական day.az կայքից տեղեկանում ենք, որ Սաֆարովի արտահանձնման և ազատ արձակման օրերին **«հազարավոր մարդիկ դուրս են եկել Սումգայիթի** *(հաշվի առնելով տարիներ առաջ Սումգայիթում տեղի ունեցած հայերի ջարդերը՝ սա բավականին խոսուն է և խորհրդանշական է – Ա. Սարգսյան)* **փողոցներ և տոնել են Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիևի կողմից Ռ. Սաֆարովին ներում շնորհելու փաստը: Մարդիկ բացականչում էին «Ռամի՛լ, մենք քեզանով հպարտանում ենք» կարգախոսը...»** (Day.az. 01.09.2012)[59]: Պարզ է, որ շուրջ երկու տասնամյակ հայատյացությամբ և ատելությամբ «դաստիարակված» ադրբեջանական հասարակության մեջ

[59] Մեջբ. ըստ **No Comments: Цитаты официальных лиц Азербайджана** (2012), http://misinformative.info/?p=4212

կարող էին լինել որոշակի նախադրյալներ Սաֆարովի կերպարի ընկալելիության համար: Սակայն **խնդիրն այն է, որ կերպարի ընկալելիության և հերոսացման միջև չի կարելի հավասարության նշան դնել,** քանզի ամեն ընկալելի կերպար չէ, որ կարող է ընդունվել որպես հերոս: Ավելին, եթե հաշվի առնենք նաև այն, թե ազգի «պատիվը» պաշտպանած Սաֆարովն ինչպիսի «խիզախությամբ» և սառնասրտությամբ է սպանել քնած Գ. Մարգարյանին, ապա պարզ կդառնա, որ Սաֆարովին որպես հերոս ընկալելը կարող էր տեղի ունենալ ոչ թե սոսկ ընկալելիության, այլ էթնոհոգեբանական կամ էթնոմշակութային համապատասխան հիմքերի կամ նախադրյալների առկայության դեպքում: Այսինքն՝ հաշվի առնելով ադրբեջանական հասարակության մեջ տարածում գտած հայատյացությունը և հայերին որպես չարիքի աղբյուր դիտարկելու հանգամանքը՝ Սաֆարովի կերպարը կարող էր ընկալելի լինել, իսկ զուտ սպանության փաստը՝ ողջունվել: Սակայն, եթե ուշադրություն դարձնենք այն հանգամանքին, թե ինչպես և ինչ պայմաններում է կատարվել սպանությունը, ապա պարզ կդառնա, որ Սաֆարովին որպես հերոս ընկալելու համար հայատյացությունը բավարար լինել չէր կարող: Թշնամիներ բոլորն էլ կարող են ունենալ, սակայն թշնամու դեմ պայքարի ամեն եղանակ կամ միջոց չէ, որ կարող է ընդունելի լինել բոլորի կամ մեծամասնության կողմից: Այսինքն՝ քնած հայ սպային կացնահարած ադրբեջանցին հերոսացվեց նաև այն պատճառով, որ ադրբեջանական հասարակության մեջ ներքնապես կամ հոգեբանորեն ընդունելի է համարվում թշնամու դեմ պայքարի այսօրինակ տարբերակը: Այլապես, որքան էլ Ադրբեջանի իշխանությունները փորձեին «սրբագործել» Սաֆարովի կերպարը, այնուամենայնիվ ադրբեջանական հասարակության մեջ այն չէր կարող լեգիտիմացվել որպես հերոսի կերպար: **«Ես ևս միանգամայն համոզված եմ,-** նշում է Ռուսաստանի Իսլամական կոմիտեի նախագահ Հեյդար Ջեմալը,- **որ Ադրբեջանում Ռամիլ Սաֆարովին որպես հերոս ընդունելը միանգամայն օրինաչափ է»**[60]**: Ադրբեջանում Սաֆարովի հերոսացման օրինաչափ լինելը փաստող այս տեսակետի հետ դժվար է չհամաձայնել, սակայն պետք է մեկ կարևոր նկատառում ներկայացնել: Բանն այն է, որ հակահայկական հարցազրույցներով և**

[60] **Возмущение и вопли со стороны Еревана – абсолютное лицемерие,** /Интервью Day.Az с председателем Исламского Комитета России Гейдаром Джемалем (2012), http://news.day.az/politics/352707.html

արցախյան հակամարտության հարցում ադրբեջանական մոտեցումների քարոզչությամբ[61] **հայտնի Հ. Ջեմալը Սաֆարովի հերոսացման հիմքում** *(տվյալ դեպքում բացահայտ չի խոսում դրա մասին)* **տեսնում է ոչ թե որոշակի էթնոհոգեբանական, մշակութային նախադրյալներ, այլ հայկական ագրեսիայից տուժած ադրբեջանցիների համար «արդար» պայքարի ելած անձնազոհ Սաֆարովի հանդեպ ակնածական վերաբերմունքը:**

Իհարկե, չի կարելի պնդել, որ ադրբեջանական հասարակության մեջ չկան «առողջ ուղեղներ» *(այս առումով դժվար է պատկերացնել Ադրբեջանի տեղաբնիկ ժողովուրդների բարոյական նորմերի կոդեքսի դիրքերից Սաֆարովին որպես հերոս ընկալելը և այլն)*, որոնց համար սկզբունքորեն անընդունելի է Սաֆարովի կերպարը կամ դատապարտելի է նրա հերոսացումը[62], սակայն խնդիրն այն է, որ ադրբեջանական հասարակության ընդհանրական արձագանքը համահունչ եղավ իշխանությունների մոտեցմանը: Ասվածի համատեքստում հատկանշական է Ադրբեջանի խորհրդարանի անվտանգության և պաշտպանության հարցերով հանձնաժողովի անդամ Զախիդ Օրուջի հետևյալ միտքը. **«Ռամիլ Սաֆարովի ազատ արձակումը բարձրացնում է ազգի հեղինակությունը: Ռ. Սաֆարովը պարզապես իր հոր զավակը չէ, <u>նա ադրբեջանական ժողովրդի ներկա-</u>**

[61] Տես **Г. Джемаль,** Это попытка спровоцировать Азербайджан на резкий и незапланированный ответ (2012), http://news.day.az/politics/257409_print.html և այլն:

[62] «Կովկասյան հանգույց» լրատվական գործակալության տեղեկացմամբ՝ Ադրբեջանում Ղարաբաղի հարցով Հասարակական խորհուրդը հանդես է եկել հայտարարությամբ, ուր քննադատվել է Ռամիլ Սաֆարովի հերոսացման փաստը: Հայտարարության տակ ստորագրել են Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի համանախագահ Արզու Աբդուլաևը, քաղաքագետ Զարդուշտ Ալիզադեն, Էլդար Նամազովը և այլոք: Նրանց համոզմամբ՝ **«Սաֆարովի հերոսացման արշավը մեծ վնաս է հասցնում Ադրբեջանի վարկանիշին: Այս ամենն իրավական և բարոյական առումով ապակողմնորոշում է ապագա սերնդին»** (**В Азербайджане Общественный совет по Карабаху осудил кампанию по героизации Рамиля Сафарова** (2012), http://www.kavkaz-uzel.ru/articles/213250/): Փաստենք միայն, որ սույն կայքում այս հայտարարության մասին հրապարակումը տեղ է գտել սեպտեմբերի 27-ին, ինչը կարծես վկայությունն է այն բանի, որ հայտարարությունն էլ սեպտեմբերի վերջերի «ծնունդ» է: Այսինքն՝ հայտարարության տակ ստորագրած ադրբեջանական մտավորականությունը, հասարակական գործիչները բավականին ուշ են դատապարտել Ալիևի գործողությունները: Իսկ սա նշանակում է, որ նրանց դատապարտումը ոչ այնքան եղելությանն է վերաբերում, որքան դրա հնարավոր բացասական հետևանքների գիտակցմանը: Եթե չլիներ միջազգային կոշտ արձագանքը, ԵԽ բանաձևը և այլն, ապա բացառված չի, որ այս հայտարարությունն այդպես էլ չինչեր:

<u>յացուցիչն է</u> *(ընդգծումը իմն է՝ Ա. Ս.)*...: **Այս իրադարձությունը կարող է ազդեցություն ունենալ ազգային ոգու բարձրացման վրա»** (SalamNews. 01.09.2012)[63]:

Ավելին, իշխանությունների քայլը ոգևորել էր ոչ միայն շարքային ադրբեջանցիներին, այլև Թուրքիայի բազմաթիվ քաղաքացիների: Օրինակ, Թուրքիայի քաղաքացի, պաշտոնաթող զինվորական Բադրի Ուստուներն Ալիևին ուղղված շնորհակալական նամակում գրում է. **«Նման գործը պետք է կատարել ճիշտ այդպես: Բոլոր զորամասերում պետք է կանգնեցվեն Ձեր կողմից ներման արժանացած քաջարի սպա Ռամիլ Սաֆարովի հուշարձանները, որպեսզի բոլորի, ինչպես նաև ամեն ադրբեջանցի զինվորի համար դա օրինակ ծառայի...: Այդպիսին պետք է լինեն ազգասիրությունը, հայրենասիրությունը և արիությունը»** (АПА.18.09.2012)[64]:

Հավանաբար ազգասիրության, հայրենասիրության և քաջության այսօրինակ ըմբռնմամբ են առաջնորդվել սույն զինվորականի զինվորական նախորդները, որոնք ոչ միայն «արիաբար» ոչնչացրել են ավելի քան 1,5 միլիոն անզեն հայերի, այլև իրենց ժառանգներին են փոխանցել այսօրինակ արիությամբ ապրելու «վեհ» հրամայականը:

Վերն ասվածը վկայում է այն մասին, որ Սաֆարովի հերոսացումը չի կարելի բացատրել սոսկ քաղաքական գործոններով, այն ունի նաև մշակութային և էթնոհոգեբանական խոր արմատներ: Ավելին, եթե հաշվի առնենք, որ **տվյալ հերոսի կերպարը որոշակիորեն նրան որպես հերոս ընկալողի կերպարն է կամ, տվյալ դեպքում, Սաֆարովի մեջ գնահատվածը միաժամանակ գնահատողի ինքնագնահատականն է,** ապա պարզ կլինի, որ Սաֆարովին հերոսացնող կամ ազգային խորհրդանիշ համարող ադրբեջանցիներն իրենց ներաշխարհում կրում են Սաֆարովի մի «մասնիկը» կամ այդ կերպարը ներքնապես հարազատ է իրենց: «**...Յուրաքանչյուր ազգային սիմվոլ,-** արդարացիորեն գրում է հոգեբան Ա. Նալչաջյանը,- **իրենից ներկայացնում է ազգի հոգեբանական կերտվածքի մի մասի խտացում:** Սիմվոլների համակարգը կարծես իրենից ներկայացնում է ազգային հոգեկանի, հատկապես բնավորության, **<u>ծածկագրման (կոդա-</u>**

[63] Մեջբ. ըստ **No Comments: Цитаты официальных лиц Азербайджана** (2012), http://misinformative.info/?p=4212

[64] Նույն տեղում:

<u>վորման) համակարգ...</u> *(ընդգծ. հեղինակինն են՝ - Ա.Ս.)»*[65]: Իսկ սա ևս մեկ անգամ կոչված է փաստելու, որ Սաֆարովի **լեգիտիմ հերոսացումը** չի կարելի դիտարկել ադրբեջանցիների ինքնության կամ բարոյահոգեբանական նկարագրի համատեքստից դուրս: Հակառակ դեպքում՝ պետք է գոնե գործ ունենայինք տվյալ կերպարի հերոսացման գործընթացի հանդեպ ներքին բողոքի դրսևորումների հետ, ինչն արտաքնապես կարող էր դրսևորվել, օրինակ, իշխանությունների նախաձեռնությունը չողջունելու տարբերակով *(հաշվի առնելով Ադրբեջանում հակաիշխանական բողոքներ և ցույցեր անցկացնելու գրեթե անհնարինությունը)*:

Խնդիր չունենալով շարքային ադրբեջանցիներին վիրավորել՝ փաստենք միայն, որ Սաֆարովի հերոսացման էթնոհոգեբանական կամ մշակութային նախադրյալների վերաբերյալ միտքն առավել հասկանալի կդառնա, եթե հետազոտական տեսադաշտից դուրս չթողնենք այսպես կոչված օղուզական էպոսը և դրա յուրակերպությունները:

Էպոսի ընտրությունը պատահական չէ, քանզի տարբեր ժողովուրդների գրական ստեղծագործությունների շարքում այն հաճելիորեն առանձնանում է նրանով, որ հնարավորինս ամբողջական է արտացոլում կամ ներկայացնում տվյալ ժողովրդի բնավորությունն ու բարոյական պատկերացումների համակարգը: Իհարկե, էպոսի ճանաչողական նշանակությունը չի սահմանափակվում դրանում բովանդակված էթնոհոգեբանական և մշակութային «ինֆորմացիայով», սակայն մեզ հետաքրքրող խնդրի տեսանկյունից ամենից առաջ կարևոր է ցույց տալ կոնկրետ էպոսի հեղինակ ժողովրդի արժեքային կողմնորոշումների և բարոյական ըմբռնումների բնութագրական գծերը: Ընթերցողներից շատերի համար գուցեև տարօրինակ հնչի, սակայն խոսքն արդեն ակնարկված օղուզական էպոսի մասին է *(դրա գոյության մասին իմացողները մեզանում բավականին քիչ են)*, որը մասնագիտական գրականության մեջ հայտնի է որպես **«Քորքութի գիրք»**[66]: Հարկ է փաստել, որ օղուզական եզրի օգտագործումը բնավ չի ստվերում այդ էպոսի կապը ադրբեջանական իրականության հետ: Բանն այն է, որ քննարկվող էպոսը թեպետ համարվում է թուրքմենական ժո-

---

[65] **Ա. Նալչաջյան,** Էթնիկական հոգեբանություն, Եր., 2001, էջ 171:

[66] Տես **"Книга моего деда Коркута". Огузский героический эпос.** Перевод академика В.В. Бартольда, М.-Л, 1962.

ղովրդի մեծագույն գրական հուշարձանը[67], այնուամենայնիվ ադրբեջանցիները այսօր էլ համարում են, որ այն իրենց ազգային էպոսն է: Իսկ սա նշանակում է, որ անկախ ծագման առանձնահատկություններից՝ **«Քորքութի գիրք»-ը** ադրբեջանական իրականության համատեքստում կարող է դիտարկվել որպես ինքնության ուսումնասիրության աղբյուր: Այսինքն՝ ազգային համարվող այս էպոսում տրված բարոյական, արժեքային պատկերացումները որոշակիորեն վկայում են այն հարազատած ժողովրդի արժեքային կողմնորոշումների որպիսության մասին:

Նպատակ չունենալով էպոսի բովանդակային բոլոր կողմերին անդրադառնալը՝ նշենք, որ սույն ստեղծագործության մեջ բավական խոսուն «վկայություններ» կան այն մասին, թե ինչու պետք է Ռ. Սաֆարովը ադրբեջանական իրականության մեջ ընկալվեր որպես հերոս, որպես քաջության կամ առնականության խորհրդանիշ: Ճիշտ է՝ սաֆարովատիպ «հերոսների» պակաս Ադրբեջանը երբեք չի ունեցել *(դրա վկայությունն են 1920թ. Շուշիի հայկական ջարդերը, Սումգայիթում, Բաքվում, Մարաղայում և այլ վայրերում հայերի կոտորածները)*, սակայն Սաֆարովը շատերից տարբերվում էր նրանով, որ **միջազգային մակարդակում իր վրա ուշադրություն հրավիրած հերոս էր:**

Վերադառնալով բուն էպոսին՝ փաստենք, որ այն բովանդակում է էպոսներին բնորոշ սյուժետային դրվագներ, որտեղ առավելագույնս դրական լույսի ներքո են ներկայացվում էպոսաստեղծ ժողովրդի որակները, մինչդեռ թշնամուն բաժին են ընկնում բացասական, մերժելի հատկություններ: Սա, իհարկե, նորմալ է, քանզի էպոսը ևս կոչված է նպաստելու ժողովրդի պայքարունակության ոգու բարձրացմանը, հայրենասիրության որակի և ազգապահպանության կամքի ձևավորմանն ու զարգացմանը: Սակայն խնդիրն այն է, որ օղուզական էպոսում գովերգվող և ակնածանքի առարկա հանդիսացող շատ հատկություններ հակասության մեջ են

[67] Քորքութի պաշտամունքը մեծ տարածում է գտել թյուրքական ժողովուրդների մոտ: Բանն այն է, որ նախկինում նվաճելով այլ երկրներ՝ թուրքմենները այդ երկրների բնակչության շրջանակներում տարածում էին Քորքութի հետ կապված իրենց ավանդազրույցները: Այս ամենի հետևանքով է, որ թուրքմենական կայսրությունների կազմի մեջ մտնող ժողովուրդների մոտ հանդիպում են «Քորքութ աթա»-ի մի շարք տարբերակներ *(ադրբեջանցիների պարագայում այն հանդես է գալիս որպես «Քորքութի գիրք» – Ա.Ս.)* և օղուզական էպոսն իրենցն են համարում նաև թյուրքական ժողովուրդները (այս մասին տե՛ս **Б. Амансарыев,** Бессмертие мудрого старца (2013), http://turkolog.narod.ru/info/trkm-9.htm:

ինչպես արևմտյան, այնպես էլ, առհասարակ, մարդասիրական արժեքների հետ: Այդ հատկությունների կրողները կամ դրանց համապատասխան գործողները այնպիսի մարդիկ են, որոնց ապագան իրավական պետություններում կարելի է պատկերացնել սոսկ երկարամյա կամ միգուցե ցմահ ազատազրկման համատեքստում:

Ասվածն առավել առարկայական կդառնա, եթե ընթերցողը ծանոթանա էպոսի սյուժետային մի շարք դրվագների, որոնցում և կկարողանա արձանագրել սաֆարովներ դաստիարակելու համար անհրաժեշտ բարոյական նորմերի ու պատկերացումների բացահայտ քարոզ: Այս առումով չափազանց ուշագրավ է պրոֆեսոր Հ. Միրզոյանի՝ օղուզական էպոսին նվիրված հոդվածը, որտեղ հեղինակը ներկայացնում և վերլուծում է էպոսի սյուժետային տարբեր դրվագներից մի քանիսը, ինչպես նաև վերհանում է ադրբեջանցի մասնագետների կողմից իրականացված և էպոսի հետ կապված բազմաթիվ կեղծիքները: Հանգամանալից վերլուծելով էպոսի՝ ազգային ինքնության որպիսության տեսանկյունից հետաքրքրություն ներկայացնող սյուժետային մի շարք պահեր և փաստելով այն, որ բոլոր էպոսներն էլ բովանդակում են ռազմի դաշտում մարդասպանության և արյան հեղման մասին «դրվագներ»՝ Հ. Միրզոյանը գրում է. **«Մյուս բոլոր էպոսների նման օղուզական էպոսը նույնպես հարուստ է այդօրինակ իրողություններով: Սակայն մյուս բոլոր էպոսներից տարբերվում է հատկապես այն բանով, որ նրանում մարդկանց գլուխ կտրելն ու արյուն հեղելը կատարվում են ոչ միայն ռազմի դաշտում թշնամիների հետ բախման ընթացքում, այլև սովորական կենցաղային պայմաններում, այսինքն՝ մարդկանց գլուխ կտրելն ու արյուն հոսեցնելը դիտվում են որպես տղա երեխայի հասունացման և առնականացման չափանիշ, իսկ հասուն տղամարդու համար՝ քաջության, պատվի ու արժանապատվության պայման: Ըստ այդմ, նորածին տղաներին մինչև տասնվեց տարին լրանալն անուն չի տրվում, որպեսզի այդ ընթացքում պարզ դառնա, թե այդ տեսակետից նա ինչ կարողություններ կդրսևորի, իսկ հասուն տղամարդկանց հասարակական դիրքը, պատիվն ու հարգանքը որոշվում են նրա կտրած գլուխների և հեղած արյան քանակով»**[68]:

[68] **Հ. Միրզոյան,** Էպոսը որպես տվյալ ժողովրդի ինքնության ուսումնասիրության աղբյուր (օղուզական էպոսի օրինակով), //«Հայոց ինքնության հարցեր», Եր., 2012, էջ 28-29:

Այս տեսանկյունից հասկանալի է, թե ինչ ահռելի անդունդ կա **«Սասնա Ծռեր»** էպոսի ու դրա հերոսների և օղուզական էպոսի կերպարների միջև: Համոզված ենք, որ թերևս միայն ադրբեջանական քարոզչամեքենան իր կեղծարարությունների շնորհիվ կկարողանար գեթ մեկ օրինակ բերել հայկական էպոսի հերոսների այնպիսի որակների, որոնք իրենց խորքում հակասության մեջ են մարդասիրական արժեքների և հանդուրժողականության հետ: Պատահական չէ, որ թեև ուշացումով, սակայն 2012 թվականի դեկտեմբերին կայացված որոշմամբ ՅՈՒՆԵՍԿՕ-ն հայ ազգային էպոսն ընդգրկեց մարդկության ոչ նյութական մշակութային ժառանգության ցանկում:

Հասունացման, առնականացման, քաջության, պատվախնդրության և արժանապատվության օղուզական ըմբռնումը շատերի համար գուցե ունի սոսկ պատմամշակութային նշանակություն, սակայն համոզված ենք, որ այն իր կենսունակությունն է պահպանել նաև մեր օրերում: Ավելին, ադրբեջանական էպոսն իր բովանդակային յուրակերպություններով գալիս է փաստելու, որ չի կորցրել արդիականությունը ադրբեջանական իրականության մեջ, քանզի ունի իր քարոզած բարոյական կողմնորոշումներով առաջնորդվող և քաջանալու մոլուցքով տարված արժանի հետևորդներ: Այս տեսանկյունից **Ռամիլ Սաֆարովը** *(ի տարբերություն էպոսի՝ Սաֆարովը «առաջադիմական հայացքներ» ունեցող ընտանիքից էր և անուն ստացել էր մինչև 16 տարին բոլորելը, սակայն կարևորն այն է, որ երիտասարդության տարիներին արդարացրեց էպոսի «սպասելիքները»)* **ադրբեջանական էպոսի արդիական «թարգմանությունն» է, իսկ նրա հերոսացումը՝ էպոսաստեղծ ժողովրդի կամ ադրբեջանական ժողովրդի հոգևոր ախտանիշը:** Այսինքն՝ Ռամիլ Սաֆարովի կատարած դաժան մարդասպանությունը *(էպոսի լեզվով՝ զոհի գլուխը կտրելն ու արյունը հեղելը)* լիովին համապատասխանում է ադրբեջանական էպոսում քաջության, հերոսության հավակնողի, պատվի մարդու առջև դրվող պահանջներին, իսկ դրա փառաբանումը՝ էպոսի արժեքային կամ բարոյական ընդհանուր կողմնորոշմանը: Պատահական չէ, որ դեռևս իր առաջին ցուցմունքների ժամանակ Սաֆարովը հպարտությամբ էր նշում, որ Գ. Մարգարյանին սպանել է հայ լինելու համար *(էպոսի լեզվով՝ անհավատին)*, մինչդեռ հետագայում փոխում է իր ցուցմունքները՝ պատսպարվելով զոհի դիմակի

տակ *(իբր արցախյան պատերազմից փուժած է, հարազատներ կորցրած, «փիեզերական» ծավալների ողբերգություն ապրած և տեսել է, թե ինչպես է հայ սպան անարգում ադրբեջանական դրոշը)*:

Հասկանալի է, որ Ռ. Սաֆարովի հանցանքը լեգիտիմացնողները օղուզական էպոսի այն կերպարների արդիականացված տարբերակներն են, որոնք իրենց զավակներին ու հարազատներին դաստիարակում են՝ արիության և հերոսության նախապայման դիտարկելով **«գլուխ կտրելը և արյուն հեղելը»**:

Քաղաքակիրթ աշխարհի համար Գ. Մարգարյանի սպանությունն ու դրա փառաբանումը չի կարող որևէ կերպ արդարացվել, մինչդեռ ադրբեջանական հասարակության մեջ ոչ միայն արդարացվում է, այլև՝ գովերգվում: Այս իրողությունը կոչված է փաստելու, որ ադրբեջանական հասարակության մեջ քաղաքակրթական, ԵԽ անդամ պետության կողմից ստանձնված պարտականություններով նախատեսված արժեքներն, ընդհանուր առմամբ, զուրկ են լեգիտիմությունից կամ գրեթե զուրկ են արժանի հետևորդներից: Հանգամանք, որը Արևմուտքի համար պետք է մտահոգիչ լինի ոչ միայն ալիևյան կլանի որդեգրած ազգայնամոլական և այլատյաց քաղաքականության, այլև այն պատճառով, որ 21-րդ դարում ԵՄ անդամ դառնալու հավակնություններ ունեցող պետության քաղաքացիները շարունակում են դոփել բացասական իմաստով արխայիկ պատկերացումների ու քրեական օրենսգրքի «ծանր» հոդվածներն անտեսող բարոյական նորմերի մակարդակում: Միով բանիվ՝ **Սաֆարովի հերոսացումը Արևմուտքի համար կարող է լինել հերթական չափորոշիչը, որով կարելի է պարզել ադրբեջանական հասարակության ժողովրդավարացման և հանդուրժողականության մակարդակը, ինչպես նաև արևմտյան արժեհամակարգին համապատասխանող պետություն կերտելու գործում Ալիևի իշխանավարման արդյունավետությունը:**

Վերն ասվածը չի նշանակում, թե տողերիս հեղինակը ադրբեջանական հասարակությունը դիտարկում է որպես հանցագործների հասարակություն, որոնց բնազանցական էության մեջ է դրված Սաֆարովի կամ օղուզական քաջի, առնական տղամարդու կամ պատվախնդիր էակի ոգին: Դա փաստումն է այն բանի, որ ադրբեջանական հասարակության մեջ կան բազմաթիվ ախտանիշեր, որոնք երկրի իշխանությունների կողմից

հետևողականորեն խրախուսվում են: Իրողություն, որը լուրջ խոչընդոտ է ինչպես տարածաշրջանային խաղաղության կայացման, հանդուրժողականության հաստատման, այնպես էլ մարդու իրավունքների պաշտպանության և այլ գերակայությունների տեսանկյունից:

ԳԼՈՒԽ 2

Ադրբեջանի հակահայկական տեղեկատվական քաղաքականության բնորոշ գծերը, թեզերը և հիմնական ուղղությունները

2.1. Ադրբեջանի քարոզչական թեզերը և հայատյացության պետական հիմքերի ցուցիչները (մեթոդաբանական տեսանկյուն)

2.1.1. Ադրբեջանում հակահայկական քարոզչության պետական հիմքերի ցուցիչները (մեթոդաբանական տեսանկյուն)

Չնայած Ադրբեջանում հայատյացությունն ունի որոշակի լեգիտիմություն և տարածվածություն, այնուամենայնիվ շատերի համար սա գուցեև ապացույցը չէ ադրբեջանական իշխանությունների որդեգրած հակահայկական բնույթի պետական քաղաքականության: Հասկանալի է, որ հայ-ադրբեջանական ավելի քան հարյուրամյա շփումների արդյունքում ձևավորված խնդիրները, արցախյան հակամարտության ընթացքում ադրբեջանական կողմի պարտությունը կարող էին նորանկախ Ադրբեջանում հայերի հանդեպ բացասական հույզերի հիմք հանդիսանալ: Չանտեսելով այս գործոնի կարևորությունը՝ այնուամենայնիվ նկատենք, որ հարևան պետության մեջ հայատյացության գոյության և խորացման փաստը[69] չի կարելի բացատրել տարերային ծագման գործոնով: Ավելին, հանդուրժողական և արևմտյան արժեհամակարգին հավատարիմ Ադրբեջանը *(նկատի ունենք Ադրբեջանի ինքնագնահատականը)* իրականում պետք է արձանագրեր հակառակ դինամիկան՝ դաստիարակելով այնպիսի սերունդ,

[69] Այս տեսանկյունից հատկանշական է նախապես ադրբեջանական www.modern.az կայքում տեղ գտած **«Երեք սերնդի ադրբեջանցիները Լաչինի և հայերի մասին»** հրապարակումը, որտեղ կարելի է հստակ արձանագրել հայերի հանդեպ ատելության էական դինամիկան: Ի տարբերություն ավագ սերնդի՝ նորահաս սերնդի ներկայացուցիչները անկաշկանդ հայտարարում էին, օրինակ, հայ երեխա սպանելու կամ ծեծելու ցանկության, հայերի հանդեպ իրենց ունեցած ատելության մասին և այլն: Ընդ որում, այդ վերջիններս նորանկախ Ադրբեջանի կրթական հաստատություններում սովորող, ադրբեջանական ՋԼՄ-ների տեղեկատվական հոսքերի համատեքստում մեծացող երեխաներ են (տես **Три поколения азербайджанцев о Лачине и об армянах** (2012), http://azerichild.info/mirror_15.html):

որն իսկապես հանդես կգար մարդասիրության, այլասիրության կամ հանդուրժողականության դիրքերից: Այսինքն՝ նշված իրողությունները կոչված են հաստատելու այն, որ Ադրբեջանում հայերի հանդեպ ատելության խորացումը և հայատյացությունը ոչ թե պատահականության, այլ պետականորեն մշակված և հետևողականորեն իրագործվող քաղաքականության հետևանք են: Ճիշտ է, Ադրբեջանի իշխանություններն ի ցույց չեն դրել *(կամ գոնե մեզ հայտնի չեն այդպիսիք)* **«Ադրբեջանի հակահայկական տեղեկատվական քաղաքականությունը»** խորագրով կամ դրան իմաստային առումով առնչակից որևէ պաշտոնական փաստաթուղթ, սակայն դա չի նշանակում, թե Ադրբեջանում հայատյացության պետական հիմքերը փաստող ցուցիչներ գոյություն չունեն:

Ակնարկված փաստաթղթի բացակայության պատճառով շատերը Ադրբեջանին հակահայկական տեղեկատվական քաղաքականության սուբյեկտի դերում ներկայացնելը անհիմն կհամարեն և այն կդիտարկեն որպես հայկական կողմի տեղեկատվական քաղաքականության մարտավարության դրսևորում: Չնայած այդպիսի մոտեցումներ կարող են լինել, սակայն դա չի նշանակում, թե ակնարկված և համայն աշխարհին «ի ցույց չդրված» փաստաթղթի բացակայությունը բավարար հիմք է Ադրբեջանին «ապաքրեականացնելու» և հայկական կողմին մեղադրանքներ հասցեագրելու համար: Բանն այն է, որ Ադրբեջանում պետական մակարդակով հակահայկական քարոզչությունն իրականացվում է տարբեր ուղղություններով և ոչ միշտ է, որ պետական կառույցներն են հանդես գալիս այդ քարոզչության **բացահայտ** սուբյեկտների կարգավիճակով: Իսկ սա նշանակում է, որ Ադրբեջանում հայատյացությունը պետականորեն ծրագրվում և աջակցվում է ինչպես անմիջական, այնպես էլ միջնորդավորված կերպով: Հայատյացության անմիջական սուբյեկտի կարգավիճակում պետությունը հանդես է գալիս ի դեմս պետական իշխանության մարմինների ու դրանց ներկայացուցիչների գործունեության: Ադրբեջանի հակահայկական քաղաքականության միջնորդավորված իրագործումը տեղի է ունենում ոչ պետական կառույցների միջոցով, որոնք, իրականում, հանդիսանում են պետական իշխանության de facto կցորդներ կամ արբանյակներ *(ի վերջո չմոռանանք նաև, որ Ադրբեջանը միջազգային մակարդակում ունի ավտորիտար կամ ամբողջատիրական պետության համբավ):* Ադրբեջանում

միջնորդավորված և անմիջական հակահայկականության պետական հիմքերի մասին են վկայում հետևյալ ցուցիչները.

1. Ադրբեջանի նախագահի և բազմաթիվ պետական պաշտոնյաների, քաղաքական գործիչների ռասիստական, հայատյացություն սերմանող կամ խրախուսող հայտարարությունները *(օրինակ, Ի. Ալիևի կողմից համայն հայությունը թշնամի հռչակելը, Ռ. Սաֆարովի արտահանձնման ու հերոսացման փաստի առնչությամբ տրված գնահատականները և այլն)*: Դրանք ոչ միայն բազմիցս հնչեցվել են, այլև չեն ներկայացվել որպես անձնական կարծիք: Հանգամանք, որը վկայում է այն մասին, որ այդ հայտարարությունները պետք է դիտարկել որպես պաշտոնական կամ պետական մոտեցման դրսևորում: Այս համատեքստում բավականին խոսուն են նաև ադրբեջանցի գրող Աքրամ Այլիսլիի[70] **«Քարե երազներ»** վեպի լուսընծայմանը[71] հաջորդած իշխանական արձագանքները, որոնք ևս մեկ անգամ փաստում են այն, որ Ադրբեջանում հայերին դրական լույսի ներքո ներկայացնելը պետական մակարդակով պատժվում է և դատապարտվում: Այսինքն՝ խոսքի ազատությունը «հարգող» պաշտոնական Բաքուն իր մոտե-

[70] Աքրամ Այլիսլին ծնվել է 1937թ. Ագուլիս գյուղում: Ավարտել է Մոսկվայի Մ. Գորկու անվան գրականության ինստիտուտը: Ադրբեջանում երկար տարիներ եղել է տարբեր պարբերականների խմբագիր, 2005թ. ընտրվել է Ադրբեջանի Միլի մեջլիսի պատգամավոր, միջազգային հարաբերությունների և միջխորհրդարանական կապերի հանձնաժողովի մշտական անդամ: Մի շարք վեպերի, պատմվածքների և թարգմանությունների հեղինակ է: Ադրբեջանում գրականության մեջ մեծ ձեռքբերումների համար նա արժանացել է պետական մի շարք մրցանակների: Մասնավորապես «Փառքի» (Շոխրատ) և «Անկախության» (Իստիգլալ) շքանշանի (տես **Աքրամ Այլիսլի. Երբ ես տեսա, թե ինչպես է արհեստականորեն ատելություն սերմանվում հայերի և ադրբեջանցիների միջև, որոշեցի տպագրել իմ վեպը** (2013), http://www.anews.am/2012-04-18-09-52-28/gitutyun/1441-news.html):

[71] «Քարե երազներ» վեպի հրատարակությունը մեծ իրարանցում առաջացրեց Ադրբեջանում և ուղեկցվեց հեղինակի ու նրա հարազատների հանդեպ հալածանքներով, ահաբեկումներով *(օր.՝ նրա կինն ու որդին ազատվեցին աշխատանքից, Այլիսլին մահվան դատապարտելու կոչեր հնչեցին և այլն)*: Ադրբեջանական ՁԼՄ-ների, այնուհետև նաև կառավարության կողմից միաձայն կերպով քննադատվեց վեպը, իսկ գրողը պիտակավորվեց՝ մեղադրվելով հայամետության մեջ: Իլհամ Ալիևի հրամանագրով Ա. Այլիսլիին զրկվեց «Ադրբեջանի ժողովրդական գրող» կոչումից, պետական պարգևներից և պետության կողմից տրվող թոշակից: Այս որոշումը հավանության արժանացավ նաև Ադրբեջանի Միլի մեջլիսի Մարդու իրավունքների պաշտպանության կոմիտեի ղեկավար Ռաբիյատ Ասլանովի կողմից: «Ժամանակակից Մուսավաթ» ադրբեջանական իշխանամետ կուսակցության առաջնորդ Հաֆիզ Հաջիևը կոչ էր արել կտրել Այլիսլիի ականջները՝ խոստանալով 10 հազար մանաթ *(մոտ 12 հազար դոլար)* պարգևավճար:

ցումներին հակասող տեսակետ բարձրաձայնելը, 1988-1989թթ. Բաքվում հայկական ջարդերի մասին խոսելը դիտում է որպես մեղսագործություն *(հանցանք «ճշմարտության» դեմ)*, որը պետք է խստորեն պատժվի: Եվ եթե հաշվի առնենք այն, որ, օրինակ, Ադրբեջանի Միլի մեջլիսի պատգամավոր Ահմեդ Վելիևն Այլիսլիի հոգեվիճակը և գենետիկ կոդը ստուգելու հարցն է բարձրացրել[72] *(ըստ էության պարզելու համար, թե արդյո՞ք նա չունի հայկական արմատներ)*, ապա ստացվում է, որ Ադրբեջանի օրենսդիրը (ները) «արատավոր» վարքը հակված է դիտարկել որպես հային բնորոշ գործելակերպ: Իսկ սա, անշուշտ, հայատյացության խոսուն վկայություն է:

2. Ադրբեջանի կրթության նախարարության կողմից հաստատված և կրթական հաստատություններում շրջանառության մեջ դրված ուսումնամեթոդական ձեռնարկների, դասագրքերի, հեքիաթների, կրթական ծրագրերի բովանդակությունը[73]: Վերջինս մի կողմից կոչված է հաստատելու հայատյացության գոյության փաստը, իսկ մյուս կողմից՝ դրա պետականորեն հովանավորված լինելը *(Ադրբեջանի կրթության նախարարությունը պետական կառույց է և համապատասխան ոլորտում իրականացնում է պետական քաղաքականություն)*:

3. Ադրբեջանում օրենսդրական որոշ նախաձեռնությունների բնույթը և միջազգային տարբեր կառույցներ կամ կազմակերպություններ ներկայացնող հայերին մուտքի վիզա չտրամադրելու, երկրից արտաքսելու մասին պատկան կառույցների որոշումները: Օրինակ, դեռևս 2011թ. Ադրբեջանի խորհրդարանում նախատեսվում էր անունների մասին նոր օրենքի ընդունում, որը նախատեսում էր անունների տրման «լուսացույցի» մեխանիզմը *(վերջինս մշակվել էր Ադրբեջանի ԳԱԱ տեղեկատվական տեխնոլոգիաների ինստիտուտի կողմից)*: Ըստ այդ օրենքի՝ «կանաչ ցուցակի» մեջ են ընդգրկված Ադրբեջանի ազգային, մշակութային, գաղափարախոսական արժեքներին համապատասխանող, «դեղին ցուցակի» մեջ՝ ոչ ցանկալի, այլ լեզուներով ոչ բարեհունչ և ծաղր առաջացնող անունները: Մինչդեռ «կարմիր ցուցակի» մեջ ընդգրկվածներն արգելված են: Դրանց շարքին են պատկանում այն մարդկանց անունները, որոնք իբր ագրեսիա են իրա-

---

[72] Տես **Приснится же такое. Азербайджанского писателя обвинили в симпатии к армянам** (2013), http://lenta.ru/articles/2013/02/05/stonedream/

[73] Այս մասին տես www.azerichild.info կայքեջի համապատասխան նյութերը:

կանացրել ադրբեջանցիների դեմ[74]: Իսկ սա, ինչպես խոստովանում է այս մեխանիզմը մշակող կառույցի տնօրեն Ռասիմ Ալիգուլիևը, նշանակում է, որ Ադրբեջանում հայկական անունները ընկնում են արգելքի տակ[75]:

Ինչ վերաբերում է հայերին Ադրբեջան մուտք գործելը արգելելուն կամ Ադրբեջանից արտաքսելուն, ապա շատերին է հայտնի «BLOOMBERG»-ի հայազգի ֆոտոթղթակից Դիանա Մարկոսյանի արտաքսումը Բաքվի միջազգային օդանավակայանից, «Ադրբեջանական ավիաուղիների» կողմից ՌԴ քաղաքացի, «ԱվտոՎԱԶ» ԲԲԸ արտասահմանյան վաճառքների վարչության պետ Սերգեյ Գյուրջյանին ինքնաթիռ բարձրանալ չթույլատրելը և այլն: Իրողություններ, որոնք կապված են եղել այդ անձանց էթնիկական ծագման հետ: Ճիշտ է, Ադրբեջանի ԱԳ նախարարության ներկայացուցիչ Էլիան Պոլուխովը Մարկոսյանի դեպքի առնչությամբ նշել է, որ Հայաստանի ու Ադրբեջանի միջև ընթացիկ հակամարտության պատճառով **«Մարկոսյանի Ադրբեջանում գտնվելը կարող էր խնդիրներ առաջացնել նրա անվտանգության ապահովման տեսակետից»**[76], սակայն սա, իր հերթին, վկայում է ադրբեջանական քարոզչամեքենայի հերթական դիցի մասին: Այն է՝ Ադրբեջանն ու ադրբեջանցիները իբր հանդուրժողական են, Ադրբեջանում հանգիստ ապրում են շուրջ 30000 էթնիկ հայեր:

Հասարակական տարբեր կազմակերպությունների և հիմնադրամների գործունեությունը, որոնք ունենալով պետական հովանավորություն կամ աջակցություն, մշակութային, գիտական և այլաբնույթ նպատակների հռչակման քողի ներքո փորձում են միջազգային հարթակ տեղափոխել հակահայկականությունը: Այս առումով հատկանշական է 2004 թվականին ստեղծված «Հեյդար Ալիևի հիմնադրամը», որը լինելով ոչ-պետական կազմակերպություն՝ ոչ միայն հովանավորվում է պետության կողմից, այլև անմիջապես կառավարվում է Ալիևների ընտանիքի *(հիմնադրամի նախագահը Ի. Ալիևի կինը՝ Մեհրիբան Ալիևան է)* կողմից: Չնայած սույն հիմնադրամն առավելապես ներկայացվում է որպես գիտամշակութային գոր-

[74] Տես **В Азербайджане будет принят новый закон об именах** (2012), http://www.trend.az/news/society/1815552.html

[75] Տես **В Азербайджане введен фашистский закон об именах и фамилиях нацменьшинств** (2012), http://www.panorama.am/ru/society/2011/05/16/azerbayjan-name/

[76] Մեջբ. ըստ **Ադբեջանի ԱԳՆ-ն հաստատել է, որ «Bloomberg»-ի հայազգի ֆոտոթղթակցին Բաքվից արտաքսել են Ստամբուլ** (2012), http://www.panorama.am/am/society/2011/06/29/bloomberg/

ծունեությամբ զբաղվող կառույց, այնուամենայնիվ դրա գործունեության առանցքը հակահայկական բազմահարթակ քարոզչությունն է, հայերի ու արցախյան հակամարտության մասին Ադրբեջանի պաշտոնական մոտեցումների տարածումը կամ հանրայնացումը: **«Հիմնադրամը,-** գրում է քաղաքագիտության դոկտոր Ա. Աթանեսյանը,- **սերտորեն համագործակցելով պետական և այլ կառույցների հետ** *(նախագահի աշխատակազմ, Ազգային անվտանգության նախարարություն, Ադրբեջանի Գիտությունների ազգային ակադեմիա և արտերկրում դիվանագիտական ներկայացուցչություններ)*, **սպասարկում է Ադրբեջանի քաղաքականության հիմնական ուղղությունները և առաջին հերթին՝ հակահայկական քարոզչությունը ԼՂ հակամարտության համատեքստում»**[77]: Իսկ սա վկայում է այն մասին, որ Ադրբեջանն իր հայատյաց քաղաքականության իրագործումը փորձում է ապահովել նաև ոչ պետական «խողովակներով»: Ադրբեջանական ԶԼՄ-ներում հայկական թեմատիկայով բազմաթիվ հրապարակումները[78] և դրանցից շատերի հայատյաց բնույթը: Այս հանգամանքը, անշուշտ, շատերի համար գուցե խիստ տարօրինակ և անհիմն թվա, քանզի առաջին հայացքից անհասկանալի է կապը ադրբեջանական ԶԼՄ-ների և պետական իշխանությունների կողմից տարվող հակահայկական քաղաքականության միջև: Սա առավել ևս այն դեպքում, երբ «ժողովրդավարական և հանդուրժող» Ադրբեջանի իշխանությունները պատեհ առիթը բաց չեն թողնում և ի լուր աշխարհի հայտարարում են իրենց երկրում անզուգական որակներով աչքի ընկնող «ազատ» մամուլի գոյության մասին: Օրինակ, Ադրբեջանի նախագահի աշխատակազմի հասարակական-քաղաքական հարցերի բաժնի ղեկավար Ա. Հասանովի համոզմամբ՝ ադրբեջանական ԶԼՄ-ները աշխարհում առաջատարն են օբյեկտիվության[79]

[77] **Ա. Աթանեսյան,** Հեյդար Ալիևի հիմնադրամի գործունեությունը տեղեկատվական ոլորտում (2012), http://www.noravank.am/arm/articles/security/detail.php?ELEMENT_ID=406

[78] Տես **А. Адибекян: Азербайджанская пресса изобилует «неполиткорректными» определениями в адрес армян** (2012), http://azerichild.info/analysis_experts_01.html

[79] Եթե ադրբեջանական ԶԼՄ-ներում հայ լինելը պախարակող, հայերին պիտակավորող և հայերի հանդեպ ատելություն սերմանող հրապարակումների բովանդակությունը Հասանովի ըմբռնած օբյեկտիվության դրսևորումն է, ապա ստիպված ենք ևս մեկ անգամ փաստել, որ ադրբեջանցի պաշտոնյան ինքնակամ խոստովանում է հայատյացության փաստը: Այսինքն՝ ստացվում է, որ հայերին վարկաբեկող և նրանց նկատմամբ ատելությունը խորացնող հոդվածները օբյեկտիվ մոտեցման արդյունք են, իսկ այդ «օբյեկտիվությունը» (իրականում՝ հայատյացությունը) պետք է խրախուսել և քաջալերել:

և օպերատիվության իմաստով, Ադրբեջանում գոյություն ունի լիարժեք համացանցային ազատություն ու պլյուրալիզմ և ԶԼՄ-ները բարգավաճում են[80]: Տեսակետ, որը քննադատության է արժանացել անգամ ադրբեջանական իրականության մեջ[81]:

Այս տեսանկյունից հատկանշական է նաև www.contact.az կայքում տեղ գտած հրապարակումը, որտեղ մի կողմից նշվում է Հասանովի տեսակետի անհիմն լինելը, իսկ մյուս կողմից՝ ադրբեջանական ԶԼՄ-ների ոչ օբյեկտիվությունն ու հայատյացությունը: **«Հարկ է թերթել որոշ առցանց հրապարակումներ,- գրում է հոդվածագիրը, և միանգամից աչքի են զարնում էժանագին կատակներ և վերլուծականներ, որոնցում բաց տեքստով գրված է, թե հայերն այսպիսին կամ այնպիսին են, մենք նրանցից բազում առումներով լավն ենք, հայերին տարբեր կերպ պիտակավորում են և այլն»**[82]: Ճիշտ է, Հասանովի հնչեցրած մտքերին ադրբեջանական ԶԼՄ-ների արագ և քննադատական արձագանքները կարծես որոշակի տուրք են նույն Հասանովի տեսակետի «արդարացիությանը», սակայն կարևորն այն է, որ դրանցում կարելի է հստակ արձանագրել հայատյացության փաստի խոստովանությունը:

Ավելին, եթե ադրբեջանական բազմաթիվ լրատվական կայքեր աչքի են ընկնում հակահայկական և հայատյաց հրապարակումներով, իսկ «հանդուրժող» Ադրբեջանի իշխանությունները ոչ միայն չեն արձագանքում *(ինչը, ի դեպ, Ադրբեջանի միջազգային պարտավորությունների շրջանակներում է)* ռասիզմ կամ նորօրյա նացիզմ քարոզող ԶԼՄ-ների գործունեությանը, ապա պարզ է դառնում, որ Ադրբեջանում պետական մակարդակով առնվազն ապահովվում են համապատասխան նախադրյալներ հայատյացության համար: Բայց սա հարցի միայն մի կողմն է: Բանն այն է, որ միջազգային տարբեր կառույցների կամ կազմակերպությունների, ինչպես նաև տարբեր փորձագետների ու քաղաքական գործիչների գնահատականներով *(օրինակ՝ Եվրախորհրդարանի 2009թ. Ադր-*

---

[80] Տես **Али Гасанов: Азербайджанские СМИ лидируют в мире** (2012), http://www.contact.az/docs/2012/Want%20to%20Say/112200019043ru.htm

[81] Տես **Эксперты - о мыслях Али Гасанова про свободу слова** (2012), http://www.radioazadlyg.org/content/article/24539952.html

[82] **Али Гасанов: Азербайджанские СМИ лидируют в мире** (2012), http://www.contact.az/docs/2012/Want%20to%20Say/112200019043ru.htm

բեջանի վերաբերյալ ընդունած բանաձևը[83]*, Amnesty International, Human Rights Watch, Freedom House և այլ կազմակերպությունների զեկույցները, հայտարարությունները կամ հաղորդագրությունները, Մեծ Բրիտանիայի խորհրդարանի անդամ Հ. Գուդմանի հոդվածը և այլն*[84]*)* Ադրբեջանում խոսքի ազատությունն անմխիթար վիճակում է, այլախոհությունն իշխանությունների կողմից խստորեն դատապարտվում և պատժվում է: Իսկ սա նշանակում է, որ հարավկովկասյան այս պետության մեջ առավելապես անարգել գործում են իշխանական կամ իշխանության կողմից հավանության արժանացած ԶԼՄ-ները, ինչը կոչված է փաստելու, որ, օրինակ, ադրբեջանական էլեկտրոնային և տպագիր ԶԼՄ-ներում «կարմիր թելի» պես անցնող հայատյացությունը ադրբեջանական իշխանությունների նպատակադիր գործունեության կամ հավանության արդյունք է:

Վերը նշվածից պարզ է դառնում, որ հայատյացության ադրբեջանական տարբերակի բնորոշ գծերն ու թեզերը վերհանելու և հիմնական ուղղությունների որպիսությունը հասկանալու համար գոյություն ունեն հետազոտական տարբեր «աղբյուրներ»: Դրանց շարքին են պատկանում ադրբեջանցի պաշտոնյաների հնչեցրած ոչ անձնական տեսակետները, Ադրբեջանի կրթական քաղաքականության բովանդակային կողմերը, պատկան կառույցների գործելաոճի առանձնահատկությունները, ԶԼՄ-ներում տեղ գտած և հետևողականորեն զարգացվող հայատյաց հոդվածները կամ հրապարակումները և այլն: Ընդ որում, ադրբեջանական ԶԼՄ-ներում հակահայկական հրապարակումները ոչ թե «տեխնիկական»

[83] Տես **Հ. Բունիաթյան,** Եվրախորհրդարանը քննադատում է խոսքի ազատության վիճակը Ադրբեջանում (2012), http://www.azatutyun.am/content/article/1906942.html

[84] Տես **Freedom House-ն Ադրբեջանում խոսքի ազատության ծանր իրավիճակի համար պատասխանատու է համարում կառավարությանը** (2012), http://armenpress.am/arm/news/688871/, **Азербайджан: свободе СМИ угрожает серьезная опасность** (2012), http://www.hrw.org/ru/news/2012/05/03-0, **Freedom House: Азербайджан остался несвободной страной** (2012), http://www.contact.az/docs/2012/Politics/121300021356ru.htm, **Эксперт Freedom House: Власти Азербайджана нелегально контролируют Интернет** (2012), http://www.contact.az/docs/2012/Interview/100200013243ru.htm, **Azerbaijan: Concerns Regarding Freedom of the Media and Freedom of Expression** (2012), http://www.hrw.org/news/2012/11/02/azerbaijan-concerns-regarding-freedom-media-and-freedom-expression, **Azerbaijan: Shrinking Space for Media Freedom** (2012), http://www.hrw.org/news/2012/11/02/azerbaijan-shrinking-space-media-freedom, **H. Goodman, Azerbaijan (Human Rights)** (2012), http://www.theyworkforyou.com/debates/?id=2012-12-20a.1098.0&s=speaker%3A11421#g1098.3

թերացումների, այլ հետևողական մոտեցման արդյունք են: Այդ մասին են վկայում դրանց առատությունը, պարբերական լինելն ու տվյալ կայքերում լեգիտիմացվածությունը: Այս առումով փայլուն «կենսագրություն» են կերտել, օրինակ, ադրբեջանական www.vesti.az, www.day.az, www.aze.az և այլ լրատվական կայքերը: Դրանցում հայկական թեմատիկայով հրապարակումներից շատերը վստահվում են հայատյացությամբ աչքի ընկնող փորձագետներ Ֆարիդ Թեյմուրխանլիին, Բահրամ Բատիևին, Ռիզվան Հուսեյնովին և այլոց: Վերջիններս հիմնականում հանդես են գալիս փաստարկի ուժն անտեսող և հուզականությանը հագուրդ տվող այնպիսի հոդվածներով, որոնցում պիտակավորված քննադատության և վիրավորանքի թիրախի կարգավիճակում են հայ փորձագետները, մտավորականները, ՀՀ և Արցախի իշխանությունները և հայ ժողովուրդն առհասարակ:

2.1.2. Ադրբեջանի տեղեկատվական քաղաքականության բնորոշ գծերը և քարոզչական թեզերը

ա/ Հակահայկականությունը և հայատյացությունը Ադրբեջանի տեղեկատվական քաղաքականության համակարգում (մեթոդաբանական տեսանկյուն)

Ադրբեջանի հակահայկական տեղեկատվական քաղաքականությունը հետազոտական կարևորություն է ներկայացնում նաև իր բնութագրական գծերի տեսանկյունից: Իհարկե, Ադրբեջանի տեղեկատվական քաղաքականության նախադրյալների (դետերմինանտների) վերլուծության կամ վերհանման արդյունքում կարելի է համապատասխան եզրակացություններ կատարել և հակազդման մեխանիզմների դաշտ ուրվագծել, սակայն այդ գործը թերի կլինի, եթե հետազոտական տեսադաշտից դուրս մնա այդ քաղաքականության որպիսության կամ, ավելի ստույգ, բնութագրական գծերի, քարոզչական թեզերի և հիմնական ուղղությունների հարցը:

Հասկանալի է, որ Ադրբեջանի տեղեկատվական քաղաքականության սոսկ հակահայկականությունը փաստելով՝ անգամ «հարգանքի տուրք» չենք մատուցի ճշմարտությունը բացահայտելու կամ խնդրո առարկա հարցը խորությամբ վերլուծելու գործին: Բանն այն է, որ հետազոտական տեսանկյունից առավել կարևոր է **ոչ թե հակահայկականության փաստումը, այլ դրա ադրբեջանական յուրակերպության վերհանումը:** Միով բանիվ՝ առավել հրատապ է այն հարցը, թե ինչ առանձնահատկություններ կամ բնորոշ գծեր ունի այդ հակահայկականությունը, գաղափարական ինչ պատվանդանի վրա է այն խարսխված: Ավելին, այս տեսանկյունից կարևոր է հակահայկականություն և հայատյացություն եզրերի տարբերակումը, քանզի դրանց նույնացումը կարող է որոշակի տարըմբռնումներ առաջացնել: Հայատյացությունը, անշուշտ, հակահայկականության դրսևորում է, սակայն հակահայկականության ամեն դրսևորում չէ, որ աչքի է ընկնում հայատյացությամբ:

Վերջինս հակահայկականության ծայրահեղ տարբերակն է, որի **ադրբեջանական տարբերակում բացահայտ կամ քողարկված եղանակներով ապաբարոյականացվում, ապահումանիզացվում է հայ-**

կական ինքնությունը կամ հայի կերպարը, երբեմն էլ կասկածի տակ է դրվում հայ ժողովրդի գոյության իրավունքը և այլն: Ինչ վերաբերում է հակահայկականության ոչ ծայրահեղ տարբերակներին, ապա դրանց պարագայում գործ ունենք հայ ժողովրդի սպասումներին, հայկական պետությունների շահերին հակասող գործունեության հետ: Թեպետ ՀՀ շահերից չբխող որոշումները կամ նախաձեռնությունները *(միջազգային և ոչ միջազգային տարբեր սուբյեկտների հեղինակած)* կարող ենք դիտարկել որպես «հակահայկականության» դրսևորում, սակայն սա որևէ կերպ չի կարող արդարացնել էգալիտարիստական մոտեցումը ադրբեջանական *(որոշակիորեն նաև թուրքական)* և այլ հակահայկականությունների հանդեպ:

Օրինակ, Հունգարիայի կողմից Ռ. Սաֆարովի արտահանձնումը Ադրբեջանին հակահայկական կողմեր ունեցող որոշման դրսևորում էր, սակայն սխալ կլինի ասել, որ Հունգարիան պետական մակարդակով իրականացնում է հակահայկական կամ, առավել ևս, հայատյաց քաղաքականություն: Հայատյաց քաղաքականության համատեքստում Հայաստանի Հանրապետությունը դիտարկվում է որպես տարածաշրջանային «ապենդիցիտ» կամ, ինչպես կասեր Գ.Մարխուլիան[85], Հարավային Կովկասի մարմնի վրա հեռացման ենթակա քաղցկեղային ուռուցք[86], հայությունը՝ մարդկության և մարդկայնության թշնամի, իսկ դրանց դեմ միջոցների անխտրությամբ դրսևորվող պայքարը *(երբեմն՝ կացնի նախապատվությամբ)*՝ որպես համայն մարդկության հանդեպ պարտքի իրականացում: Բացի այդ, հակահայկականություն և հայատյացություն եզրերի տարբերակումը թույլ է տալիս հասկանալ Ադրբեջանի տեղեկատվական քաղաքականության մեջ արտաքին և ներքին լսարաններին հասցեագրված հաղորդագրությունների տարբերությունները: Եթե ներքին լսարանի մակարդակում Ադրբեջանն իրականացնում է հայատյաց քաղաքականություն, ապա արտաքին լսարանի մակարդակում *(նկատի ունենք միջազ-*

[85] Գուրամ Մարխուլիան պատմագիտության դոկտոր է, Սուխումի պետական համալսարանի պրոֆեսոր, որը Ադրբեջանի և Վրաստանի միջև գիտական կապերի զարգացման գործում ներդրած ավանդի համար պարգևատրվել է Ադրբեջանի ԳԱԱ պատմության ինստիտուտի Պատվավոր դոկտորի դիպլոմով:

[86] Տես **Грузинский профессор: «Армяне поменяли мне фамилию: теперь я Алиев»,** // Интервью Vesti.Az с доктором исторических наук, профессором Сухумского государственного университета Гурамом Мархулия (2012), www.peeep.us/87b1dfa0

գային հանրությունը, միջազգային կառույցները) առավելապես հանդես է գալիս հակահայկականության, երբեմն էլ՝ զգուշավոր կամ լատենտ հայատյացության դիրքերից: Օրինակ՝ արտաքին մակարդակում Ադրբեջանը շրջանառության մեջ է դնում ՀՀ իշխանությունների ոչ կառուցողական և միջազգային նորմերը խախտող քաղաքականության, ՀՀ ագրեսիայի, հայերի դրսևորած դաժանությունների կամ «ցեղասպանություն» իրագործած հայերի մասին թեզերը՝ նպատակ ունենալով ադրբեջանամետ և ՀՀ շահերին հակասող դիրքորոշումների պլատֆորմ ձևավորելը: Մինչդեռ ներքին մակարդակում այս թեզերը որոշակիորեն ծայրահեղացվում են, առանցքային թշնամի է համարվում հայը, իսկ պայքարի թիրախ է հայերի և ՀՀ հեղինակության բարձրացմանը նպաստող ցանկացած երևույթ: Ի տարբերություն արտաքին լսարանի՝ այս դեպքում նպատակը հայատյացության ոգով հասարակությունը «դիմակերտելն» է:

բ) Ադրբեջանի հակահայկական քարոզչական թեզերն ու դրանց դասակարգման հարցը

Ադրբեջանի տեղեկատվական քաղաքականության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այս երկիրը հանդես է գալիս լավ մշակված, հետևողական իրագործվող քարոզչական գործունեությամբ: Վերջինս, անշուշտ, տարբեր նպատակներ է հետապնդում, սակայն դրանց շարքում առանցքային նշանակություն ունեն տարածաշրջանային և միջազգային մակարդակում Ադրբեջանի դերի որակական բարձրացումն ու ՀՀ մարգինալացումը, ցանկալի հեռանկարում աշխարհի քաղաքական քարտեզից վերացումը: Սա չի նշանակում, թե սեփական դերի բարձրացումը Ադրբեջանում հասկացվում է ժողովրդավարական զարգացումների և արևմտյան արժեհամակարգի տեղայնացման համատեքստում: Ասվածի խոսուն վկայությունն են Ադրբեջանի քարոզչամեքենայի կողմից մշակված քարոզչական թեզերը, դրանց հանրայնացման ու հիմնավորման եղանակները: Առհասարակ, Ադրբեջանի հակահայկական տեղեկատվական համակարգն իր արդյունավետության ապահովման համար մեծապես կարևորում է այնպիսի գործոններ, ինչպիսիք են սոցիալական համատեքստը, տեղեկատվության աղբյուրը, հաղորդակցման միջոցը, հաղորդագրությու-

նը և այլն[87]: Այս գործոնների չանտեսումը չափազանց կարևոր է, քանզի դրանք մարտավարական այն գործիքաշարի բաղկացուցիչներն են, որոնք հնարավորություն են տալիս հասցեական և հոգեբանական տեսանկյունից առավել ազդեցիկ դարձնել հակահայկական քարոզչական նյութի բովանդակությունը:

Թեպետ մեզանում Ադրբեջանից եկող տեղեկատվական մարտահրավերներին դիմագրավելու ուղղությամբ ակտիվ և արդյունավետ աշխատանքներ իրագործվում են, այնուամենայնիվ հարևան պետության հակահայկական քարոզչական թեզերի համակարգը շարունակում է մնալ ոչ պատշաճ ուսումնասիրված: Սա, անշուշտ, բացասական ազդեցություն է թողնում տեղեկատվական պատերազմում առավել արդյունավետ գործելու հնարավորության վրա: Հանգամանք, որն անհրաժեշտություն է առաջացնում որոշակիորեն լրացնել ադրբեջանական քարոզչամեքենայի հակահայկական թեզերի մասով առկա հետազոտական բացը: Հասկանալի է, որ Ադրբեջանի՝ պետականորեն ծրագրված և իրագործվող քարոզչական քաղաքականությունն ու դրա թեզերի ուսումնասիրությունը սույն աշխատանքում չի կարող սպառիչ տեսք ստանալ, սակայն դա չի նշանակում, որ պետք է հրաժարվել հետազոտական «քայլ առաջ»-ից: Ուստի, խնդիր ունենք դասակարգել Ադրբեջանի հակահայկական թեզերը, հասկանալ դրանց կառուցման տրամաբանությունը և փոխակերպումների պատճառները:

Նախապես նշենք, որ 2009թ. այդ թեզերի համակարգման, դասակարգման փորձ արդեն եղել է[88]: Այդ փորձը հեղինակած փորձագետն առաջարկելով դասակարգման որոշակի տարբերակ՝ բազմաթիվ աղբյուրների հիման վրա հանգամանալից ներկայացնում է արցախյան հակամարտության պատմական կողմի վերաբերյալ ադրբեջանական քարոզչական թեզերը: Բարձր գնահատելով այս ուղղությամբ նրա կատարած աշխատանքն ու դրա արժեքավորությունը, այնուամենայնիվ փաստենք,

[87] Տես **Ադրբեջանի հակահայկական տեղեկատվական համակարգը,** Եր., Նորավանք, 2009, էջ 44-62:

[88] Տես **Կ. Վրթանեսյան,** Հայ-ադրբեջանական հակամարտության քարոզչական թեզերը (2012), http://www.noravank.am/arm/articles/security/detail.php?ELEMENT_ID=2219: Ադրբեջանի քարոզչական թեզերի մասին տես նաև **Ս. Մարտիրոսյան,** Ադրբեջանի քարոզչամեքենան. նոր միտումներ (2012), http://www.noravank.am/arm/articles/security/detail.php?ELEMENT_ID=4290

որ հակահայկական թեզերի դասակարգման ժամանակ փորձագետը հստակություն չի մտցնում այն հարցում, թե, օրինակ, թվարկված բազմաթիվ պատմական թեզերը հասցեագրման ինչ տրամաբանություն ունեն: Հանգամանք, որի արդյունքում հեղինակի առաջարկած որոշ դրույթներ դառնում են «վերանայման» ենթակա: Բացի այդ, հեղինակի առաջարկած դասակարգման հիմքերը կարիք ունեն լրացման, ինչը և կիրականացվի հետագա շարադրանքում:

Հայ-ադրբեջանական հակամարտության քարոզչական թեզերը նախկինում դասակարգվել է երկու հիմքերի համաձայն *(ըստ նպատակային լսարանի և ըստ թեմաների)*[89], սակայն, ինչպես արդեն ակնարկել ենք, դրանցով չի կարելի սահմանափակել դասակարգման հիմքերի քանակը: Իհարկե, հավակնություն չունենք հակահայկական քարոզչական թեզերի դասակարգման հիմքերի սպառիչ տարբերակը ներկայացնել, սակայն համոզված ենք, որ գործը ավելի կշահի, եթե հաշվի առնենք դրանց դասակարգման հիմքերի այլ տարբերակներ ևս: Սակայն մինչ այդ խնդրին անդրադառնալը՝ անհրաժեշտ է որոշ նկատառումներ ներկայացնել.

– Թեզերի դասակարգման ժամանակ ընտրված հիմքերով չեն սահմանափակվում դրանց հնարավոր բոլոր տարբերակները, իսկ միևնույն հիմքով կատարված դասակարգման ժամանակ ստացված անդամները կարող են տարբեր խմբերի պատկանել: Օրինակ, ինչպես կտեսնենք հետագայում, Ադրբեջանի քարոզչական թեզերն ըստ նպատակի դասակարգելու պարագայում կարող ենք գործ ունենալ պառակտման կամ միավորման, վարկաբեկման և գովաբանման նպատակ ունեցող թեզերի խմբերի հետ:

– Հակահայկական թեզերն ունեն փոխակերպվող բնույթ և կախված լսարանի առանձնահատկություններից՝ մատուցվում են տարբեր ձևակերպումներով ու շեշտադրումներով: **Սակայն թեզերի փոխակերպական բնույթը չի նշանակում համընդհանրական կոնցեպտների բացակայություն:** Այսինքն՝ թեզերի հիմքում ընկած են որոշակի գաղափարական և հիմքային կոնցեպտներ, որոնք հընթացս ներկայացվում են համապատասխան լեզվական կաղապարներով:

[89] **Կ. Վրթանեսյան,** Հայ-ադրբեջանական հակամարտության քարոզչական թեզերը (2012), http://www.noravank.am/arm/articles/security/detail.php?ELEMENT_ID=2219

– Ադրբեջանի հակահայկական քարոզչական թեզերի տարբեր հիմքերով դասակարգումը չի նշանակում, թե այս կամ այն թեզը վերաբերում է սոսկ մի խմբի: Միևնույն թեզը կարող է պատկանել տարբեր խմբերի, ծառայել տարբեր նպատակների: Օրինակ՝ Արցախում հայերի եկվորության մասին թեզը կարող է դասվել ինչպես պատմական, ներքին և արտաքին լսարաններին հասցեագրված, այնպես էլ ռազմավարական կամ կոնցեպտուալ թեզերի շարքին և այլն:

– Սույն հետազոտության տեսանկյունից կարևոր է ոչ թե հակահայկական թեզերի ադրբեջանական «ժողովածու» կազմելը *(դա կարող է լինել առանձին հետազոտության խնդիր)*, այլ թեզերի ընտրության և հասցեագրման տրամաբանությունը վերհանելը:

Այսպիսով, Ադրբեջանի հակահայկական քարոզչական թեզերը կարելի է դասակարգել հետևյալ հիմքերով.

– ըստ կարևորության աստիճանի կամ առանցքայնության – կոնցեպտուալ և փոխակերպվող *(անվանումը խիստ պայմանական է)* կամ, այլ կերպ, ռազմավարական կամ մարտավարական թեզեր,

– ըստ նպատակի – պառակտող և միավորող թեզեր, վարկաբեկող և գովաբանող թեզեր,

– ըստ տեղեկատվական բովանդակության հասցեատերերի – ներքին և արտաքին լսարաններին հասցեագրված թեզեր,

– ըստ տեղեկատվական բովանդակության բնագավառների[90] – պատմություն, մշակույթ, սոցիալ-տնտեսական կյանք, իրավունք, քաղաքականություն, քաղաքակրթական դաշտ, զինված ուժեր և այլն,

– ըստ ծագման աղբյուրի – ներքին և արտաքին ծագման թեզեր,

– ըստ հիմնավորման եղանակի – կորեսպոնդենտիվ և կոհերենտ:

Անշուշտ, դասակարգման այս տարբերակը կարիք ունի հստակեցման ու պարզաբանման: Ստորև առավել հանգամանալից կներկայացնենք տարբեր հիմքերով առանձնացված թեզերի խմբերը, դրանց մեջ մտնող թեզերի բնորոշ գծերը:

---

[90] Տեղեկատվական բովանդակության բնագավառների հիմքով դասակարգումը կարելի է դիտարկել նաև որպես դասակարգում ըստ թեմաների:

1. Դասակարգում ըստ կարևորության աստիճանի կամ առանցքայնության:

Ըստ կարևորության աստիճանի կամ առանցքային նշանակության Ադրբեջանի հակահայկական քարոզչական թեզերը կարող են լինել **հայեցակարգային** և **փոխակերպվող կամ ռազմավարական** և **մարտավարական:** Կոնցեպտուալ թեզերը կազմում են Ադրբեջանի տեղեկատվական քաղաքականության միջուկը, սրանց վրա է խարսխված հարևան երկրի քարոզչամեքենայի հակահայկական ողջ գործունեությունը: Կոնցեպտուալ թեզերը, ի տարբերություն փոխակերպվող թեզերի, շրջանառությունից դուրս չեն գալիս, չունեն իրավիճակային բնույթ: Այլ խոսքերով՝ կոնցեպտուալ թեզերն Ադրբեջանի տեղեկատվական քաղաքականության ռազմավարական թեզերն են, մինչդեռ փոխակերպվողներն ունեն առավելապես մարտավարական բնույթ: Կոնցեպտուալ և փոխակերպվող թեզերի առանձնացումը չի նշանակում դրանց միջև ընդհանրության բացակայություն: Բանն այն է, որ **փոխակերպվող թեզերը կառուցված են կոնցեպտուալ թեզերի համատեքստում, իսկ կոնցեպտուալ թեզերը առաջ են մղվում փոխակերպվող թեզերի միջոցով:**

Կախված այս կամ այն իրավիճակից, հանգամանքից, լսարանի առանձնահատկությունից և այլն՝ կոնկրետ փոխակերպվող թեզը կարող է շրջանառությունից դուրս գալ կամ փոխարինվել մեկ այլ նմանատիպ թեզով՝ չհակասելով կոնցեպտուալ թեզի տրամաբանությանը: Օրինակ, հետևողականորեն շրջանառության մեջ դնելով հայերի թուրքատյացության ու Հայաստանի ագրեսիվության մասին թեզերը՝ Ադրբեջանը, միևնույն ժամանակ, երբեմն չի հրաժարվում այնպիսի թեզերից, որտեղ շեշտվում է հայերի ու ադրբեջանցիների միջև դարավոր բարեկամությունը, արցախյան հակամարտության ծագումը բացատրվում է օտարածին ուժերի շահերով, ՀՀ քաղաքական առաջնորդների ու սփյուռքահայերի «Մեծ Հայաստան» կամ «Ծովից ծով Հայաստան» ծավալապաշտական դիցերով: Որոշակի հակասականությամբ աչքի ընկնող այս թեզերի համաժամանակյա գոյությունը հասկանալի է դառնում, եթե առաջնորդվում ենք հայեցակարգային և փոխակերպվող թեզերի տարբերակման մեթոդաբանությամբ: Բանն այն է, որ հայերի ու ադրբեջանցիների բարեկամության, խաղաղ համագոյութ-

յան մասին փոխակերպվող թեզն ըստ էության ունի մարտավարական, իրավիճակային բնույթ, որի հիմքում ընկած է հետևյալ **հայեցակարգային** թեզը. **Լեռնային Ղարաբաղի պատերազմը հետևանք է ՀՀ սանձազերծած ագրեսիվ և ծավալապաշտական քաղաքականության:** Հայեցակարգային այս թեզի լեգիտիմացման համար Ադրբեջանը շրջանառության մեջ է դնում դրա համատեքստում ձևավորված տարբեր փոխակերպվող թեզեր: Օրինակ՝ արտաքին լսարանի պարագայում շեշտվում են հայերի ու ադրբեջանցիների բարեկամության, արցախահայությանը սպասվող ադրբեջանական առատաձեռնության մասին փոխակերպվող թեզերը, որոնք կարծես վկայում են այն մասին, թե Ադրբեջանն արցախահայության հետ խնդիր չունի: Նրա խնդիրը կապված է ագրեսոր Հայաստանի Հանրապետության և նրա հանցագործ իշխանությունների հետ: Մինչդեռ ներքին լսարանի մակարդակում այս թեզերը որոշակիորեն փոփոխվում են, և տեղի է ունենում թշնամու և հակամարտության պատճառագիտության վերանայում:

Ներքին լսարանում արցախյան հակամարտությունը առավելապես ներկայացվում է հայերի թուրքատյաց քաղաքականության գաղափարի համատեքստում, իսկ ՀՀ ագրեսիան դիտվում է որպես հայերի՛ ինստիտուցիոնալ-պետական ագրեսիայի դրսևորում: Ասվածի համատեքստում խոցելի է դառնում այն միտքը, թե **«հայերի համար են նախատեսված հայերի և ադրբեջանցիների նմանության, նրանց միջև իբր գոյություն ունեցած դարավոր բարեկամության** *(որը խզվեց ամենապարբեր ուժերի ազդեցության և ամենապարբեր իռացիոնալ պատճառներով՝ այդ ժողովուրդների կամքին հակառակ)* **մասին ադրբեջանական թեզերը»**[91]: Բանն այն է, որ այսօրինակ թեզերը Ադրբեջանի հայատյաց քարոզչությանը քաջածանոթ հայկական լսարանում արմատավորվելու հզոր ներուժ չունեն և անիմաստ է դրանց հասցեագրումը այդ լսարանին, մինչդեռ արտաքին լսարանի մակարդակում դրանք կարող են Ադրբեջանի հանդեպ որոշակի դրական վերաբերմունքի հիմք դառնալ: Ճիշտ է, Ադրբեջանը երբեմն արցախահայությանը հասցեագրված և «բարյացակամ» վերաբերմունք արտահայտող թեզերի դիրքերից էլ է հանդես գալիս՝ գործի դնելով

[91] Տես **Կ. Վրթանեսյան,** Հայ-ադրբեջանական հակամարտության քարոզչական թեզերը, (2012), http://www.noravank.am/arm/articles/security/detail.php?ELEMENT_ID=2219

«նավթային կամ ձկնկիթային» դիվանագիտության տարածաշրջանային տարբերակը: Բանն այն է, որ միջազգային ասպարեզում կոռուպցիոն հաջողություններով «տպավորված»՝ Ադրբեջանը ամիսներ առաջ շրջանառության մեջ դրեց արցախահայությանը *(իրենց ձևակերպմամբ՝ Ադրբեջանի քաղաքացիներին)* Խորհրդային Միությունից մնացած ավանդների վերադարձի պատրաստակամության թեզը՝ պայմանով, որ նրանք դիմում ներկայացնեն, Ադրբեջանի անձնագիր ստանան և այլն: Հայեցակարգային և փոխակերպվող թեզերն իրենց հերթին կարելի է դասակարգել ըստ քարոզչության թեմաների: Ըստ այդմ կարող ենք առանձնացնել պատմամշակութային, իրավաքաղաքական, քաղաքակրթական և այլատիպ հայեցակարգային և փոխակերպվող թեզեր: Ադրբեջանի տեղեկատվական քաղաքականության հայեցակարգային թեզերն *(կներկայացնենք մեր ձևակերպմամբ՝ չխեղաթյուրելով թեզիսների կոնցեպտուալ կողմը)* ըստ թեմաների հետևյալներն են.

Պատմամշակութային – Լեռնային Ղարաբաղը պատմական ադրբեջանական հող է, իսկ հայերը տարածաշրջանային եկվորներ կամ հյուրեր են, այլոց մշակութային ժառանգությունը սեփականած ժողովուրդ:

Իրավաքաղաքական – ա/ ՄԱԿ անդամ Հայաստանը (հայերը) խախտելով տարածքային ամբողջականության միջազգայնորեն ընդունված նորմը՝ ռազմական ագրեսիա է իրականացրել Ադրբեջանի դեմ, ադրբեջանցիների էթնիկական զտումներ է իրագործել, գրավել է Ադրբեջանի տարածքների մոտ 20%-ը՝ շուրջ մեկ միլիոն մարդկանց դարձնելով փախստականներ կամ բռնի տեղահանվածներ, բ/ Ադրբեջանը ժողովրդավարական պետություն է, որտեղ հարգվում են մարդու հիմնարար իրավունքներն ու ազատությունները, էթնիկական փոքրամասնությունների իրավունքները:

Քաղաքակրթական – Ադրբեջանը հանդուրժողական և մարդասիրական արժեքների վրա խարսխված քաղաքակրթական հնագույն կենտրոններից է, որտեղ խաղաղ համագոյակցել և շարունակում են գոյակցել տարբեր մշակույթների ներկայացուցիչները և որը ստիպված է եղել դարեր շարունակ պայքար մղել անհանդուրժող ու ցեղասպան օտար զավթիչների դեմ *(հիմնականում հայերի և ռուսների)*:

Ռազմական – Ադրբեջանը, ի տարբերություն Հայաստանի Հանրապե-

տության, տարածաշրջանային ամենամարտունակ բանակն ունեցող պետություններից է, որն օրեցօր հզորանում է և պատրաստ է հարկ եղած դեպքում վերականգնել իր տարածքային ամբողջականությունը:

Սոցիալ-տնտեսական – Ադրբեջանը իրականացնում է խիստ արդյունավետ սոցիալ-տնտեսական քաղաքականություն՝ աստիճանաբար վերացնելով աղքատությունը, սոցիալական անարդարությունը և այլն:

Վերը նշված թեզերն ունեն ռազմավարական կամ հայեցակարգային բնույթ, իսկ մնացած քարոզչական թեզերը կառուցված են սրանց հիման վրա՝ նպատակահարմար շեշտադրումներով: Օրինակ՝ թիվ 1 կետով առանձնացված պատմամշակութային կոնցեպտուալ թեզի հիման վրա կառուցված են մարտավարական բնույթի կամ փոխակերպվող բազմաթիվ թեզեր, որոնք, կախված լսարանի գործոնից կամ քաղաքական համատեքստից, ուրույն ձևակերպումներ են ստանում: Այսպես, ներքին լսարանի պարագայում կոնցեպտուալ այս թեզը հետևողականորեն ընդլայնվում է և ՀՀ ներկայիս տարածքը ևս դիտարկվում է որպես ադրբեջանական պատմական հող՝ բնակեցված եկվոր հայերով: Մինչդեռ միջազգային կառույցներում հայերի եկվորության մասին թեզը համեմատաբար զգուշավոր տարբերակով է շրջանառվում: Այսինքն՝ Ադրբեջանի առաջին դեմքերի կողմից հազվադեպ է ինչեցվում Հայաստանի Հանրապետության՝ ադրբեջանական տարածքների վրա ստեղծված լինելու մասին թեզը: Օրինակ՝ ադրբեջանական www.garabagh.net կայքէջում զետեղված են Ալիևի ելույթներից արցախյան հիմնախնդրին առնչվող հատվածներ, որոնք ինչեցվել են տարբեր տարիներին և տարբեր լսարանների առջև: Այդ հատվածների դիտարկումից պարզ է դառնում, որ միջազգային ասպարեզում ՀՀ ներկայիս տարածքը որպես ադրբեջանական հող Ալիևը ներկայացնում է 2010թ. ապրիլի 7-ին Էստոնիայի ԱԳՆ-ում կարդացած դասախոսության ժամանակ, մինչդեռ միջազգային մակարդակի այլ հանդիպումներում հայերի եկվորության մասին թեզը բարձրաձայնում է Լեռնային Ղարաբաղի տարածքների համատեքստում[92]: Ավելին, Ադրբեջանի նախագահի **բոլոր ելույթներում** կարմիր թելի պես անցնում է մեր կողմից առանձնացված **իրավաքաղաքական բնույթի կոնցեպտուալ առաջին**

[92] Հայերի եկվորության մասին թեզի այս տարբերակը միջազգային մակարդակում շրջանառվում է հիմնականում «չեզոք աղբյուրների»՝ պատմագիտական հետազոտությունների, ոչ պետական տարբեր կազմակերպությունների, ՋԼՄ-ների միջոցով և այլն:

թեզը, որը միջազգային կառույցներում երբեմն հարստացվում է հայկական ահաբեկչության մասին հիշատակումներով կամ մարտավարական թեզերով[93]:

2. Դասակարգում ըստ նպատակի

Կախված այն բանից, թե ինչ նպատակ են հետապնդում շրջանառության մեջ դրված թեզերը՝ կարելի է առանձնացնել դրանց **պառակտող և միավորող, վարկաբեկող և գովաբանող** տարբերակները: Եթե պառակտող թեզերն առավելապես հասցեագրված են հայկական լսարանին և նպատակ ունեն հայաստանյան և սփյուռքահայ իրականության մեջ և միջև երկպառակություններ առաջացնել, բաժանասիրության ոգի արթնացնել, ապա միավորող թեզերի լսարանը հիմնականում ադրբեջանական հասարակությունն է: Պառակտող և միավորող թեզերի տարբերակումը որոշակիորեն պայմանական է, քանզի **պառակտման նպատակ հետապնդող կոնկրետ թեզը կարող է ունենալ միավորման, իսկ միավորման նպատակ հետապնդող թեզը՝ պառակտման լատենտ գործառույթ:** Օրինակ՝ ՀՀ տնտեսական կոլապսի, ՀՀ-ում արտագաղթի ահագնացող տեմպերի, աղքատության աճի, հայաստանյան իշխանությունների ոչ կառուցողական գործելաոճի պատճառով առաջացած շրջափակման մասին և այլ թեզերով Ադրբեջանը նպատակ ունի խորացնել ՀՀ իշխանությունների հանդեպ ժողովրդի վստահության պակասը, սեպ խրել հայկական Սփյուռքի և ՀՀ միջև, նպաստ բերել ՀՀ-ում ներքաղաքական լարվածության ավելացմանը: Սակայն այդօրինակ թեզերը, ինչպես արդեն նշել ենք, կարող են ունենալ նաև **միավորման լատենտ գործառույթ,** քանի որ ՀՀ անհեռանկար ներկայի կամ հոգեվարքի մասին թեզերով Ադրբեջանն իր հասարակությանը տալիս է հայերի հանդեպ հաղթանակ տոնելու միավորող հույսը: Մինչդեռ Ադրբեջանի տնտեսական սրընթաց զարգացման տեմպերի, ռազմական աննախադեպ ձեռքբերումների, միջազգային հեղինակության բարձրացման, սոցիալ-քաղաքական առաջընթացի մասին թեզերը նպատակ ունեն միավորել ադրբեջանական հասարակությունը:

[93] Այդ ելույթների հատվածներին ծանոթանալու համար տես **Выступления президента в связи с Карабахским конфликтом** (2012), http://garabagh.net/content_179_ru.html

Միաժամանակ, այդ թեզերը հայկական լսարանի պարագայում կարող են ունենալ լատենտ պառակտման, պարտվողականության արմատավորման գործառույթ:

Ինչ վերաբերում է **վարկաբեկող և գովաբանող** թեզերին, ապա դրանց միջոցով ևս Ադրբեջանը ցանկանում է իր համար շահեկան արդյունքներ արձանագրել: Եթե վարկաբեկող թեզերի հիմնական «զոհերը» հայերն են, ՀՀ իշխանություններն ու Արցախի «խամաճիկային ռեժիմը» *(սա Ադրբեջանի քարոզչամեքենայի կողմից շրջանառության մեջ դրված որակավորում է)*, ապա գովաբանող թեզերի հիմնական «մրցանակակիրները» Ադրբեջանի իշխանություններն են և ադրբեջանցիները: Հարկ է նկատել, որ ինչպես միավորող և պառակտող, այնպես էլ վարկաբեկող և գովաբանող թեզերը զերծ չեն լատենտ գործառույթներից: Այսինքն՝ գովաբանող և վարկաբեկող թեզերը որոշակի սոցիալ-քաղաքական համատեքստում համապատասխանաբար կարող են ունենալ նաև վարկաբեկման և գովաբանման լատենտ գործառույթ: Օրինակ, միջազգային հարթակներում շրջանառության մեջ դնելով ՀՀ իշխանությունների՝ տարածաշրջանային խաղաղությունը վտանգող ապակառուցողական վարքագծի, հայկական գազանաբարոյությունների *(Խոջալուի «ցեղասպանությունը»)* մասին թեզերը՝ Ադրբեջանը նպատակ ունի վարկաբեկել հայկական կողմին, սակայն այդ թեզերը միաժամանակ կարող են ունենալ գովաբանման լատենտ գործառույթ: Բանն այն է, որ շարունակ քննադատելով ու դատապարտելով բացասական երևույթները՝ դատապարտողը կարծես «դառնում» է գովասանքի արժանի կերպար, քանզի ի ցույց է դնում իր որակական տարբերությունը քննադատվողից: Նույնը կարելի է ասել նաև գովաբանող թեզերի պարագայում, քանզի, օրինակ, արցախյան հակամարտության համատեքստում սեփական կառուցողականության շեշտմամբ կարծես ցույց ես տալիս հակառակորդի ոչ կառուցողական լինելը:

Վարկաբեկող և գովաբանող թեզերը, կախված լսարանի առանձնահատկություններից, աչքի են ընկնում շեշտադրումների տարբերությամբ: Օրինակ՝ միջազգային հարթակ տեղափոխված ադրբեջանական վարկաբեկող թեզերում վարկաբեկման առանցքային օբյեկտները ՀՀ-ը և Արցախն են, իսկ հայերի պիտակավորումն իրականացվում է այս կամ այն իրադարձության շեշտման համատեքստում *(Խոջալուի դեպքերի բարձ-*

ռածայնման համատեքստում հայերը դառնում են «ցեղասպան» ազգ): Մինչդեռ ներքին լսարանին հասցեագրված վարկաբեկող թեզերում վարկաբեկման առանցքային օբյեկտը հայերն են, իսկ ՀՀ և Արցախի պիտակավորումն առավելապես իրականացվում է հայկական լինելու համատեքստում: Այսինքն՝ **վարկաբեկող թեզերը առավելապես կառուցվում են միջազգային հարթակում ինստիտուցիոնալ-պետականի, իսկ ներքին մակարդակում՝ էթնիկական-ազգայինի շեշտման տրամաբանությամբ:** Թերևս այս պատճառով է, որ միջազգային մակարդակում զոհի կերպարով ներկայացող Ադրբեջանը կարողանում է այս կամ այն չափով խուսանավել որպես ռասիստական և հայատյաց պետություն ընկալվելուց:

3.Դասակարգում ըստ տեղեկատվական բովանդակության բնագավառների (ՏԲԲ)

ՏԲԲ ասելով նկատի ունենք այն ոլորտները, որոնց հետ կապված՝ ադրբեջանական քարոզչամեքենան հետևողականորեն փորձում է կոնկրետ թիրախի գիտակցության փաստ դարձնել հակահայկական և ադրբեջանամետ տեղեկատվական բովանդակությունը: Տեղեկատվական բովանդակության բնագավառներ են՝ պատմությունը, մշակույթը, սոցիալ-տնտեսական կյանքը, իրավունքը, քաղաքականությունը, էթնոհոգեբանական նկարագիրը, քաղաքակրթական դաշտը, զինված ուժերը և այլն: Այս բնագավառներում ադրբեջանական քարոզչամեքենան «լավագույնս» դրսևորում է իր հայատյացությունը կամ հակահայկականությունը՝ տարածաշրջանային և միջազգային մակարդակներում խեղաթյուրելով անցյալի ու ներկայի իրողությունները:

4. Դասակարգում ըստ տեղեկատվական բովանդակության հասցեատերերի

Տեղեկատվական բովանդակության հասցեատերեր ասելով՝ նկատի ունենք կոնկրետ տեղեկատվական հոսքերի **ներքին** և **արտաքին** լսարանը ներկայացնող հասցեատերերին: Եթե ներքին լսարանը Ադրբեջանի ազգաբնակչությունն է կամ ադրբեջանական հասարակությունը, ապա

արտաքին լսարանը երկվեկտոր է, քանզի մի կողմից ուղղված է միջազգային հանրությանը, իսկ մյուս կողմից՝ հայությանը կամ հայաստանյան հասարակությանը: Միջազգային լսարանի մակարդակում, ինչպես ակնարկվել է նախորդող շարադրանքում, ադրբեջանական քարոզչամեքենայի հակահայկականությունը չի դրսևորվում միօրինակ կերպով: Օրինակ՝ իսլամական աշխարհին հասցեագրված հակահայկական քարոզչական մշակումներում կարելի է արձանագրել կրոնական տարրի հանդեպ հատուկ ուշադրություն, մինչդեռ ոչ իսլամական միջազգային կառույցներին ուղղվածներում կրոնական բաղադրիչն ըստ էության ձեռք է բերում մարգինալ կարգավիճակ: **Արտաքին լսարանին հասցեագրված հակահայկական թեզերը հիմնականում կառուցվում են կոնկրետ հասցեատիրոջ համար առանցքային նշանակություն ունեցող արժեքների, գործոնների և դրանց չհամապատասխանող հայկական վարքագծի շեշտման տրամաբանությամբ:** Օրինակ՝ եվրոպական կառույցներում կամ երկրներում ՀՀ-ը ներկայացվում է միջազգային նորմերը խախտած, ագրեսիայի դիմած, անմեղ բնակչությանը կոտորած, ֆաշիստական գաղափարներով առաջնորդվող պետություն: Երևույթներ, որոնք արևմտյան արժեհամակարգի տեսանկյունից անընդունելի են: Մինչդեռ իսլամական պետություններում ՀՀ ագրեսիայի մասին թեզը շրջանառվում է առավելապես կրոնական եղբայրների դեմ քրիստոնեական «անհանդուրժողականության» գաղափարի համատեքստում: Այսինքն՝ **արտաքին լսարանին հասցեագրված թեզերն ունեն խորքային ընդհանրություններ և շեշտադրումներով պայմանավորված տարբերություններ:**

Տարբեր լսարաններին հասցեագրված թեզերի ընտրությունը որոշակիորեն կապված է հետապնդվող նպատակների և տեղեկատվական բովանդակության բնագավառների գործոնի հետ: Օրինակ՝ ռազմական ոլորտին առնչվող պառակտող և միավորող, գովաբանող և վարկաբեկող թեզերը հասցեագրված են ինչպես ներքին, այնպես էլ արտաքին լսարաններին: Մինչդեռ պատմամշակութային գովաբանող և վարկաբեկող թեզերը հիմնականում հասցեագրված են ոչ հայկական արտաքին լսարանին և ներքին լսարանին: Ընդ որում, եթե ռազմական ոլորտին առնչվող վարկաբեկող թեզերի հիմնական հասցեատերը արտաքին ոչ հայկական և ներքին լսարաններն են, ապա գովաբանող թեզերի հիմնական հաս-

ցեատերերը ներքին և հայկական լսարաններն են: Ճիշտ է, Ադրբեջանը միջազգային ասպարեզում երբեմն չի հրաժարվում ռազմական բնույթի գովաբանող թեզերից *(ռազմական առումով հզոր ենք և կարող ենք վերականգնել մեր տարածքային ամբողջականությունը, սակայն չենք ցանկանում արյուն հեղվի)*՝ մի կողմից շեշտելով իր խաղաղասիրությունը, մյուս կողմից՝ անայլընտրանք «արդարությունը» ռազմական ճանապարհով վերականգնելու իր կարողությունը:

5. Դասակարգում ըստ ծագման աղբյուրի

Ադրբեջանական քարոզչամեքենայի փոխակերպվող թեզերը կարելի է դասակարգել նաև ըստ ծագման աղբյուրի: Ըստ այդմ, կարող ենք առանձնացնել **ներքին** և **արտաքին** ծագման քարոզչական թեզեր: Նման առանձնացումը պայմանավորված է նրանով, որ հակահայկական կոնցեպտուալ թեզերի տրամաբանությանը հարիր փոխակերպվող թեզեր ադրբեջանական քարոզչամեքենան **ոչ միայն ստեղծում է, այլև՝ գտնում:** Այս առումով ադրբեջանական քարոզչամեքենային համապատասխան նյութ են տալիս հայկական և ոչ հայկական արտաքին աղբյուրները, ինչը և շահեկանորեն օգտագործվում է: Հիմք ընդունելով միջազգային որևէ կազմակերպության, կառույցի, հեղինակավոր անձի բացասական երանգներ ունեցող և ՀՀ կամ հայերին վերաբերող տեսակետները՝ ադրբեջանական քարոզչամեքենան պատեհ առիթը բաց չի թողնում և դրանց հիման վրա շրջանառության մեջ է դնում իր կոնցեպտուալ թեզերի ոգով նոր թեզեր: Ավելին, նույնը անում է նաև այն դեպքում, երբ նման տեսակետներ հանդիպում են հայկական կողմում: Օրինակ՝ ներքին և արտաքին լսարաններում ՀՀ-ը վարկաբեկող թեզերին լրացուցիչ հիմնավորվածություն է տալիս՝ հիմք ընդունելով ՀՀ-ում ոչ ժողովրդավարական ընտրությունների, ՀՀ իշխանությունների ոչ լեգիտիմության մասին հայկական որոշ ուժերի գնահատականները: Բացի այդ, շահարկելով արցախյան հակամարտության չլուծվածությամբ ՀՀ տնտեսական զարգացման և հուսալի ապագայի անհնարինության մասին տեր-պետրոսյանական թեզը՝ ադրբեջանական քարոզչամեքենան դա օգտագործեց ինչպես միավորման, այնպես էլ պառակտման նպատակով: Բանն այն է, որ տեր-պետրոսյանական այդ թեզը

համատեքստից դուրս ներկայացնելով՝ ադրբեջանական կողմը հնարավորություն ստացավ ներքին լսարանին ևս մեկ անգամ ցույց տալ հայկական կողմի անհեռանկարային մոտեցումը և ավետելու իրենց մոտալուտ հաղթանակը, իսկ մյուս կողմից՝ արտաքին լսարանի շրջանում բացասական մթնոլորտ ձևավորելու ՀՀ իշխանությունների որդեգրած քաղաքական կուրսի հանդեպ: Ասվածը բացառություն չէ նաև ռազմական ոլորտի պարագայում, քանի որ ՀՀ զինված ուժերի առնչությամբ ադրբեջանական կողմը հանդես է գալիս «որակազրկող» թեզերով՝ հիմք ընդունելով ՀՀ զինված ուժերում ոչ կանոնադրական հարաբերությունների պատճառով մահվան դեպքերի մասին լուրերը և այլն: Ընդ որում, ադրբեջանական քարոզչամեքենան այս հարցերում հիմնականում առաջնորդվում է **մասնավոր դեպքերի համընդհանրացման** մեթոդով: Այսինքն՝ ՀՀ զինված ուժերում տեղ գտած այս կամ այն բացասական դեպքը դիտարկում է որպես դրա բնույթը փաստող երևույթ և կառուցում է համապատասխան հակահայկական թեզեր:

6. Դասակարգում ըստ հիմնավորման եղանակի

Ադրբեջանական քարոզչամեքենան իր հակահայկական թեզերը, անշուշտ, փորձում է հիմնավորել՝ նպատակ ունենալով ապահովել դրանց արդյունավետ հասցեականությունը: Չնայած նրան, որ ըստ հիմնավորման եղանակի քարոզչական թեզերը կարող են տարբեր խմբերի մեջ ներառվել, այնուամենայնիվ սույն հետազոտության մեջ նպատակահարմար է առանձնացնել **կորեսպոնդենտիվ**[94] և **կոհերենտ**[95] տեսակի թեզերը: Եթե կորեսպոնդենտիվ թեզերը ադրբեջանական քարոզչամեքենան

[94] **Կորեսպոնդենցիայի** սկզբունքը, որը երբեմն կոչվում է ճշմարտության դասական ըմբռնում, գալիս է Արիստոտելից: Արիստոտելը նշում է, որ ճշմարիտ է այն միտքը, որը գիտակցության մեջ միացնում է այն, ինչ իրականության մեջ միացած է և անջատում է այն, ինչ իրականության մեջ բաժանված է: Այսինքն՝ ըստ կորեսպոնդենցիայի սկզբունքի՝ **«Ճշմարիտ է այն միտքը, որը համապատասխանում է իրականությանը»:** Եթե մեր դրույթը համապատասխանում է իրականությանը, ապա այն ճշմարիտ է, եթե չի համապատասխանում, ապա՝ սխալ է:

[95] **Կոհերենտության** սկզբունքի դեպքում ճշմարտության չափանիշը փնտրելիս դրույթը միշտ համեմատվում է մեկ այլ դրույթի, պատկերացման հետ: Օրինակ, երբ ասում ենք, թե դրույթը ճշմարիտ է, եթե համապատասխանում է ապացուցված դրույթներին կամ, ասենք, հեղինակության կարծիքին, ապա սա կոհերենտության սկզբունքի դրսևորում է:

հիմնավորում է՝ փորձելով ցույց տալ դրանց համապատասխանությունը իրականությանը, ապա կոհերենտ թեզերը հիմնավորում է՝ հիմք ընդունելով արդեն ճշմարիտ համարվող այլ թեզեր: Առաջին հայացքից այստեղ տարօրինակ ոչինչ չկա, սակայն եթե հաշվի առնենք կոհերենտ և կորեսպոնդենտիվ թեզերի հիմնավորման ադրբեջանական տարբերակը, ապա հետաքրքիր փաստեր կարձանագրենք: Բանն այն է, որ ադրբեջանական քարոզչամեքենան կոհերենտ թեզերի *(պատմամշակութային, էթնոհոգեբանական թեզերից շատերը «հիմնավորվում» են կոհերենտության սկզբունքի դիրքերից)* հիմնավորման ժամանակ հաճախ դիմում է իր կոնցեպտուալ թեզերի տրամաբանությանը հարիր մտքեր արտահայտած «հեղինակություններին» և իր թեզերից շատերը հիմնավորում է՝ ցույց տալով դրանց համապատասխանությունը այդ հեղինակությունների «ճշմարիտ» տեսակետներին: Այստեղ ուշագրավն այն է, որ այդ հեղինակությունների տեսակետների ճշմարիտ լինելը նախապես և նրբորեն սահմանվում է հենց ադրբեջանական քարոզչամեքենայի կողմից, ինչի արդյունքում ստացվում է, որ հակահայկական թեզերը հիմնավորվում են ոչ թե ինքնին ճշմարիտ, այլ որպես ճշմարիտ ընդունված թեզերի հիման վրա: Օրինակ՝ երբ փորձում են հիմնավորել «հայերի ապամարդկային բնույթի, այլասերվածության» մասին թեզը, հաճախ ցույց են տալիս այդ թեզի համապատասխանությունը տարբեր հայտնի և անհայտ մարդկանց, գործիչների տեսակետներին՝ թեպետ ոչ բացահայտորեն, սակայն նախապես ընդունելով վերջիններիս ճշմարտությունը: Այսինքն՝ այս կամ այն հեղինակի տեսակետի ճշմարտությունը, իր հերթին, որոշվում է հակահայկական կոնցեպտուալ թեզերին համապատասխանությամբ:

Ինչ վերաբերում է կորեսպոնդենտիվ թեզերին, ապա դրանք պետք է խարսխված լինեն փաստերի վրա, արտացոլեն իրականությունը: Սակայն ադրբեջանական քարոզչամեքենան այս հարցում ևս ինքնատիպ է, քանզի հաճախ նախապես «կերտում» է այդ իրականությունը և այդուհետ անցում կատարում այս կամ այն թեզի հիմնավորմանը՝ ցույց տալով վերջինիս համապատասխանությունը այդ «իրականությանը»: Ասվածի խոսուն վկայությունն է Խոջալուի դեպքերի օրինակը, որի համատեքստում Ադրբեջանը կարծես «հիմնավորում» է հայերի ցեղասպան ազգ լինելը, ՀՀ իշխանությունների ու զինված ուժերի հանցագործ լինելը: Բանն այն է, որ

ստեղծելով Խոջալուի ցեղասպանության դիցը, բայց այն ներկայացնելով որպես պատմական փաստ՝ Ադրբեջանը «հիմնավոր» դարձրեց հայերի անմարդկայնության կամ ՀՀ իշխանությունների հանցագործ բնույթի մասին թեզը: Այսինքն՝ իր համար ցանկալի թեզը «հիմնավորեց» իր պատկերացրած իրականությանը համապատասխանեցնելու հիմքով:

Իհարկե, ասվածը չի նշանակում, թե ադրբեջանական քարոզչամեքենան առհասարակ անտեսում է փաստերը, չի հիմնվում իրականության վրա: Ընդհակառակը, հակահայկական թեզերը հաճախ հիմնավորվում են իրականության հետ որոշակի համապատասխանության համատեքստում: Սակայն խնդիրն այն է, որ իրական փաստերը կամայական մեկնաբանության կամ տոտալացման են ենթարկվում, ինչի արդյունքում կոնկրետ թեզը համարվում է հիմնավորված, քանզի համապատասխանում է, ասենք, տոտալացված փաստերի իրականությանը: Օրինակ՝ սեռական փոքրամասնությունների նկատմամբ ՀՀ-ում դրսևորված անհանդուրժողականության կոնկրետ փաստը կարող է տոտալացվել և հիմք դառնալ ՀՀ-ում սեռական փոքրամասնությունների հանդեպ ճնշումների ու անհանդուրժողականության մասին թեզը հիմնավոր համարելու համար: Բացի այդ, 1970-ականներին Մարաղա գյուղի հիմնադրման 150-ամյակի առթիվ հուշակոթողի կանգնեցումը հիմք է հանդիսացել **«Լեռնային Ղարաբաղում նշվել է հայերի վերաբնակեցման 150-ամյակը»** թեզի[96] ձևավորման համար և այլն:

[96] **Речь Президента Азербайджана Ильхама Алиева в торжественном собрании, посвященное 60-летию Национальной Академии Наук** (2012), http://archive.president.az/print.php?item_id=20070810125435235&sec_id=11

2.2. Հայատյացության պատմամշակութային տեսանկյունը Ադրբեջանում

Ընտրելով անցյալը հավերժացնելու եղանակը՝
ազգը միաժամանակ ընտրում է իր ապագան
Է. Ֆրանսուա

Ադրբեջանում պատմության կեղծումն ու նորովի շարադրումը ունի ավելի քան տասնամյակների պատմություն: Հարևան երկրում ավանդույթ դարձած այս երևույթը սոսկ քմահաճության արդյունք չէ, քանզի սերտորեն կապված է հասարակական-քաղաքական գործընթացների, տարածաշրջանում Ադրբեջանի հավակնությունների և այլ գործոնների հետ: Պատահական չէ, որ ինչպես ԽՍՀՄ օրոք, այնպես էլ անկախացումից հետո պատմագիտական հետազոտությունների հանդեպ Ադրբեջանի իշխանությունների ուշադրությունը չպակասեց: Ակնհայտ է, որ պատմագիտության հանդեպ իշխանությունների հոգածությունը պայմանավորված չէ գիտության հանդեպ ակնածական վերաբերմունքով, քանի որ կեղծիքներն ու պատմության քաղաքականացումը ընդհանրության աղերսներ չունեն գիտական օբյեկտիվության հետ: Ադրբեջանի իշխանություններն ըստ էության պատվիրված պատմագիտական հետազոտությունների միջոցով լուծում են այն խնդիրները, որոնց մասին արդեն խոսել ենք սույն հետազոտության առաջին գլխում: Ուստի խնդիր չունենք վերստին ցույց տալ, որ պատմության ադրբեջանական կեղծումը նպատակ ունի ազգային ինքնության ձևավորման, Ալիևի իշխանության վերարտադրության գործին նպաստ բերելը և այլն: Պատմաբաններին թողնելով ադրբեջանական պատմագիտական բազմաթիվ թեզերի հանգամանալից ուսումնասիրության պատասխանատու գործը՝ սույն պարագրաֆում կփորձենք պարզել, թե պատմության կեղծման ճանապարհին Ադրբեջանի գիտական միտքն ինչպիսի դինամիկա և ներքին խմորումներ է ունեցել, ինչով են դրանք պայմանավորված, ինչով է վտանգավոր ու ռիսկային կեղծման քաղաքականությունը հայկական կողմի համար, կեղծման ինչ մարտավարություն է կիրառվում և այլն:

Նախապես նշենք, որ առաջադրված խնդիրների լուծման համար

առանձնահատուկ ուշադրություն ենք դարձնելու ադրբեջանական և այլ օտար հեղինակների կոնցեպտուալ մոտեցումներին: Դա հնարավորություն կտա առավել անաչառ և բազմակողմանի վերլուծություն կատարել:

Թեպետ Ադրբեջանում պատմագիտական կեղծարարությունները սկսվում են դեռևս Ադրբեջանի ԽՍՀ գոյության տարիներից, այնուամենայնիվ այդ ժամանակահատվածում ադրբեջանական պատմաբանները որոշակիորեն կաշկանդված էին և Ադրբեջանի պատմությունը շարադրելիս ստիպված էին հետևել միութենական «Կենտրոնի» ներկայացրած պահանջներին: Նրանք պետք է դրական լույսի ներքո ներկայացնեին Ռուսաստանի, կոմունիստական կուսակցության դերը ադրբեջանական ժողովրդի կյանքում, քարոզեին ժողովուրդների եղբայրության և ինտերնացիոնալիզմի գաղափարները և ներկայանային որպես դրանց ջատագովներ: Իսկ սա նշանակում է, որ Ադրբեջանի ԽՍՀ օրոք ադրբեջանցի պատմաբանները հայկական թեմատիկան, հայ-ադրբեջանական հարաբերությունների հարցը պետք է զգուշորեն շոշափեին: Այսինքն՝ մարտնչող հայատյացությունն այս պարագայում անհնարին էր: Սակայն այդ տարիներին ադրբեջանական պատմագիտությունն այնուամենայնիվ կարողացավ ձևավորել հակահայկական պատմագիտական հարթակ, որի վրա արդեն նորանկախ Ադրբեջանում պետք է վեր խոյանար հայատյացության գաղափարախոսական կառույցը: Բանն այն է, որ ԽՍՀՄ կազմի մեջ մտնող հանրապետությունների տիտղոսակիր ժողովուրդներն ունեին սեփական պատմությունն ուսումնասիրելու իրավունք: Ադրբեջանցիներն այս առիթը բաց չթողեցին և զարկ տվեցին երբեմնի անհայտ ադրբեջանական ժողովրդի՝ դեպի հեռավոր անցյալ գնացող «պատմության» ուսումնասիրությանը: Վերջինս մի կողմից միտված է «ադրբեջանական ժողովրդի» տեղաբնիկության կամ տարածաշրջանում դարավոր ներկայության գաղափարի հիմնավորմանը, իսկ մյուս կողմից՝ դրա համատեքստում հայերի եկվորության մասին թեզի «հիմնավորմանը»: Սխալ կլինի կարծել, թե ադրբեջանցիների տեղաբնիկության գաղափարի շրջանառմամբ ադրբեջանական պատմագիտությունը բացառապես հակահայկական կոնցեպտներ ձևավորելու խնդիրն է լուծում: Այդ գաղափարը տարածաշրջանի ժողովուրդներին ինքնորոշման իրավունքից զրկելու կամ դրա պատմական հիմքերը վերացնելու, ինչպես նաև այլ պետությունների տա-

րածքների հանդեպ հնարավոր հավակնությունները հիմնավորելու նպատակ ունի *(օրինակ՝ Իրանի հյուսիսային շրջաններ և այլն)*:

Ադրբեջանի ԽՍՀ-ում և ներկայիս Ադրբեջանում պատմագիտության զարգացման ընթացքի վերաբերյալ ուշագրավ փաստեր է ներկայացնում ադրբեջանցի փորձագետ Ա. Յունուսովը[97]: Ըստ վերջինիս՝ Ադրբեջանի ԽՍՀ-ում գոյություն են ունեցել պատմագիտական երկու հայեցակարգեր պաշտպանող խմբեր: Դրանցից առաջինը ներկայացնում էին Ադրբեջանի ԳԱԱ պատմության ինստիտուտում մեծ հեղինակություն վայելող Զիա Բունիաթովը, Իգրար Ալիևը և Ֆարիդա Մամեդովան: Մյուս խմբի ականավոր ներկայացուցիչներից էին Մահմուդ Իսմայիլովը, Սուլեյման Ալիյարովը և Յուսիֆ Յուսիֆովը, ովքեր մեծ հեղինակություն էին վայելում բուհական համակարգում՝ դասախոսների և ուսանողների շրջանում[98]: Ադրբեջանի պատմության վերաբերյալ առաջին հայեցակարգի համաձայն՝ Ադրբեջանի թյուրքականացումը սկսվել է 11-րդ դարում, և հենց այդ պահից սկսած պետք է խոսել ադրբեջանական ժողովրդի էթնոգենեզի սկզբնական փուլի մասին: Մինչդեռ երկրորդ խմբի ներկայացուցիչները ամեն կերպ փորձում էին հիմնավորել թյուրքերի՝ տարածաշրջանում հնագույն ժողովուրդ լինելը[99]: Ադրբեջանի ԽՍՀ-ում այս երկու հայեցակարգերը միաժամանակ գոյություն են ունեցել, սակայն, ինչպես պնդում է Յունուսովը, ակադեմիական շրջանակներում ազդեցիկ է եղել առաջին հայեցակարգը: Պատկերը էականորեն փոխվում է այն ժամանակ, երբ Ադրբեջանը ձեռք է բերում անկախություն: Այս ընթացքում, մանավանդ Զիա Բունիաթովի և Իգրար Ալիևի մահվանից հետո, ադրբեջանական պատմագիտության մեջ հաղթանակ է տոնում պանթուրքիզմի կողմնակիցների հայեցակարգը, ըստ որի թյուրքերը տարածաշրջանի հնագույն ժողովուրդն են և այլն[100]:

Այդ հաղթանակի շնորհիվ ադրբեջանական պատմագիտական միտքը հնարավորություն է ստանում անկաշկանդ դիմել կեղծիքների, քանի որ նախկին միութենական «Կենտրոնը» այլևս չկար, իսկ Ադրբեջանի իշխա-

[97] Հետագա շարադրանքում կներկայացնենք նրա վկայակոչած փաստերից առավել կարևորները:

[98] Տես **А. Юнусов,** Мифы и образы «врага» в исторической науке и учебниках по истории независимого Азербайджана, с. 2 (2012), http://www.amudarya.net/fileadmin/_amudarya/bs/ay.pdf

[99] Տես նույն տեղը:

[100] Տես նույն տեղը, էջ 5:

նությունների համար պատմության «վերստեղծումն» ու դրա համատեքստում հայերի ապամարդկայնացումը խիստ կարևոր էին: Ա. Յունուսովը, հաշվի առնելով ադրբեջանական պատմության դասագրքերի բովանդակային կողմերը, նշում է, որ դրանցում թշնամու կերպարի կերտումը սկսվում է դասավանդման առաջին տարվանից: 5-րդ դասարանցիներն իրենց դասագրքին ծանոթանալուն զուգահեռ ծանոթանում են օղուզական էպոսում տրված **«սև հագուստով անհավատների»** *(այսինքն՝ քրիստոնյաների)* թշնամական կերպարին: Ավելին, համաձայն Յունուսովի՝ դասագրքի վերջում հեղինակները վերջնականապես ձևավորում են թշնամու կերպարը՝ ի դեմս հայերի: Դասագրքում գրված է. **«Սև հագուստով անհավատները՝ հայերը և նրանց հովանավորները, մեր պետության թուլացման և մեկուսացման համար դիմում են ամեն տեսակ նենգ և ստոր մտահղացումների»**[101]:

Հայի թշնամական կերպարը կարմիր թելի պես անցնում է բոլոր դասարանների պատմության դասագրքերով, իսկ Ադրբեջանը ներկայացվում է որպես հնուց ի վեր թյուրքերով բնակեցված երկիր և այլն: **«Այսպիսով,**- գրում է Ա. Յունուսովը,- **ուսման առաջին տարվա դասագրքում ձևավորվել է հայերի՝ որպես Ադրբեջանի և ողջ «թյուրք-մուսուլմանական աշխարհի» հիմնական թշնամու կերպարը: Հետագայում այդ կերպարը լրացվում է Ադրբեջանի պատմությունից «փաստերով» և բացասական մակդիրներով»**[102]:

Յունուսովի նշած պանթուրքիզմի կողմնակիցների հայեցակարգը թեպետ որոշակիորեն տարբերվում է Բունիաթովի հայեցակարգից, այնուամենայնիվ դրանք ներդաշնակ միասնություն են: Բովանդակային մակարդակում այդ հայեցակարգերն ունեն հակահայկական միտվածություն, հագեցած են հակահայկական թեզեր կառուցելու կոնցեպտներով: Դրանցում այս կամ այն տարբերությամբ «փաստվում» է հայերի եկվորության թեզը, տարածաշրջանում հայկական մշակույթի պատմական հետքերի բացակայությունը, ինչը, փաստորեն, «լեգիտիմացնում» էր Արցախի նկատմամբ հայերի պահանջատիրության պատմական հիմքերի բացակայության գաղափարը: Ավելին, չնայած այս հայեցակարգերը միմյանցից տարբերվում

[101] Մեջբ. ըստ А. Юнусов, նշվ.աշխ., էջ 7:
[102] Նույն տեղում, էջ 8:

էին, սակայն Ադրբեջանի ԽՍՀ-ում դրանց համաժամանակյա գոյության փաստը կարծես վկայում էր այն մասին, որ դրանք կոչված էին ոչ այնքան պայքարելու միմյանց, որքան միասնական ճակատով պայքարելու հայ պատմագիտական մտքի դեմ: Գուցեև առաջին հայացքից տարօրինակ հնչի, սակայն **այդ հայեցակարգերի միաժամանակյա գոյությունը և համառ պայքարն ունեին հոգեբանական ազդեցություն գործելու և որոշակի թեզային ինվարիանտ արմատավորելու նպատակ:** Բանն այն է, որ երբ տեսական մակարդակում մի կողմից ասում են **ադրբեջանցիների էթնոգենեզը տեղի է ունեցել 11-րդ դարում, իսկ մյուս կողմից պնդում են, թե տեղի է ունեցել շատ ավելի վաղ, արդյունքում կարծես ստացվում է այնպես, որ այդ էթնոգենեզի հարցը պետք է քննարկել մինչև 11-րդ դարի համատեքստում:** Այսինքն՝ **արմատավորվում և անփոփոխ է դառնում ադրբեջանցիների՝ տարածաշրջանում դարավոր ներկայության մասին թեզը:** Իսկ սա նշանակում է, որ պատմության ադրբեջանական դասագրքերով մեծացած սերնդին գրեթե անհնար կլինի այլընտրանքային պատմական փաստերով համոզելը կամ լուսավորելը:

Հասկանալի է, որ ընթերցողի մոտ կարող են հարցեր առաջանալ. ինչո՞ւ է հայերի եկվորության մասին ադրբեջանական թեզը հիմք ընդունվում հարևան երկրի պատմաբաններին կեղծարարությունների մեջ մեղադրելու համար, ինչու՞ են ադրբեջանական պատմագիտական թեզերը որակավորվում որպես հակահայկական բնույթ ունեցող այն դեպքում, երբ չեն համապատասխանում, օրինակ, հայ պատմաբանների մոտեցումներին *(չէ՞ որ նույն տրամաբանությամբ ադրբեջանցիները կարող են մեզ մեղադրել հակաադրբեջանական քարոզչության կամ հետազոտությունների մեջ)*: Իհարկե, հարցերը միանգամայն տեղին են, սակայն եթե հաշվի չենք առնում մի շարք հանգամանքներ.

– Ինչպե՞ս և ի՞նչ հիմքերով են հիմնավորվում համապատասխան թեզերը,

– Սոցիալ-քաղաքական ինչպիսի համատեքստում են դրանք ձևավորվել կամ զարգացվել,

– Ի՞նչ նպատակների իրագործմանն են միտված:

Այս երեք հարցադրումների տեսանկյունից հարցին մոտենալու պարագայում կարող ենք ուշագրավ փաստեր արձանագրել: Ընդ որում, առավել

հետաքրքիր և կարևորություն բովանդակող փաստերը կապված են առաջին հարցադրման հետ: Նախապես նշենք, որ ադրբեջանական պատմագիտական բազմաթիվ թեզեր որակվում են հակահայկական ոչ թե այն պատճառով, որ հակասում են հայերի սպասումներին կամ շահերին, այլ այն պատճառով, որ ձևավորվելով իրականության խեղաթյուրման և փաստերի աղավաղման ճանապարհով՝ նպատակ ունեն ապալեգիտիմացնել այդ սպասումներն ու շահերը: Այս համատեքստում, օրինակ, հայերի եկվորության մասին թեզը չի կարելի համարել ինքնին հակահայկական, եթե այն արտացոլում է իրերի փաստական վիճակը, սակայն, երբ այդ թեզը ձևակերպվում է կեղծարարությունների հիման վրա, ապա դառնում է հակահայկական: Ցավալի է, սակայն ադրբեջանական պատմագիտությունը ինչպես Բունիաթովի օրոք, այնպես էլ նրանից հետո ոչ միայն զերծ չմնաց կեղծիքներից, այլև դրանք դարձրեց առանցքային նշանակության հետազոտությունների հավատարիմ ուղեկիցը: Միով բանիվ՝ հակահայկականությունը Ադրբեջանի պատմագիտական անցյալի ու ներկայի անբաժան «ստվերն» է:

Վերն ասվածն առավել պարզ կդառնա, եթե ներկայացնենք մի շարք հնարներ կամ տեխնոլոգիաներ, որոնց հետևողական կիրառությամբ ադրբեջանցի պատմաբանները փորձում են հիմնավորել սեփական թեզերը: Ընդ որում, այդ հնարների կամ հակագիտական «զենքերի» մասին վկայում են ոչ միայն հայ մասնագետները, այլև՝ օտարերկրյա: Ավելին, եթե հաշվի առնենք նաև այն, որ շատերի համոզմամբ Ադրբեջանի պատմության դասագրքերում հինավուրց ազգային պատմություն ունենալու մասին հիմնավորումները հասնում են անեկդոտային ծավալների, ապա կարելի է միայն կռահել, թե ինչպիսի հնարներ կարող էին կիրառվել: Օրինակ, **«Ռուսաստանի և հետխորհրդային երկրների ժողովուրդների ընդհանուր պատմության լուսաբանումը նորանկախ պետությունների դպրոցական դասագրքերում»** հետազոտության ռուսաստանցի հեղինակները անեկդոտային են համարում Ադրբեջանի պատմության դասագրքերում տեղ գտած այն դրույթները, թե հին Ադրբեջանի ցեղերի մասին առաջին գրավոր վկայությունները տրված են շումերական էպոսներում ու սեպագիր արձանագրություններում, ադրբեջանցիների նախնիները եղել են շումերների ժամանակակիցները և այլն: Ուշագրավ է, որ այդ նույն հեղի-

նակների պնդմամբ՝ հին ադրբեջանցիներին շումերների ժամանակակից հռչակելը նպատակ ունի հիմնավորելու հետևյալ թեզը. **«Ժամանակակից Հայաստանը առաջացել է հին Արևմտյան Ադրբեջանի տարածքում»**[103]: Այսինքն՝ ադրբեջանցի պատմաբանները որևէ թեզ հիմնավորելու համար պատրաստ են մոգոնել կամ հորինել այնպիսի թեզեր, որոնց հիման վրա ցանկալի թեզը հիմնավոր կդառնա:

Ադրբեջանում պատմագիտական միտքը և քաղաքական կյանքը միմյանց սերտորեն կապված են: Եթե պատմաբանները խնդիր ունեն հետազոտական աղբյուրներից վերացնել հայկական «հետքերը», ապա իշխանությունները՝ տարածաշրջանային դարավոր արտեֆակտները, մշակութային կոթողներն ու արժեքները: Այս առումով հատկանշական է, որ ժամանակին Բունիաթովը Ադրբեջանում «գիտական» շրջանառության մեջ դրեց պատմագիտական աղբյուրների կամ պատմագրական նյութի «խմբագրման» ավանդույթը, որը կարելի է անվանել **«պատմության մեջ ուղղագրական սխալների շտկում»:** Տվյալ պարագայում ուղղագրական սխալը հայերի ու Հայաստանի մասին հիշատակումներն են, իսկ շտկումը դրանց վերացումն է: Այլ խոսքերով՝ պատմության կեղծումն Ադրբեջանում հաճախ իրականացվում է հետազոտական աղբյուրները հայկական հետքերից մաքրելու տեխնոլոգիայով: Այսինքն՝ հին պատմիչների, տարբեր դարաշրջաններ ներկայացնող ճանապարհորդների ու գործիչների աշխատանքներն Ադրբեջանում հրատարակվելու պարագայում որոշակի զտման են ենթարկվում: Դրանցից նախապես հանվում են այն հատվածները, որոնք վերաբերում են հայերին ու Հայաստանին և ապա միայն հրատարակվում: Եթե հաշվի առնենք նաև այն, որ այդ աշխատությունների «մաքրված» տարբերակները կարող են հրատարակվել ռուսերեն, անգլերեն և այլ լեզուներով, ապա պարզ է դառնում, թե միջազգային լսարանի կարծիքի վրա մանիպուլյատիվ ներգործություն կատարելու ինչպիսի ազդեցիկ տարբերակի հետ գործ ունենք: Այս առումով հատկանշական է 14-15-րդ դարերի գերմանացի ճանապարհորդ Հանս Շիլթբերգերի **«Ճանապարհորդություններ Եվրոպայով, Ասիայով և Աֆրիկայով՝ 1394 թվականից մինչև 1427 թվականը»** խորագրով աշխատությունը, որը

[103] **Освещение общей истории России и народов постсоветских стран в школьных учебниках истории новых независимых государств,** М., 2009, с. 6.

1984 թվականին ակադեմիկոս Զ. Բունիաթովի խմբագրությամբ հրատարակվել է Բաքվում (ռուսերեն): Սակայն «Ճանապարհորդություններ»-ի նոր հրատարակությունը բովանդակային առումով էապես տարբերվում էր սկզբնաղբյուրից: Նոր հրատարակության նախաբանում Զ. Բունիաթովը գրում է, որ կրճատել է աշխատության այն հատվածները, որտեղ **կարելի էր հանդիպել սխոլաստիկական բնույթի անվերջ դատողություններ, կաթոլիկ եկեղեցու հասցեին ուղղված գովասանքի խոսքեր:** Սակայն պրոֆեսոր Պ. Մուրադյանը նոր հրատարակությունը համեմատելով սկզբնաղբյուրի հետ՝ հստակ ցույց է տալիս, որ իրականում կրճատված հատվածները վերաբերում էին հայերի ու Հայաստանի մասին բազմաթիվ հիշատակումներին: Ավելին, նոր հրատարակության մեջ առհասարակ բացակայում էին «Հայերի հավատքի մասին» և «Սուրբ Գրիգորի մասին» հատվածները *(շուրջ 10 էջ)* և այլն[104]: Հասկանալի է, որ եթե ակադեմիկոս Բունիաթովն է հանդես գալիս գիտական «անաչառության» այսօրինակ դրսևորմամբ, ապա այլ բան չի կարելի սպասել նրա աշակերտներից: Պատահական չէ, որ Բունիաթովի հակահայկական այս մեթոդաբանությունը տարածվել է նաև այլոց աշխատությունների վրա: Նկատի ունենալով Ստրաբոնի և Պլուտարքոսի աշխատությունները՝ Ա. Գազազյանը գրում է. **«Ի տարբերություն ամբողջ աշխարհում և իհարկե տարբեր լեզուներով տպագրված հրատարակությունների՝ Բաքվում տպագրված հատորներում հմտորեն հանված էին հայերի ու Հայաստանի մասին բոլոր տեսակի հիշատակումները»**[105]: Հանգամանքներ, որոնք վկայում են այն մասին, որ ադրբեջանական հասարակությունն ըստ էության դարձել է իշխանությունների և նրանց քաղաքական կուրսը սպասարկողների գաղափարական մշակման զոհը:

[104] Այս մասին մանրամասն տես **Г. Котанджян,** «Сумгаит в истории»: о научной необоснованности претензий Ильхама Алиева (2012), http://pda.regnum.ru/news/1433518.html: Հ. Քոթանջյանի այս հոդվածը ներառում է նաև պրոֆեսոր Հ. Մուրադյանի վերլուծությունը՝ կապված Հ. Շիլթերգերի աշխատության բունիաթովական խեղաթյուրված հրատարակության հետ: Հայ պրոֆեսորի վերլուծությանը կարող եք ծանոթանալ նաև հետևյալ աղբյուրում՝ **П. Мурадян,** К освещению проблем истории и культуры Кавказской Албании и восточных провинций Армении, т. I. Е., 1991, с. 225-230. Ադրբեջանական կեղծարարությունների հետ կապված տես նաև **Г. Котанджян,** Историографическая фальсификация становится острым «нелетальным оружием» нового поколения (2012), http://pda.regnum.ru/news/1365938.html

[105] **Ա. Գազազյան,** Պատմություն պետք է ստեղծել, ոչ թե գրել (2012), http://www.sobesednik.am/am/social/804-2011-09-19-10-07-20

Պատմամշակութային թեզերի հիմնավորման ժամանակ ադրբեջանցի պատմաբանները հաճախ գիտական օբյեկտիվության դեմ մեղանչում են նաև էթնիկականի և կրոնականի նույնացման, լռության փաստարկին[106] դիմելու պատճառով: Մ. Ալեքսանդրովը Ադրբեջանի պետական գաղափարախոսությունը դիտելով որպես լուրջ սպառնալիք հայ ժողովրդի գոյությանը՝ իր հոդվածներից մեկում ցույց է տալիս, որ Ադրբեջանի պատմագիտական միտքն ըստ էության «կողմնորոշվում» է բարձրագույն ղեկավարության հրահանգներով: Նշելով, որ Ալիևի հնչեցրած **«ժամանակակից Հայաստանը առաջացել է ադրբեջանական հողի վրա»** թեզին հաջորդեցին տարբեր պատմաբանների «հիմնավորող» հոդվածները՝ Մ. Ալեքսանդրովը հատուկ վերլուծում է Ջամիլ Հասանլիի հոդվածը: Հեղինակն իր ընտրությունը բացատրում է նրանով, որ Հասանլին իր հոդվածով ներկայացնում է Ադրբեջանի պաշտոնական մոտեցումը, օգտվում է հավաստի աղբյուրներից և այլն: Հանգամանալից վերլուծելով չոր գիտական լեզվով գրված ադրբեջանցի պատմաբանի հոդվածը՝ Ալեքսանդրովը վերհանում է նրա փաստարկողական ապարատի սխալները՝ ակնարկելով դրանց ոչ պատահական լինելը: Օրինակ՝ ըստ էության ցանկանալով հիմնավորել այն թեզը, որ ադրբեջանցիները Ղարաբաղում մեծամասնություն են կազմել՝ Հասանլին բերում է մի շարք փաստաթղթերի տվյալներ *(կոնկրետ ժամանակահատվածի համար)*, որոնց համաձայն՝ Ղարաբաղի բնակչության ¾-ը մուսուլմաններ են եղել, իսկ մնացածը՝ հայեր: Առաջին հայացքից թվում է թեզը հիմնավոր դարձավ, սակայն, ինչպես արդարացիորեն նշում է Ալեքսանդրովը, այստեղ տեղի է ունեցել էթնիկականի և կրոնականի խառնակում, ինչը ակնհայտ կեղծում է: Հարցին պետք է մոտենալ կա՛մ էթնիկական, կա՛մ կրոնական տեսանկյունից, քանզի մուսուլ-

[106] Փաստարկման երևանյան դպրոցի հիմնադիր, ակադեմիկոս Գ. Ա. Բրուտյանի կողմից լռելը *(умолчание)* որպես փաստարկ առաջադրվել և հատուկ ուշադրության է արժանացել փաստարկների դասակարգման ժամանակ: Գ. Բրուտյանը նշում է, թե այս փաստարկի յուրահատկությունն այն է, որ **«լռությանը տրվում է այն հակափաստարկների կարգավիճակը, որոնք ռեցիպիենտի կողմից բերվում են կամ կարող են բերվել: Մենք անտեսում ենք մեր ընդդիմախոսի որոշ փաստարկները: Բնականաբար, դա կատարվում է գիտակցաբար, արվում է այն ժամանակ, երբ փաստարկողը հակափաստարկները հերքելու հնարավորություն չունի, և այս հանգամանքը վկայում է փաստարկողի թուլության մասին և, հետևաբար, նրա փաստարկների անապացուցականության մասին»** (**Г. Брутян,** Очерк теории аргументации, Ер., 1992, с. 75):

մաններ են նաև պարսիկները, թալիշները, լեզգիները, քրդերը և այլն: Բացի այդ, ըստ Ալեքսանդրովի, մուսուլմանների մեջ կարող էին լինել նաև մահմեդականացած հայեր[107]: Այսինքն՝ Հասանլին էթնիկականի և կրոնականի խառնակմամբ *(ըստ էության՝ կեղծման միջոցով)* փորձում է մանիպուլիացիայի ենթարկել փաստը և իր համար ցանկալի թեզը հիմնավոր դարձնել:

Հասկանալի է, որ ադրբեջանական քարոզչամեքենայի կողմից կիրառվող հնարները, կեղծման տեխնոլոգիաները կարող են առանձին հետազոտության նյութ հանդիսանալ, սակայն թվարկված դեպքերն էլ բավականին խոսուն են և որոշակիորեն փաստում են հարևան երկրում «պատմագիտության» քաղաքականացված լինելը: Հանգամանք, որն առավել վտանգավոր է այն պատճառով, որ Ադրբեջանում այն ծառայում է ռասիզմի ու նացիզմի հետ ընդհանրության աղերսներ ունեցող գաղափարախոսությանն ու դրա տարածմանը:

[107] Տես **М. Александров,** Новая историческая доктрина Азербайджана – угроза существованию армянской нации (2012), http://www.antituran.com/index.php/2009-03-03-20-53-15/19-2009-03-30-16-20-12/874-2011-09-11-16-07-59

2.3. Հայատյացությունը Ադրբեջանի կրթական համակարգում

Ատելով որևէ մեկին՝ դու նրանում
ատում ես այն, ինչի կրողն ես:
Մեզ չի անհանգստացնում այն ամենը,
ինչ մեզանում չկա:
Հերման Հեսսե

Հայտնի է, որ արցախյան պատերազմի ընթացքում և հրադադարի եռակողմ պայմանագրի ստորագրումից ի վեր նորանկախ Ադրբեջանը հավատարիմ մնաց դեռևս Ադրբեջանի ԽՍՀ-ում տեղ գտած հակահայկական քաղաքականությանը, ինչը, սակայն, աչքի ընկավ որակական նոր բնութագրով: Թեպետ Ադրբեջանի ԽՍՀ-ում պատկան կառույցները կաշկանդված էին պետական մակարդակով հայատյացություն սերմանող կրթական քաղաքականություն իրականացնելու հարցում, այնուամենայնիվ դա բնավ չխանգարեց, որպեսզի աստիճանաբար հող նախապատրաստվեր անկախության շրջանում հայատյացությունը համակարգված և հետևողականորեն իրագործելու համար: ԽՍՀՄ գոյության տարիներին, ինչպես արդեն նշվել է նախորդ պարագրաֆում, միութենական «Կենտրոնը» ԽՍՀ-ներին տվել էր տիտղոսակիր ժողովուրդների պատմության վերաբերյալ դասագրքեր գրելու ազատությունը, իսկ այս հանգամանքից ադրբեջանական կողմը հավուր պատշաճի օգտվեց՝ զարկ տալով սեփական պատմության *(իրականում՝ խիստ կարճատև)* այնպիսի դասագրքերի ստեղծմանն ու «պատմագիտական» հետազոտությունների իրականացմանը, որոնցում պետք է հիմնավորվեր ադրբեջանցիների ավտոխտոնությունը կամ դեպի խոր պատմական անցյալը գնացող հարավկովկասյան ներկայությունը: Հեռուն գնացող նպատակներ ունեցող այս նախաձեռնության արդյունքը եղավ այն, որ արդեն նորանկախ Ադրբեջանում նախկին «եղբայրական» հայ ժողովրդին տարաբնույթ մեղադրանքներ հասցնելը լեգիտիմացվեց, քանզի, օրինակ, Հարավային Կովկասում ադրբեջանցիների ավտոխտոնության գաղափարի դիրքերից հեշտորեն կարելի էր անցում կատարել ագրեսիվ, ծավալապաշտ, թալանչի և այլ բացասական որակներով աչքի ընկնող հայի կերպարի ստեղծմանը: Այսինքն, եթե ադրբեջանցիները տեղաբնիկ ժողովուրդ են, ապա հայերի նկրտումներն առ Լեռնային Ղարաբաղի անկախություն և այլն՝ ոչ այլ ինչ են, եթե ոչ

պատմական արդարության դեմ հայկական «անարդարության» կամ «խաչակրաց արշավանքի» հերթական դրսևորումներ: Այս համատեքստում հասկանալի է, որ արցախահայության ինքնորոշման իրավունքի իրացման հանդեպ 20-րդ դարավերջում ագրեսիա սանձազերծած, անհանդուրժողական կեցվածք ընդունած և պատերազմում պարտված Ադրբեջանն իր կրթական համակարգը բովանդակային առումով պետք է լրջորեն փոփոխեր կամ արդիականացներ: Այդ արդիականացումը պետք է ծառայեր ալիևյան կլանի վերարտադրության համար անհրաժեշտ պայմանների ապահովման, ինչպես նաև ադրբեջանցիների հայրենասիրության և պահանջատիրության ոգու բարձրացման գործին: Հրամայականներ, որոնց կյանքի կոչման համար ԵԽ անդամ Ադրբեջանը սկսեց կրթական և դաստիարակչական այնպիսի քաղաքականություն իրագործել, որը կարելի է ներկայացնել հետևյալ ձևակերպումներով. **«Անհանդուրժողական հանդուրժողականություն», «Աշխարհն առանց հայերի», «Քսենոֆոբիա առանց սահմանների», «Սիրել մարդու՛ն, ոչ թե հային», «Մի՛ մոռացեք Սաֆարովին»** և այլն: Ասվածի խոսուն վկայությունն է, օրինակ, հայրենասիրության, անկեղծության, ազնվության և այլ որակների ձևավորմանը միտված ադրբեջանական մանկական գրականությունը, որի բազմաթիվ նմուշներ տեղ են գտել մանկավարժական բուհերի ուսանողների համար նախատեսված ձեռնարկներում, ինչպես նաև ներառվել են դպրոցական ծրագրերում: Ընթերցողի համար գուցե այս ամենը շատ տարօրինակ լինի, քանի որ հայրենասիրության, ազնվության, անկեղծության և հոգու մաքրության նպատակ հետապնդող գրականությունը արժանի է միայն և միայն դրվատանքի խոսքերի, այն չի կարող ընդհանրության աղերսներ ունենալ այլատյացության և 21-րդ դարի մարդուն ոչ հարիր երևույթների հետ: Սակայն, եթե հաշվի առնենք այն, որ «ալիևահպատակ» ադրբեջանցիների ստեղծագործական ինքնատիպությունը դրսևորվում է ոչ միայն պատմական կեղծարարությունների, այլև բարոյագիտական հասկացությունների նորովի ըմբռնման մակարդակում, ապա պարզ կդառնա, որ հայրենասիրության, ազնվության և բազմաթիվ առաքինությունների ադրբեջանական տարբերակները հեշտությամբ կարող են «տեղավորվել» քրեական օրենսգրքի հոդվածների տակ կամ քաղաքակիրթ աշխարհի կողմից դատապարտված կամ մերժված «արժեքների» շրջանակում:

Վերն ասվածը, անշուշտ, կարիք ունի հիմնավորման, ինչը և հընթացս կիրականացվի: Ավելին, խուսափելով անհարկի զգացմունքայնությունից և կարծրատիպային մոտեցումներից *(հանգամանք, որն ադրբեջանցի փորձագետների դեպքում մեծ տարածում ունի)*՝ առաջադրված և առաջադրվելիք թեզերը կհիմնավորվեն փաստական հարուստ նյութերի հիման վրա: Ընդ որում, հետազոտական օբյեկտիվության դեմ չմեղանչելու համար առաջնահերթությունը կտրվի ադրբեջանական աղբյուրներին կամ Ադրբեջանի ընձեռած փաստական նյութին: Ավելացնենք միայն, որ չնայած ադրբեջանական քարոզչամեքենայի «գիտականության» չափանիշներով առաջնորդվող հետազոտողների հայատյացությանը՝ խնդիր չունենք վարկաբեկել, պիտակավորել «ադրբեջանցու» ինքնությունը, այն ներկայացնել որպես բնազանցական չարիքի դրսևորում: Բանն այն է, որ **էթնոկենտրոն և կարծրատիպային մոտեցումը ոչ միայն հեռացում է ճշմարտությունից, այլև յուրահատուկ ավանդ է ապակառուցողական վարքագծի և անհանդուրժողականության կյանքի կոչմանը:** Հանգամանք, որն ադրբեջանական քարոզչամեքենայի պարագայում ոչ թե բացառություն է, այլ՝ օրինաչափություն, քանի որ հարևան երկրի կրթադաստիարակչական հրատարակություններում, ինչպես նաև էլեկտրոնային և տպագիր մամուլի էջերում ընթերցողը կարող է ականատեսը լինել տրամաբանական մի շարք սխալների վրա խարսխված «հիմնավորումների» այն մասին, որ հայերը ստորության, խարդախության, նենգության, դաժանության և չարի հետ ասոցացվող այլ որակների կրողներ են[108] կամ, այլ կերպ ասած, հայն ունի չար բնություն: Այս տեսանկյունից, ի թիվս այլոց, ուշագրավ է նախորդ հղման մեջ հիշատակված Ա. Իսմայիլովի հոդվածը, որում բովանդակված տրամաբանական և մեթոդաբանական սխալներն ընդհանուր առմամբ տիպական են հայատյացության մոլուցքով տարված ադրբեջանցի հեղինակների հրապարակումներին: Օրինակ, օբյեկտիվության և գիտականության չափանիշներով առաջնորդվելու պատրանք ստեղծելով՝ Ա. Իսմայիլովն իր հոդվածի հիմնական թեզերից մեկը *(հայն ունի անմարդկային հոգեբարոյական նկարագիր, նա ունի չար էություն, այլասերված է և այլն)* փորձում է «հիմնավորել» ոչ թե ադրբեջանական կամ թուրքական

[108] Տես, օրինակ, **А. Исмаилов,** Армяне использовали липовые «документы Андояна» как инструкцию в Ходжалинской резне, //Понятие «Армения» - подмена тюркского «Эрмения», Из серии «Армянское удушье» (Статья XVIII) (2012), http://vesti.az/news/143955

հեղինակների տեսակետների վկայակոչմամբ, այլ՝ արևմտյան կամ քրիստոնեական աշխարհը ներկայացնողների:

Օտարերկրյա կամ այլազգի հեղինակներին դիմելն անշուշտ ողջունելի է, սակայն խնդիրն այն է, որ Ա. Իսմայիլովը հավանաբար տրամաբանության բուհական դասընթացը լավ չի սերտել կամ դրան ընդհանրապես ծանոթ չի եղել, քանզի, հակառակ պարագայում, պետք է խուսափեր **«հակասող դեպքերը հաշվի չառնել»** և **«հապճեպ ընդհանրացումներ կատարել»** տրամաբանական սխալներից: Բանն այն է, որ նշված հեղինակը հիշատակում է մի շարք հայտնի *(օրինակ՝ Պուշկին և այլն)* և անհայտությանը սահմանակցող մարդկանց *(օրինակ՝ Տվերդոխլեբով, մի անանուն ֆրանսիացի ճանապարհորդ և այլն)* խոսքեր, որոնցում հայերը ներկայացված են բացասական լույսի ներքո, իսկ դրանցից որոշներում էլ գրեթե այնպես, ինչպես Հիտլերն «Իմ պայքարը» գրքում բնորոշել էր հրեաներին: Չնայած սույն «հայասերը» շատ դեպքերում իր կողմից հիշատակված հեղինակների խոսքերը հավաստող աղբյուրները չի նշում, որոշ դեպքերում էլ այդ խոսքերը կամայական կերպով է հասկանում *(օրինակ՝ Ա. Պուշկինի «Վախկոտ ես, ստրուկ ես, հայ ես դու» արտահայտությունը[109])*՝ այնուամե-

[109] Վստահաբար կարելի է ասել, որ Ա. Իսմայիլովը չի կարդացել Ա. Պուշկինի «Տազիտ» անավարտ պոեմը: Իսկ եթե կարդացել է, ապա չի հասկացել կամ դրսևորել է մեկնաբանական վոլյունտարիզմ: Բանն այն է, որ Պուշկինի գրչին պատկանող և ադրբեջանական քարոզչամեքենայի կողմից վկայակոչվող **«Վախկոտ ես, ստրուկ ես, հայ ես դու»** արտահայտությունն իրականում վկայում է ոչ թե այն մասին, որ Պուշկինը հային համարում է վախկոտ ու ստրկամիտ, այլ այն մասին, որ ավազակությունից ու թալանից, ազատազրկումից ու հպատակեցումից, արյան վրեժից կամ մարդասպանությունից հրաժարվող որդուն լեռնական հայրը համարում է վախկոտ, ստրկամիտ և հայ: Այսինքն՝ «Տազիտում» որդուն դատապարտող հայրն այն համոզմանն է, որ անպաշտպան մարդուն չթալանելը, փախած ստրուկին հետ չբերելը, ինչպես նաև մարդասպանությունից կամ, տվյալ դեպքում, արյան վրեժից հրաժարվելը բնորոշ է հային *(«Տազիտում» որդին սեփական եղբորը սպանողին չսպանելը պատճառաբանում է նրանով, որ թշնամին «մենակ էր, անզեն ու վիրավոր»)*, հակասում է լեռնականի բարոյականությանը (այս մասին տես **Գ. Բրուտեան,** Ալեքսանդր Պուշկինի «Տազիտ» քերթուածը և դրա մէջ հայերին վերաբերող հատուածի վերլուծութիւնը (2012), http://www.anunner.com/grigor.brutyan): Ավելորդ չէ հիշատակել, որ սևագրության նախնական տարբերակում Պուշկինը գրել է. **«Վախկոտ ես, ստրուկ ես, ՔՐԻՍՏՈՆՅԱ ես դու»,** ինչը ինքնին ամբողջացնում է վերը նշվածը: Հատկանշական է, որ ադրբեջանական աղբյուրներում հաճախ հանդիպող պուշկինյան այս արտահայտությունը չի ուղեկցվում համապատասխան ստեղծագործության հիշատակմամբ *(ամեն դեպքում մենք երբևիցե չենք հանդիպել նման հիշատակումներ)*: Սա, հավանաբար, պայմանավորված է այն բանի գիտակցումով, որ «Տազիտ»-ի ընթերցումը կբացահայտի ադրբեջանական մեկնաբանական կամայականությունը:

նայնիվ փաստենք, որ ադրբեջանցի հեղինակի թեզը հիմնավորվածության տեսանկյունից քննադատության չի դիմանում: Կասկածից վեր է, որ մեծ ցանկության դեպքում կարելի է գտնել տարբեր ստեղծագործողների, քաղաքական գործիչների ու անհատների արտաբերած ոչ «հայասիրական» կամ հայի կերպարը քննադատող մտքեր: Այստեղ տարօրինակ ոչինչ չկա: Էթնիկական հետերոստերեոտիպերը *(ինչ են մտածում տվյալ ազգի ներկայացուցիչները այլ ազգերի մասին)* բացարձակապես նույնական չեն և կարող են չհամընկնել, քանզի շատ դեպքերում կոնկրետ ազգի ներկայացուցիչները այլազգիների մասին դատում են էթնիկական ավտոստերեոտիպերի *(ինչ են մտածում տվյալ էթնոսի կամ ազգի ներկայացուցիչները իրենց մասին)* դիրքերից կամ, այլ խոսքերով, աշխարհին նայում են իրենց ազգային «քարանձավից»: Ադրբեջանցի փորձագետն իր «օբյեկտիվությամբ» համոզիչ կլիներ այն դեպքում, եթե ներկայացնելով հայերին պախարակող, պիտակավորող «մեծանուն կամ հիասքանչ» հետազոտողների *(հոդվածը կարդալիս այնպիսի տպավորություն է առաջանում, որ Իսմայիլովը այս կամ այն հետազոտողի մեծությունը պայմանավորում է արտահայտած մտքերի հայատյացության աստիճանով)* խոսքերը՝ չշրջանցեր նաև այն մտածողներին կամ հետազոտողներին, որոնք հայ ժողովրդին կամ հայի կերպարը ներկայացրել են, մեղմ ասած, դրական լույսի ներքո: Այսինքն՝ օբյեկտիվության հավակնություն ունեցող փորձագետը պետք է իմանա հանրահայտ հակասող դեպքերը և ոչ թե լռությամբ կամ դիտավորությամբ շրջանցի դրանք: Այս առումով հիշատակման է արժանի 17-րդ դարի հայտնի մտածող Ֆրենսիս Բեկոնի բերած հետևյալ օրինակը. տաճարում ոմն մեկին *(կասկածապաշտին – Ա.Ս.)* փորձում են ապացուցել Աստծո գոյությունը և ցույց են տալիս այն մարդկանց պատկերները, որոնք ուխտելու շնորհիվ փրկվել են վտանգավոր նավաբեկության ժամանակ: Իսկ «սկեպտիկը», իր հերթին, պահանջում է ցույց տալ այն մարդկանց պատկերները, որոնք ուխտելուց հետո այնուամենայնիվ զոհվել են այդ նույն նավաբեկության ժամանակ[110]:

Այսինքն՝ եթե ադրբեջանցի փորձագետի համոզմամբ օտարերկրյա մի շարք հեղինակների հակահայկական մտքերը խոսուն վկայությունն են հայերի ստոր, գիշատչական էության, ապա

[110] Տե՛ս **Ф. Бэкон,** Сочинения в 2 томах, т. 2, М., Мысль, 1978, с. 20.

ինչի՞ ապացույցն են հայերի մասին գերմանացի հայտնի մտածող Ի. Կանտի[111], ֆրանսիացի լուսավորիչ Շարլ Լուի Մոնտեսքյոյի[112], Ջ. Բայրոնի[113], Վ. Բրյուսովի[114], Պետրոս 1-ի[115] և բազմաթիվ այլ երևելիների

---

[111] Կանտը գրում է. **«...Մեկ այլ քրիստոնյա ժողովրդի՝ հայերի մոտ իշխում է ինչ-որ հատուկ տեսակի առևտրային ոգի, այն է՝ նրանք զբաղվում են փոխանակությամբ՝ ոտքով ճամփորդելով Չինաստանի սահմաններից մինչև Կորսոյի հրվանդանը Գվինեայի ափին. դա ցույց է տալիս այն բանիմաց և աշխատասեր ժողովրդի հատուկ ծագման մասին, որը հյուսիս-արևելքից մինչև հարավ-արևմուտք ուղղությամբ անցնում է գրեթե ողջ Հին աշխարհը և կարողանում գրկաբաց ընդունելություն գտնել այն բոլոր ժողովուրդների կողմից, որոնց մոտ լինում են. դա ապացուցում է նրանց բնավորության (որի նախնական ձևավորումը մենք արդեն ի վիճակի չենք հետազոտել) գերազանցությունը ներկայիս հույների թեթևամիտ և ստորաքարշ բնավորության նկատմամբ»** (տե՛ս **И. Кант,** Антропология с прагматической точки зрения //Сочинения в шести томах, т. 6, М., «Мысль», 1966):

[112] **«Պարսկական նամակներ»** ստեղծագործության «Ափերիդոնը և Աստարտան» հատվածում Մոնտեսքյոն ներկայացնում է մի ամուսնական զույգի կյանքի պատմությունը և նրանց օգնություն ցուցաբերած հայ վաճառականի խորապես մարդկային ու վեհ կերպարը՝ ի տարբերություն այլազգի վաճառականների: Հայ վաճառականը պատրաստ է ֆինանսական կորուստներ կրել հանուն այն բանի, որպեսզի ամուսինը կարողանա գերությունից ազատել կնոջը և պահպանել իր ընտանեկան երջանկությունը: Հաշվի առնելով այն, որ հայ առևտրական բուրժուազիան 17-18-րդ դարերում Եվրոպայում մեծ հեղինակություն ուներ՝ Մոնտեսքյոն հայ վաճառականի կերպարը ոչ պատահական է ընտրել: Ավելին, կարող ենք անգամ նշել, որ այդ պատմության մեջ գործ ունենք հայ վաճառականի ընդհանրական կերպարի մոնտեսքյոական տարբերակի հետ (տե՛ս **Ш.Л. Монтескье,** Персидские письма, Изд. Азбука, 2010):

[113] Ջ. Բայրոնն ասել է. **«Դժվար է գտնել մի ժողովրդի տարեգրություններ՝ պակաս արատավորված հանցագործություններով, քան հայերի տարեգրություններն են, որոնց առաքինությունները խաղաղ էին, իսկ թերությունները՝ կեղեքման հետևանք, բայց ինչպիսին էլ լիներ նրանց ճակատագիրը, իսկ այն տխուր է, ինչ էլ որ նրանց սպասի ապագայում, նրանց երկիրը միշտ պետք է մնա ամենահետաքրքիրներից մեկը ողջ երկրագնդում... Այդ մարդիկ ստրկացված, բայց հոգևոր անձինք են վեհանձն ազգի, որը ենթարկվել է աքսորի ու ճնշման հրեաներին ու հույներին հավասար, բայց չի կրել ո՛չ առաջինների չարացածությունը, ո՛չ երկրորդների ստրկամտությունը: Այդ ազգը հարստություններ է ձեռք բերել՝ չդիմելով վաշխառության, և բոլոր պատիվները, որոնք կարող են շնորհվել նրան, ով գտնվում է ստրկության մեջ, առանց ինտրիգների»** (մեջբ. ըստ **Հայտնի դասականները՝ հայերի մասին** (2012), http://armenian.irib.ir/home1/2011-11-13-03-58-57/item/23675:

[114] Վ. Բրյուսովն ասել է. **«Հայաստանը ողջ մարդկության հոգևոր կյանքի կենտրոններից մեկն է: Այն արժանի է ուշադրության նույն չափով, ինչ չափով որ ամենահիանալի ժողովուրդների պատմությունը, որոնք իրենց ինքնուրույն ավանդն են ներդրել մարդկության մշակույթի մեջ»** (մեջբ. ըստ **Հայտնի դասականները՝ հայերի մասին** (2012), http://armenian.irib.ir/home1/2011-11-13-03-58-57/item/23675):

[115] Պետրոս 1-ին են պատկանում հետևյալ խոսքերը. **«Ազնիվ հայ ժողովրդին պահել առանձնահատուկ ողորմածությամբ... Մենք հրամայել ենք նրանց վաճառականությանը ոչ միայն պաշտպանել, այլև առավել մեծ շահի ու օգուտի համար որոշ առանձին արտոնություններով էլ կօժտենք ու ամենաողորմած ձևով բարյացակամ կլինենք»** (մեջբ.

դրական խոսքերը, որոնք տրամագծորեն հակառակ են ադրբեջանական քարոզչամեքենայի համար սիրելի դարձածներին:

Միգուցե, Իսմայիլովին և նրա մեթոդաբանությամբ առաջնորդվողներին երբևիցե բախտ չի վիճակվել ծանոթանալ հայերի մասին հայտնի մտածողների, գրողների կամ գործիչների դրվատանքի խոսքերին *(առաջնորդվենք «անմեղ» չիմացության կանխավարկածով)*, սակայն այս հանգամանքը ևս չի կարող խոցելի չդարձնել նրանց փաստարկողական ապարատը կամ մեթոդաբանությունը: Բանն այն է, որ հապճեպ ընդհանրացումներ կատարելը կամ մի քանի դեպքերի հիման վրա հեռուն գնացող եզրակացություններ անելը նույնպես գիտական հետազոտության «տրամաբանությունից» դուրս է, տրամաբանական սխալի դրսևորում: Հանգամանք, որը հայատյաց քարոզչություն իրականացնող բազմաթիվ հետազոտողների պարագայում կարծես անտեսվում է կամ մոռացվում:

Թեպետ սույն պարագրաֆում քննարկման հիմնական նյութը Ադրբեջանի կրթական համակարգում հայատյացության դրսևորումներն են, այնուամենայնիվ նշենք, որ Իսմայիլովի մոտեցմանն ուղղված անդրադարձը չի կարելի դիտարկել որպես հետազոտական ավելորդություն, քանի որ այն ընդհանուր գծերով բնորոշ է նաև Ադրբեջանի կրթադաստիարակչական համակարգում տեղ գտած հայատյաց թեզերին, ինչն առավել հստակ կդառնա հետագա շարադրանքում:

Արդեն նշվել է, որ Ադրբեջանում հայատյացությունը պետական մակարդակով խրախուսվող և իրականացվող քաղաքական կուրս է, որն իր արտահայտությունն է գտել ինչպես նախադպրոցական, այնպես էլ դպրոցական և կրթական այլ հաստատություններում: Այս առումով պատահական չէ, որ նկատի ունենալով պատմության ժամանակակից ադրբեջանական դասագրքերը՝ Ի. Աբբասովը գրում է, թե դրանցում **««...պատմական, ոխերիմ թշնամու» կերպարի կերտումը անցյալի էթնոպատմական մոդելի կենտրոնական, կարևորագույն մասն է, որի շուրջ էլ ձևավորվում է պատմություն առարկայի դասավանդումը միջնակարգ դպրոցում»**[116]: Իրողություն, որի հանդեպ քննադատական լռակյացությունը ոչ միայն

ըստ **Հայտնի դասականները՝ հայերի մասին** (2012), http://armenian.irib.ir/home1/2011-11-13-03-58-57/item/23675):

[116] **И. Аббасов,** «Национальная история» в средних учебных заведениях в контексте образа «исторического врага», с. 79 (2012), http://www.ge.boell.org/downloads/Ilham_Abbasov.pdf

վտանգավոր է, այլև որոշակի տուրք է այսօրինակ երևույթների հետագա արմատավորմանը: Պետք է փաստել, որ Ադրբեջանը հայատյացության արմատավորմանը միտված իր կրթական և այլաբնույթ աշխատանքներում դրսևորում է որոշակի զգուշավորություն՝ հանդես գալով ներքին և արտաքին լսարանների գործոնը հաշվի առնելու դիրքերից: Բանն այն է, որ եթե ներքին լսարանին հասցեագրված հրապարակումներում, քարոզչական բնույթի տեքստերում նկատելի է անկաշկանդ հայատյացության փաստը, ապա արտաքին լսարանին հասցեագրված «հաղորդագրություններում» հիմնականում աչքի են զարնում հանդուրժողականության, այլասիրության, մարդասիրական արժեքների հանդեպ Ադրբեջանի հավատարմության մասին թեզերը: Իհարկե, սա չի նշանակում, թե հարևան պետությունը միջազգային հարթակում խուսափում է այնպիսի դրույթներից, որոնց համատեքստում Հայաստանը ներկայացվում է որպես ագրեսոր պետություն, իսկ հայերը՝ որպես եղեռնագործներ: Օրինակ, ինչպես արդեն նշել ենք, Ադրբեջանի նախագահ Ի. Ալիևը տարիներ շարունակ միջազգային տարբեր հարթակներում հետևողականորեն, սակայն տարբեր ձևակերպումներով բարձրաձայնում է միևնույն քարոզչական թեզը, ըստ որի Ադրբեջանը զոհն է հայկական ագրեսիայի, իսկ ադրբեջանցիները՝ հայերի «ցեղասպան ձեռքի»: Հասկանալի է, որ նման դրույթները միտված են միջազգային հանրության առջև հայի և հայկական պետության (ների) մասին բացասական կարծիք ձևավորելուն, արցախյան հակամարտության հարցում Ադրբեջանի դիրքերն ամրապնդելուն, սակայն խնդրի լրջությունը պետք է դիտարկել այլ հարթության վրա: Բանն այն է, որ արտաքին լսարանի մակարդակում շարունակ շեփորահարելով տարածքային ամբողջականության, «Խոջալուի ցեղասպանության» դրույթները և սպեկուլյացիայի ենթարկելով իր կազմում տեղաբնիկ ժողովուրդների գոյության փաստը՝ Ադրբեջանը մի կողմից ջանում է արևմտյան արժեհամակարգին հավատարիմ, բայց զոհ դարձած պետության իմիջ ձևավորել, իսկ մյուս կողմից՝ շեղել միջազգային հանրության ուշադրությունը երկրում օրըստօրե խորացող հայատյացության փաստից:

Ադրբեջանն իր կրթական քաղաքականության մակարդակում ևս հանդես է գալիս վերն արտահայտված քարոզչական թեզի դիրքերից, սակայն՝ նորանոր շեշտադրումներով: Եթե արտաքին լսարանի մակարդա-

կում այդ թեզն առավելապես միտված է հակառակորդի հեղինակազրկմանը, ապա ներքին լսարանի մակարդակում՝ արժեքային միասնական պլատֆորմ կամ հայրենասիրության, արդարության, խիզախության և այլ որակների ինքնատիպ ըմբռնում ձևավորելուն: Ավելին, եթե արտաքին լսարանին հասցեագրված հաղորդագրություններում այս թեզն ըստ էության շրջանառվում է **«Հայաստանը, հայերը այսպիսին կամ այնպիսին են»** համեմատաբար զգուշավոր, ապա ներքին լսարանի մակարդակում այն մատուցվում է **«Հայաստանն ու հայերը չարիքի աղբյուր են և մարդասիրությունն ու հայրենասիրությունը ենթադրում են դրանց վերացում»** ծայրահեղ ու խիստ վտանգավոր մոտեցման դիրքերից: Այսինքն՝ եթե արտաքին լսարանի մակարդակում հայերին ու Հայաստանը պիտակավորող թեզերով Ադրբեջանը փորձում է սեփական մոտեցումների արդարությունը ամրագրել, ապա ներքին լսարանի մակարդակում՝ հայատյացությունը լեգիտիմացնել: Պատահական չէ, որ դաստիարակչական բնույթի ադրբեջանական պատմվածքներում, հեքիաթներում ընթերցողը կարող է արձանագրել բարի և չար ուժերի միջև պայքարի արդիականացված տարբերակների փաստը, որտեղ չարի մարմնացում կամ չարիքի աղբյուր են համարվում հայերը: Ավելին, ադրբեջանական քարոզչամեքենան արտաքին և ներքին լսարանի գործոնով պայմանավորված՝ չարի, անարդարության, ագրեսիվության, անմարդկայնության սուբյեկտի որոշման հարցում հանդես է գալիս **էթնիկականի և ինստիտուցիոնալ-պետականի** տարբերակման դիրքերից: Եթե արտաքին լսարանում շեշտը դրվում է ինստիտուցիոնալ-պետականի վրա, Հայաստանն ու իր իշխանություններն են հիմնականում տարածաշրջանային խաղաղությանը սպառնացող և միջազգային նորմերը խախտած դերակատարները *(եթե հաշվի չառնենք Ալիևի հայտարարությունն այն մասին, թե համայն հայությունն է Ադրբեջանի թշնամին)*, ապա ներքին լսարանի մակարդակում թշնամին որոշվում է էթնիկական գործոնի դիրքերից: Այս դեպքում պայքարի թիրախը ոչ թե սոսկ մոնոէթնիկ Հայաստանի Հանրապետությունն է, այլ՝ համայն հայությունը: Բարի և չար դուալ համակարգում հայն է հանդիսանում աշխարհաքանդ, ապակառուցողական, այլասերված էակ, որի դեմ պայքարն ավանդ է ոչ միայն սեփական պետության ու ժողովրդի, այլև համայն մարդկության դրական ապագան կերտելու գործում: Ցավալի

է, սակայն դիցարարական տարրեր բովանդակող կրթական այսօրինակ քաղաքականությամբ Ադրբեջանը հանդես է գալիս ռասիզմի ու նացիզմի հետ ընդհանրության դիրքերից, որն իրականում վտանգում է ոչ միայն տարածաշրջանային խաղաղությունը, այլև նպաստում է արևմտյան արժեհամակարգին խորթ և մարգինալ արժեքներ ունեցող «քաղաքացիների» ձևավորմանը: Իսկ այս ամենը վկայում է այն մասին, որ շարքային ադրբեջանցին, նորահաս սերունդն ադրբեջանական քարոզչամեքենայի ազդեցությամբ իրապես վտանգում են իրենց ապագան, քանզի, ինչպես կասեր գերմանացի մտածող Լայբնիցը, **«ներկան մշտապես հղի է ապագայով»**: Իսկ ադրբեջանական ներկան կոչված է հաստատելու, որ Ադրբեջանի ժողովրդավարական և եվրոպական արժեհամակարգին համահունչ ապագան խիստ կասկածահարույց է, քանզի համագործակցության տրամաբանությամբ առաջնորդվող մերօրյա աշխարհում էթնոմշակութային կամ ազգային պատնեշներ ծնող դիցերով սերունդ դաստիարակելը կարող է հանգեցնել կործանարար ինքնամեկուսացման:

Ճիշտ է, Ադրբեջանը մերժում է իրեն հասցեագրված մեղադրանքները և փորձում է միջազգային հանրությանը ներկայանալ մարդասիրական արժեքներով առաջնորդվող պետության կարգավիճակով, սակայն իրողությունն այն է, որ պաշտոնապես հռչակվածի և իրականացվողի միջև գոյություն ունի անջրպետ, ինչի խոսուն վկայությունն են Ադրբեջանի օրենսդրությունը և կրթական ծրագրերի, դասագրքերի բովանդակությունը, ադրբեջանցի պաշտոնյաների այլասիրություն և հանդուրժողականություն «փաստող» խոսքերն ու այլատյացությունը խորացնող գործերը: Ասվածն առավել առարկայական կդառնա, եթե հատուկ անդրադառնանք Ադրբեջանում լույս տեսած դասագրքերի, ուսումնական ձեռնարկների, մանկական գրականության բովանդակությանը, ինչը վերն ասվածի իրեղեն ապացույցն է: Այս առումով ուշագրավ և խիստ արժեքավոր է հայկական կողմի ստեղծած www.azerichild.info էլեկտրոնային կայքը, որտեղ ընթերցողը կարող է հանդիպել հարուստ փաստական նյութի՝ վերցված ադրբեջանական աղբյուրներից: Ընդ որում, այդ աղբյուրները հիմնականում բովանդակում են ոչ թե սոսկ այս կամ այն հեղինակի տեսակետը, այլ Ադրբեջանի պետական մոտեցումը, քանի որ նյութերի մեծ մասը տպագրվել է պետական կառույցների երաշխավորությամբ: Բացի այդ, անհատական

մոտեցումը արտացոլող նյութերից շատերի պարագայում էլ կարող ենք ասել, որ դրանց հետևում կարելի է նկատել պետության «ներկայությունը», քանի որ Ադրբեջանի օրենսդրության պահանջների հրապարակային խախտման դրսևորում հանդիսացող անհատ հեղինակների տեսակետները մնում են անպատիժ: Այսինքն՝ ադրբեջանական ԶԼՄ-ների, կրթական համակարգի շրջանակներում կարելի է արձանագրել Ադրբեջանի օրենսդրության բազմաթիվ դրույթների տոտալ խախտման և անպատժելիության արդյունքում այդ խախտումները հետևողականորեն շարունակելու իրողությունը: Ասվածն առավել պարզ կդառնա, եթե ներկայացնենք Ադրբեջանի օրենսդրության մի քանի կետեր, որոնք վերաբերում են երեխաների դաստիարակության և այլատյացության հետ կապված հարցերին: Օրինակ՝ Երեխայի իրավունքների մասին Ադրբեջանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի համաձայն՝ **յուրաքանչյուր երեխա ունի զարգանալու և ազգային ու համամարդկային արժեքներին համապատասխան, մարդասիրության և բարոյականության սկզբունքների հիման վրա դաստիարակություն ստանալու իրավունք:** Այդ նույն օրենքի համաձայն՝ **երեխաների շրջանում արգելվում է ֆիլմերի, գրականության և այլ միջոցների տարածումն ու ցուցադրումը, որոնք քարոզում են բռնություն, բռնապետություն և այլն**[117]: Ինչ վերաբերում է այլատյացությանը, ապա Ադրբեջանի Հանրապետության քրեական օրենսգրքի 154 հոդվածի 1-ին կետի համաձայն նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից մինչև հինգհարյուրապատիկի չափով տուգանք կամ մինչև մեկ տարով ուղղիչ աշխատանքներ է նախատեսված այն դեպքերում, երբ քաղաքացիների իրավահավասարությունը խախտվում է՝ կախված ռասայական, ազգային, կրոնական, լեզվական, սեռային պատկանելությունից, ծագումից և այլն[118]: Անշուշտ, օրենսդրական այս տողերը արժանի են դրվատանքի, սակայն խնդիրն այն է, որ օրենքի պահանջների ու ադրբեջանական իրականության մեջ առկա է մեծ ջրբաժան: Նախ՝ Ադրբեջանի նախադպրոցական, դպրոցական և այլ հաստատություններում երեխաների դաստիարակության ընթացքում որոշակիորեն բացասվում են համա-

[117] Տես **Закон Азербайджанской Республики о правах ребенка,** http://www.crossna.narod.ru/lows/03/02.htm

[118] Տես **Уголовный кодекс Азербайджанской Республики,** http://legislationline.org/ru/documents/action/popup/id/14108/preview

մարդկային արժեքները, մարդասիրությունն ու բարոյականությունը: Բացի այդ, Ադրբեջանում խախտվում են ազգային փոքրամասնությունների իրավունքները, իսկ հայկական ծագում ունենալը գործազուրկ դառնալու, վտանգված կյանք ունենալու և այլ բացասական երևույթների պատճառ կարող է հանդիսանալ: Ռասիզմի և անհանդուրժողականության դեմ եվրոպական հանձնաժողովի 2011թ. զեկույցում նշվում է, որ Ադրբեջանում ապրող էթնիկ հայերը առօրյա կյանքում ենթարկված են վտանգների, իսկ ՀԼՄ-ների քաղաքականությունն ու Ադրբեջանի պաշտոնական գաղափարախոսությունը հանգեցրել են նրան, որ հայ լինելը համարվում է վիրավորական, իսկ հայկական ծագման մասին հայտարարությունը կարող է անգամ դատական հետաքննության պատճառ հանդիսանալ[119]: Ավելին, ադրբեջանական www.pia.az կայքում տեղ գտած **«Վարկաբեկող փաստ կրթական համակարգում»** խորագրով նյութում որոշակիորեն քննադատվում է կրթության նախարար Միսիր Մարդանովը, քանի որ նա **«Ադրբեջանի նորահաս սերնդի դաստիարակության գործը վստահել է թուրքերի թշնամուն»** *(պարզվել էր, որ Բաքվի թիվ 246 դպրոցի տնօրենը մայրական գծով հայուհի Էլզա Թագիևան է)*: Կայքը զարմանք է արտահայտում առ եղելություն՝ ձևակերպելով հետևյալ հռետորական հարցը. **«Ինչպե՞ս կարելի է վստահել մեր ապագայի՝ երեխաների կրթության և հայրենասիրական դաստիարակության գործը խառնածին հայուհուն»**[120]: Ակնհայտ է, որ այս հրապարակումն ադրբեջանական օրենքի պահանջի խախտման կոչ է բովանդակում, քանի որ Ադրբեջանի քաղաքացին իր հայկական ծագման պատճառով դիտարկվում է աշխատանքային գործունեություն ծավալելու տեսանկյունից ոչ իրավահավասար այլ քաղաքացիների համեմատ: Այսինքն՝ Ադրբեջանի քաղաքացու իրավունքները կախվածության մեջ են դրվում նրա էթնիկական պատկանելությունից, ինչն օրենքով նախատեսված իրավահավասարության գաղափարական մերժումն է կամ խախտումը: Պատահական չէ, որ ադրբեջանցի ազգագրագետ Սևիլ Հուսեյնովան իր՝ «Հենրիխ Բյոլի հիմնադրամի» կողմից հրատարակված **«Էթնիկական պատկանելությունը որպես կարգավիճակ և**

[119] **ECRI обеспокоена судьбой этнических армян, живущих в Азербайджане** (2012), http://stopxenophobia.org/?p=2366

[120] Տես **СМИ начали охоту на директора Бакинской школы – армянку** (2012), http://stopxenophobia.org/?p=2370

ստիգմա. հայերը հետխորհրդային Բաքվում» խորագրով հետազոտության մեջ նշում է, որ հայկական էթնիկական ինքնությունը հետխորհրդային Բաքվում ստիգմատիզացիայի[121] է ենթարկվել: Այսինքն՝ համաձայն Հուսեյնովայի՝ Ադրբեջանի տեղեկատվական դաշտը ներթափանցված է այն գաղափարախոսությամբ, որ Բաքվի ստիգմատիզացված բնակիչները *(նկատի ունի հայերին)* վտանգ են ներկայացնում և բացասական հույզեր առաջացնում: **«ԶԼՄ-ներում, ինչպես նաև առօրյա կյանքում,-** գրում է Հուսեյնովան,- **մենք լսում ենք ստիգմատիզացված հայեցակարգեր՝ «պատմական թշնամիներ», «փոքրիկ հայ տականք», «Խաչիկ» և այլն: Կարելի է ասել, որ էթնիկական պատկանելությունը դառնում է որակ, որը տարբերակում է Բաքվի հայերին քաղաքի այլ բնակիչներից և Ադրբեջանի այլ քաղաքացիներից»**[122]:

Վերադառնալով սույն պարագրաֆի հիմնական հարցին՝ Ադրբեջանի կրթական համակարգում հայատյացությանը, փաստենք, որ վերջինս ունի մի շարք ախտանիշեր, որոնք կարելի է ներկայացնել հետևյալ խմբերով.

– **Պատմագիտական կամ պատմամշակութային:** Այս ախտանիշերը դրսևորվում են պատմության դասագրքերի, պատմագիտական հետազոտությունների բովանդակության մակարդակում: Դրանցում հայերը հետևողականորեն ներկայացվում են որպես տարածաշրջանային «հյուրեր», պատմազուրկ և մշակութակործան ժողովուրդ:

– **Էթնոհոգեբանական:** Այս ախտանիշը հստակ դրսևորվում է տարաբնույթ գրականության մեջ հայի էթնոհոգեբանական նկարագրի ներկայացման ժամանակ: Ադրբեջանական քարոզչամեքենան հետևողականորեն արմատավորում է չարիքի աղբյուր հանդիսացող հայի բնազանցական կերպարը, որի համատեքստում հայ լինելը դառնում է բացասական որակի արտահայտություն: Ընդ որում, հայի կերպարի արատավորումը հաճախ տեղի է ունենում **«բացասական ընտրանքի»** մեթոդով: Բանն այն է, որ ինչպես ԶԼՄ-ները, այնպես էլ ուսումնական գրականությունը

[121] Առաջացել է հունական ծագում ունեցող ստիգմա բառից: Նշանակում է պիտակավորում, հիմնականում բացասական այս կամ այն հատկության ասոցացումը որևէ մարդու կամ խմբի հետ:

[122] Մեջբ. ըստ **Исследование: СМИ и антиармянская пропаганда в Азербайджане привели к стигматизации личности армян в Баку** (2012), http://www.panorama.am/ru/politics/2012/03/13/azerbaijan-armenia-propaganda/?sw

ներկայացնում կամ ստեղծում են որոշակի բացասական համատեքստ, որտեղ գլխավոր դերակատարը հայն է: Օրինակ, ադրբեջանական ԶԼՄ-ները լուսաբանում են հայաստանյան կամ միջազգային այնպիսի իրադարձություններ, որոնք ունեն բացասական նշանակություն և առնչվում են հայերի հետ կամ վկայում են հայերի «արատների» կամ «թուլության» մասին *(հանցագործ հայի կողմից կատարված սպանություն, հայ մարզիկների պարտություն, ՀՀ զինված ուժերում զինվորի մահ և այլն)*:

Մինչդեռ այն լուրերը, որտեղ կարելի է արձանագրել հայերի ձեռքբերումները, ՀՀ առաջընթացը[123] և այլն, վճռականորեն շրջանցվում են: Իսկ դա նշանակում է, որ ադրբեջանական լսարանին Հայաստանի Հանրապետության և հայերի մասին բաժին է ընկնում առավելապես բացասական հույզեր և տրամադրվածություն առաջացնող տեղեկատվություն:

– **Բարոյագիտական:** Այս ախտանիշը դրսևորվում է առաքինություն, հայրենասիրություն, մարդասիրություն, հանդուրժողականություն և բարոյագիտական տեսանկյունից կարևորություն ներկայացնող այլ հասկացությունների ադրբեջանական ըմբռնումների մակարդակում: Օրինակ՝ Ադրբեջանում հայրենասիրությունը ենթադրում է ոչ այնքան սեր դեպի հայրենիքը, սեփական մշակույթը, որքան ատելություն հայերի հանդեպ: Այս տեսանկյունից վերստին պետք է հիշել Ռ. Սաֆարովի օրինակը, որը Ադրբեջանում մեծամասամբ ընդունվեց որպես հերոս, որպես ազգային ոգու խորհրդանիշ, առաքինության և բարոյական որակների կրող: Ավելին, մահմեդական *(ադրբեջանցի)* երեխաների դաստիարակության, բարոյական կողմնորոշումների հետ կապված լրջագույն խնդիրները հատուկ ուշադրության են արժանացել ավելի քան մեկ դար առաջ: Այս առումով հատկանշական է Ուզեիր Գաջիբեկովի՝ իր և մի երիտասարդ մուսուլմանի միջև երկխոսության ձևով գրված «Այստեղից-այնտեղից» հոդվածը, որի հատվածներից մեկում հեղինակը ուշագրավ համեմատություն է անցկացնում մի կողմից ռուս և հայ, իսկ մյուս կողմից՝ մահմեդական *(ադրբեջանցի)* երեխաների ընտանեկան դաստիարակությունների միջև: Ըստ Գաջիբեկովի, հայ և ռուս երեխաները տանը դաստիարակվում են գրագետ և կիրթ մայրերի կողմից, ժամանակին են քնում, ոգու, բարոյականության

[123] Օրինակ՝ հայ շախմատիստների օլիմպիական չեմպիոն դառնալը, ֆուտբոլի ՀՀ ազգային հավաքականի հաղթանակը, արցախյան զորահանդեսը, միջազգային զեկույցներում ՀՀ առաջընթացի մասին թեզերը և այլն:

և ֆիզիկական առողջության համար պիտանի խաղալիքներով են խաղում, լսում են հոգու և առողջության համար հիասքանչ երաժշտություն, առնչվում հայտնի մանկավարժների կողմից հատուկ երեխաների համար գրված պատմվածքների, պոեմների, առասպելների: Բացի այդ, լսում են ծնողների բարոյախրատական ճառերը, իրենց տան բարեկիրթ և բանիմաց հյուրերի զրույցները և այլն[124]: Մինչդեռ այլ է պատկերը մահմեդական *(ադրբեջանցի)* երեխաների պարագայում: **«Այն, ինչ նրանք լսում են,-** գրում է Գաջիբեկովը,- **կեղտոտ հայհոյանքներ և վիրավորանքներ են, ինտրիգներ և անպատվաբեր բառեր են: Նրանց տեսածը մեծերի վատ արարքներն են, նրանց ամենուրեք շրջապատում են կեղտն ու կեղտաջրերը, նրանք խաղում են փոշոտ և հողոտ վայրերում, նրանց համար որպես խաղեր են հանդիսանում... կատվին խեղդելը, շանը հարվածելը, մկների վրա նավթ լցնելն ու այրելը: Այսպիսով, մինչ մեր երեխաները դպրոց կհաճախեն՝ նրանց «տունն արդեն քանդված է»: Այսինքն՝ նրանք հենց արմատներից են դաստիարակությունից զուրկ և դրա համար ստանում ենք տխուր արդյունք: Ահա թե ինչում է մեր դժբախտությունը՝ հասարակության մեջ»**[125]:

Թվարկված խմբերի ախտանիշերը միմյանց հետ սերտորեն կապված են, գտնվում են ներդաշնակ միասնության մեջ, ինչն ավելի արդյունավետ է դարձնում հայատյացության արմատավորմանն ուղղված ջանքերը:

Արդեն նշվել է, որ պատմության ադրբեջանական դասագրքերում ադրբեջանցիները ներկայացվում են որպես տարածաշրջանի հնաբնակ ժողովուրդ, որը համառ պայքար է մղել օտար զավթիչների դեմ, տուժել է տարբեր դավադրություններից և մեծ ավանդ է ունեցել մարդկության քաղաքակրթական զարգացման գործում: Պատահական չէ, որ հետխորհրդային երկրների պատմության դպրոցական դասագրքերի ուսումնասիրության արդյունքների վերաբերյալ զեկույցի համաձայն՝ **«...բացառությամբ Բելառուսի և Հայաստանի** *(պակաս չափով)*՝ **մնացած երկրները գնացել են նորահաս սերնդին ազգայնական մեկնաբանությամբ պատմություն դասավանդելու ճանապարհով, որը հիմնված է հին ժողովուրդ լինելու, նախնիների բարձր մշակութային առաքելության և «ոխերիմ**

[124] Տես **У. Гаджибеков,** Наше несчастье в умме (2012), http://azerichild.info/publicism_02.html
[125] Նույն տեղում:

թշնամու» դիցերի վրա»[126]:

Պատմական կեղծարարությունների և սեփական պատմության նորովի ներկայացմամբ՝ ադրբեջանական դասագրքերը նորահաս սերնդի մոտ ձևավորում են պատմական այնպիսի «հարթակ», որտեղ հայերը կամա թե ակամա պետք է հանդես գան ագրեսորի, այլատյացի, մարդատյացի կարգավիճակով: **Եթե պատմության ճշմարիտ շարադրման դեպքում բացահայտվում են դրական և բացասական կերպարները, խաղաղասերներն ու այլատյացները, ապա դրա կեղծման պարագայում ստեղծվում են այդ կերպարները:** Իսկ սա նշանակում է, որ պատմության ադրբեջանական դասագրքերի բովանդակությունն առավելապես միտված է ադրբեջանցիների մոտ նոր ես-կոնցեպցիա ձևավորելուն կամ արմատավորելուն և դրա համատեքստում հայի թշնամական կերպարը ստեղծելուն, հիմնավոր դարձնելուն: **«Այն,-** ասում է ադրբեջանցի պատմաբան Ա. Յունուսովը,- **թե ինչպես են հայերը ներկայացվում (ադրբեջանական) դասագրքերում՝ ռասիզմ է: Այդ երեխաները կմեծանան ատելությամբ, հանդուրժողական չեն լինի»**[127]: Հայերի բացասական բնութագիրը չի սահմանափակվում սոսկ պատմության դասագրքերի մակարդակում, քանզի Ադրբեջանի կրթական համակարգում հայերին պիտակավորող բովանդակության կարելի է հանդիպել տարբեր առարկաների գծով նախատեսված դասագրքերում կամ ուսումնաօժանդակ նյութերում: Օրինակ, ադրբեջանցի Մ. Գյունեշլին քննադատելով ադրբեջանական դասագրքերի բովանդակությունը, ըստ էության ցույց է տալիս, որ դրանցում հայրենասիրության ոգով դաստիարակումն անցնում է զավեշտի սահմանները: Դրա վկայություններից է ադրբեջանական դպրոցներում կենսաբանություն առարկայի համար նախատեսված դասագիրքը[128], որի հեղինակները նպատակ ունեին «գործնական աշխատանքների *(լաբորատոր աշխատանքներ, թեստեր,*

---

[126] **Освещение общей истории России и народов постсоветских стран в школьных учебниках истории новых независимых государств,** М., 2009, с. 5.

[127] Մեջբ. ըստ **А. Барсегян, Ш. Султанова,** Уроки истории в Армении и Азербайджане (2012), http://iwpr.net/ru/report-news/уроки-истории-в-армении-и-азербайджане

[128] 9-րդ դասարանցիների համար նախատեսված **«Կենսաբանություն-մարդ: Լաբորատոր աշխատանքներ»** դասագիրքը հաստատվել է 2003թ. Ադրբեջանի Հանրապետության կրթության նախարարության գիտամեթոդական հանձնաժողովի «Կենսաբանություն» սեկցիայի նիստի ժամանակ:

խնդիրներ, խաչբառեր) օգնությամբ ձևավորել սովորողների տեսական գիտելիքները և **դաստիարակել հայրենասեր անհատներ»**[129]: Ողջունելի է, երբ տարբեր առարկաների դասագրքերը միտված են նաև արժեքներ ձևավորելուն, սակայն սույն դասագրքում քարոզվող հայրենասիրությունը կառուցված է հայկական թեմատիկայի շուրջ՝ աշակերտներին հակահայկական տրամադրվածություն հաղորդելու տրամաբանությամբ: Հանգամանք, որը կարծես հերթական վկայությունն է այն բանի, որ Ադրբեջանում հայրենասիրությունը չափվում է հակահայկականությամբ կամ դրա աստիճանով: Ասվածն առավել հիմնավոր կդառնա, եթե վերստին անդրադառնանք Մ. Գյունեշլիին: Վերջինս վկայակոչում է դասագրքի **«Հենաշարժողական համակարգի բնութագիրը», «Հակիրճ տեղեկություններ արյան և արյունաստեղծ համակարգի մասին», «Հակիրճ տեղեկություններ շնչառական համակարգի մասին»** բաժինները, որոնցում դասագրքի հեղինակները աշակերտներին հայրենասիրական ոգով դաստիարակելու համար առաջարկում են հետևյալ խնդիրները կամ հարցերը *(դրանք կներկայացնենք բառացիորեն)*.

– Ո՞վ կարող է նշել ղարաբաղյան պատերազմում վերջույթները կորցրած հաշմանդամների մոտավոր թիվը:

– Լեռնային Ղարաբաղի պատերազմում 20-21 տարեկան երիտասարդները թշնամու ուշադրությունը շեղելու նպատակով նետվում էին բարձր ժայռերից: Չնայած բուժմանը՝ նրանք հաշմանդամներ են: Շատերի ստորին վերջույթները չեն շարժվում, առկա է անմիզապահություն: Բացատրեք պատճառը:

– 1992թ. ղարաբաղյան իրադարձությունների ժամանակ թշնամուց փախչող մարդկանց խումբն *(երեխաներ, դեռահասներ, հղի կանայք, ծերունիներ)* ուժերի ներածին չափով վազում էին դեպի անտառներ, լեռներ, հովիտներ: Նշեք այդ մարդկանց սրտի բաբախյունների մոտավոր թիվը և բացատրեք պատճառը:

– Զանգեզուրից ադրբեջանցիներին վտարելիս յուրաքանչյուր երկրորդի վիճակը վատանում էր և արհեստական շնչառության կարիք էր զգացվում: Ոմանք տեղ չհասան, ոմանք կենդանի մնացին: Բացատրեք մարդ-

---

[129] Մեջբ. ըստ **М. Гюнешли,** МАРксизм – МАРданизм (2012), http://azerichild.info/books_03.html

կանց հետ կատարվածի պատճառը[130]:

Զավեշտի հասնող այս ձևակերպումներից շատերի պարագայում հստակ կարելի է արձանագրել ադրբեջանական քարոզչամեքենայի հակահայկական թեզերից շատերը, որոնք դիդակտիկ «նպատակահարմարության» և հայրենասիրության գաղափարի հովանու ներքո կրթական հաստատությունները վերածում են այլատյացության կրթօջախների: Բանն այն է, որ, օրինակ, վերոբերյալներից 2-րդ կետով ակնարկվում է հայկական ագրեսիայի, դաժանության և Արցախի ադրբեջանապատկանության մասին, քանզի 20-21 տարեկան անդամալույծ երիտասարդների հերոսությունները բնորոշ են հայրենի բնօրրանը արտաքին ագրեսորից պաշտպանողի, խաղաղ բնակչությանը հնարավոր ոչնչացումից փրկողի վարքագծին: 3-րդ կետը ցույց է տալիս, որ թշնամի հայից փախչում էին երեխաները, դեռահասները, հղի կանայք և ծերունիները, ինչը լատենտ վկայությունն է հայերի անօրինակ դաժանությունների, անպաշտպան մարդկանց ոչնչացնելու նպատակադրության *(համաձայն ադրբեջանական քարոզչամեքենայի՝ երեխաները, հղի կանայք և ծերունիները մարդասպան հայերի անմեղ զոհերն էին նաև Խոջալուի դեպքերի ժամանակ)*: 4-րդ կետով աշակերտներին այն միտքն է սերմանվում կամ հիշեցվում, որ ադրբեջանցիները հայերի կողմից վտարվել են Զանգեզուրից՝ իրենց «պատմական հայրենիքի» մի հատվածից և այլն: Ակնհայտ է, որ այս խնդիրների շնորհիվ ադրբեջանցի աշակերտների համար հայրենասիրությունը կարող է դառնալ հայատյացության համարժեքը, քանի որ, դատելով դասագրքի հեղինակների ձևակերպած հարցերից, հայրենասեր ադրբեջանցի ձևավորելու համար անհրաժեշտ են մարդասպան հայի և ադրբեջանցի զոհի կերպարները: Եթե հարևան պետության մեջ անգամ կենսաբանություն առարկան է ծառայում հակահայկական ոգով հայրենասերներ կերտելու գործին, ապա մնում է պատկերացնել, թե հայատյացության ինչպիսի ներուժ են բովանդակելու հումանիտար առարկաների դասագրքերը կամ դրանց հետ կապված գրականությունը:

Չնայած վերոգրյալ դասագիրքը վերաբերում էր 9-րդ դասարանցիներին, սակայն դա չի նշանակում, թե հայերի մասին հիշատակումները սկսվում են բարձր դասարաններից: Հայկական թեմատիկան Ադրբե-

[130] Տես նույն տեղում:

ջանի պատկան կառույցները շրջանառության մեջ են դրել անգամ նախադպրոցական տարիքի երեխաների դեպքում: Օրինակ՝ Ֆ. Քոչարլիի անվան Հանրապետական մանկական գրադարանի գիտամեթոդական և Ս. Վուրղունի անվան Կենտրոնական գրադարանի մեթոդական բաժինների մշակած **«Նախադպրոցական և դպրոցական տարիքի երեխաների հայրենասիրական դաստիարակության մեթոդական ձեռնարկը»** և **«Երեխաներին հայրենասիրական ոգով դաստիարակելու մեթոդական ձեռնարկը»** խոսուն վկայությունն են այն բանի, որ **դեռևս 3 տարեկանից սկսած՝** ադրբեջանցի երեխաները «ծանոթանում» են հայերի բացասական կերպարին, դաստիարակվում են վրեժի և ատելության ոգով: Այդ ձեռնարկներում բերված են կոնկրետ սցենարներ և վարողների շուրթերից արտաբերման ենթակա բառեր ու արտահայտություններ, որոնցում հայերն ունեն իրենց ուրույն տեղը: Օրինակ՝ հայությունը բառացիորեն բնորոշվում է որպես **դարի աղետ**, իսկ երեխաներին հայրենասիրական ոգով դաստիարակելու և նրանց մոտ քաղաքացիական դիրքորոշում ձևավորելու համար կարևորվում է **«Ովքե՞ր են հայերը և ո՞րն է մեր քաղաքացիական պարտքը», «Ո՞վ է լավ մարդը», «Ե՞րբ է տեղի ունեցել Խոջալուի ողբերգությունը»** թեմաներով քննարկումների անցկացումը[131]:

Ինչ վերաբերում է Ադրբեջանի պատմության դասագրքերին, ապա դրանցում հայատյացության մասին ըստ էության «խոստովանում» են հենց հեղինակները կամ երաշխավորելու իրավասություն ունեցողները: Օրինակ՝ IWPR *(Institute for War and Peace Reporting)* միջազգային կազմակերպության պաշտոնական կայքի հրապարակումներից մեկում բերված են 10-րդ դասարանի պատմության դասագրքի հեղինակ Թոֆիկ Վելիևի[132] հետ հարցազրույցից որոշ դրվագներ, որտեղ նա ընդունում է, որ դասագրքում «ճշմարտությունը» ներկայացնելու համար օգտագործել է բացասական երանգ ունեցող արտահայտություններ: **«Այդպիսի բառերը,-** ասում է Վելիևը,- **հայերի մասին ճշմարիտ պատկերացում են ստեղծում: Եթե ես նրանց չներկայացնեի այդպես, ապա ստիպված կլինեի**

---

[131] Տե՛ս **Выдержки из «Методического пособия по патриотическому воспитанию детей дошкольного и школьного возраста» и «Методического пособия по воспитанию детей в патриотическом духе»** (2012), http://azerichild.info/books_02.html

[132] Բաքվի պետական համալսարանի սլավոնական երկրների պատմության ամբիոնի վարիչն է:

խեղաթյուրել պատմությունը»[133]: Հրապարակման մեջ նշվում է նաև, որ Վելիևի «լեզվին» հարիր արտահայտություններ օգտագործվում են նաև 11-րդ դասարանի դասագրքում, որն ընդգրկում է արցախյան պատերազմի շրջանը և որտեղ հայկական զորքերն անվանվում են ֆաշիստական: Ադրբեջանի կրթության նախարարության ուսումնական ձեռնարկների և հրատարակությունների բաժնի վարիչ Ֆաիկ Շահբազլիի հավաստմամբ, պատմության դասագրքերի համար միակ պահանջը եղել է այն, որ տեքստում վիրավորական արտահայտություններ չլինեն, դասագրքերը պետք է նպաստեն ոչ թե ատելության, այլ ժողովրդավարության ու հանդուրժողականության ձևավորմանը[134]: Անշուշտ, դրվատանքի արժանի է ադրբեջանցի պաշտոնյան, երբ խոսում է հանդուրժողականություն սերմանող դասագրքերի անհրաժեշտության մասին: Ավելին, նրա խոսքերը կարծես բխում են Ադրբեջանի Հանրապետության ընդհանուր կրթության հայեցակարգից: Վերջինում նշված է, որ հանրակրթական հաստատության շրջանավարտն այն մարդ է, որն ի թիվս այլ որակների՝ **«դրսևորում է հանդուրժողական, նրբազգաց և արդար վերաբերմունք մարդկանց, ազգային ավանդույթների և սովորույթների հանդեպ»**[135]: Ավելին, միջնակարգ կրթությանը նվիրված բաժնում նպատակ է սահմանված՝ սովորողների մոտ **«...հարգալից և հանդուրժողական վերաբերմունք սերմանել համամարդկային արժեքների, մարդկանց իրավունքների և ազատությունների հանդեպ»**[136]: Փաստաթղթային այս ձևակերպումները պետք է արժեվորել, սակայն եթե հաշվի առնենք ադրբեջանական իրողությունները՝ ստիպված պետք է փաստենք, որ այդ փաստաթուղթն ունի դեկլարատիվ բնույթ: Պատահական չէ, որ Ֆ. Շահբազլին, անդրադառնալով պատմության ադրբեջանական դասագրքերում հայերի առնչությամբ «ահաբեկիչ», «ավազակ», «ֆաշիստ», «թշնամի» բառերի գործածմանը, կարծես արդարանում է՝ ասելով, որ դրանք չեն խախտում իր նշած սկզբունքը: **«Այդ բառերը,-** ասում է Շահբազլին,- **արտացոլում են փաստերը: Դրանք**

[133] Մեջբ. ըստ **Ա. Барсегян, Ш. Султанова,** Уроки истории в Армении и Азербайджане (2012), http://iwpr.net/ru/report-news/уроки-истории-в-армении-и-азербайджане

[134] Տես նույն տեղում:

[135] **Концепция (национальный куррикулум) общего образования Азербайджанской Республики** (2013), http://www.edu.gov.az/view.php?lang=ru&menu=78

[136] Նույն տեղում:

հայերի հանդեպ անհանդուրժողականություն չեն առաջացնում, չեն ակնարկում այն մասին, որ հայ ժողովուրդն իր ամբողջության մեջ կատարել է հանցագործություններ: Դրանք պարզապես ցույց են տալիս հանցագործություն կատարողների ազգությունը»[137]:

Այս պարագայում առաջանում են մի շարք հարցեր. կա՞ն արդյոք այնպիսի հետազոտություններ, որոնք ապացուցում են, որ այդօրինակ բառերի գործածումը չի հանգեցնում հայերի հանդեպ անհանդուրժողականության ձևավորման, ինչո՞վ է պայմանավորված «հանցագործների» ազգությունը անընդհատ շեշտելու անհրաժեշտությունը, ինչո՞ւ է «հանցագործի» ազգության հիշատակումը հաճախ ուղեկցվում կամ փոխարինվում ազգության շեշտմամբ, ինչո՞ւ Ադրբեջանում շրջանառվող կրթական գրականության մեջ բացասական երևույթները ներկայացվում են հայի միջոցով, բազմաթիվ հեքիաթներում բացասական կերպարները հայեր են: Ավելին, հանդուրժողական և մարդասեր սերունդ դաստիարակող ադրբեջանցի պաշտոնյան ինչպե՞ս պետք է բացատրի, օրինակ, Ադրբեջանի միջնակարգ դպրոցներում արտադասարանային ընթերցանության համար երաշխավորված Է. Զեյնալլիի **«Հայը»** պատմվածքը, որտեղ հեղինակը մերթ հիշողությունը կորցրած և թուրքի ինքնագիտակցություն ունեցող հայի, մերթ էլ էթնիկ թուրքերի շուրթերով պիտակավորում է համայն հայությունը, բայց ոչ հանցագործին՝ հիշատակելով նրա ազգությունը:

Դժվար է պատկերացնել ադրբեջանցի երեխաների հումանիզմն ու հանդուրժողականությունը, եթե նրանք դաստիարակվում են նշված պատմվածքում տեղ գտած **«հայերը ստոր են և նրանց բոլորին պետք է ոչնչացնել», «հայերին պետք է ջնջել երկրի երեսից»** արտահայտություններով, հայերին տրվող **«շուն», «արնախում», «դաժան», «գողի արյուն ունեցող», «կեղտոտ արյուն ունեցող»** և այլ պիտակների[138] ոգով: Դժվար է պատկերացնել նաև այն դեպքում, երբ, ինչպես փաստում է ադրբեջանցի լրագրողուհի Ուլքեր Իսմայիլգիզին, ադրբեջանական դասագրքերից հանվել են չարի նկատմամբ բարու հաղթանակի մասին պատմող ավանդական հեքիաթները[139], սովորական մանկական սյուժեները և փո-

[137] Մեջբ. ըստ **Ա. Барсегян, Ш. Султанова,** Уроки истории в Армении и Азербайджане (2012), http://iwpr.net/ru/report-news/уроки-истории-в-армении-и-азербайджане

[138] Տե՛ս **Э. Зейналлы,** Армянин, http://azerichild.info/literature_23.html

[139] Օրինակ՝ պրոֆեսոր Գ. Նամազովի համոզմամբ՝ «երեխաների համար ժամանակակից

խարենը մտցվել են ազգային տոները, Խոջալուի ողբերգության և Մուբարիզի մասին պատմվածքները: **«Մենք,**- գրում է Իսմայիլգիզին,- **հայերի հանդեպ ատելության հիմքի վրա դաստիարակելով մի ամբողջ սերունդ՝ չենք կարող մեր ողջ գիտակցական կյանքը կառուցել թշնամուն ուղղված հակաքարոզչության վրա: Երբ վաղը խաղաղություն հաստատվի** *(հաշվի առնելով պատմությունը՝ այդ հեռանկարը ավելի քան հավանական են համարում)*՝ **այդպիսի ջանասիրությամբ էլ ստիպված ենք լինելու հանգցնել մեր ատելության զգացումը»**[140]:

Իհարկե, ժողովրդավարական զարգացման ճանապարհ անցնելու հայտ ներկայացրած ցանկացած հասարակության կամ պետության մեջ կարող են գոյություն ունենալ մարգինալ խմբեր, որոնք հանդես են գալիս ծայրահեղականության, այլատյացության, ռասայական ու ազգային աստիճանակարգերի պաշտպանության դիրքերից: Սակայն պարադոքսալն այն է, որ ԵԽ անդամ Ադրբեջանը, որը պատեհ առիթը բաց չի թողնում իր հանդուրժողական և ժողովրդավարական լինելը բարձրաձայնելու համար՝ իրականում մարգինալացնում է այն խմբերին, որոնց համար էթնիկական անհանդուրժողականությունը, ստիգմատիզացիան, այլատյացության հիմքով ձևավորված հայրենասիրությունն անընդունելի են: Պատահական չէ, որ սեփական հանդուրժողականությունը «փաստելու» համար պաշտոնական Բաքուն շրջանառության մեջ դրեց Ադրբեջանում 30000 հայերի գոյության թեզը *(իհարկե, արտաքին լսարանի համար)*, սակայն ներքին

գրական ստեղծագործության նմուշ հանդիսացող», «հայրենասիրություն, անկեղծություն, ազնվություն և հոգու մաքրություն» դաստիարակող «Իլհամի և Ֆարիզայի պատմությունը» հեքիաթում ընթերցողը ավանդական հեքիաթներին բնորոշ բարու և չարի պայքարի փոխարեն կարող է ծանոթանալ ադրբեջանական քարոզչամեքենայի թեզերի հիման վրա կառուցված սյուժեի: Բանն այն է, որ այստեղ ռուսները և հայերը հանդես են գալիս թալանչիների և արյունարբու էակների կարգավիճակում՝ դաժանաբար սպանելով ծերերին և երեխաներին, թալանելով և ավերելով հանդիպած ամեն բան: Ավելին, հայի ստորությունը և դաժանությունը դրսևորվում է նաև այն ժամանակ, երբ գլխավոր հերոսի ընկերները (նրանցից մեկը հայ է) սրիկայաբար և դաժանաբար սպանում են Իլհամին՝ չարաշահելով նրա վստահությունը: Ադրբեջանի կրթության նախարարության տրամաբանությամբ՝ ազգային ատելության «չտանող», «հանդուրժողականություն և հայրենասիրություն սերմանող» այս հեքիաթը ներառված է մանկավարժական բուհերի ուսանողների ուսումնական ձեռնարկներում և դպրոցական ծրագրում (տես **Г.Ибрагимова,** История Ильхама и Фаризы (2012), http://azerichild.info/tales_03.html):

[140] **У. Исмаилгызы,** Почему пропал “Мальчик на белой лошади”? (2012), http://azerichild.info/books_04.html

լսարանի համար շարունակում է լեգիտիմացնել թշնամի հայի կերպարը: Այսինքն՝ էթնիկական փոքրամասնությունների հետ կապված խնդիրների մասով պաշտոնական Բաքուն արտաքին լսարանին ներկայանում է առավելապես **քաղաքացիականի,** մինչդեռ ներքին լսարանին՝ **էթնիկականի առաջնահերթության** դիրքերից: Մի կողմից խոսում է էթնիկ փոքրամասնությունների հանդեպ հոգածության և անխտրական վերաբերմունքի մասին, իսկ մյուս կողմից թշնամի է հռչակում էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչներից մեկին՝ հայերին *(հենց Ադրբեջանի նախագահ Ի. Ալիևը 2012թ. համաշխարհային հայությանը հրապարակավ թշնամի հռչակեց)*: Իրողություն, որը վկայում է այն մասին, որ Ադրբեջանի քարոզչամեքենան ներքին և արտաքին լսարանների մակարդակում քաղաքացիականի և էթնիկականի արհեստական տարբերակման քաղաքականությամբ վաղ թե ուշ լուրջ խնդիրների առջև է կանգնելու: Չնայած Ադրբեջանն իր «նավթային» դիվանագիտությամբ միջազգային մակարդակում այսօր կարողանում է որոշակիորեն խուսափել արժանի քննադատությունից, սակայն դա չի նշանակում, թե հայկական կողմը պետք է դադարեցնի Ադրբեջանի ռասիստական քարոզչության մասին բարձրաձայնումները: Դա հնարավորություն կտա մի կողմից խնդիրը միջազգային հարթակ տեղափոխել, տարբեր կառույցների ու անհատների շրջանակներում դիսկուրսի նախադրյալներ ստեղծել և, ինչու ոչ, մյուս կողմից հարվածել ադրբեջանական իշխանությունների «գրպանին»:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Հայտնի է, որ արցախյան հակամարտության խաղաղ կարգավորմանը միտված բանակցային գործընթացում առ այսօր լուրջ հաջողություններ չեն արձանագրվել: Այս իրողությունը պայմանավորված է ինչպես բանակցող կողմերի դիրքորոշումների ընդգծված անհամապատասխանությամբ, այնպես էլ նրանով, որ կողմերից մեկը՝ Ադրբեջանը, շուրջ երկու տասնամյակ աչքի է ընկնում ապակառուցողական քայլերով: Բանն այն է, որ ադրբեջանական կողմը խաղաղ բանակցություններին մասնակցելուն զուգահեռ և սեփական ժողովրդին խաղաղության նախապատրաստելու փոխարեն՝ հետևողականորեն իրագործում է հայատյաց պետական քաղաքականություն, ուժեղացնում է ռազմական հռետորությունը: Իսկ դա վկայում է այն մասին, որ բանակցային գործընթացում Ադրբեջանի ներգրավվածությունն ունի նաև իմիտացիոն բնույթ, քանի որ բանակցողի «խաղաղասիրությունը» չի կարող ուղեկցվել բաղձալի խաղաղությունը վտանգող այլատյաց քաղաքականությանը հավատարմությամբ: Կասկածից վեր է, որ Ադրբեջանում հընթացս խորացող հայատյացությունը լուրջ մարտահրավեր է հայկական պետությունների, համայն հայության և, ինչու ոչ, մարդասիրության, այլասիրության արժեքները հարազատած և այլահարգ պետությունների, խմբերի համար: Իրողություն, որի հանդեպ քննադատական լռակյացությունը մի կողմից կարող է առավել անկաշկանդ դարձնել Ադրբեջանի այլատյաց գործունեությունը, իսկ մյուս կողմից՝ վտանգել փաստացի անկախ Արցախի և ՀՀ քաղաքացիների հետագա գոյությունը, ինքնիշխան պետություններում նրանց ինքնադրսևորման և ստեղծագործական ինքնաիրացման իրավունքը: Իսկ այս ամենը վկայում է այն մասին, որ ներքին և արտաքին լսարանների մակարդակներում Ադրբեջանի հակահայկական քաղաքականությունը կարիք ունի **ոչ միայն սոսկ փաստման, այլև՝ վերլուծման և իմաստավորման:** Դա հնարավորություն կտա Ադրբեջանի տեղեկատվական ահաբեկչության դեմ համակարգված և ծրագրային պայքար մղել կամ հայկական պետություններին պարտադրած տեղեկատվական պատերազմում պարտություններից խուսափել:

Վերը նշված հանգամանքների գիտակցումով պայմանավորված՝ սույն

ուսումնասիրության մեջ հատուկ վերլուծության նյութ է դարձել Ադրբեջանի հակահայկական տեղեկատվական համակարգը, որը հիմնականում դիտարկվել է **ծագումնաբանական** և **բովանդակային** մակարդակներում: Նշված մակարդակներից առաջինում վերլուծվել են Ադրբեջանի հայատյաց քաղաքականության նախադրյալները: Այսինքն՝ այն գործոնները, որոնք նպաստել են Ադրբեջանում հայատյացության տարածմանն ու արմատավորմանը և պայմանավորել են ադրբեջանական իշխանությունների համար հայատյաց քաղաքական կուրսի որդեգրման անհրաժեշտությունը: Ինչ վերաբերում է բովանդակային մակարդակին, ապա այստեղ քննվում և ցույց են տրվում հայատյացության առարկայական դրսևորումները, դրանց տոտալությունը: Բացի այդ, նորովի դասակարգվում և վերլուծվում են ադրբեջանական քարոզչամեքենայի հակահայկական թեզերը, վերհանվում է այդ թեզերի համակարգի կառուցման տրամաբանությունը:

Ամփոփելով սույն հետազոտության արդյունքները՝ կառանձնացնեինք հետևյալ հիմնական եզրակացությունները.

1. Ադրբեջանում հայատյացությունը պետականորեն իրագործվող քաղաքական կուրս է: Այն չի կարելի դիտարկել սոսկ որպես այս կամ այն մարգինալ խմբի գաղափարախոսության բնութագրական գիծ: Ավելին, Ադրբեջանում մարգինալ են դառնում կամ մարգինալացման են ենթակա այն խմբերը, անհատները, որոնք չենք առաջնորդվում իշխանությունների հայատյաց քաղաքականության և քարոզչական թեզերի տրամաբանությամբ:

2. Գոյություն ունեն հստակ ցուցիչներ, որոնք վկայում են այն մասին, որ Ադրբեջանի Հանրապետությունը իրականացնում է հետևողական և ծրագրված հայատյաց պետական քաղաքականություն: Այդ ցուցիչներից են. ա/ Ադրբեջանի նախագահի և բազմաթիվ պետական պաշտոնյաների, քաղաքական գործիչների ռասիստական, հայատյացություն սերմանող կամ խրախուսող պաշտոնական հայտարարությունները, բ/ Ադրբեջանի կրթության նախարարության կողմից երաշխավորված, հաստատված և կրթական հաստատություններում շրջանառության մեջ դրված ուսումնամեթոդական ձեռնարկները, դասագրքերը, հեքիաթները, կրթական ծրագրերը, գ/ Ադրբեջանում օրենսդրական որոշ նախաձեռնությունների բնույթը և միջազգային տարբեր կառույցներ կամ կազմակերպություններ

ներկայացնող **հայերին** մուտքի վիզա չտրամադրելու կամ երկրից արտաքսելու մասին պատկան կառույցների որոշումները, դ/ Հասարակական տարբեր կազմակերպությունների և հիմնադրամների գործունեությունը, որոնք ունենալով պետական հովանավորություն կամ աջակցություն՝ մշակութային, գիտական և այլաբնույթ նպատակների հռչակման քողի ներքո փորձում են միջազգային հարթակ տեղափոխել հակահայկականությունը, ե/ Ազատության ընդգծված «դեֆիցիտ» ունեցող *(փաստում են միջազգային կառույցներն ու հեղինակավոր կազմակերպությունները)* ադրբեջանական ՁԼՄ-ներում հայկական թեմատիկայով հրապարակումների գերառատությունն ու դրանց չափավոր և ծայրահեղ հակահայկական բնույթը և այլն:

Միակողմանի և թերի են բոլոր այն մոտեցումները, որոնք Ադրբեջանում հայատյացության գոյության փաստը պայմանավորում են սոսկ քաղաքական կամ, ավելի ստույգ, ալիևյան կլանի քաղաքական ինքնավերարտադրման ցանկության գործոնով: Ադրբեջանում հայատյացության լեգիտիմացումը պայմանավորված է **սոցիալ-հոգեբանական, քաղաքական** և **էթնոմշակութային** նախադրյալներով: Իսկ սա նշանակում է, որ Ադրբեջանում հայատյացության վերացումը ենթադրում է ոչ միայն և գուցե թե ոչ այնքան քաղաքական վերնախավի փոփոխություն, որքան արժեքային հեղափոխություն:

4. Ռեսենտիմենտ երևույթի վերլուծության համատեքստում հիմնավորվում է, որ ադրբեջանական իրականության մեջ հայատյացության տարածումն ու արմատավորումը խարսխված են նաև սոցիալ-հոգեբանական պատվանդանի վրա: Արցախյան պատերազմում կրած պարտությունից հետո ունենալով վրեժ լուծելու կամ ազգային ես-կոնցեպցիայի դիրքերից «արդարությունը» հաստատելու ցանկություն՝ Ադրբեջանը, այնուամենայնիվ, շուրջ երկու տասնամյակ **շարունակում է հետաձգել վրեժը և միայն բարձրաձայնում է այն կյանքի կոչելու պատրաստակամության մասին:** Իսկ այս հանգամանքը լուրջ նախադրյալ է ադրբեջանական իրականության մեջ ռեսենտիմենտի ձևավորման կամ խորացման համար, քանի որ ռեսենտիմենտը **վրեժի անկարողությունն է:** Այսինքն՝ ունենալով վրեժի ցանկություն և բախվելով այն կյանքի կոչելու անկարողությանը՝ ադրբեջանցին հոգեբանական մակարդակում աստիճանաբար դառնում է ռեսեն-

տիմենտալ, սեփական անհաջողությունների պատճառը փնտրում է ոչ թե իր ներսում, այլ արտաքին աշխարհում: Այս պարագայում ձևավորվում է այլատյացության սոցիալ-հոգեբանական պլատֆորմ, որի շահարկմամբ էլ Ադրբեջանի իշխանությունները կառուցում են իրենց հայատյաց տեղեկատվական համակարգը՝ նպատակ ունենալով արդարացնել իրենց իշխանավարման թերություններն ու ձախողումները և հիմնավորել հետագա իշխանավարման նպատակահարմարությունը: Ավելին, Ադրբեջանի հայատյաց տեղեկատվական համակարգի ձևավորմանն ու զարգացմանը նպաստ բերած նախադրյալների շարքին պետք է դասել նաև միջազգային հանրության և, մասնավորապես, Արևմուտքի «էներգետիկ հանդուրժողականությունը»: Իսկ սա վկայում է այն մասին, որ եթե սոցիալ-հոգեբանական նախադրյալներն ունեն ներքին պայմանավորվածություն, ապա քաղաքական նախադրյալները՝ ներքին և արտաքին:

5. Ադրբեջանում հայատյացությունն ունի նաև էթնոմշակութային հիմքեր, որոնք առավել դյուրին են դարձնում հայատյացության արմատավորման իշխանական ջանքերը: Բանն այն է, որ ադրբեջանական կամ օղուզական էպոսում լեգիտիմացված է հայասպանությունը, այն դիտվում է քաջության, պատվախնդրության և հերոսության դրսևորում: Եվ քանի որ էպոսն այն ծնող ժողովրդի ինքնության բացահայտման աղբյուրներից է, ապա հասկանալի է դառնում, որ Ադրբեջանի իշխանությունները անկախության տարիները չեն օգտագործել միջազգայնորեն ստանձնած պարտավորությունները կյանքի կոչելու ուղղությամբ: Այսինքն՝ այլահարգ և հանդուրժող սերունդ ձևավորելու փոխարեն հետևողականորեն նպաստել են էպոսի տրամաբանությամբ առաջնորդվելու գաղափարի արմատավորմանը: Դրա վառ ապացույցներից է Ադրբեջանի իշխանությունների կողմից շարքային, սակայն առանձնակի դաժանությամբ աչքի ընկած մարդասպան Ռամիլ Սաֆարովի հերոսացումը, որը կարելի է դիտարկել որպես հայասպանության պետական հովանավորության արտահայտություն:

6. Ադրբեջանում Ռամիլ Սաֆարովի հերոսացումը չի կարելի բացատրել սոսկ քաղաքական գործոններով: Եթե Ադրբեջանի իշխանությունների կողմից Սաֆարովին հերոսի կոչում շնորհելն ուներ քաղաքական բացատրություն, ապա նրան որպես հերոս ընկալելը՝ էթնոհոգեբանական և

մշակութային: Բանն այն է, որ հերոս կոչում շատերին կարող են շնորհել, սակայն պարտադիր չէ, որ նրանք ընկալվեն կամ ընդունվեն որպես հերոս: Մինչդեռ ադրբեջանական հասարակության կողմից Սաֆարովի հերոսացումը խոսուն վկայությունն է այն բանի, որ այդ հասարակությունը այսօր էլ ապրում է ադրբեջանական (օղուզական) էպոսի արժեքների տրամաբանությամբ, քանզի Սաֆարովի «հերոսությունը» ոչ այլ ինչ էր, եթե ոչ այդ էպոսի հերոսների սխրագործությունների արդիական «թարգմանությունը»:

7. Ադրբեջանի տեղեկատվական համակարգի բնութագրումը հարկ է իրականացնել հակահայկականություն և հայատյացություն եզրերի տարբերակման համատեքստում: Բանն այն է, որ կախված ներքին և արտաքին լարանների գործոնից՝ ադրբեջանական քարոզչամեքենան հանդես է գալիս հակահայկական շեշտադրումների տարբերությամբ:

8. Հայատյացությունը դիտարկելով որպես հակահայկականության մասնավոր և առավել ծայրահեղ դրսևորում՝ ցույց է տրվում, որ Ադրբեջանն արտաքին լարանի մակարդակում *(նկատի ունենք միջազգային հանրությունը, միջազգային կառույցները)* հիմնականում հանդես է գալիս չափավոր, իսկ ներքին լարանում՝ ծայրահեղ հակահայկականության կամ, ավելի ստույգ, հայատյացության դիրքերից: Եթե արտաքին մակարդակում Ադրբեջանը շրջանառության մեջ է դնում ՀՀ իշխանությունների ոչ կառուցողական և միջազգային նորմերը խախտող քաղաքականության, ՀՀ ագրեսիայի, «ցեղասպանություն» իրագործած «անջատողական» հայերի մասին թեզերը, ապա ներքին մակարդակում այս թեզերը որոշակիորեն ծայրահեղացվում են, առանցքային թշնամի է համարվում հայը, իսկ պայքարի թիրախ՝ ամենայն հայկականն ու հայամետ ցանկացած երևույթ կամ նախաձեռնություն: Բացի այդ, արտաքին լարանում հիմնականում շեշտադրվում են ինստիտուցիոնալ-պետական գործոնները, իսկ ներքինում՝ էթնոմշակութային և էթնոհոգեբանական:

9. Հայատյացության ադրբեջանական տարբերակում բացահայտ կամ քողարկված կերպով ապաբարոյականացվում, ապահումանիզացվում է հայկական ինքնությունը կամ հայի կերպարը, երբեմն էլ կասկածի տակ է դրվում հայ ժողովրդի գոյության իրավունքը:

10. Ադրբեջանական քարոզչամեքենան ունի հակահայկական թեզերի

լավ մշակված համակարգ, որտեղ թեզերն ունեն հասցեագրման հստակ տրամաբանություն և աչքի են ընկնում մանիպուլյատիվ ներուժով: Ադրբեջանի հակահայկական տեղեկատվական համակարգի բնորոշ գծերի և յուրակերպությունների վերհանման նպատակով իրականացվում է թեզերի նորովի դասակարգում՝ վեց հիմքերի համաձայն: Դրանք են՝

ա/ **ըստ կարևորության աստիճանի կամ առանցքայնության** – կոնցեպտուալ և փոխակերպվող կամ, այլ կերպ, ռազմավարական և մարտավարական թեզեր

բ/ **ըստ նպատակի** – պառակտող և միավորող թեզեր, վարկաբեկող և գովաբանող թեզեր

գ/ **ըստ տեղեկատվական բովանդակության հասցեատերերի** – ներքին և արտաքին լսարաններին հասցեագրված թեզեր

դ/ **ըստ տեղեկատվական բովանդակության բնագավառների** – պատմություն, մշակույթ, սոցիալ-տնտեսական կյանք, իրավունք, քաղաքականություն, քաղաքակրթական դաշտ, զինված ուժեր և այլն

ե/ **ըստ ծագման աղբյուրի** – ներքին և արտաքին ծագման թեզեր

զ/ **ըստ հիմնավորման եղանակի** – կորեսպոնդենտիվ և կոհերենտ:

11. Ադրբեջանական քարոզչական թեզերը վերը նշված դասակարգման հիմքով վերլուծելիս ցույց է տրվում, որ դրանք մեկը մյուսի հետ սերտորեն կապված են, յուրահատուկ քարոզչական «սարդոստայն» են:

12. Ադրբեջանում հայատյացությունը հետևողականորեն արմատավորվում է նաև պատմամշակութային գործոնների համատեքստում: Այս առումով ադրբեջանական քարոզչամեքենան շարունակում է հայ և ողջ Արևելյան Անդրկովկասի ավտոխտոն այլ ժողովուրդների պատմության ու մշակույթի կեղծման ավանդույթը, որի հիմքերը դրվել էին դեռևս ԽՍՀՄ տարիներին՝ Բունիաթովի «պատմագիտական» դպրոցի կողմից: Չնայած ներկայիս Ադրբեջանում տիրապետող է ադրբեջանցիների էթնոգենեզի պանթուրքիստական, այլ ոչ «բունիաթովյան» հայեցակարգը, այնուամենայնիվ հակահայկականության համատեքստում դրանք գտնվում են ներդաշնակ միասնության մեջ: Երկու հայեցակարգերում էլ այս կամ այն տարբերությամբ փաստվում է հայերի եկվորության թեզը, տարածաշրջանում հայկական մշակույթի պատմական հետքերի բացակայությունը, ինչը, ըստ էության, «հիմնավորում» էր Արցախի նկատմամբ հայերի պահան-

ջատիրության պատմական հիմքերի բացակայության գաղափարը:

13. Ադրբեջանի ԽՍՀ-ում Բունիաթովի և պանթուրքիստների հայեցակարգերի համաժամանակյա գոյությունը վկայում էր այն մասին, որ դրանք ոչ այնքան միմյանց, որքան միասնական ճակատով հայ պատմագիտական մտքի դեմ պայքարելու խնդիր ունեին: Այսինքն՝ **այդ հայեցակարգերի միաժամանակյա գոյությունը և համառ պայքարն ունեին նաև որոշակի թեզային ինվարիանտ արմատավորելու նպատակ:**

14. Ադրբեջանում հայ ժողովրդի պատմության և մշակույթի կեղծումն իրականացվում է տարբեր տեխնոլոգիաներով: Դրանց շարքին է պատկանում **«պատմության մեջ ուղղագրական սխալների շտկման»** կամ պատմագիտական աղբյուրներում հայերի և Հայաստանի մասին հիշատակումների վերացման «խմբագրական» ավանդույթը: Բացի այդ, ադրբեջանական կողմը սեփական թեզերի հիմնավորման ժամանակ հաճախ հանդես է գալիս հակասող դեպքերը հաշվի չառնելու, պատմական փաստերն անտեսելու, ինչպես նաև էթնիկականի և կրոնականի նույնացման համատեքստում պատմական փաստերը կեղծելու կամ կամայական մեկնաբանելու դիրքերից:

15. Ադրբեջանի կրթական համակարգը հայատյացության սերմանման ու տարածման, ինչպես նաև Ադրբեջանի իշխանությունների հանցավոր գործունեության և ստանձնած միջազգային պարտավորությունների անտեսման հերթական ապացույցն է: Ադրբեջանի կրթության նախարարության կողմից երաշխավորված և հրատարակված դասագրքերի, ուսումնաօժանդակ նյութերի բովանդակությունը խոսուն վկայությունն է այն բանի, որ նացիստական Գերմանիայի իշխանությունների հակահրեականությունն իր արժանի հետևորդներն ունի Ադրբեջանում, սակայն հակահայկականության տեսքով: Ադրբեջանի կրթական հաստատություններում շրջանառվող նյութերում հայերը հաճախ բնութագրվում են այնպես, ինչպես հրեաները նացիստական Գերմանիայում:

16. Ադրբեջանի կրթության նախարարության կողմից պաշտոնապես ընդունված Ընդհանուր կրթության հայեցակարգը, Երեխայի իրավունքների մասին Ադրբեջանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածը և իրականացվող կրթական քաղաքականությունը գտնվում են անհամապատասխանության մեջ: Այսինքն՝ հաշվի առնելով կրթադաստիարակչական

նյութերում հայատյացության բացահայտ և անպատիժ դրևսորումներն ու կոչերը՝ վստահաբար պետք է փաստել, որ վերը նշված իրավական նորմերը կամ փաստաթղթերն Ադրբեջանում ունեն սոսկ դեկլարատիվ բնույթ: Կամ էլ պետք է ընդունենք, որ հանդուրժողականության, մարդասիրության, համամարդկային արժեքների ադրբեջանական ըմբռնումը որակապես տարբերվում է քաղաքակիրթ աշխարհի ըմբռնումից:

Հանրագումարի բերելով ողջ վերոշարադրյալը՝ ևս մեկ անգամ պետք է փաստենք, որ Ադրբեջանի սանձազերծած տեղեկատվական պատերազմը լուրջ սպառնալիք է ոչ միայն հայկական պետությունների և հայության, այլև Ադրբեջանի քաղաքացիների համար: Բանն այն է, որ խորացնելով հայատյացությունը սեփական երկրում՝ Ադրբեջանի իշխանությունները ձևավորում են այնպիսի սերունդ կամ մարդկանց, որոնք իրենց գաղափարներով և աշխարհայացքով չեն կարող կենսունակ գոյություն ապահովել համագործակցության տրամաբանությամբ առաջնորդվող ժամանակակից աշխարհում: Իսկ սա նշանակում է, որ տեղեկատվական պատերազմում հաջողություն արձանագրելու հրամայականը հայկական կողմի համար կարևոր է ոչ միայն սեփական անվտանգության պահպանման, այլև Ադրբեջանում շրջանառվող հակահայկական և այլատիպ դիցերի կազմաքանդման և համագործակցության հեռանկարներ կերտելու տեսանկյունից:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Ադրբեջանի ԱԳՆ-ն հաստատել է, որ «Bloomberg»-ի հայազգի ֆոտոթղթակցին Բաքվից արտաքսել են Ստամբուլ (2012), http://www.panorama.am/am/society/2011/06/29/bloomberg/
2. Ադրբեջանի հակահայկական տեղեկատվական համակարգը, Եր., Նորավանք, 2009:
3. Ադրբեջանի պետական բյուջեի երեք քառորդը սնվում է նավթային ոլորտից, (2013), http://times.am/?l=am&p=4456
4. Աթանեսյան Ա., Հեյդար Ալիևի հիմնադրամի գործունեությունը տեղեկատվական ոլորտում (2012), http://www.noravank.am/arm/articles/security/detail.php?ELEMENT_ID=406
5. Ասատրյան Հ., Հատընտիր, Եր., 2004:
6. Աքրամ Այլիսլի, Երբ ես տեսա, թե ինչպես է արհեստականորեն ատելություն սերմանվում հայերի և ադրբեջանցիների միջև, որոշեցի տպագրել իմ վեպը, (2013), http://www.anews.am/2012-04-18-09-52-28/gitutyun/1441-news.html
7. Բրուտեան Գ., Ալեքսանդր Պուշկինի «Տազիտ» քերթուածը և դրա մէջ հայերին վերաբերող հատուածի վերլուծութիինը (2012), http://www.anunner.com/grigor.brutyan
8. Բունիաթյան Հ., Եվրախորհրդարանը քննադատում է խոսքի ազատության վիճակը Ադրբեջանում (2012), http://www.azatutyun.am/content/article/1906942.html
9. Գևորգյան Լ., Ադրբեջանի կողմից Ռամիլ Սաֆարովի ազատ արձակման իրավական գնահատական (2012), http://armenianlegal.info/archives/1037#more-1037
10. ԵԽԽՎ նախագահը անընդունելի և սկանդալային է համարում Ադրբեջանում Ռամիլ Սաֆարովի հերոսացումը (2012), http://panorama.am/am/politics/2012/10/01/mignon/
11. Եվրախորհրդարանի բանաձևը՝ Սաֆարովի դեպքի վերաբերյալ (2012), http://www.panorama.am/am/politics/2012/09/14/report/
12. Կոնֆլիկտ: Վերլուծությունից մինչև միջամտություն //Խմբագիրներ՝ Սանդրա

Չենդելին, Դանիել Դրաքման, Լարիսա Ֆաստ, Եր., Զանգակ-97, 2007:
13. Հայտնի դասականները՝ հայերի մասին (2012), http://armenian.irib.ir/home1/2011-11-13-03-58-57/item/23675
14. ՀՀ նախագահի՝ ուժի չկիրառման համաձայնագիր ստորագրելու առաջարկը հունից հանել է ադրբեջանական կողմին (2012), http://ar.newsarmenia.ru/arm1/20100323/42220168.html
15. Մանուսյան Ս., Ադրբեջանի հակահայ քարոզչության յուրահատուկ դրությունը, (2012), http://noravank.am/arm/articles/security/detail.php?ELEMENT_ID=5055
16. Մարտիրոսյան Ս., Ադրբեջանի քարոզչամեքենան. նոր միտումներ (2012), http://www.noravank.am/arm/articles/security/detail.php?ELEMENT_ID=4290
17. Մինասյան Ա., Եվրոպային խստության բացակայության մեջ չես մեղադրի (2012), http://panorama.am/am/politics/2012/09/14/european-rezolution/
18. Միրզոյան Հ., Էպոսը որպես տվյալ ժողովրդի ինքնության ուսումնասիրության աղբյուր (օղուզական էպոսի օրինակով), //«Հայոց ինքնության հարցեր», Եր., 2012:
19. Մովսիսյան Ս., Ադրբեջանական ՋԼՄ-ի կողմից կիրառվող տեղեկատվական գործողությունների տեխնոլոգիաները (2012), http://noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT_ID=2241
20. Մովսիսյան Ս., ՀՀ տեղեկատվական հակազդեցության հիմնական ուղղությունները (2012), http://noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT_ID=2237&sphrase_id=25069
21. Նալչաջյան Ա., Էթնիկական հոգեբանություն, Եր., 2001:
22. Նահապետյան Հ., Թուրք-ադրբեջանական կառույցների հակահայ գործունեությունը, Եր., «Նորավանք» ԳԿՀ, 2010:
23. Սարգսյան Ա., Փիլիսոփայականը և գաղափարախոսականը Գարեգին Նժդեհի տեսական ժառանգության մեջ, Եր., 2011:
24. Սերժ Սարգսյանը հորդորում է չայրել Հունգարիայի դրոշը (2013), http://news.am/arm/news/119601.html
25. Վերանյան Կ., Ադրբեջանը թվերով. վարկանիշային հետազոտությունների արդյունքները (2010), http://www.noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT_ID=5063:
26. Վերանյան Կ., «Տնտեսական ազատության ինդեքսը» 2012-2013թթ.. Վարկանիշային համեմատական վերլուծություն (2013), http://www.noravank.am/

arm/articles/detail.php?ELEMENT_ID=6944:
27. Վերանյան Կ., FREEDOM HOUSE. «Ազատության վարկանիշն աշխարհում» 2011-2012թթ. զեկույցները (2013), http://www.noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT_ID=6447):
28. Վրթանեսյան Կ., Հայ-ադրբեջանական հակամարտության քարոզչական թեզերը (2012), http://www.noravank.am/arm/articles/security/detail.php?ELEMENT_ID=2219
29. Փաշայան Ա., Թալիշական գործոնն Ադրբեջանում (2013), http://www.noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT_ID=410
30. Freedom House-ն Ադրբեջանում խոսքի ազատության ծանր իրավիճակի համար պատասխանատու է համարում կառավարությանը (2012), http://armenpress.am/arm/news/688871/
31. Аббасов И., «Национальная история» в средних учебных заведениях в контексте образа «исторического врага» (2012), http://www.ge.boell.org/downloads/Ilham_Abbasov.pdf
32. Абишева Ж., Этниеская "Я-концепция", Вестник практической психологии образования №1(18) январь—март 2009, с. 74-77.
33. Адамчевски П., История армянского терроризма в свете азербайджанских источников, //Международное сообщество и глобализация угроз безопасности: сборник научных докладов. В 2 ч. Ч. 2. Международное сообщество и национальные государства в поиске ответов на новые угрозы безопасности/ отв. ред. В. В. Грохотова, Б. Н. Ковалев, Е. А. Макарова; НовГУ имени Ярослава Мудрого. – Великий Новгород, 2008, с. 245-250.
34. Адибекян А., Азербайджанская пресса изобилует «неполиткорректными» определениями в адрес армян (2012), http://azerichild.info/analysis_experts_01.html
35. Азербайджан: свободе СМИ угрожает серьезная опасность (2012), http://www.hrw.org/ru/news/2012/05/03-0
36. Азербайджан не готов к войне в Нагорном Карабахе: иранский эксперт (2012), http://www.regnum.ru/news/1582231.html
37. Азербайджанские учебники продолжают парадное шествие (2012), http://azerichild.info/books.html
38. Алекперли Ф., Национальная идеология Азербайджана (2012), http://www.

kavkazweb.net/forum/index.php?showtopic=51036
39. Александров М., Новая историческая доктрина Азербайджана – угроза существованию армянской нации (2012), http://www.antituran.com/index.php/2009-03-03-20-53-15/19-2009-03-30-16-20-12/874-2011-09-11-16-07-59
40. Али Гасанов: Азербайджанские СМИ лидируют в мире (2012), http://www.contact.az/docs/2012/Want%20to%20Say/112200019043ru.htm
41. Амансарыев Б., Бессмертие мудрого старца (2013), http://turkolog.narod.ru/info/trkm-9.htm
42. Амелина Я., Талышский вопрос в современном Азербайджане (2013), http://www.centrasia.ru/newsA.php?st=1217577960
43. Арабская весна идет в Азербайджан? (2012), http://www.yerkramas.org/2012/03/15/arabskaya-vesna-idet-v-azerbajdzhan/
44. Армения нанесет военное поражение Азербайджану, если Баку развернет боевые действия (2013), http://www.newsarmenia.ru/exclusive/20120607/42676109.html
45. Асмолов К., Вождь и его культ или Песня о полководце Ким Ир Сене (2013), http://www.vesti.ru/doc.html?id=116236&tid=14650
46. Баксан Д., Следы сатаны на тайных тропах истории, гл. 6 (2002), http://balkaria.narod.ru/istoria/dbaksan/glava6.htm
47. Барсегян А., Ш. Султанова, Уроки истории в Армении и Азербайджане (2012), http://iwpr.net/ru/report-news/уроки-истории-в-армении-и-азербайджане
48. Беленький М., Оккупация Газы (2012), http://www.vz.ru/columns/2012/11/22/608242.html
49. Брайант Дж., Томпсон С., Основы воздействия СМИ, М., 2004.
50. Британские эксперты сравнили армии Армении и Азербайджана (2013), http://regnum.ru/news/1636726.html
51. Брутян Г., Очерк теории аргументации, Ер., 1992.
52. Бэкон Ф., Сочинения в 2 томах, т. 2, М., Мысль, 1978.
53. В Азербайджане будет принят новый закон об именах (2012), http://www.trend.az/news/society/1815552.html
54. В Азербайджане введен фашистский закон об именах и фамилиях нацменьшинств (2012), http://www.panorama.am/ru/society/2011/05/16/azerbayjan-name/
55. В Азербайджане Общественный совет по Карабаху осудил кампанию по героизации Рамиля Сафарова (2012), http://www.kavkaz-uzel.ru/articles/213250/

56. Возмущение и вопли со стороны Еревана – абсолютное лицемерие, /Интервью Day.Az с председателем Исламского Комитета России Гейдаром Джемалем (2012), http://news.day.az/politics/352707.html
57. Выдержки из «Методического пособия по патриотическому воспитанию детей дошкольного и школьного возраста» и «Методического пособия по воспитанию детей в патриотическом духе» (2012), http://azerichild.info/books_02.html
58. Выступления президента в связи с Карабахским конфликтом (2012), http://garabagh.net/content_179_ru.html
59. Гаджибеков У., Наше несчастье в умме (2012), http://azerichild.info/publicism_02.html
60. Геноцид в Ходжалы - одно из самых чудовищных преступлений XX века (2012), http://www.azeri.ru/az/karabakh/genocid_v_khojaly/):
61. Грузинский профессор: «Армяне поменяли мне фамилию: теперь я Алиев», // Интервью Vesti.Az с доктором исторических наук, профессором Сухумского государственного университета Гурамом Мархулия (2012), www.pееep.us/87b1dfa0
62. Грязный политический пиар по заказу, или Лишится ли BP операторства в нефтяном консорциуме в Азербайджане? (2012), http://www.1news.az/analytics/20121128120226251.html#page999
63. Гулиев З., Азербайджан после Гейдара Алиева, Regnum, М., 2011.
64. Гюнешли М., МАРксизм – МАРданизм (2012), http://azerichild.info/books_03.html
65. Дело Сафарова и Азербайджан: online-конференция Расула Гулиева (2012), http://www.iarex.ru/onlines/29037.html
66. Джемаль Г., Это попытка спровоцировать Азербайджан на резкий и незапланированный ответ (2012), http://news.day.az/politics/257409_print.html
67. Закон Азербайджанской Республики о правах ребенка (2012), http://www.crossna.narod.ru/lows/03/02.htm
68. Зафар Гулиев рассказал о попытке Алиева переписать историю, используя нефтедоллары (2012), http://analitika.at.ua/news/zafar_guliev_rasskazal_o_popytke_alieva_perepisat_istoriju_ispolzuja_neftedollary/2012-11-27-69959
69. Зейналлы Э., Армянин, http://azerichild.info/literature_23.html
70. Ибрагимли А., В 2013 году правительство Азербайджана по-прежнему будет щедро на содержание силовых структур (2012) http://vesti.az/news/133978/
71. Ибрагимова Г., История Ильхама и Фаризы (2012), http://azerichild.info/tales_03.

html
72. Исмаилов А., Армяне использовали липовые «документы Андояна» как инструкцию в Ходжалинской резне, //Понятие «Армения» - подмена тюркского «Эрмения», Из серии «Армянское удушье» (Статья XVIII) (2012), http://vesti.az/news/143955
73. Исмаилгызы У., Почему пропал «Мальчик на белой лошади»? (2012), http://azerichild.info/books_04.html
74. Исследование: СМИ и антиармянская пропаганда в Азербайджане привели к стигматизации личности армян в Баку (2012), http://www.panorama.am/ru/politics/2012/03/13/azerbaijan-armenia-propaganda/?sw
75. Кант И., Антропология с прагматической точки зрения //Сочинения в шести томах. М., «Мысль», 1966.-(Философ. наследие). Т. 6, 1966.
76. Концепция (национальный куррикулум) общего образования Азербайджанской Республики (2012), http://www.edu.gov.az/view.php?lang=ru&menu=78
77. Котанджян Г., Историографическая фальсификация становится острым «нелетальным оружием» нового поколения (2012), http://pda.regnum.ru/news/1365938.html
78. Котанджян Г., «Сумгаит в истории»: о научной необоснованности претензий Ильхама Алиева (2012), http://pda.regnum.ru/news/1433518.html:
79. "Книга моего деда Коркута". Огузский героический эпос. Перевод академика В.В. Бартольда, М.-Л, 1962.
80. Мамедова Ж., Абасов Н., Чеченские наемники воевали в Нагорном Карабахе (2012), http://www.echo.az/article.php?aid=40653)
81. Маслоу А., Мотивация и личность, // Перевод А.М.Татлыбаевой, СПб.: Евразия, 1999.
82. Монтескье Ш.Л., Персидские письма, М., Изд. Азбука, 2010.
83. Мурадян П., К освещению проблем истории и культуры Кавказской Албании и восточных провинций Армении, т. I. Е., 1991.
84. Наапетян А., Азербайджанские мифы об Армении (2013), http://regnum.ru/news/1644657.html
85. Налчаджян А., Национальная идеология и этнопсихология. Ереван, 1999.
86. Налчаджян К., Самопознание, самосознание и этническая мы–концепция (2012), http://www.ebiblioteka.lt/resursai/Uzsienio%20leidiniai/SGU/Vestnik_HumN/2006-10-

2/hum0610_2_38.pdf
87. Ницше Ф., Сочинения в 2-х томах, том 2, издательство «Мысль», М. 1990.
88. Обращение Президента Азербайджанской Республики Гейдара Алиева к народу по телевидению и радио в связи с новыми наступлениями и агрессией армянских вооруженных сил на территорию Азербайджана - 2 ноября 1993 года (2012), http://library.aliyev-heritage.org/ru/5416266.html
89. Освещение общей истории России и народов постсоветских стран в школьных учебниках истории новых независимых государств, М., 2009.
90. Почепцов Г., Информационно-политические технологии, М., 2003.
91. Приснится же такое. Азербайджанского писателя обвинили в симпатии к армянам (2013), http://lenta.ru/articles/2013/02/05/stonedream/
92. Речь Президента Азербайджана Ильхама Алиева в торжественном собрании, посвященное 60-летию Национальной Академии Наук, http://archive.president.az/print.php?item_id=20070810125435235&sec_id=11
93. Салаева А., Бюджет Азербайджана составляет 76% бюджета Южного Кавказа – ЦСИ (2013), http://www.1news.az/economy/20121218121718950.html
94. Севанский Р., Ложь как средство информационной борьбы, или как Азербайджан «подарил» Эриванскую губернию Армении (2012), http://novostink.ru/analytics/38271-lozh-kak-sredstvo-informacionnoy-borby-ili-kak-azerbaydzhan-podaril-erivanskuyu-guberniyu-armenii.html
95. Севдималиев Р., Международный терроризм и политико-правовые проблемы борьбы с ним, Баку, 2011.
96. СМИ начали охоту на директора Бакинской школы – армянку (2012), http://stopxenophobia.org/?p=2370
97. Томас Гольц: Оккупация Шуши – символ этнической чистки, проводимой Арменией (2013), http://aze.az/news_tomas_golc_okkupaciya_91795.html
98. Т. де Ваал, Черный сад (2012), http://news.bbc.co.uk/hi/russian/in_depth/newsid_4664000/4664621.stm
99. Три поколения азербайджанцев о Лачине и об армянах (2012), http://azerichild.info/mirror_15.html
100. Уголовный кодекс Азербайджанской Республики (2012), http://legislationline.org/ru/documents/action/popup/id/14108/preview
101. Шедевры деазгопов (2012), http://www.yerkramas.org/2010/03/16/shedevry-

deazgopov/
102. Шелер М., Ресентимент в структуре моралей (2012), http://www.max-scheler.spb.ru/content/view/86/37/
103. Шнирельман В., Албанский миф (2012), http://www.vehi.net/istoriya/armenia/albanskymif.html
104. Эксперт Freedom House: Власти Азербайджана нелегально контролируют Интернет (2012), http://www.contact.az/docs/2012/Interview/100200013243ru.htm
105. Эксперты - о мыслях Али Гасанова про свободу слова (2012), http://www.radioazadlyg.org/content/article/24539952.html
106. Элибегова А., Азербайджан и Армения в международных рейтингах (2012), http://www.regnum.ru/news/1515882.html
107. Юнусов А., Мифы и образы «врага» в исторической науке и учебниках по истории независимого Азербайджана (2012), http://www.amudarya.net/fileadmin/_amudarya/bs/ay.pdf
108. Язовицкий Е., Говорите правильно, Л., 1969.
109. ECRI обеспокоена судьбой этнических армян, живущих в Азербайджане (2012), http://stopxenophobia.org/?p=2366
110. Freedom House: Азербайджан остался несвободной страной (2012), http://www.contact.az/docs/2012/Politics/121300021356ru.htm
111. No Comments: Цитаты официальных лиц Азербайджана (2012), http://misinformative.info/?p=4212
112. 73% доходов бюджета Азербайджана формируется за счет нефти и газа (2012), http://www.regnum.ru/news/fd-abroad/polit/1593796.html#ixzz2DYDAmsfU
113. Azerbaijan: Concerns Regarding Freedom of the Media and Freedom of Expression (2012), http://www.hrw.org/news/2012/11/02/azerbaijan-concerns-regarding-freedom-media-and-freedom-expression
114. Azerbaijan: Shrinking Space for Media Freedom (2012), http://www.hrw.org/news/2012/11/02/azerbaijan-shrinking-space-media-freedom,
115. Goodman H., Azerbaijan (Human Rights) (2012), http://www.theyworkforyou.com/debates/?id=2012-12-20a.1098.0&s=speaker%3A11421#g1098.3

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն 3

ԳԼՈՒԽ 1: Ադրբեջանի հակահայկական տեղեկատվական քաղաքականության նախադրյալները

1. Ռեսենտիմենտը, ես-կոնցեպցիան և արտաքին թշնամու կերպարը. 12
2. Քաղաքական ժառանգականությունը և միջազգային հանդուրժողականությունը 30

3. Ռամիլ Սաֆարովի հերոսացումը հակահայկական քարոզչության նախադրյալների համատեքստում
3.1 Արևմուտքը և ադրբեջանահունգարական «սիրախաղը» 51
3.2 Սաֆարովի հերոսացումը և Ադրբեջանի «պյուռոսյան հաղթանակը» . . . 57
3.3 Ռամիլ Սաֆարով կամ ադրբեջանական էպոսն արդիականության համատեքստում 65

ԳԼՈՒԽ 2: Ադրբեջանի հակահայկական տեղեկատվական քաղաքականության բնորոշ գծերը, թեզերը և հիմնական ուղղությունները

2.1. Ադրբեջանի քարոզչական թեզերը և հայատյացության պետական հիմքերի ցուցիչները (մեթոդաբանական տեսանկյուն). 75
2.1.1. Ադրբեջանում հակահայկական քարոզչության պետական հիմքերի ցուցիչները (մեթոդաբանական տեսանկյուն). 75
2.1.2. Ադրբեջանի տեղեկատվական քաղաքականության բնորոշ գծերը և քարոզչական թեզերը. 84
ա) Հակահայկականությունը և հայատյացությունը Ադրբեջանի տեղեկատվական քաղաքականության համակարգում (մեթոդաբանական տեսանկյուն). 84
բ) Ադրբեջանի հակահայկական քարոզչական թեզերի դասակարգման հարցը. 86
2.2. Հայատյացության պատմամշակութային տեսանկյունը Ադրբեջանում. .102
2.3. Հայատյացությունը Ադրբեջանի կրթական համակարգում. 112
Եզրակացություն. 135
Օգտագործված աղբյուրների և գրականության ցանկ. 143